6348
6349

Изъ Ѳ.
Ордена Евр
Отд IV кн. VIII
Отд V кн. X
Отд IV кн. VIII
1869 г.

84
2-66

ԹԱՂՈՒՄԱԹԵՐԲ

ՎԻԳԹՈՐ ՀՅՈՒԳՕ

ԹՂՈՒԱԹՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԳՐ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Իններորդ հատոր

ՏԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՏԻՏԻԵԱՆ


ՁՄՐԻՄՓԵԱՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԻՏԻԵԱՆ

1869

12.06.2013

6349



62961-67

ԹԶՈՒԱԾՆԵՐ

ՄԱՍՆ ՉԻՆԳԵՐՈՐԴ

ԹԱՆ ՎԱԼԻԱՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՀՈՐՍ ՊԱՏԻ ՄԷՋ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻՆԹ-ԱՆԹՈՒԱՆ ԵՐՈՒԵՐՋԸՆԻՆ ԴԵՐԻՊՏԻՍԸ ԵՒ ՏԻՒ ԹԱՄՓԼԸ ԵՐՈՒԵՐՋԸՆԻՆ ՍԿԻԼԼԱՆ

Ասիոյ երկու արժանայիշատակ պատանէշները՝ զոր կրնայ յիշել ընկերային հիւանդութիւնները դիտողը՝ չեն վերաբերիր իր այն թուականին ուր զեռեղուած է դրքիս դործողութիւնը։ Այն երկու պատանէշներն որոնց երկուքն ալ՝ տարբեր կերպարանքով՝ ահարկու կացութեան մը խորհրդանշանն էին, դեռևին տակէն ելան 1848ի ազետաւոր ապստամբութեան ժամանակ, ապստամբութիւն որ պատմութեան մինչև յարդ տեսած փողոցի պատերազմներուն ամենէն մեծն է։

Ընկերային դասերու մէջ մեծ յուսահատեալ մը կայ որ է խուժանն և որ երբեմն իր վիշտերուն, վհատութիւններուն, զրկումներուն, տենդերուն, սոսկալի աղքատութեան, գարշահոտութեանց, տգիտութեան և խաւարին անզուսպէն կը բողոքէ նաև սկզբունքներու դէմ, նաև ազատութեան, հա-

ւաՅարութեան և եղբայրութեան դէմ, նաև ընդհանուր քուէին դէմ, նաև հանրութիւնը կառավարող հանրական իշխանութեան դէմ, և ոամիկը պատերազմ կընէ ժողովուրդին դէմ։

Մուրացիկները հասարակայ իրաւունքին դէմ կը յարձակին։ ռամկապետութիւնը* (ochlocratie) ժողովուրդին դէմ կապստամբի։

Սոսկալի օրեր են այս ապստամբութեան օրերը։ վասն զի այս յիմարութեան մէջ անգամ փոքր ինչ իրաւունք կայ, ինքնապահպանութիւն կայ այս մենամարտութեան մէջ, և սա մուրացիկ, խուժան, ռամկապետութիւն, ռամիկ բառերը որք թշնամանք ըլլալ կուզեն, բարբ, աւելի իշխողներուն քան թէ տառապողներուն յանցանքը, աւելի առանձնաշնորհութիւն ունեցողներուն քանթէ ժառանգութենէ զրկուողներուն յանցանքը կապացուցանեն։

Իսկ մենք, երբէք չենք արտասաներ այս բառերն առանց վիշտ և յարգանք զգալու, վասն զի երբ փիլիսոփայութիւնն ուշադիր կը զննէ այն իրողութիւնները որոնց կը համապատասխանեն այն բառերը, շատ անգամ անոնց մէջ վեհութիւններ կը նշմարէ թշուառութեանց քով։ Ամէնէ ռամկապետութիւն մ'էր։ մուրացիկները չինեցին Հոլանտան։ ռամիկը շատ անգամ Հռոմն ազատեց, և խուժանը Յիսուս-Քրիստոսի ետևէն կերթար։

Սուրբն Թերոմ «քաղաքին մրուրը քաղաքին օրէնք է» խորհրդաւոր խօսքն ըսելով, անշուշտ կը խորհէր այն խուժանին, այն ամէն աղքատ մարդերուն, թափառականներուն և թշուառներուն վրայ որոնցմէ ելան առաքեալներն և մարտիրոսները։

* Հայ Թարգմանիչները սովորութիւն ըրած են՝ անշուշտ Հ. Սրապիոն Վ. Խմիճեանի Գաղղիարէն—Հայերէն—Յառաջերէն բառարանին հետևելով՝ որու օգտակարութիւնը չմոռնալով հանդերձ չենք կրնար չնշմարել անկատարութիւնները և սխալները՝ պէմֆերաք բառը ռամկապետութիւն թարգմանելուս. մեզի սխալ կերևայ այս, և ինչպէս արդէն թարգմանած ենք, պէմֆերաքն՝ հանրիշխանութիւն, բէնէֆպլիթը՝ հանրապետութիւն և օթլոքրաթին ալ աստուածանութեանը համեմատ ռամկապետութիւն կը թարգմանենք։ Ծ. Թ.

Այս վշտահար և արիւնահոս բազմութեան զայրոյթները, իր կենդանութիւնը կազմող սկզբունքներու դէմ սխալ ըմբռնումով ըրած բռնաբարութիւնները, իրաւունքին դէմ ըրած բռնապօծութիւնները ժողովրդային Վարչական բռնաբարութիւններ են և պէտք է որ զսպուին։ Լաւամիտ մարդն այս զսպումին համար անձը կը նուիրէ և՝ այն բազմութեան նկատմամբ ունեցած սիրոյն համար իսկ՝ կը կռուի նոյն բազմութեան դէմ։ Բայց կռուելովը հանդերձ ինչպէս կզգայ թէ ներելի է անոր այս վարմունքը։ ինչպէս կը մեծարէ այն բազմութիւնը՝ անոր դիմադրելովը հանդերձ։ Լաւամիտ մարդուն այսպէս կռուիլ և դիմադրելն այն հաղուագիւտ պարագաներուն մին է ուր ան՝ ընելով ինչ որ պարտաւոր է ընելու՝ կզգայ այնպիսի բան մ'որ զինքը կը շուարեցնէ և գրեթէ կը խրատէ աւելի հեռի չերթալ։ կը դիմանայ ան, վասն զի պէտք է որ դիմանայ, բայց խիղճը գոհ ըլլալէն ետք կը տրտմի, և պարտաւորութեան կատարումը սրտի խշխշուքով մը կը խառնուի։

1848 յունիսի դէպքը՝ փութանք ըսելու թէ՝ առանձին դէպք մ'է և գրեթէ անկարելի է դասաւորել պատմութեան փիլիսոփայութեան մէջ։ Ան ամէն բառերը՝ զոր քիչ մ'առաջ արտասանեցինք՝ կը պարտաւորինք 'ի բաց առնուլ երբ խընդիրն այն տարօրինակ ապստամբութեան վրան է որու մէջ իր իրաւունքը պահանջող աշխատութեան նուիրական անձնուիրութիւնը զգայ ինք։ Հարկ եղաւ կռուիլ այս ապստամբութեան դէմ, և պարտ մ'էր կռուիլը, վասն զի Հանրապետութեան դէմ կը պատերազմէր այն։ Բայց իրապէս ինչ եղաւ 1848ին դէմ կը պատերազմէր այն։ Բայց իրապէս ինչ եղաւ 1848ին յունիսը։ Ծողովուրդին կողմէն ժողովուրդին այսինքն իրեն դէմ ապստամբութիւն մը։

Երբ առարկան տեսնելէ չդադրելով ուրիշ խնդիրի վրայ կը խօսինք, մեր խօսքին ընթացքէն խոտորած չենք ըլլար ամենևին։ Հետևաբար թող ներուի մեզ ընթերցողին ուշադրութիւնը պահ մը կեցնել այն քայարձակապէս միակ երկու

պատնէշներուն վրայ որոնց նկատմամբ խօսեցանք քիչ մ՚առաջ և որք այս ապստամբութեան յայտարար նշաններն եղան։

Այս պատնէշներուն մին Սէնթ-Անթուան արուարձանին մուտքը կը խափանէր, միւսը կարգիլէր մօտիլ Տիւ Թամփլը արուարձանին։ այն ամէն անձերն որոնց առջև յունիսի կապտագեղ և պայծառ երկնից ներքև կանգնեցան քաղաքային պատերազմի այս երկու ահարկու հրաշակերտները, քնաւ չը պիտի մոռնան զանոնք։

Սէնթ-Անթուանի պատնէշն երեք գտսիկոնի բարձրութեամբ և եօթ հարիւր ոտք լայնութեամբ ահագին բան մ՚էր և արուարձանին ընդարձակ բերանը մէկ անկիւնէն միւս անկիւնը, այսինքն երեք փողոց կը դողէր։ խոռոչաւոր, հերձուն (déchiqueté), ատամնաւոր, յօշոտ, ահագին պատառումով մը ժայռացած, ըստ ինքեան պատուարներ կազմող կոյտերու վրայ չէնած, հոն հոս դլուխներ երկնցուներով, արուարձանին տուներէն բաղկացող երկու մեծ հրանպատնեբուն վրայ զօրաւորապէս կռթնելով՝ յուլիսի 14ը տեսնող ահարկու հրապարակին ներսէն իրը կիկղոպեան թումբ մը կը բարձրանար այս պատնէշը։ Այս մայր-պատնէշին հետը փողոցներու ներսն ասոիձան առ ասոիձան շինուած տասնևինը պատնէշ ևս կար։ Մարդս այս մեծ պատնէշը տեսնելովը միայն կրկին արուարձանին հոգեվարող ահագին տառապանքն որ հասած էր այն չեմին վայրկեանն ուր կարօտաբեկութիւն մը կուգէ աղեաւալի վախճան մ՚ըլլալ։ Ինչով շինուած էր այս պատնէշը։ Երեք վեցնայարկ տուներու փլումովը, որք՝ ոմանց ըսածին նայելով՝ մասնաւորապէս քանդուեր էին, ոմանք ալ՝ ամէն բարիութիւններու հրաշքովը շինուած էր՝ կըսէին։ Կրնար ըսուիլ թէ առելութեան ամէն շինութիւններուն ողբալի այսինքն աւերակի տեսքն ունէր այն։ Ո՞վ շինեց ասի։ Կրնար ըսուիլ նաև. Ո՞վ կործանեց ասի։ Անզուսպ եռանդին յանկարծապէս կանգնած չէնքն էր այն։ Հապա սա դուռը, սա վանդակը, սա քիւը, սա շղթանակը, սա խորտակուած կրա-

կարանը, սա դիզուն սանը, տուէք ամէնն ալ, նետեցէք ամէնն ալ, հրեցէք, դլորեցէք, զետեցէք, քանդեցէք, տապլեցէք, փլեցէք ամէն բան։ Սալաքարը, պատի քարը, դերանը, երկաթէ սիւնակը, քուրջը, խորտակուած ապակին, անխոնիր աշխատը, կաղամբին սիրտը, ծուէնը, ցնցոտին և անէծքը միահամուռ աշխատելով շիներ էին այս պատնէշը։ Մեծ էր այն, նաև պղտիկ։ Հրապարակի վրայ անդունդին ծիծաղական նմանութիւնը բերող քաոսն էր այն։ Կոյտին հետ հիւլէն, խորտակուած սկուտեղին հետ այսինչ պատին մէկ մասը կը նշմարուէր անոր մէջ, ամէն աւերակներու եղջայրական սպառնալի միութիւնն ունէր այն։ Սիզիփոս* իր ժայռը և Ցոր իր խեցիին բեկորը նետած էր հոն։ Վերջապէս բոլոռտներուն վերնաքաղաքն (acropole) էր այն։ Գրեխիվայր դրուած սայլերը զանազան տեսք կուտային զառիթմայրին։ երկայն և նրբաձև կառք մը խոտորնակի երկնցած էր վրան՝ սեռնը դէպ՚ի վեր ցցուած, և կարծես թէ պատնէշին աղմկալի ձակատին վրայ սպի մ՚էր։ ուղեկառք մը բազմելներու այժմ պատնիշական կոյտին վրայ անկուած էր զուարճութեամբ, իբր թէ այս վայրենական շէնքին ձարտարապետներն ուզած ըլլային սոսմբակութիւնը սարսափին վրայ աւելցնել, և իր ղեկը չդիտեմ ինչ օդաչու ձիերու կառավնորդէր։ Այս հսկայական կոյտը, ապստամբութեան այս նորաձեմ վայրը մարդուս մտքին մէջ ամէն յեղափոխութիւններու Բէլլոնին** վրայ Օսսա մը, 89ին վրայ 93ը, Օդոստոսի 10ին վրայ Թերմիտորի 9ը, յունվարի 21ին վրայ պրիւմէրի 18ը, հանրապետութեան բերբիալ ամիսին վրայ վանտեմիէր ամիսը, 1830ին վրայ 1848ը կը պատկերէր։

* Սիզիփոսը, Էօլի որդին և Հելլէնի թոռն, ըմբռնամտութեամբը և խաբեբայութիւններովը նշանաւոր է դիցաբանութեան մէջ։ Իփիբոսը շինեց, պատերով զոցեց Կորնթոսի պարանոցը, ուսկէ անցնիլ ուզողներուն անպատիժ կերպս փրկանք առնուլ։ Ծ. Թ.

** Բէլլոն՝ թեսալիայի մէջ Ոլիմպոսի մէկ մասը կազմող հռչակաւոր լեռ մ՚է։ Տիտանները պատերազմին մէջ սխտաններն երկինք հանելու համար Բէլլոնը Օսսայի վրայ դնելեցին, որ նոյնպես բարձր լեռ մ՚է թեսալիայի մէջ։ Ծ. Թ.

Մայտանը յեղափոխութեանց այս երեսէն թուականներուն անարժան չէր, և այս պատնէշն արժանի էր կանդնելու ձիշդ այն տեղն ուսկէ աներեւոյթ եղած էր Պասթիլլը: Եթէ ովկիանոսը թումբեր շինելու ըլլար, այսպէս պիտի շինէր անշուշտ: Կոհակին կատղութիւնն այս տձեւ խափանարարին վրայ դրոշմուած էր· որ կոհակին: Բազմութեան: Քարացած դէմքիւն մը տեսնել կը կարծէիր: Կարծես թէ այս պատնէշին վերեւը բուռն յառաջդիմութեան ահագին և մթին մղումներուն բզզումը կը լսուէր, իբր թէ այս մարդկային մղումները հոն իրենց փեթակին մէջն ըլլային: Ա՛յս պատնէշը մայթա՛ մ'էր· բազոսական տո՛ն մ'էր· ամրո՛ց մ'էր: Կարծես թէ յիմարութիւնը թևարկելով շինած էր զայն: Ա՛յս ամրոցին մէջ կոյանոցի յատուկ իրեր և այս խառնակութեան մէջն ալ չդիտեմ ինչ ոլմպիական բան մը կար: Յուսահատութեամբ լի խառնուրդի մը մէջ կը տեսնուէին յարկերու հեծանները, մանսարտեան յարկի բեկորները՝ իրենց նեղուած թուղթովը, փլածներու մէջ անկուած պատուհանի շրջանակները՝ իրենց բոլոր ապակիներովն որք թնդանօթի կոպաէին· ծխահաններ, պահարաններ, սեղաններ, նստարաններ, ոռնացող տակնուվրայութիւն մը, և այն հազարումէկ չքաւորութեան յատուկ իրերը զոր մուրացկանն անպատ կը նետէ և որք կատղութիւն ու միանգամայն չէութիւն կը պարունակեն: Կրնար ըսուիլ թէ ժողովուրդի մը ցնցոտիքն էին անոնք, փայտէ, երկաթէ, պղնձէ, քարէ ցնցոտիներ, և թէ Սէնթ-Անթուան արուարձանն ահագին աւելով մ'իր դուռին առջեւ հրած և դիզած էր զանոնք՝ թշուառութեամբն իր պատնէշը շինելով: Կոճղերու նման հաստոցներ, խախտուած շրջաթաներ, կախազաններու պէս շերտաձեւ աստղձներ, բեկորներէ դուրս եկնող հօրիզոնական անիւներ ժողովուրդին կրած հին չարչարանաց խոսուր կերպարանն այս անիշխանութեան շէնքին հետ կը միացնէին: Սէնթ-Անթուանի պատնէշը շէնք կըներ ամէն բան· անկէ կերևէին այն ամէն իրերը զոր ընտանի պատերազմը կրնայ նետել ընկերութեան դլուխը· կըռիւ մը չէր այս, այլ սոսկալի հիւանդութեան մը կրկնութեան ախտաժամը· այս ամրոցը պաշտպանող դարապետներն որոնց մէջ քանի մը լայնափող ատրճանակ կար, յախճապակիի կտորներ, ոսկրներ, թիկնոցի կոճակներ, դիշերուան սեղանի անուակներ անպատմ կը նետէին· վտանգաւոր ռումբեր պղնձին պատճառաւ: Խելագար էր այս պատնէշը· անմկնելի շառաչիւն մը կարձակէր ամպերուն մէջ, և ժամանակ առ ժամանակ՝ բանակը դրդռելով՝ բազմութեամբ և մրրիկով կը դրաւուէր· բայարձակ դլուխներու ամբոխ մը կը դիզուէր անոր վերեւը· վհատումով մը կը լեցուէր անոր փշալի կատարը որու փուշերն էին հրացաններ, թուրեր, դաւազաններ, կացիններ, նիզակներ և սուիններ և որու վրայ լայն և կարմիր դրօշակ մը հովէն ծփալով կը շաչէր· հրամանատարի աղաղակները, յարձակումի երգերը, թմբուկի ձայները, կիներու հեծկլտանքը և անօթի մռնդոցներու խառնարային քահքահները կը լսուէին: Տարապայման և կենդանի պատնէշ, ուսկէ՝ ելեկտրական դաղանի մը կրնակէն ելնելու պէս՝ չանթերու ձայթիւն մը կելնէր: Յեղափոխութեան ոգին իր ամբողջ կը ծածկէր այս դագաթը ուր կը դոռար ժողովուրդին այն ձայնը որ Աստուծոյ ձայնին կը նմանի· աւերածներէ բաղկացող այս սիստանեան կողովէն տարօրինակ վհատութիւն մը կարտադրուէր: Աղետու դէզ մը և միանգամայն Սինայի լեռն էր այն:

Ինչպէս ըսինք նախապէս, այս պատնէշը յանուն յեղափոխութեան կը պատերազմէր· որո՛ւ դէմ. Յեղափոխութեան դէմ: Ա՛նի, այն պատնէշը, այսինքն դիպուածը, անկարգութիւնը, խռովութիւնը, թիւրիմացութիւնը, անծանօթին իր դիմացն ունէր սահմանադիր ժողովը, ժողովուրդին վհատութիւնը, հանրական քաւէարիւթիւնը, ազգը, հանրապետութիւնը· Գարմանելի երգն էր այն որ Մարսէլլեզը կռնչի կը հրաւիրէր:

Ցիմարական այլ դիւցազնական հրաւէր, վասն զի դիւցազն մ'է այս հինաւուրց արուարձանը։

Արուարձանն և իր ամրոյն իրարու կօգնէին։ Արուարձանն ամրոցին ետևը կը պատսպարուէր, և ամրոցն ալ արուարձանին կուտար կռնակը։ Ընդարձակաշէն պատնէշը կը տատանուէր իբր ապառաժներու դէմ մ'ուր Ափրիկէի զօրապետներուն Ճարտարագիտութիւնը կը խորտակուէր։ Իր խոռոչ ներովը, այտուցներովը, ելունդներովը, դարաւանդներովը կրնայ ըսուիլ թէ շարժուձեր և ձևեր ընելով մուխին մէջ հեղնապէս կը ծիծաղէր։ Հրանօթներէն արձակուած երկաթի քեկորներն անոր ևայրի կը լլլային ոտևին մէջ. ամբիկները պատնէշին մէջը կը մտնէին, կը սուզէին, կանհետէին. դունդերը ծակեր կը ծակէին միայն. ինչ հարկ կայ քաոսը ուրմանալու։ Եւ պատերազմին ամենէն վայրագ տեսիլներուն սաստկող զօրապետներն երկիւղով կը նայէին այս պատնէշը որ մահերը դէպ 'ի վեր տնկուած վարազի նման գազան և ահագին լեռի նման ամրոց մ'էր կարծես։

Քառորդ մղոնի մը չափ անդին, Շաթօ-տ'Օյի գովէն պուէվարին վրայ Հանուր Վիխլ-Տիւ-Թամիլը փողոցին անկիւնէն եթէ համարձակապէս պլուխը յառաջիբր Տալըմանները մթերանոցին կազմուած ծայրէն դուրս, հեռուէն, ջրմուղին անպիի կողմը, դէպ 'ի Պէլվիլի սանդուղներն եկնող փողոցին մէջ, զառիվերին ամենէն բարձր տեղը տուներու Ճակատներուն մինչև երկրորդ դասիկոնը հասնող տասօրինակ պատ մը կը նշմարէիր, որ աջակողմեան տուներէն դէպ 'ի ձախակողմեան տուները քաշուած տեսակ մը միւռեղեան գիծ էր, իբր թէ փողոցը՝ յանկարծ դողալու համար՝ ինքնին ծալլած ըլլար իր ամենէն բարձր պատը։ Սալաքարերով շինուած այս պատն ուղիղ, Ճիշդ, ցուրտ, ուղղահայեաց, քանոնով հարթուած, առատանով քաշուած և կապարաւոր դերձանով ուղղուած էր։ Անշուշտ շաղախ չունէր այն, բայց տեսակ մը հռոմէական պատերու պէս այս պատն ալ անշաղախ ըլլալովը հանդերձ

չէր շիտեր իր Ճարտարապետական անթերի կանոնաւորութիւնը։ Բարձրութենէն կը դուշակուէր թէ մրբան խորութիւն ունէր։ Պատին դարաւանդը մաթեմաթիքական ուղղահեռականութեամբ հեռացած էր խարիսխէն։ Գորշագոյն մակերևոյթին վրայ անջրպետէ յանջրպետ թնդանօթի համար բացուած դրեթէ անտեսանելի և սև թելերու նման ծակեր կը նշմարուէին։ Այս օրմածակերը հաւասար անջրպետներով մէկ մէկէ պատուէր էին։ Որքան ալ հեռի նայէիր, Ճանճ մ'անդամ չէիր տեսներ փողոցը։ Բոլոր պատուհանները և բոլոր դուռերը գոց էին։ Այս պատնէշը փողոցին ներսովը կանդնելով անել փողոց մը կընէր. անշարժ և հանդարտ պատ ուր ոչ ոք կը տեսնուէր, ոչինչ կը լսուէր, և ուր ոչ աղաղակ մը, ոչ ձայն մը, ոչ ալ շունչ մը կար։ Գերեզման մ'էր այն։

Յունիսի ակնախտիղ արևը լոյսով կողողէր այս սոսկալի քանը։

Տիւ Թամիլը արուարձանին պատնէշն էր այն։

Եթէ մէկը մօտ երթալով նշմարէր այս պատնէշը, նաև ամենայանդուգն մարդ մ'ըլլար, անհնարին էր իրեն չմտածել այս խորհրդաւոր երևոյթին առջև, որ կազմ ու պատրաստ, կոյտած, վրայ վրայի շարուած, ուղղագիծ, համաչափ և տխրալի բան մ'էր. դիտութիւն և խաւար կը պնդուռնակէր այն։ Կզդար դիտողը թէ այս պատնէշին պարագլուխն երկրաչափ մ'էր կամ Ճիւաղ մը։ Մարդ կը նայէր այս պատուարին և կամաց կը խօսէր։

Ժամանակ առ ժամանակ եթէ մէկը, գլուխը, պաշտօնատար կամ ազգային երեսփոխան մը, համարձակէր անցնիլ մենահան սալարկէն, կծու և տկար սուլոմ մը կը լսուէր, և անցորդը կկնար՝ վիրաւորուելով կամ մեռնելով, կամ՝ եթէ փախչէր՝ կը տեսնէր որ գնդակ մը գոց փեղկի մը, կամ երկու օրմաքարի (mœllon) և կամ պատի մը բուռին մէջ կը մտնէր։ Երբեմն ալ պիսպայեան գունտ մ'էր արձակուածը։

վասն զի պատնէշին մարդերն երկու պզտի թնդանօթ ըրեր էին կազի ձուլածոյ խողովակներու երկու բեկորը՝ խողովակին մէկ ծայրերը խծուծով և կրակարանի կաւով խցելով։ Վառօդն անօգտապէս չէր վատնուեր։ Ամէն նետուած հրացանին դնտակն իր նշանին կը հասնէր։ Հոն հոս քանի մը դիակ կար, և քարայատակներուն վրան ալ արեան լճակներ։ Կը յիշեմ Թիթեռնիկ մ'որ փողոցը կերթևեկէր։ Ամառը չը հրաժարիր իր իշխանութենէն։

Շրջակաները մեծ դուռերուն տակ բազմաթիւ վիրաւորներ կը խռնէին։

Հոն դտնուողը կզդար թէ անտեսանելի հրացան մ'իրեն ուղղուած է և թէ փողոցին մէկ ծայրէն միւս ծայրը հրացանէ նշան կառնուի։

Պատնէշին վրայ յարձակելու եկող զինուորները դուռ առեր էին էշի կռնակի նման երկակողմանի զաւիվերի մ'եռևը զոր ջրմուղին կամարաւոր կամուրջը կը կազմէ Տիւ Թամիլը արուարձանին մուտքին քով, և ծանրութեամբ և ամիսի միաքով կը դիտէին այս սոսկալի, անշարժ, անհոգ ամբոխն ուակէ մահ կ'ելլէր։ Զինուորներէն ոմանք փորի վրայ կը սողային մինչև կամուրջին կոր գծին վերը՝ զգուշանալով սակայն որ իրենց գլխարկը կամարին կոր գծէն անդին չանցնի։

Մօնդէյնար արի դնդապետը սարսուռով մը կսքանչանար այս պատնէշին վրայ։ — Ի՛նչպէս չքնաղէ է ասի, կըսեր ազդային երեսփոխանի մը։ Չկայ տեղ մ'որ ոռբէշ տեղէ մ'առելի գեղեցիկ ըլլայ։ Ցաւոցապէնայ է այս պատը։ — Նոյն րոպէին դնտակ մ'անոր կուրծքին վրայի խաչը խորտակեց, և Մօնդէյնար ինկաւ։

Վառօդը, թոյլ երևան, թոյլ տեսնուին և կը տեսնին· բայց չեն համարձակիր, կը պահուին պատնէշին մէջ, կըսուէր։ Տիւ Թամիլը արուարձանին պատնէշն ուժգնուն մարդէ պաշտպանուելով և տաս հազար մարդու յարձակումը կրելով երեք օր դիմացաւ։ Զորրորդ օրն յարձակողներն ըրին ինչ

որ եղած էր Զաաչայի և Գօսթանթինի մէջ, այսինքն տուները ծակեցին, յարկերէն եկան և պատնէշն առին։ Ուժգնութեան վատերուն և ոչ մին ուզեց փախչիլ· ամէնքն ալ մեռան բացի՝ պարագլուխէն որ է Պարթելէմի և որու վրայ հիմա պիտի խօսինք։

Սէնթ-Անթուանի պատնէշն որոտումներու աղմուկն էր, իսկ Տիւ Թամիլի պատնէշը լռութեան։ Այս երկու ամրոցներուն տարբերութիւնն էր ինչ որ է զարհուրելին տարբերութիւնն աղետալիին հետ։ Մին գաղտնային բերանի մը, միւսը դիմակի մը կը նմանէր։

Սեպելով թէ յունիսի ահագին և խաւարին ապստամբութիւնը բարկութեամբ մը և հանգոյցով մը բաղադրուած էր, կզդար մարդս թէ առաջին պատնէշին մէջ վիշապ և երկրորդին մէջ սպինգս կար։

Այս երկու ամրոցները Գուրնէ և Պարթելէմի անուն անձերու առաջնորդութեամբը շինուեր էին։ Գուրնէ Սէնթ-Անթուանի պատնէշը, Պարթելէմի ալ Թամիլի պատնէշը շինած էր։ Պատնէշներուն ամէն մէկը շինողին պատկերն էր։

Գուրնէ բարձրահասակ, լայնուսն, կարմրագէմ, հաստաբաղուկ, սրատես, սիրտն ուղղասէր, նայուածքն անկեղծ և սոսկալի մարդ մ'էր։ Աներկիւղ, գործունեայ, բարկացուտ, մրրկալի, մարդերուն ամենէն անկեղծը, կռուողներուն ամենէն ահեղն էր ան։ Պատերազմը, կռիւը, մարտը իր շընչելի օդն էին և զուարթութիւն կուտային անոր։ Ծովային պաշտօնատար եղած էր, և իր շարժուձևերն և ձայնը տեսնող մը կը գուշակէր թէ ովկիանոսէն կելլէր և մրրիկէն կուգար ան։ Գուրնէ պատերազմին մէջ կը շարունակէր ուրախանը։ Եթէ 'ի բաց առնուինք հանճարը, Գուրնէ Տանթօնի նման բան մ'էր, ինչպէս Տանթօն ալ Հերկիւլէսին նման բան մ'էր եթէ 'ի բաց առնուինք այս վերջինին աստուածութիւնը։

Պարթելէմի նիհար, աղաղուն, գունատ և լռակաց էր· տեսակ մը սոսկալի ստամբակ որ քաղաքապահէ մ'ապստամբե-

լուն համար դաղտնապէս դիտեց և տեղ մը սպասելով զան սպաննելէն ետք թիարանը նետուեցաւ տասնեօթ տարեկան հասակին մէջ։ Ելաւ թիարանէն և այս պատմէշը շինեց։

Նաքը Լոնտրայի մէջ երբ երկուքն ալ տարագիր էին, Պարթելէմի Գուրնէն մեռցուց, աղետալի բան։ Սպալի մենամարտութիւն մ'եղաւ այս։ Ժամանակէ մ'ետք Պարթելէմի բռնութեամբ կիրքով խառն գաղտնի դէպքի մ'անուայնի խառնուրդին մէջ, դէպք աղետալի ուր դաղիական օրէնքը մեղմ պարագաներ իսկ անգլիական օրէնքը մահ կը տեսնէ, կախուեցաւ։ Նիւթական զրկումի շնորհիւ, բարոյական մթութեան շնորհիւ այս դժբաղդ անձն որ անտարակոյս հաստատ և թերևս մեծ իմացականութիւն մ'ունէր, Փրանսայի մէջ իր կեանքը թիարանը սկսաւ և Անգլիայի մէջ կախաղանին վրայ լմնցուց· այս է ահա ընկերային շինութեան արդիւնքը։ Պարթելէմի առիթը պատահած ժամանակ մէկ դրօշակ կը բանար միայն, այսինքն սև դրօշակը։

ԳԼՈՒԽ Ը։

ԱՆԳՈՒՆԴԻ ՄԸ ՄԻՋ ԴՏՆՈՒՈՂՆԵՐՆ ԻՆՉ ԸՆԵՆ ԵԹԷ ՉԽՕՍԻՆ

Ապստամբութեան տարերքրեայ կրթութեան մէջ տասն և վեց տարին բաւական երկար ժամանակ մը կը սեպուի, և 1848ի յունիսի աւելի հմուտ էր ապստամբութեան քանիէ 1832ի յունիսը։ Ահա այս պատճառաւ Տը Լա Շանվըրըի փողոցին պատնէշը՝ համեմատութեամբ երկու ահագին պատնէշին հետ զոր նախորդ գլուխին մէջ նկարագրեցինք՝ ծրագիր և սաղմն մ'էր միայն· բայց այն ժամանակին համար ահարկու պատնէշ մը կը սեպուէր։

Ապստամբներն Անժօլրայի հսկողութեան ներքև, ըստ ո՞րում Մարիուս ալ բան մը չէր նայեր, օգուտ քաղեր էին

դիշերէն։ Պատնէշն ոչ միայն նորոգուած այլ նաև երկու ոտքի չափ բարձրանալով մեծցած էր։ Սալաքարերու մէջ տնկուած երկաթէ սիւնակներ թամիի վրայ նեցուկներու մէջ կեցող նիզակներու կը նմանէին։ Ամէն կողմէ ամէն տեսակ աւերածներ բերուելով պատնէշին վրայ դրուեր և անոր արտաքին դժուարութիւնները խառնակելով աւելցուցեր էին։ Ամրոցը վարպետութեամբ վերստին շինուած էր՝ ներսի կողմը պատի և դուրսի կողմը մայտաի ձևն առնելով։

Նորէն հաստատուած էր սալաքարէ սանդուղն որ պատնէշին վրան կը հանէր բերդի պատի մը վրայ հանող սանդուղի մը պէս։

Պատնէշին մէջ հաւքատուք ըրեր էին։ Կապելային ստորին սրահին մէջ տեղը բռնող բաները դուրս հանելով, խոհանոցը գնայուն հիւանդանոց մ'ըրեր էին, և վերաւորներուն վէրքն ալ բոլորովին դարմաներ էին· ապտիկը և սեղանին վրայ սփռուած վառօդները ժողոված, դնտակներ ձուլած, փամփուշտներ շինած, պատրոյդներ կազմած, զէնքերը բաշխած, ամրոցին ներսը մաքրած, բեկորները հաւքած և դիակներն ալ տարած էին։

Մեռնելները Մօնտէմուր դուխին մէջ դիզեցին, որու կը տիրէին միշտ։ Երկար ժամանակ կարմիր ինայ փողոցին այն քարայատակն ուր զետեղուեցան դիակները։ Ասոնց մէջ աբուաբձաններուն հսկող չորս ազգային պահակ կար։ Անժօլրա այս չորս պահակներուն համազգեստը հանել և տեղ մը պահել տուաւ։

Անժօլրա ապստամբներուն խրատ տուած էր քնանալ երկու ժամ։ Անժօլրայի մէկ խրատը հրաման մ'էր։ Սակայն երեք կամ չորս հոգի միայն հետևեցան այս խրատին։ Գէօյեի այս երկու ժամն անցուց կապելհոնին դիմացի պատին վրայ յետապայ փորագրելու զբաղելով.

ԿԵՑՑԵ՛Ն ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

ՀՀ ԱԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека

Բևեռով մ'որմաքարին (mœllon) վրայ փորուած այս երկու բառերը 1848ին դեռ կը կարդացուէին այն պատին վրայ։

Երեք կիները պատնէշին դիշերը յարձակումէ ազատ մնացած միջոցին կրցեր էին բոլորովին անբեւոյթ ըլլալ։ Անոնց այս անհետումին պատճառաւ աւելի հանդիսատ շուներ կատնէին ապստամբները։

Երեք կիները միջոց մը գտնելով դրացիի մը տունը ապաստարուեր էին։

Վերաւորներուն մեծագոյն մասը կրնային և տակաւին կուղէին պատերազմիլ։ Խոհանոցին մէջ, որ զինուորական հիւանդանոց եղած էր, խշտեակներու և յարդի դեզերու վրայ ծանրապէս վիրաւորուած հինգ մարդ կար, որոնց երկուքը քաղաքապետական պահակներ էին։ Ամենէն առաջ այս երկուքին վէրքը դարմանուեցաւ։

Սաորին սրահին մէջ ալ միայն Մապէօֆը ձեացեր էր սեաթոյր պատանքին տակ և ծալէր՝ իր ցցին կապուած։

— Մեռեալներու սրահն է այս, ըսաւ Անժօլրա։

Ճրագէ մը հազիւ հազ լուսաւորուող այս սրահին մէջ և դէպ 'ի ներսի կողմը մահակիր (mortuaire) սեղանն իբր հոգիներու սիւն մը ցցին եռևն ըլլալով, տեսակ մ'անորոշ մեծակ խաչ մը կը կազմուէր՝ ծալէր կայնած և Մապէօֆ պառկած ըլլալով։

Ուղեկաւքին ղէկը թէև հրացանի դնտակներէն հաշմուած էր, բայց տակաւին բաւական կանգուն ըլլալով կարելի եղաւ վրան դրօշակ մը կապել։

Անժօլրա՝ որ ըսածը միշտ կատարող պարագլուխի մը յատկութիւնն ունէր՝ դնդամահ խլնող ծերուկին ծակուած և արիւնաթոյր թիկնոցը կապեց այն ղէկին։

Ա՛լ ընթրիք մ'ընելն անհնարին բան էր։ Ոչ հաց և ոչ միս կար։ Պատնէշին յիսուն մարդերը տասնուվեց ժամ 'ի վեր հոն ըլլալով շուտ մը սպառած էին կապելային փանաքի պաշարները։ Կը հասնի ժամ մ'ուր ամէն դիմացող պատնէշ

Հարկաւորապէս Մէտիւզին լաստը կը գառնայ։ Հարկ եղաւ համակերպիլ անօթութեան։ Ցունիսի 6ի սպարդիական (հայրենասիրական) օրին առաջին ժամերուն մէջն էին, օր յորում ծան՝ Սէն-Մէրիի պատնէշին մէջ իրմէ հայ ուզող պատամբներէ, ուտելիք գոչող մարտիկներէ շրջապատուելով կը պատասխանէր անոնց։ — Ի՞նչ հարկ ուտելու, ժամը երեք է։ Չորսին պիտի մեռնինք։

Ա՛լ ուտելը կարելի չըլլալուն համար, նաև խմելն արգիլուեցաւ Անժօլրայի հրամանաւ։ Գինին արգիլուեցաւ, օղին ալ մաս առ մաս ամէնուն բաժնուեցաւ։

Մառանին մէջ տասնուհինգ լեցուն շիշ գտնուած էր որոնց ամէնքն ալ աղէկ մը կնքուած էին։ Անժօլրա և Գօմպըֆէր քննեցին այս շիշերը։ Գօմպըֆէր մառանէն դուրս եկնելով ըսաւ. Ասոնք Հիւշլու ախպարին հին խանութէն ձեացեր են որ 'ի սկզբան փերեզակի խանութ մ'էր։ — Հարկաւ բուն գինի են ատոնք, ըսաւ Պօսիւէ։ Բարեբաղդաբար կրանթէր քննացած է։ Եթէ արթուն ըլլար, դժուար պիտի ըլլար ազատիլ այս շիշերը։ Անժօլրա՝ առանց մտիկ ընելու շշունչներըն՝ արգիլեց գնդակ այս տասնուհինգ շիշերուն, և Մապէօֆ ախպարին պառկած սեղանին տակը դնել տուաւ որպէս զի ոչ ոք գայլի և որպէս զի իբր նուիրական նկատուին անոնք։

Կէս գիշերէն երկու ժամ ետք համրուեցան ապստամբները. երսուն եօթ հոգի էին։

Լոյսը կսկսէր երևալ։ Անցուցին ջահը որ վերտին տրնկուած էր սալաքարերու խոռոչին մէջ։ Պատնէշին ներսը որ փողոցէն առնուած տեսակ մը գաւիթ էր, խաւարամած, նաև վերջալուսական անորոշ սարսափին մէջ նաւի մ'անկայմ և անկազմ տախտակամածին նման բան մ'էր կարծես։ Կըռւողներն այս գաւիթին մէջ երթևեկելով իբր սեաթոյր կերպարաններ կը շարժէին։ Այս մթապատ բոյնին վերևն անմռունչ տուներուն յարկերը կապարի գոյնով կը ծրագրուէին։

իսկ աւելի բարձրէն երևցող ծխահանները կը ժժդունէին։ Երկիքն ունէր այն անորոշ և սիրուն երփը որ թերևս սովորական և թերևս կապուտ է։ Երանուելեան աղաղակներով թըռչուններ կը թևաբախէին օդին մէջ։ Պատնէշին ներսը դիմացի կողմը կազմող բարձր տունը դէպ արևելք դարձած ըլլալով վարդագոյն ցոլում մ՚ունէր իր յարկին վրայ։ Առաւօտեան հոնկ երբորդ դասիկոնի պատուհանը մեռած մարդուն ալեւոր մազերը կը շարժէր։

— Ուրախ եմ որ չահը մարեցաւ, կըսէր Գուրֆեյրադ ֆէօյեին։ Այս չահը հովէն խրտչելով ձանձրոյթ կուտար ինձ։ կարծես թէ կը վախնար։ Չահերուն լոյսը վատերուն իմաստութեան կը նմանի. աղէկ լոյս չտար, վասն զի կը դողայ։

Արշալոյսը թռչուններն արթնցնելուն պէս միաքերն ալ կարթնցուներ. ապստամբներուն ամէնքն ալ կը խօսակցէին։

Ծօլի տանիքի խողովակի մը վրայ կատուի մը թափառիլը տեսնելով անկէ սա փիլիսոփայական հետեւութիւնը կը հանէր.

— Ո՞նչ է կատուն։ Ուղղիչ մը։ Աստուած պապան մուկը ստեղծելէն ետք, վայ, սխալ մ՚ըրի, ըսաւ և կատուն ալ ստեղծեց։ Կատուն մուկ վրիպակին ուղիղն է։ Մուկը, և իր հետ կատուն՝ արարչագործութեան վերաքննուած և սրբագրուած փորձն է։

Գօմպրֆէր ուսանողներէ և բանւորներէ շրջապատուած կը խօսէր մեռնողներուն, ծան Բրուվէրին, Պահօրէլին, Մաբէօֆին, Գապիւդին վրայ անգամ, նաև Անժօլրասի խստրմքեր արտմութեան վրայ, և կըսէր.

— Հարմօտիոս և Արիսթոժիթոն, Պրիւթիւս, Շէրէաս, Ստեֆանիւս, Գրօմուէլ, Շարլոթ Գօրտէյ, Սանտ, ամէնքն ալ Հարուածը տալէն ետք իրենց վշտալի վայրկեանն ունեցան։ Մեր սիրան այնքան կը սարսռի և մարդկային կեանքն այնպիսի խորհուրդ մ՚է որ նաև քաղաքացիի յատուկ սպանութեան մը մէջ, նաև ազատարար սպանութեան մը մէջ երեք կայ ազատարար սպանութիւն, մարդ մը սպանած ըլլալու խղճի խայթը մարդկային սեռի ծառայած ըլլալու ուրախութիւնը կը պերազանցէ։

Փոխագարձ խօսակցութիւնն օճապատոյտ դէտի մը պէս իրեն յատուկ շրջաններն ունի։ Պահ մ՚ետք՝ ծան Բրուվէրին ատանաւորներէն եկած անդամով մը Գօմպրֆէր Վիրգիլիոսի Աշակերտներուն թարգմանիչները մէկ մէկու հետ, Բոյը Գուրնօյի հետ, Գուրնօն Տըլիլի հետ կը համեմատէր, Մալֆիլաթերէն թարգմանուած քանի մը պարբերութիւններ յատաջ բերելով, մասնաւորապէս կեսարի մահուան զարմանալի դէպքերը, և կեսարին անունը տրուելով խօսակցութիւնը Պրիթոսի վրայ կը շրջէր։

— կեսար արդարապէս ինկաւ, կըսէր Գօմպրֆէր։ Կիկերոն խստիւ վարուեցաւ կեսարի նկատմամբ, և իրաւունք ունէցաւ։ Այս խստութիւնը պարսաւական քննադատութիւն մը չէ։ Հոմերոսին՝ Աքիլէն նախատուիլը, Վիրգիլիոսին՝ Մաէվիոսէն, Մօլիէրին՝ Վիլէյէն, Շէյքսպիրին՝ Բօբէն, Վոլթէրին՝ Ֆրէրոնէն նախատուիլը նախանձու և ատելութեան օրինակ մ՚է որ ՚ի գործ դրուեցաւ։ Հանճարներն իրենց վրայ կը հրաւիրեն թշնամանքը։ Մեծ մարդերն աւելի կամ նուազ կերպով բայց միշտ վայրահաչութեան կենթարկին։ Բայց Աքիլ և Կիկերոն կը սարքերին։ Կիկերոն պատուհասող (justicier) մ՚է միաքովը, ինչպէս որ Պրիութիւս ալ պատուհասող մ՚է սրտով։ Իմ մասիս ես կը պախարակեմ այս վերջին պատուհասը, սուրը, բայց հին ժամանակներն ընդունելի էր այն։ Ինչպէս կըսէ Էօթրօբ, կեսար, Բիւպիլիոնի բռնաբռնչը, թագաւորի և դրեթէ բռնաւորի բառերը կրնէր՝ անոր ասոր իբր լրմէն արտաբղխած բարձ ու պատիներ տալով որք ժողովուրդէն կարտաբղխին, և ատքի վրայ չէ՛նկլով երբ ձերակոյտին անդամները ներս կը մտնէին։ կեսար մեծ մարդ մ՚էր. աւելի աղէկ, կամ աւելի գէշ. դասն ալ աւելի մեծ է։ Իր ընդունած քսաներեք վէրքն ոչ այնքան կը յու-

զեն զիս որքան կը յուզէ Յիսուս—Քրիստոսի Ճակտին նետուած թուքը : Կեսար նախարարներէն դաշունեցաւ· Քրիստոս սպասաւորներէն ապտակ կերաւ : Երբ աւելի մեծ է նախատինքը , կզգաս թէ Աստուած է նախատուողը :

Պօսիւէ սալաքարերու դէզի մը վերէն խօսակցողներուն նայելով , գարապինա 'ի ձեռին կը դոչէր·

— Ո՛ Սիտաթէնէօմ , ո՛ Միրինոս , ո՛ Բրօպալէնթ , ո՛ Էնանթիտի շնորհները : Ո՛չ , ով արդեօք կարող պիտի ընէ զիս Հոմերոսի բանահիւսութիւններն արտասանելու Լօրիոմի կամ Էտաթէոնի յոյնի մը պէս :

ԳԼՈՒԽ Գ·

ԼՈՒՍԻՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԹԱԴՆՈՒԹԻՒՆ

Անծօլրա պատնէշէն դուրս ելլելով դացած էր անդամ մը չորս կողմը դաղտնապէս դիտելու համար : Մօնտէթաւրի գիւղէն ելած էր տուներուն քովերէն օձապտոյտ սահելով·

Ապստամբները փութանք ըսել թէ մեծ յոյս ունէին : Գիշերուան յարձակումն այնպիսի կերպով վանած էին որ առաւօտեան յարձակումը դրեթէ յաւաջմէ կարհամարհէին : Առաւօտեան յարձակումին կսպասէին և կը ժպտէին անոր նկատմամբ : Ինչպէս իրենց դատին , նոյնպէս և յաջողութեան վրայ չէին տարակուսեր : Մանաւանդ թէ անշուշտ օդնութիւն մը պիտի հասնէր իրենց անյապաղ : Այս օդնութեան վրայ վստահութիւն ունէին : Ցաղթական մարդարէութեան դիւրութեամբ որ դաղիացի կռուողին այժերուն մին է , լուսնալուսող օրը երեք տոյդ փոփոխութիւններու կը բաժնէին· առաջ ժամը վէցին իրենց կողմը պիտի դառնար զօրագունդ մը որ « տրամադրուած » էր· կէսօրին բոլորը Բարիզ պիտի ապրստամբէր· արեւմայրին յեղափոխութիւնը պիտի սկսէր :

Սէն-Մէրիի վտանդի զանգակին ձայնը կը լսուէր որ առ-

ջի օրէն 'ի վեր և ոչ իսկ րոպէ մը լռած էր· ուսկէ կը հասատուէր թէ տակաւին կը դիմանար միւս մեծ , այսինքն Թանի պատնէշը :

Այս ամէն յոյսերը մեղուի փեթակի մը պատերազմին բզզումին նման տեսակ մը զուարթ և ահարկու փսփսուքով խումբէ խումբ կը հաղորդուէին :

Անժօլրա նորէն երևցաւ : Արտաքին մթութեան մէջ ըրածարծուային շրջապատութենէ վերադարձած էր : Թևերը կուրծքին վրայ առած և ձեռքին մէկը բերանը դրած՝ պահ մը մտիկ ըրաւ ապստամբներուն այս ուրախութիւնը : Ապա առաւօտեան սպիտակութեան մէջ որ հետ դհետէ կը շատնար , Անժօլրա՝ կայտառ և վարդագոյն՝ ըսաւ ապստամբներուն·

— Բարիզի բոլոր բանակը կը կռուի : Այս բանակին մէկ երրորդը , նաև ազգային պահակները մեր պատնէշին դէմ պիտի կռուին : Նշմարեցի հետևակներու հինգերորդ գունդին շէֆները և վեցերորդ գունդին դրօշները : Ծամէ մ'եռք պիտի յարձակին մեր վրայ : Իսկ ժողովուրդն երեկ յուզուեցաւ եռանդագին , բայց այս առտու չշարժիր : Ոչինչ ունինք ըսպասելու , ոչ ալ յուսալու : Ոչ արուարձան մը , ոչ ալ գունդ մը կայ մեզի հետ : Լքուած և մինակ մեացած ենք :

Այս խօսքերը խումբերուն բզզումին վրայ նետուելով այն տպաւորութիւնն ունեցան զոր կունենայ մեղուներու երամի մը վրայ մրրկին առաջին կաթիլը : Ամենքն ալ անմռունչ մնացին : Նոյն միջոցին անասելի լռութիւն մը տիրեց , լռութիւն ուրու մէջ մահուան թևափռութիւնը կրնար լսուիլ :

Կարճ եղաւ այս վայրկեանը :

Խումբերուն ամենէն մէջին խորշերէն ձայն մը դոչեց Անժօլրային·

— Լաւ : Պատնէշը քանի ոտք բարձրացնենք և ամենքս ալ հոս մնանք : Քաղաքացիները , դիակներու բողոքն ընենք : Ցուցնենք որ եթէ ժողովուրդը կը թողու հանրապետականները , հանրապետականները չեն թողուր ժողովուրդը :

Այս խօսքն անհատական անձկութիւններու յաւալի ամպէն ամենուն մտածումը կարտադրէր։ Եռանդալի կայթիւնով մը ընդունուեցաւ այն։

Երբեք չդիտցուեցաւ այս խօսքն ըսող մարդուն անունը. անշուշտ անյայտ բանուոր մը, անծանօթ մը, մոռցուած մը, դիւցազն անցորդ մ'էր ան, այսինքն այն մեծ անանունը որ միշտ կը խառնուի մարդկային տաղնապներու և ընկերային ծննդագործութիւններու (génèse) հետ. որ յարմար վայրկեանը հասած ժամանակ յետին կերպով մը վճռական խօսքը կըսէ և որ պահ մը փայլակի մը պայծառութեան մէջ ժողովուրդին և Աստուծոյ պատգամաւորն ըլլալէն առք խաւարին մէջ կանհետի։

Այս անողոքելի որոշումը 1832 յունիս 6ին այնքան օդին մէջ տարածուած էր որ դրեթէ մի և նոյն ժամին ՍԷՆ-ՄԷՐիի պատնէշին ապստամբներն ալ սա աղաղակը կը հանէին որ պատմական եղաւ և դասարանին մէջ յիշուեցաւ. — կուզեն օդնեն մեզի, կուզեն չօգնեն, մեր հօդն անգամ չէ։ Մեռնինք հոս ամենքս ալ։

Ինչպէս կը տեսնուի, երկու պատնէշները թէև նիւթապէս առանձին մնացեր էին այլ կը հաղորդակցէին։

ԳԼՈՒԽ Գ.

ՀԻՆԳ ԸԱԲԼԻ, ՄԻԿ ԳԱՒԱՍ

«ԴԻԱՆՆԵՐՈՒ բողոքն» ընել հրամայող մարդը խօսեցաւ և հասարակաց հոգիին բանաձևը (formule) տալէն առք ամենուն բերանէն սարսռինակ դոհունակութեան և սարսափի աղաղակ մ'ելաւ, աղաղակ մ'որ նշանակութեամբը սքանչելի և արտասանութեամբը յաղթական էր։

— կեցցէ մահը։ Ամենքս ալ հոս կենանք։

— Ինչո՞ւ ամենքը, հարցուց Անժօլրա։

— Ամե՛նքը, ամե՛նքը։

Անժօլրա կրկնեց.

— Դիրքը լաւ, պատնէշն ալ դեղեցիկ է։ Երսուն մարդ կը բաւէ։ Ինչո՞ւ քառասուն մարդ զոհենք։

Ապստամբները պատասխանեցին.

— Վասն զի ոչ ոք պիտի ուզէ երթալ։

— Քաղաքացինե՛ր, դոչեց Անժօլրա, և իր ձայնին մէջ դրեթէ բարկալի ձօռում մը կար, հանրապետութիւնը մարդի մասին հարուստ չըլլալով չկրնար անօգուտ ծախս ընել։ Սին փառասիրութիւնը զեղխութիւն մ'է։ Եթէ ոմանց համար պարտ մ'է ասկէ երթալը, այս պարտը պէտք է որ կատարուի ուրիշ որ և է պարտաւորութեան պէս։

Անժօլրա, սկզբունքի մարդն իր կրօնակիցներուն վրայ այն տեսակ մ'ամենակարողութիւնն էր որ բացարձակէն կարտադրէի։ Սակայն այս ամենակարողութեան չնայելով սկսան մրմռալ։ Անժօլրա անթերի պարագլուխ մ'ըլլալով, երբ տեսաւ թէ կը մրմռան, պնդեց իր հրամանին նկատմամբ, և բարձրամտութեամբ կրկնեց.

— Որո՛նք որ կը վախնան մեր թուոյն երսունի իջնելէն, թող ըսեն։

Փսփսուքները կրկնապատկեցան։

— Սակայն, ըսաւ խումբէն ձայն մը, ասկէ թողուլ երթալը դիւրին բան չէ. խօսքով միայն դիւրին է։ Պատնէշը պաշարուած է ամէն կողմէն։

— Հալի կողմէն չէ, ըսաւ Անժօլրա։ Մօտաւորապէս փողոցն ազատ է և Տէ Բրեշէօր փողոցէն դացողը կրնայ Տէդ-Ինօսան (Անմեղներու) վաճառանոցը հասնիլ։

— Սակայն հոն հասնելէն առք պիտի բռնուի, ըսաւ խումբէն ուրիշ ձայն մը։ Հարիւր սահմանադիծը կամ շրջակաները հսկող պահակներուն մէջէն պիտի անցնի։ Պլուզայով և դլխանոցով մարդու մ'անցնիլը պիտի տեսնեն պահակները։ Ուսկէ կուգաս. թերևս պատնէշէն կուգաս, այնպէս չէ, կը հարցունեն. ձերներդ կը նային։ Վատօրէն հոտը կառնուն, և ահա հրացանի կը բռնուիս։

Անժօլրա՝ առանց պատասխանելու՝ Գօմպըֆէրին ուսին դըպաւ, և երկուքնին ալ ստորին սրահը մտան։

Պահ մ՚եռք դուրս ելան։ Անժօլրա ձեռքին վրայ երկրնցուցած էր այն չորս համազգեստները զոր պահել տուած էր։ Գօմպըֆէրը եռէֆն կուզար ազգային պահակի շէֆերը և հաշիղէն պարկերը, գօտիները և այլն բերելով։

— Ա՛յս համազգեստը հագնողը, ըսաւ Անժօլրա, զօրաց կարգերուն կը խառնուի և կազատի։ Առ այժմ ահա չորս համազգեստ չորս հոգւի համար։

Եւ չորս համազգեստները դեռինը նետեց։

Սառիկեան ունկնդիրներուն և ոչ մին կը շարժէր։ Գօմպըֆէրը սկսաւ խօսիլ.

— Օ՛ն, պէտք է քիչ մը գործ ունենալ, ըսաւ։ Գիտէք թէ հոս ինչի վրայ է խնդիրը։ Կիներուն վրայ է խնդիրը։ Կը հարցունեմ ձեզի թէ կիներ կան, այո՛ կամ ոչ, մանուկներ կա՞ն, այո՛ կամ ոչ, կը հարցունեմ, կա՞ն թէ չկան այնպիսի մայրեր որ ոտքով որբան կօրեն և որք շատ մը մանկիկներ ունին իրենց բոլորտիքը։ Ձեզմէ ո՛վ որ դայեակի մը գիրկը տեսած չէ երբէք, թող ձեռքը վերցունէ։ Ի՛նչ. հոս մնռնիլ կուզէք համ, ես ալ նոյնպէս կուզեմ մնռնիլ. ես որ ձեզի կը խօսիմ, բայց չեմ ուզեր կիներու ուրուականայ վայնասունը զգալ բոլորտիքս։ Մեռնիք, լա՛ւ, բայց մի՛ մեռցնէք։ Հոս կատարուելիք ինքնասպանութեանց նման ինքնասպանութիւնները վեհ են, բայց ինքնասպանութիւնն անձուկ է, և տարածուիլ չուզեր։ և երբ ձեր ազգականներուն կը մօտի, մարդասպանութիւն կանուանի։ Միտքերնիդ բերէք խարտեաշ պզտի պլուխները, միտքերնիդ բերէք նաև սպիտակ մազերը։ Մտիկ ըրէք, Անժօլրա հիմակ ըսաւ ինձ թէ պահ մ՚առաջ Տիւ Սինեը փողոցին ծայրը լուսաւոր պատուհան մը, հնդեղօրդ գօտիկոնի խեղճ պատուհանէ մը ճրագ մը, և ապակիին վրան ալ պառաւ կնկի մը դլուխին անընդհատ շարժող շուքը տեսեր է։ այս պառաւը դիշերը չքնացած և ոտաստած կերևար։

Գուցէ ձեզմէ մէկին մայրն է ան։ Ուրեմն ո՛վ որ է ատոր զաւակը, թող մեկնի, և թող շուտ մ՚երթալով, Ահա եկայ, մայր իմ, ըսէ անոր։ Թող հանդիստ ըլլայ այդ մեկնողը դիտնալով թէ հոս գործը իր ներկայութեամբն ինչպէս որ պիտի կատարուէր, նոյն կերպով պիտի կատարուի դարձեալ։ Մարդ երբ աշխատութեամբն իր ընտանիքը կը նայի, ա՛լ իրաւունք չունի զոհուելու։ Այսպէս զոհուիլն ընտանիքը լքանել է։ Հապա ինչ ըսեմ անոնց որք աղջիկներ ունին, քոյրեր ունին։ Մտածեցիք անդամ մը թէ ինչ հետեւութիւն կունենայ անոնց լքումը։ Մահուան կենթարկիք, ահա մեռաք, լա՛ւ, բայց վաղը։ Վաղը անտիական աղջիկներ առանց հայրի կը մնան։ Մարդս կը մուրայ, կինը կը ծախէ։ Ա՛հ, այն ամենասիրուն և ամենաքաղցր էակները, որք ծաղկաւէտ պատկներ ունին, որք սրբութեամբ կը համակեն տունը, որք կերզեն, կը շաղփաղփեն, որք կարծես կենդանի անուշահոտութիւն մ՚են և որք երկրային կոյսերու անարատութեամբն երկնային հրեշտակներու էութիւնը կապացուցանեն, այն Բօզան, Էլիզան, Բօլինան, ձեր օրհնութիւնը և հպարտութիւնը կազմող այն պաշտելի արարածները, ո՛հ, Աստուած իմ, վաղը անօթի պիտի մնան։ Մարդկային մթ վաճառանոց մը կայ, և անշուշտ այդ քաղցր էակներուն բոլորտիքը սարսռող ձեր ստութիւններու ձեռներով զանոնք պիտի չկրնաք այն վաճառանոցը մտնելու արգիլել։ Ցիշեցէք փողոցները, յիշեցէք անցորդներով ծածկուած քարայատակները, խանութները, որոնց առջևէն մերկապարանոց և մերկամեջ կիներ տղմին մէջ կերթևեկեն։ Այն կիներն ալ առեն մ՚անարատ էին։ Քոյրեր ունեցողը թող մտածէ անոնց վրայ։ Թշուառութիւնը, բողոքութիւնը, քաղաքապահները, Սէն–Լազարի բանտը, ահա ասոնց ճիրաններուն պիտի մատնուին այն քնքուշ և գեղանի աղջիկները, համեստութեան, աղնուութեան և գեղութեան այս դիւրաբեկ հրաշալիքներն որք մահիս ամիսուան վարդերէն և շեփորուկներէն աւելի թարմ

են : Ա՛հ , այսօր մեռաք , ձեր ընտանիքին քովը չէք ալ , շատ աղէկ· ժողովուրդն արքայական բռնաւորութենէ ազատել ուզեցիք , բայց ձեր աղջիկները ոստիկանութեան կը մատնէք : Բարեկամներ , զգուշացէք , զթայէք : Մարդիկ սովորութիւն չունին շատ մտածելու կանանց վրայ , թշուառ կանանց վրայ : Հոգ չեն ըներ անոնց մարդերէ կրթութիւն առած չըլլալը , կարդիլէն զանոնք կարգալու , կարդիլէն խորհելու , կարդիլէն քաղաքական խնդիրներու պարապելու· միթէ պիտի արգիլէք այս գիշեր մահառունն երթալու և ձեր դիահները փնտռելու : Ուրեմն որոնք որ ընտանիք ունին , թող բարի զաւակներ ըլլան և մոր ձեռքը թողնեն անգամ մը մեկնին և հոս թողուն մեզի որ մինակ կատարենք գործը : Շատ աղէկ գիտեմ թէ քաջութիւն պէտք է մեկնելու համար· գժուարին բան է այսպէս մեկնիլը· բայց ո՛րքան գժուարին ըլլայ , այնքան աւելի արժանիք ունի այն : Հրացան մ՚ունիմ , պատնէշին մէջն եմ , ուրեմն հոգս անդամ չէ , հոս կը կենամ , կըսէք : Հոգս անդամ չէ ըսելը դիւրին է : Բարեկամներ , այսօրը վաղ մ՚ունի· վաղը դուք ապրելէ գադրած պիտի ըլլաք , բայց ձեր ընտանիքները կենդանի մնացած պիտի ըլլան : Եւ ո՛րքան վշտեր պիտի կրեն : Օրիորդներ , աղաչեմ , ահա քաջողջ և աղուոր մանուկ մ՚որ խնձորի պէս այտեր ունի , որ կը խօսի ինչ որ բերանը կուգայ , կը ձչէ , կը շաղփաղփէ , կը խնդայ , որուն թարմութիւնը կզգաս երբ կը պագնես , այդ մանուկն ինչ կըլլայ դիտէք երբ կը լքուի : Ես տեսած եմ առանկ մանկիկ մը , սա չափ բարձր մանկիկ մ՚որուն հայրը մեռած էր : Աղքատ մարդիկ մեզնայ լով իրենց քովն առեր էին զան , բայց առանք և ոչ իսկ իրենց համար ուտելու հայց ունէին : Մանկիկը միշտ անօթի կը մնար : Եղանակն ալ ձմեռ էր : Անձրեւ չէր գար : Խեղճը կրակարանին քովը կերթար որու մէջ բնաւ կրակ չէր ըլլար և որու խողովակը՝ ինչպէս գիտէք՝ դեղին կաւով կցուած էր: Մանուկը իր պզտիկ մատերովն այս կաւէն կառնուր քիչ մը

և կուտէր : Շնչառութիւնը՝ բիրտ , դէմքը՝ կապարագոյն , սրունքը՝ թոյլ , փորը՝ մեծ էր : Բան մը չէր ըսեր· պատասխան չէր տար ան երբ իրեն հետ կը խօսուէր : Մեռաւ խեղճը· տեսքերի հիւանդանոցը տարուեցաւ որ հոն մեռնի· տեսած եմ այդ մանուկը : Ներքին բժիշկ էի այդ հիւանդանոցին մէջ : Հիմա եթէ ձեր մէջ կան հայրեր որք կիրակի օրեր իրենց հասարազուկ ձեռնոտը իրենց մանկան թաթիկը բռնելով պարտէզ երթնուելութիւնն ունին , թող այդ հայրերուն ամէն մէկը երևակայէ թէ իրեն է հիւանդանոցը մեռնողն այն մանուկը : Այս խեղճ տղէկը , զոր տակաւին կը յիշեմ , և տեսնել կը կարծեմ , անդամազննութեան սեղանին վրայ դրուեցաւ մերկ· իր կողերը մրթին տակ կը ցցուէին՝ դեղեմանոցի մը խառերուն տակի փոսերուն պէս : Ստամոքսին մէջ տեսակ մը սիրտ պտնուեցաւ : Ակռաներուն մէջ մոխիր կար : Օ՛ն ուրեմն , քննենք մեր խիղճը , խրատ առնունք մեր սրտէն : Վիճակագրութիւնները կը հաստատեն թէ լքուն մանկանց հարիւրին չիսունը հինգը կը մեռնի : Ալ կրկնեմ թէ խնդիրը կանանց , մայրերու , անտիական աղջիկներու , մանկիներու վրայ է : Միթէ ձեր վրայ է խնդիրը : Շատ աղէկ գիտեմք թէ ինչ էք· հիմա պիտի հասկնանք թէ ամէնքդ ալ քաջերը էք· շատ աղէկ գիտեմք թէ ամենուդ ալ հոգին մեծ դասին համար ձեր կեանքը տալու ուրախութեամբ և փառքով համակուած է· շատ աղէկ գիտեմք թէ օգտասէր և շքեղասէր մեռնելու համար բնարուած ըլլալնիդ կզգաք և թէ իւրաքանչիւր ոք չուզեր զրկուիլ իր յաղթանակի բաժինէն: Աղէկ , շատ աղէկ , բայց մինակ չէք այս աշխարհիս մէջ: Ուրիշ անձեր ալ որոնց վրայ մտածել պէտք է : Պէտք չէ ինքնամոռ ըլլալ:

Ամենքն ալ իրենց դլուխը ծուեցին տխուր դէմքով մը :

Ի՛նչ տարօրինակ հակասութիւններ մարդկային սրտի իր ամենէն վեհ վայրկեաններուն մէջ: Գոմպըֆէր ինքն ալ որբ մը չէր : Ուրիշներուն մայրը կը յիշէր և իրը կը մոռնար :

պիտի մեռնէր պատնէշին մէջ։ «Ինքնամոլ» մ'էր ան։

Մարիուս որ անօթի և տենդոտ էր, որու ամէն յոյսերը մի առ մի 'ի դերև ելեր էին· որ նաւաբեկութիւններու ամենէն սխրալին կաղմող վշտին մէջ անդամ չէր յաջողեր և որ բուռն յուզմունքով համակուած՝ կզդար մահուան մօտիլը, Մարիուս կըսենք, հետ գՀետէ ընկղմած էր այն ցնորական շուարումին մէջ որով մարդս միշտ կը դրաւուի կամովին ընդունուած աղետալի ժամը զարնելէն առաջ։

Բնապէտ մը կրնար անոր վրայ զննել տենդային հալումի մ'աձեղուն ախտանշանները· այս տենդային հալումը դիտութենէ ճանչուած և ախտերու դասն անցած է արդէն, և ինչ որ է հեշտութիւնը զգօսանքին նկատմամբ, նոյնն է վըշտին նկատմամբ նաև այն։ Ցուսահատութիւնն ալ իր զմայլումն ունի։ Մարիուս ահա այս վիճակին հասած էր։ Ամէն ինչի հանդիսական էր իբր դուրսէն նայող։ Ինչպէս որ ըսինք, իր առջև անցնող իրերը հեռաւոր կերեւային իրեն, անոնց ամբողջութիւնը կը նշմարէր, բայց պարադաները չէր նշմարեր։ Երեւեկողները կը տեսնէր փայլատակումի մը մէջ։ Անդունդի մը յատակը խօսող ձայներ լսել կը կարծէր։

Սակայն Գօմպըֆէրին խօսքերէն մորմոքիլ ղդաց։ Այս տեսարանն սկսաւ մ'ունէր որ մինչև իրեն դպաւ և արթնցուց ղինքը։ Ա՛լ մէկ դաղափար ունէր որ էր մեռնիլ, և չէր ուզեր մոքէն հեռացնել այս դաղափարը։ Բայց իր սպառիթ քնաշրջութեան մէջ մտածեց թէ մեռնելու ժամանակ արդիլուած չէր մարդ մ'ազատելու։

Ուստի ձայնը հանելով,

— Անժօլրա և Գօմպըֆէր իրաւունք ունին, ըսաւ, անօդուտ զոհ չընենք։ Համամիտ եմ անոնց հետ և պէտք է փութալ։ Գօմպըֆէր վճռական բաներ ըսաւ ձեղի։ Ձեր մէջը կան ոմանք որք ընտանիք, մայր, քոյր, կին, զաւակ ունին։ Թող դուրս ելնեն առանք։

Ոչ ոք շարժեցաւ տեղէն։

— Ընտանիքները և ընտանիք նայողները դուրս ելնեն, կրկնեց Մարիուս։

Մեծ էր իր իշխանութիւնը։ Ստոյգ է թէ Անժօլրա պատնէշին պետն էր, բայց Մարիուս ալ ազատիչն էր։

— Կը հրամայեմ, դոչեց Անժօլրա։

— Դալաչեմ, ըսաւ Մարիուս։

Անտանելի այս դիւցազնասիրա մարդերը Գօմպըֆէրի խօսքերէն յուզուելով, Անժօլրայի հրամանէն դղրդելով, Մարիուսի աղաչանքէն մորմոքելով սկսան զիրար մատնել։ — Ի՞նչ է, կըսէր երիտասարդ մը կարգուած մարդի մը, ընտանիքի տէր ես դուն, ելլէր, դնա՛։ — Ընդհակառակն պէտք է որ դուն երթաս, կը պատասխանէր մարդը, վասն զի երկուքդ ունիս որոց դուն կը նայիս։ — Եւ անլուր կռիւ մը կը ծագէր։ Ամէն մէկը կը ջանար չարտաքսիլ դերեզմանէն։

— Փութանք, ըսաւ Գուրֆէյրադ, քառորդէ մ'առաջ աւտեն չպիտի ըլլայ մեկնելու։

— Քաղաքացիներ, շարայարեց Անժօլրա, Հանրապետութիւն է հոս, և ընդհանուր քուէարկութիւնը կիշխէ։ Դուք ինքնին յայտնեցէք թէ որո՛նք կը պարտաւորին մեկնիլ։

Հնազանդեցան։ Քանի մը րոպէէն հազ հինգ հոգի ամենուն համաձայնութեամբը նշանակուելով ապստամբներուն կարդերէն դուրս կելլէին։

— Հինգ հոգի են, դոչեց Մարիուս։

Ձորս համազգեստ կար միայն։

— Ուրեմն, կրկնեցին հինգերը, պէտք է որ մէկը ձեայ։

Եւ ահա մէկը կը ջանար մնալ և միւսներուն չմնալու պատճառները դանելու կը նկրտէր։ Վերհանձնական կռիւը վերսին սկսաւ։

— Դուն կին մ'ունիս որ կը սիրէ քեզի։ — Դուն ալ պառաւ մայր մ'ունիս։ — Դուն ալ ոչ հայր, ոչ մայր ունիս, ինչ պիտի ըլլան երեք պզտիկ եղբայրներդ։ — Դու հինգ զաւկի տէր ես։ Դուն իրաւունք ունիս ապրելու, դեռ տասն

եօթ տարեկան ես , մեռնիլը շատ կանուխ է քեզի համար :

Այս յեղափոխական մեծ պատահէնները դիւցազնութիւններու ժամադրութիւններ էին , ուր պարզ էր ինչ որ անհաւատալի կը թուի : Այս մարդերը չէին զարմանար մկ մկիու վրայ :

— Շուտ ըրէք , կը կրկնէր Գուրֆէյրաք :

Խումբերէն ոմանք Մարիուսին դոչեցին·

— Դուք նշանակեցէք զով որ պիտի կենայ :

— Այո՛ , ըսին հինգերը , ընտրեցէք : Պիտի հնազանդինք ձեզի :

Մարիուս ալ չէր հաւատար թէ կրնար յուզուիլ ինք : Սակայն երբ մտածեց թէ մարդ մը պիտի ընտրէ մեռնելու համար , իւր բոլոր արիւնը դէպ ՚ի սիրտը հոսեցաւ : Պիտի ժժգունէր , եթէ տակաւին կարենար ժժգունիլ :

Ցառաջացաւ դէպ ՚ի հինգը որք կը ժպտէին իրեն· իւրաքանչիւր ոք՝ աչքը լի ըլլալով այն մեծ բոցով որ պատմութեան յատակը Թերմոբիլի կիրճին վրայ կը տեսնուի , կը գոչէր·

— Ինծի՛ , ինծի՛ , ինծի՛ :

Մարիուս ապշութեամբ մը համրեց զանոնք որք միշտ հինգ էին , յետոյ վար ըրաւ աչերը չորս համազգեստները նայելով :

Նոյն միջոցին այս չորս համազգեստին վրայ հինգերորդ մ՚ալ լինակաւ՝ կարծես երկինքէն խնայլով :

Հինգերորդ մարդն ազատած էր :

Մարիուս վեր ըրաւ աչերը և Պ· Ֆոշլեվանը ճանչցաւ :

Իրօք ծան Վալժան պատանէշը մտած էր :

Կամ տեղեկութիւն առած ըլլալով , կամ բնազդումով և կամ պատահաբար Մօնտէֆուրի դռիչն եկած էր :

Իր ազդային պահակի զգեստին շնորհիւ դիւրութեամբ անցած էր :

Ապստամբներուն կողմէն Մօնտէֆուր փողոցը դրուած պահնորդը վասնզի նշան տուած չէր միայն մէկ ազդային պահակի

համար : Թողած էր որ անցնի և փողոցը ձայ , իւրովի ըսելով· Հաւանական է թէ ձեռնտու մ՚է ան , եթէ չէ , դէթ կալանաւոր մ՚է : Վայրկեանը ծանրակշիռ ըլլալով , պահնորդը չէր կրնար իր պարտաւորութենէ և հսկողութեան աղէն շեղիլ :

Ծան Վալժան պատանէշը մտած պահուն ոչ ոք նշմարած էր զինք , վասն զի ամենքն ալ ընտրուած հինգ անձերուն և չորս համազգեստներուն կը նայէին ակնայեռ : Բայց ծան Վալժան տեսած և լսած ըլլալով , ըմբռնեցաւ վրայէն հանած էր իր համազգեստը և միւսներուն դէմին վրայ նետած էր :

Անպատում եղաւ յուզումը :

— Ո՞վ է այս մարդը , հարցուց Պօսյէ :

— Մարդ մ՚է ան որ ուրիշները կազատէ , պատասխանեց Թօմպրֆէր :

— Կը ճանչնամ զինքը , շարայարեց Մարիուս ծանր ձայնով մը :

Այս երաշխաւորութիւնն ամենուն կը բաւէր :

Անժօլրա դէպ ՚ի ծան Վալժան դառնալով ,

— Բարի՛ եկաք , քաղաքացի՛ , ըսաւ :

Եւ շարայարեց·

— Գիտէք անշուշտ թէ պիտի մեռնինք :

Ծան Վալժան՝ առանց պատասխանելու՝ իր ազատած ապստամբին օգնեց՝ որ համազգեստը հագնի :

ԳԼՈՒԽ Ե·

ԹԷ ԻՆՉ ՀՈՐԻՋՈՆ ԿԸ ՏԵՍՆՈՒԻ ՊԱՏՆԷՇԻՆ ՎԵՐԻՆ

Այս աղետալի միջոցին և այս անողոքելի տեղն ամենուն կացութեան արդիւնարար զօրութիւնը (resultante) , նաև իբր դադաթն Անժօլրայի յետին թախծութիւնն էր :

Անժօլրա յեղափոխութեան ամբողջութիւնը կը կրէր· սակայն ինքն անկատար էր , որքան որ կրնայ անկատար ըլլալ

քացարձակը· շատ կը յարէր Սէն–ժիւսթին, և ոչ այնքան Անաղարսիս Գլօցին: Սակայն ա պէ «էի բարեկամայ ընկերութեան մէջ իր միտքը վերջապէս Գօմպրֆէրի դաղափարներուն մարդիսականութիւնը կրած էր հեռվիւ իւիք· քանի մը ժամանակէ 'ի վեր վարդապետութեան անձուկ ձևը սակաւ առ սակաւ թողլով կը մղուէր յառաջդիմութեան դէպ 'ի լայնատարած սահմանները, և՝ իբր վերջնական և շքեղ զարդ ապա՝ ալ ընդունած էր դաղղիական մեծ հանրապետութեան մարդկային անքաւ հանրապետութեան կերպարանափոխիլը: Իսկ անմիջական միջոցներու մասին՝ բուռն միջոցները կուզէր եթէ բուռն կացութեան մը մէջ գտնուիլը հարկ ըլլար: Այս մասին անփոփոխ էր, և կը շարունակէր աշակերտ մնալու այն դիւցազնական և ահարկու դպրոցին զոր կամփոփէ Ենոռնէը երեք խօսքը:

Անժօլրա սալաքարէ սանդուղին վրայ կայնած էր՝ արմուկներուն մին իր գարապինայի փողին վրայ կռթնած: Կը խորհէր, կը սարսռէր՝ իբր թէ շունչերու անցնիլը զգար· եռատանիներու յատուկ այս տպաւորութիւնները կան այն տեղերը ուր է մահը: Ներքին նայուածքով լի բիբերէն տեսակ մը զսպուած հուրեր կելնէին: Յանկարծ դլուխը վեր ըրաւ· խարտեշագեղ մազերն ետևն ինկան աստղերէ կազմուած քառաձի տխուր կառքին վրայի հրեշտակին մազերուն պէս· կարծես թէ առիւծի մը հրեղէն պսակով փայլատակող բարշն էին այս մազերը· և ահա դոչեց Անժօլրա·

— Քաղաքացիներ, կերևակայէք ապագան: Քաղաքներուն փողոցները լոյսով պիտի ողողին, սեմերու վրայ դալարագեղ ոստեր պիտի ըլլան, ազգերը քոյր, մարդերն ալ արդար պիտի ըլլան, ծերերը մանուկները պիտի օրհնեն, անցեալը ներկան պիտի սիրէ, խորհողներն անթերի ազատութիւն պիտի ունենան, հաւատացեալները կատարեալ պիտի ըլլան, երկինք կրօնքին պիտի յաջորդէ, Աստուած ուղղակի կրօնաւորը և մարդկային խիղճը խորան պիտի ըլլայ·

ատերութիւնները պիտի վերցուին, դործատուցն և դպրոցը պիտի բարեկամանան, պատիժի և վարձատրութեան տեղ յանցաւորին յանցանքը և վարձատրութեան տեղ արժանիին արժանիքը պիտի հրապարակին, ամենքն ալ դործ պիտի ունենան, ամենքն ալ պիտի վայելեն, ամենքն ալ խաղաղութեամբ պիտի ապրին· արիւն չպիտի թափի, պատերազմ չպիտի ըլլայ, մայրերը երջանիկ պիտի ըլլան: Նիւթը նուաճելը առաջին քայլն է· երկրորդ քայլն է տեսլականը դործադրել: Մտածեցէք թէ յառաջդիմութիւնն ինչեր ըրաւ արդէն: Հին ժամանակները մարդկային յեղերը սարսափահար կը տեսնէին իրենց առջևէն անցնող հիդրան որ չուբերուն վրայ կը փչէր, վիշապը որ հուր կը փսխէր, կորձը որ օդին հրէշն էր և որ արծիւի մը թևերով և վագրի մը ճիրաններով կը թռչէր· զարհուրելի դաղաններ որք մարդուս վերևն էին: Սակայն մարդս իր որոգայթները, իմացականութեան նուիրական որոգայթները լարելով վերջապէս բռնեց այս հրէշները: Զբաղեցինք հիդրան որ կանուանի շոգենաւ· զսպեցինք վիշապը որ կանուանի շոգեկառք· զսպելու վրայ ենք նաև կորձը, արդէն բռնած ենք զայն, և կանուանի օդապարիկ: Այն օրն ուր այս բրօմէթէեան դործը պիտի լմնայ և ուր մարդս վերջնական կերպով իր կամքին պիտի լծէ հին ժամանակի եռապատիկ պայկը, այսինքն հիդրան, վիշապը և կորձը, չուբին, հուրին և օդին պիտի տիրեն, և տիեղերքիս միւս կեանդանի արարածներուն համար անի պիտի ըլլայ ինչ որ իրեն համար էին ժամանակաւ աստուածները: Քաջալերութի՛ւն, և օ՛ն յառաջ երթանք: Քաղաքացի՛ք, դէպ ուր կերթանք: Դէպ 'ի դիտութի՛ւն որ կառավարութի՛ւն պիտի ըլլայ, դէպ իրերու զօրութի՛ւնն որ միայն ինք պիտի ըլլայ հասարակաց զօրութի՛ւնը· դէպ 'ի քնական օրէնքն որ իր մէջ պիտի պարունակէ իր օձումը և պատժականութի՛ւնը, և յաւետութեամբը պիտի հրապարակուի· դէպ արևի ծագումին համապատասխանող ձշմարտութեան արևին ծագումը: Կերթանք

դէպ ազդերու միութիւնը, կերթանք դէպ ի մարդուս միութիւնը: Ա՛լ ոչ կեղծիք, ոչ ալ հայհատակներ: Իրականը ճշմարտէն պիտի կառավարուի· այս է ահա նպատակը: Քաղաքակրթութիւնը Եւրոպայի դպրոցին վրայ, և եղբը յամաքային մեծ երկիրներու կեդրոնը իմացականութեան ընդարձակ խորհրդարանի մը մէջ պիտի ընէ իր նիստը: Այսպիսի բան մ՚արդէն տեսնուեցաւ: Անֆիկթիօններըն* տարին երկու նիստ ունէին· մին Տէլֆի մէջ որ էր աստուածներու տեղը, միւսը Թերմօփիլի կիրճն որ դիւցազներու տեղն էր: Եւրոպան ալ իր անֆիկթիօնները պիտի ունենայ: Ֆրանսա իր կուշտերուն մէջ կը կրէ այս վեհաշուք ապագան: Տասնեւինը դարդ դարու թիւումն այս է: Ինչ որ ծրագրուած էր Ցուլնաստանէն, արժանի է կատարուելու Ֆրանսայի շնորհիւ: Մտիկ ըրէ ինձ, դու Փէօյեի, դու քաջդ բանուոր, զաւակդ ժողովուրդին, զաւակդ ժողովուրդներու: Պատկառանօք կը յարգեմ քեզի: Այո՛, դու որոշակի կը տեսնես ապագայ ժամանակները, այո՛, իրաւունք ունիս դու: Ոչ հայր, ոչ մայր ունէիր դու, Փէօյեի, մարդկութիւնը մայր և իրաւունքը հայր ըրիր և ընդունեցար քեզի: Պիտի մեռնիս հոս, այսինքն պիտի յաղթանակես: Քաղաքացիք, ինչ որ ալ պատահի այսօր, մեր պարտութեամբն ինչպէս նաև յաղթութեամբը յեղափոխութիւն մը պիտի ընենք: Ինչպէս որ հրդեհներն ամբողջ քաղաքը կը լուսաւորեն, յեղաշրջումներն ալ ամբողջ մարդկային սեռը կը լուսաւորեն: Եւ ինչ յեղափոխութիւն պիտի ընենք: Ըսի արդէն պահ մ՚առաջ, ճշմարտին յեղափոխութիւնը պիտի ընենք: Քաղաքական տեսութեամբ նկատուելով միայն մէկ սկզբունք կայ, որ է մարդուս վեհապետութիւնը իր ինքնութեան վրայ: Մարդկային ինքնութեան այս վեհապետութիւնը կանուանի Ազատութիւն: Ուր որ կընկերային այս վեհապետութիւններուն երիւքը կամ աւելին, հոն կսկսի Պետութիւնը: Բայց այս ընկերակցութեան մէջ

* Ցունաց հելլենական խորհրդարանի անդամ՝ հին ժամանակի մէջ:

իշխանութենէ հրաժարում չկայ բնաւ: Մէն մի վեհապետութիւն ինքն իրմէն մաս մը կը շնորհէ հասարակային իրաւունքը կազմելու համար: Այս մասը միևնոյն քանակութենէն ունի ամենուն համար: Իւրաքանչիւրին ամենուն ըրած շնորհումին այս նոյնութիւնը կանուանի Հաւասարութիւն: Հասարակային իրաւունքն ոչ այլ ինչ է եթէ ոչ ամենուն պաշտպանութիւնը որ կը ծառագայթի ամեն մէկուն իրաւանց վրայ: Ամենուն կողմէն իւրաքանչիւրին վրայ տարածուող այս պաշտպանութիւնը կանուանի Եղբայրութիւն: Իրարու հետ միացող այս ամեն վեհապետութիւններու հատակէտը կանուանի Ընկերութիւն: Այս հատակէտը կցորդութիւն մ՚ըլլալով կապ մ՚է այն: Ահա ասկէ կը հետևի ինչ որ ընկերային կապ կանուանի: Ամենք ընկերային դաշնագրութիւն կըսեն· ասալ մի և նոյն բանն է, քանզի դաշնագրութիւն բառը կապի գաղափարով կազմուած է սոսկ աբանօրէն: Հասկցանք սակայն եթէ ինչ է հաւասարութիւնը· վասն զի եթէ ազատութիւնը կատարն է, հաւասարութիւնը հիմն է: Քաղաքացիք, հաւասարութիւնն ամեն բոյսերու համահարթութիւնը չէ· մծատակայ նախանձոտութիւններով մէկզմէկ կարող խոտի մեծ շիլերու և պզտիկ կաղնիներու ընկերութիւն մը չէ այն· հաւասարութիւնը՝ քաղաքային տեսութեամբ նկատուելով՝ ամեն կարողութիւններուն մի և նոյն դուռն ունենալն է· քաղաքական տեսութեամբ նկատուելով ամեն քուէներու մի և նոյն կշիռն ունենալն է· կրօնական տեսութեամբ նկատուելով ամեն խիղճերու մի և նոյն իրաւունքն ունենալն է: Հաւասարութիւնը գործի մ՚ուզնի որ է ձրի և հարկադրական կրթութիւնը: Մարդս երաւունք ունի այր բէն պիմը պահանջելու· պէտք է ասկէ կսկսիլ: Ամեն մարդ պէտք է հարկադրուի նախակրթական գըպրոցը մտնելու· ամենուն պէտք է ընծայուի երկրորդական գըպրոցը, այս է ահա օրէնքը: Համանման պըրոցէն հաւասար ընկերութիւն կելնէ: Այո՛, ուսո՛ւմ, լո՛յս, լո՛յս: Ամեն բան լոյսէն կուգայ և ամեն բան դէպ ի լոյս կը վերադառնայ:

քաղաքացիք, տասնեհինգերորդ դարը մեծ է, բայց քսաներորդ դարն երջանիկ պիտի ըլլայ: Անատեն բնաւ տեղի պիտի չունենան հին պատմութեան նման բաներ· ոչ ոք պիտի վախնայ թէ քսաներորդ դարու մէջ ալ կրնայ ըլլալ ինչ որ արդի ժամանակս կ'ըլլայ, այսինքն աշխարհակալութիւն, արշաւանք, յափշտակութիւն, զինու զօրութեամբ ազգերու հակառակորդութիւն, քաղաքակրթութեան ընդհարում՝ թագաւորներու ամբանութեան մը պատճառաւ, ժառանգային բռնամոլութիւններու մէջ ծնունդ մը, ժողովուրդներու բաշխումը՝ դեսպանաժողովի որոշումով, երկիրներու յօշոտումը՝ արքայական ցեղի մը կործանումով, պատերազմ երկու կրօնքներու՝ մթութենէ արտադրուող երկու նոխազի պէս՝ անսահմանութեան կամուրջին վրայ ձակատ առ ձակատ զարնուելով. սով, ապօրէն շահագործութիւնը, պառնկութիւնը՝ կարօտաբեկութեան պատճառաւ, թշուառութիւնը՝ գործերու դադարման առթիւ, կառափնառը, թուրը, պատերազմները և պատահարներու անտառին մէջ դիպուածին ամէն աւազակութիւնները: Կրնայ թերևս ըսուիլ թէ ալ պատահարներ չպիտի ըլլան: Մարդս երջանիկ պիտի ըլլայ: Մարդկային սեռն իր օրէնքը պիտի կատարէ ինչպէս հողագունտս իր օրէնքը կը կատարէ· ներդաշնակութիւնը վերստին պիտի հաստատուի հոգիին և աստղին մէջ· հոգին դէպ 'ի ճշմարտութիւն պիտի հակի աստղին պէս որ դէպ 'ի լոյս կը հակի: Բարեկամներ, տխուր է ժամս ուր կը դառնուինք և ուր կը խօսիմ ձեզի· բայց ատոնք ապագային սոսկալի դիւմերն են: Յեղափոխութիւն մը մաքսային տուրք մ'է: Ո՛հ, պիտի ազատի՛, կանգնի՛ և միխթարի՛ մարդկային սեռը: Այս պատնէշին վրայ կը յայտնենք անոր իր ապագայ ազատումը, կանգումը և միխիթարութիւնը: Ուսկէ՞ պիտի արձակուի սիրոյ աղաղակն եթէ ոչ ղեկղեքութեան կատարէն: Ո՛ եղբարք իմ, խորհողներուն և վշտահարներուն միաւորութեան տեղը հոս է· այս պատնէշին ոչ քարերով, ոչ դերաններով, ոչ ալ հին երկաթեղէններով շինուած է, այլ

երկու դիզով, դէզ դաղափարներու, դէզ վիշտերու: Թշուառութիւնը հոս սեպհականին կը հանդիպի: Լոյսը հոս խաւարն ընդդիմելով կըսէ անոր· Քեզի հետ պիտի մեռնիմ և ինծի հետ պիտի վերածնիս: Ամէն վիշտերու ողջագուրանքէն հաւատքը կը ժայթքի: Տառապումներն իրենց հոգեվարութիւնը, դաղափարներն ալ իրենց անմահութիւնը կը բերեն հոս: Այս հոգեվարութիւնն և անմահութիւնը պահ մ'առաք պիտի խառնուին և մեր մահը պիտի բազադրեն: Եղբարք, ով որ կը մեռնի հոս, ապագային փողփղումին մէջ կը մեռնի, և կը մնանենք դերեզման մ'որ արշալոյսով ողողուն է:

Անժօլրա աւելի դադրեցաւ խօսելէ քանթէ լռեց· շուրթերը կը շարժէին լուին իբր թէ տակաւին խօսէր ինքնիրեն· այս պատճառաւ ունկնդիրներն ուշադրութիւն ընելով և տակաւին լսել կարենալու համար անոր նայեցան: Ծափահարութիւն չեղաւ, բայց երկարատև փսփսուք մը տեղի ունեցաւ: Խօսքը շունչ ըլլալով, իմացականութեան սարսուռները տերևներու սարսուռներու կը նմանին:

ԳԼՈՒԽ Զ·

ՄԱՐԻՈՒՍ ԳԱՓԱՆ, ԺԱՎԻՐ ԼԱՀՈՆԵՍԱՆ

Չիմանք ըսենք թէ ինչ կանցնէր Մարիուսի մտքէն: Ընթերցողը թող յիշէ անոր սրտին վիճակը:

Ինչպէս յիշեցինք արդէն, ամէն բան ցնոր մ'էր անոր համար: Իր դատումը պղտոր էր: Կը կրկնենք թէ Մարիուս հոգեվարներու վրայ բացուած խաւարային մեծ թևերուն ստուերին տակն էր: Գերեզմանը մտած ըլլալ կզգար· կը թևար իրեն թէ արդէն պատին միւս կողմը կը գտնուի և ալ մեռելի մ'աչերովը կը տեսնէր կենդանիներուն դէմքը:

Պ· Ֆոշլեվան ինչպէս հոն եկած էր· ինչու՞ եկած էր: Ի՞նչ ընելու եկած էր: Մարիուս այս հարցումները չըրաւ ինքն իրեն: Մանաւանդ թէ մեր յուսահատութիւնը մասնաւոր հան-

դամանք մ՚ուներնալով որ է Ճիշդ մեղի պաշարելուն պէս ուրիշն ալ պաշարել, Մարիուսին բնական կերեւար ամէն մարդուն մեռնելու համար պատնէշը պալը :

Միայն թէ սիրտը մորմոքելուն Գօզէթը յիշեց :

Սակայն Պ· Ֆոշլեվան ոչ խօսեցաւ անոր, ոչ նայեցաւ և ոչ իսկ լսել ձեւացուց երբ Մարիուս ձայնը բարձրացնելով ըսած էր· կը ձանչնամ զինքը :

Իսկ Մարիուս միթքարութիւն կզգար Պ· Ֆոշլեվանին այս դիրքէն, նաև հաճոյք, եթէ սակայն ներելի է այսպիսի տպաւորութիւններու համար հաճոյք բառը գործածել : Մարիուս միշտ բացարձակ անհնարութիւն մը զգացած էր խօսք ուղղելու այս կնճռաւալի մարդուն որ իրեն համար երկդիմի ու միանգամայն պատկառելի էր : Ասկէ ՚ի զատ շատ ժամանակէ ՚ի վեր տեսած չէր զանոնք, ասով՝ վհերոտ և ղողուշաւոր բնութեան տէր Մարիուսին համար ալ աւելի անհնար կըլլար այն մարդուն խօսք ուղղելը :

Զատուած հինգ մարդերը պատնէշէն դուրս եկան Մօնտէթուր գիհին կողմէն· կատարելապէս ազդային պահակներու կը նմանէին : Անոնց միտն լալով գնայ : Մեկնելէ առաջ համբուրեցին պատնէշը ճեպողները :

Կեանքի վերածուող հինգ մարդերն երբ մեկնեցան, Անժօլրա Ճավէրը յիշեց որ մահուան դատապարտուած էր : Ըստորին սրահը մնաւ : Ճավէր՝ ցցին կապուած՝ կը խորհէր :

— Բանի մը պէտք ունիս, Հարցուց Անժօլրա :

Ճավէր պատասխանեց·

— Ե՞րբ պիտի մեռցնէք զիս :

— Սպասէ : Հիմա մեր ամէն փամփուշտներու հարկաւորութիւն ունինք :

— Ուրեմն խմելու բան մը տուէք ինձ, ըսաւ Ճավէր :

— Ա՞ռ է միայն ուզածդ, կրկնեց Անժօլրա :

— Հանդիստ չեմ այս ցցին քով, պատասխանեց Ճավէր : Գթութիւն մ՚ըրած չեղաք թողլով զիս որ հոս անցունեմ

դիշերը : կապեցէք զիս ինչպէս որ կուզէք, բայց կրնաք զիս ալ միւսին պէս սեղանի մը վրայ պառկեցնել :

Եւ Ճավէր դլուխի շարժումով մը Պ· Մապէօֆին դիակը կը ցուցուներ :

Ընթերցողը կը յիշէ անշուշտ թէ սրահին ներքսը մեծ և երկայն սեղան մը կար որու վրայ ապստամբները դնտակ ձուլած և փամփուշտ շինած էին :

Անժօլրային հրամանաւ չորս հոգի ցցէն քակեցին Ճավէրը : Քակուած պահուն հինգերորդ մը սուինը անոր կուրծքին վրայ կենդանացած էր : Ճավէրին ձեռներն եռեւէն կապուած ձեացին· ոտքը մարակի նուրբ և հաստատուն չուան մը անցուցին որով ան կրնար տասնուհինգ մատի չափ քայլեր առնուլ կառափնառն եղնելու պատրաստներու քայլերուն պէս, և այսպէս քայլեցուցին զինքը մինչև սրահին ներքսի սեղանին քով որու վրայ երկնցուցին՝ կէս մէջքէն պինդ մը կապելով :

Աւելի ապահովութեան համար մարդերն անոր վզին կապուած չուանով մը՝ արդէն Ճավէրի փախուստն անհնարին ընող կապերու ձեւին վրայ աւելցուցին նաև այն տեսակ մը կապը որ բանտերու մէջ մաքրենալ կանուանի և որ ծոծրակէն գալով կուրծքին վրայ երիւքի կը բաժնուի և սրունքին մէջէն անցնելէն ետք ձեռներուն կը հասնի :

Մինչդեռ Ճավէր կը կաշկանդուէր, մարդ մը՝ դուրսէն սեմին վրայ կեցած՝ տարօրինակ ուշադրութեամբ մ՚անոր կը նայէր : Ճավէր՝ այս մարդին շուքը դիտելով՝ դլուխը դարձուց : Վեր ըրաւ աչերը և ճանչցաւ Ժան Վալժանը : Ճավէր և ոչ իսկ սարսռեցաւ, վար ըրաւ աչերը սիրտէս և ըսաւ միայն· Ձեմ զարմանար :

ԳԼՈՒԽ Ե·

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱՆՐԱՆԱՑ

Լուսն արդէն կը շատնար : Բայց դեռ ոչ պատուա-

հան մը, ոչ ալ դուռ մը կը բացուէր· արշալոյսի ժամուն նակն էր տակաւին և չէ թէ զարթուած: Պատնէշին հանդիպակայ Տը Լա Շանվըրըի փողոցին ծայրէն՝ ինչպէս ըսինք արդէն՝ բոլորովին մեկնած էին զօրքերը· ալ անարգել կրնար այս փողոցն և աղետալի հանդարտութեամբ մը կը բացուէր անցորդներուն: Սէն–Տընի փողոցն անմուռունչ էր Թէպի մէջ սպինգոններու ճամբուն պէս: Ամենևին կենդանի էակ մը չկար քառուղիներու բերանները զոր արևի ցոլքում մը կսպիտակէր: Ոչինչ կրնայ այնքան սոսկալի ըլլալ որքան է ամայի փողոցներուն այս լոյսը:

Բան մը չէր տեսնուեր, բայց կը լսուէր: Պատնէշէն այս ինչ հեռաւորութեամբ տեղ մը պաղտնի շարժում մը կըլլար: Ցայտնի էր թէ վտանգաւոր ժամը կը մօտէր: Պահնորդներն եկան պատնէշը մտան ինչպէս որ առջի օր երեկոյին եկեր էին· բայց այս անգամ ամենքն ալ եկան:

Պատնէշը հիմակ աւելի ամուր էր քանթէ առջի յարձակումը կրած ժամանակ: Հինգ հոգին մեկնեցէն 'ի վեր աւելի բարձրացած էր այն:

Հալի կողմերը դիտող պահնորդին կարծիքին համաձայն՝ Անժօլրա, վախնալով թէ պատնէշն եռակն յանկարծ յարձակում մը կը կրէ, ծանր որոշում մ'ըրաւ: Խափանել տուաւ նաև Մօնտէմուրի պղտի և նեղ անցքը որ մինչև անատեն անխափան մնացած էր: Այս անցքը դոցելու համար քանի մը տուներու առջևին սալաքարերն ալ հանուեցան: Այս կերպով պատնէշն երեք փողոցի կողմէն այսինքն առջևը Տը Լա Շանվըրըի փողոցին, ձախակողմը Սինեի և Բրեթէթ–Թրիւանտըրի փողոցներուն, աջակողմն ալ Մօնտէմուր փողոցին կողմէն փակուած ըլլալով, իրօք դրեթէ անառիկ էր· ստոյգ է նաև թէ հարկաւորապէս բանտարկուած էին անոր մէջ: Եօթը ձակատ ունէր, բայց ալ եղք չունէր: Բերդ, բայց կախուլ, ըսաւ Գուրֆեյրակ խնդալով:

Անժօլրա կապելոնին դուռին քով դիրքէ տուաւ երեսունի

չափ սալաքարերը որոնց համար պարապ տեղը հանուած են, կըսէր Պօսիւէ:

Ուսկէ որ պիտի գար յարձակումը, հոն հիմակ այնքան խորին էր լռութիւնը որ Անժօլրա ամէն մէկին հրաման ըրաւ իր կուխի կայանը կենալ:

Ամենուն ալ փոքր ինչ օղի բաշխուեցաւ: Ոչինչ այնքան հետաքրքրական կրնայ ըլլալ որքան է յարձակումի պատրաստուող պահնէշ մը: Ամէն մէկն իր տեղը կընայ թատրոնին մէջ տեղ մ'ընտրողի պէս: Քով քովի, արմուկ արմուկի, ուս ուսի մօտենալով կը սեւեռուին: Կան այնպիսիներ որք նստարաններ կը շինեն սալաքարերով: Եթէ նեղութիւն տուող պահ անկիւնի մը քով գտնուի հանդիսական ապստամբը, կը հեռանայ անկէ· եթէ տեսնէ պաշտպանելու կարող ժանեւոր պարիսպ մը, հոն կապաւինի: Ձախլիկները թանկագին են· իրենք կառնուն ուրիշներուն անհանգստութիւն տուող տեղերը: Շատերն ալ կարգապրութիւն կընեն նստած պահեր բաշխելու համար: Կուզեն դիւրութիւն ունենալ մեռցունելու համար, և հանգստութիւն՝ մեռնելու համար: 1848 յունիսի աղետաւոր պատերազմին ժամանակ ապստամբ մ'որ սոսկալի կերպով նշան առնուլ գիտէր և որ յարկի մը վրայ դարափի մը վերեն կը պատերազմէր, վօլթեր ըսուած թխկնաթոռ մը բերել տուած էր հոն· ռումբի բեկոր մ'եկաւ գտաւ զինք նոյն աթոռին վրայ:

Պարապ լուռն երբ կը հրամայէ կուիւի պատրաստուիլ համայնապէս, ամէն խառնաշփոթ շարժում, ամէն փոխադարձ վարանում կը դադրի բոլորովին· ոչ կուսակցութիւններ, ոչ մեկուսի խօսքեր, ոչ ալ առանձին խումբեր կըլլան· ամենքն ալ բոլորովին կը դադրին ուրիշ որ և է բանի վրայ խորհելէ, և յարձակումին կսպասեն ևեթ: Պահնէշ մը վտանգէն առաջ քաոս մ'է, իսկ վտանգի ժամանակ զինուորական բարեկարգութիւն մ'է: Վտանգէն բարեկարգութիւն կարտադրի:

Ամենքն ալ լռեցին երբ Անժօլրա իր երկիպող դարապինան

առնելով տեղաւորուեցաւ տեսակ մը պարսպի ժայռի մը վրայ զոր իրեն համար պահած էր։ Սալաքարէ պատին երկայնութեամբը պզտիկ և չոր ձայներու շաչիւն մը լսուեցաւ խառն՝ի խուռն։ Լեցուող հրացաններու ձայներն էին լսուած ձայները։

Սակայն հիմակ ապստամբները բոլորովին սէգ և վստահ դիրք մ'ունէին։ զոհողութեան ծայրայեղութիւնը հաստատութիւն մ'է։ ալ յոյս չունէին, բայց յուսահատութիւն ունէին, յուսահատութիւն որ յետին զէնքն է և որ՝ ինչպէս ըսած է Վիրգիլիոս՝ երբեմն յաղթութիւն կուտայ։ Յետին հնարքները ծայրայեղ որոշումներէ կ'ելլեն։ Երբեմն նաւաքեկութենէ ազատելու միջոցն է մահաչէն նաւը մոռնալը, և դազաղին կափարիչը փրկութեան տախտակ մը կըլլայ։

Ապստամբներու ամենքն ալ նախորդ օրուան երեկոյին պէս իրենց ուշադրութիւնը դարձուցած, և թերևս կրնանք ըսել թէ կութինուցեր էին փողոցին ծայրին վրայ որ հիմա լուսաւոր էր և կերևար։

Երկար չտևեց համբերութիւնը։ Շարժումը սկսաւ Սէն-Լէոյի կողմէն սկսաւ օրոշակի, բայց առաջին յարձակումին շարժումին չէր նմաներ այն։ Ղղթաններու ատատնում մը, մարմինի մը սպառնական երերումը, քարայատակին վրայ ցատկող ածոյրային շաչիւն մը, ըրեթէ հանդիսական դղրդում մ'լմայ տուաւ թէ սոսկալի երկաթեղէններ կը մօտէին։ Սարսուռ մը ունեցաւ այս հին և խաղաղաւէտ փողոցներուն ընդերքը, փողոցներ որք շահերու և պաշտպաններու բեզմնաւոր շրջաքերութեան համար բացուած և շինուած էին և որք պատերազմի սոսկալի անիւներուն հոլովումը տեսնելու համար ելած չեն։

Փողոցին ծայրը նայող բոլոր ապստամբներուն ակնարկը նայուածքը վայրագ նայուածքի մը փոխուեցաւ։

Փողոցին ծայրը թնդանօթ մ'երևցաւ։

Հրձիգները թնդանօթը կը հրէին որ արձակուելու ուղղութեամբ կցուած էր սայլին։ յառաջամասը վերցուած էր։ հրձիգներուն երկուքը թնդանօթին սայլակը կը բռնէին։ չորսն անիւներուն քովն էին։ ուրիշ հրձիգներ ալ եռանկիւնի սայլին պաշարի սայլին հետ։ Վառուած պատրոյգին ծխելը կը տեսնուէր։

— Կրակ, դոչեց Անժօլրա։

Պատնէշին բոլոր հրացաններն արձակուեցան՝ ահարկու կերպով մը գոռալով, և մխային ամպով մը ծածկելով աներեւոյթ ըրին թնդանօթն ալ, մարդերն ալ։ Քանի մը մանրերկրորդէ ետք ամպը փարատեցաւ, և վերստին երևան ելան թնդանօթն ալ, մարդերն ալ։ հրձիգները յամրաբար, ճշդութեամբ և առանց աճապարանքի թնդանօթը պատնէշին դիմացը հրած և բերած էին։ Անոնց և ոչ մին վիրաւորուած էր։ Այս թնդանօթասպառը՝ արձակուին ուղղութիւնը բարձրացնելու համար հրանօթին եռանկի ծայրին վրայ ծանրանալով՝ ակնոց մը դնող աստղաբաշխի մը ծանրութեամբ սկսաւ թնդանօթն իր նպատակին ուղղել։

— Կեցցե՛ն թնդանօթաձիգները, դոչեց Պօսիւէ։

Եւ պատնէշին բոլոր մարդերը ծափ զարկին։

Վայրկեան մ'ետք թնդանօթը փողոցին ձիշդ մէջ տեղը ուղղին վրայ քառակուսօրէն հեծած և մարտկոց մ'եղած էր։ Պատնէշին վրայ զարհուրելի բերան մը բացուած էր։

— Օ'ն, զուարթ լերուք, դոչեց Գուրֆէյրաք։ Ահա տարմարդին։ Պանդէն ետք կուգի։ Քանակը դէպ'ի մեզ կերկնցունէ իր խոշոր թաթը։ Պատնէշը սասկապէս պիտի ցնցուի։ Հրացանը կը շշուկէ, թնդանօթը կառնէ։

— Արոյրէ, նոր ձև և ուժնոց թնդանօթ մ'է այն, ըսաւ Թօմպրֆէր։ Այս թնդանօթները պայթելու ենթակայ են, բաւական էր որ հարուր մաս պղնձին հետ խառնուած անագը տաս մասէն աւելի ըլլայ։ Շատ փափուկ կըլլան անոնք եթէ չափազանց անագ ունենան։ Անատեն թնդանօթին լուսնակին*

* Թնդանօթին և հրացանին կրակ առնելու համար ունեցած փոքր ծակին է որ փամփուշտին չէ փչել կանուանի։ Թ. Թ.

(lumière) մէջ խոռոչներ և սեղեակներ կը կազմուին : Այս վտանգին առաջքն առնելու և թնդանօթը ներելի եղածէն աւելի լեցուելու համար թերևս պէտք է ընել ինչ որ կըլլար չորեքտասաներորդ դարու մէջ, այսինքն թնդանօթը շարժական պատեր, եաև ծայրէն սկսեալ մինչև միջնավայրը պողպատեայ օղակներով թնդանօթին արտաքին կողմը պատատել՝ առանց փակցնելու նոյն օղակները : Ու այժմ այս պակասութեան դարման կը տարուի ինչ կերպով որ կարելի է դարման ընել : Կոպո ըսուած երկաթէ գործիի մը միջոցաւ կարելի է հասկնալ թէ թնդանօթի մը լուսնակին մէջ ունեցած ակերը և խոռոչները· բայց լաւագոյն միջոց մը կայ որ է կրիալօվալի շարժուն ասպը :

— Տասնևինեերորդ դարու մէջ թնդանօթներուն ներքին կողմն ախտապէս կը գծուէր , ըսաւ Պօսիւէ :

— Այո՛ , պատասխանեց Գօմպըֆէր , այդ կերպով թնդանօթին արձակողական զօրութիւնը կաւելնար , բայց արձակումին ճշդութիւնը կը նուազէր : Գծաւոր թնդանօթին գունդն երբ մօտ տեղ մը կը նետուի , գունդին ընթացքը փափաքելի եղածին չափ ուղղութիւն չունենար· այս ընթացքին ծռութիւնը շատ կաւելնայ· ուստի՝ բաւական ուղղաձիգ շաւիղ մը չունենալուն համար չկրնար զարնել միջնական առարկաները· սակայն թնդանօթի գունդին այս միջնական առարկանեերուն հանդիպիլը պատերազմի հարկ մ՛է , որու կարևորութիւնը կը շահնայ թշնամիի մօտաւորութեան և թնդանօթի արձակումին արագութեան հետ : Այս պակասութեան , այսինքն վերջապահերորդ դարու մէջ գծաւոր թնդանօթներու ուժգնութեան այս ծռընթացութեան պատճառն էր թնդանօթին տակը կերպով լեցուիլը : Ծխաձգութեան արհեստին հարկերը կը պահանջեն որ այս տեսակ հրանօթները թեթևակի լեցուին , հարկեր , որոնց մին է , օդինակի աղագաւ , թնդանօթակիր սայլերը : Վերջապէս թնդանօթը՝ որ բռնաւոր մ՛է՝ չկրնար ամէն ուզածն ընել· զօրութիւնն ահագին տկարութիւն մ՛է :

Թնդանօթի գունդ մը մէկ ժամի մէջ վեց հարիւր մղոն տեղ կրնայ երթալ միայն , մինչդեռ լոյսը մանրադիտրդի մը մէջ եօթանասուն հազար մղոն կաւնու : Այս է ահա Ցիսուս-Քրիստոսի նարօլէոնէն գերազանցութիւնը :

— Նորէն լեցուցէք հրացանները , ըսաւ Անժօլրա :

Հիմա պատնէշին պատուարը ինչպէս պէտք վարուէր թնդանօթին հետ· գունդերը պիտի ծակէն արդեօք այս պատուարը : Խնդիրն ասոր վրայ էր : Մինչդեռ ապստամբները հրացանները կը լեցունէին , հրձիգներն ալ թնդանօթը կը լեցունէին :

Սասիկ էր պատնէշին անձկութիւնը :

Նետուեցաւ թնդանօթը , դուռայ արձակումը :

— Հո՛ս եմ , դոչեց զուարթալի ձայն մը :

Եւ մինչդեռ թնդանօթին գունդը պատնէշին վրայ ինկաւ , ահա նոյն ժամանակ ներս ցատկեց նաև Կավրօշ :

Կավրօշ Տիւ Սինեը փողոցին կողմէն եկած և Բրեթէյ-Թրիւանտրիի բաւիղին դիմացը շինուած պզտի պատնէշին վրայէն արագութեամբ անցնելով հասած էր :

Ստամբակը գունդէն աւելի ապաւորութիւն ըրաւ պատնէշին մէջ :

Գունդն աւերներուն քաոսին մէջ կորսուած էր՝ ուղեկառքին մէկ անիւը փոքր ինչ և Անսօյի հին սայլը բոլորովին խորտակելէն ետք : Պատնէշը տեսնելով գունդին այս ապդեցութիւնը , սկսաւ խնդալ :

— Շարունակեցէք , դոչեց Պօսիւէ հրձիգներուն :

ԳԼՈՒԽ Ը.

ԱՊՍՏԱՄԲՆԵՐԸ ՈՐ ԴԻՏԵՆ ԹԷ ԿԸՏՐԿ ՉԻ ԹՆԴԱՆՕԹԻՆ ԸՐԵԾԸ

Ապստամբները կավրօշին բոլորտիքը հաւքուեցան :

Բայց կավրոշ ժամանակ չունեցաւ ոչինչ պատմելու։ Մարիուս սարսռելով մէկ դի առաւ սառամբակը։

— Ինչո՞ւ եկար, ինչ դործ ունէիր հոս։

— Վա՛յ, ըսաւ պատանին, հապա դուք ինչ դործ ունիք։

Եւ Մարիուսին նայեցաւ ակնայեռ իր դիւցազնական անամօթութեամբը։ Իր մեծ աչերը կը մեծնային այն վեհ ճառագայթով զոր ունէր սրտին մէջ։

Մարիուս խիստ կերպով մը շարունակեց.

— Ո՛վ ըսաւ քեզ եա դալ։ Գէթ տեղը տուիր նամակս։

կավրոշին խիղճը այս նամակին նկատմամբ փոքր ինչ տագնապ ունէր։ Շուտ մը պատանէը վերադառնալ ուղեցով նամակը աւելի ձեռքէն հանած քանիէ տեղը տուած էր։ Սակայն ուած էր խոստովանիլ ինքն իրեն թէ թեթեւութիւն մ'ըրած էր դիրը յանձնելով այն անծանօթին որուն և ոչ իսկ երեսը կրցած էր նշմարել։ Սոյդ է թէ բաց դլուխ մարդ մ'էր այն անծանօթը, բայց այսքանը չէր բաւեր։ Վերջապէս մանր մունր ներքին յանդիմանութիւններ կուդղէր ինքն իրեն այս նամակին նկատմամբ և կը վախնար Մարիուսին յանդիմանութիւններէն։ Ուսոի դժուարութենէ ազատելու համար միջոցներուն ամենէն պարզը ընտրեց· պժդալի կերպով մը ստեց·

— Քաղաքացի, նամակը դունապանին յանձնեցի։ Օրիորդը քնացած էր։ Արթննալուն պէս պիտի ընդունի դիրդ։

Մարիուս այս նամակը ղրկելով երկու նպատակ ունէր· մէատ բարև ըսել Փոլէթին և կավրոշը ազատել։ Պարտաւորեցաւ դոհ ըլլալ իր ուզածին կիսովը։

Իր նամակին առաքումը և Պ· Ֆոշլեվանին պատնէշին մէջ դտնուիլը մերձաւորութիւն մ'էր։ Մարիուս մտաբերելով այս մերձաւորութիւնը՝ կավրոշին յուշուց Պ· Ֆոշլեվանը։

— Կը ճանչնաս սա մարդը։

— Ոչ, ըսաւ կավրոշ։

Իրօք կավրոշ, ինչպէս ըսինք քիչ մ'առաջ, դիշերով միայն տեսած էր ծան Վալժանը։

Փարատեցան այն շփոթ և հիւանդային ենթադրութիւնները որք Մարիուսի մտքին մէջ ծրագրուեր էին։ Կը ճանչնար Պ· Ֆոշլեվանին քաղաքական կարծիքները։ Պ· Ֆոշլեվան թերևս հանրապետական մ'էր· հետևաբար խիստ բնական բան մ'էր այս կուսին մէջ մտնելը։

Սակայն կավրոշ արդէն պատնէշին միւս ծայրը դացած էր, հրացանս, պոչելով։

Գուրջէյրագին հրամանաւ հրացանը յանձնուեցաւ կավրոշին։

Կավրոշ իմաց տուաւ «ընկերներուն», — վասն դի այս պէս կանուանէր ապստամբները, — թէ պատնէշը չորս կողմէն պաշարուած է։ Մեծ դժուարութեամբ կրցած էր ետ դալ։ Պատերազմի բանակէն վաշտ մ'որու սուինները Բրթթթ— Թրիւանտրսիի փողոցն էին՝ Ծիւ Սիներ փողոցին կողմը կը դիտէր· հանդիպակաց կողմէն ալ քաղաքապետական պահակները Տէ Բրէշէօր փողոցը դրաւեր էին։ Բանակին մեծագոյն մասն ալ պատնէշին դիմացի կողմը դրաւած էր։

կավրոշ այս տեղեկութիւնները տալէն ետք, շարայարեց·

— Հրաման կուտամ ձեզ քարերու դէզ մը նետելու առնոնց դլուխը։

Սակայն Անժօլրա իր պարսպի ժայռին վրայ կեցած՝ դաղտնապէս կը դիտէր՝ ականջ տալով։

Ցարձակողները Հարկաւ ոչ այնքան գոհ ըլլալով նետուած դունդէն, կրկին չարձակեր էին թնդանօթը։

Գունդ մը հետևակ զօրք եկած և թնդանօթին եաեր կենալով փողոցին ծայրը դրաւած էր։ Զինուորները սալարկին քարերը քակելով ցած և պզտի պատ մը կը շինէին· այս պատը Ճիշդ պատնէշին դէմը տասնութ մատ բարձրութեամբ տեսակ մը թումբ էր։ Բարիզի շրջականերէն վաշտ մը զօրք եկած և Սէն-Տընի փողոցը դումարուած ըլլալով, այս զօրքերու սուինին ղլուխը թումբին ձախակողմեան անկիւնը կերևար։

Երբ երկաթի բեկորներով լի տուփեր կը հանուին պատշարի սայլերէն, մասնաւոր ձայն մը կը հանեն· Անժօլրա

հարձեց ըմբռնել այսպիսի ձայն մը : Տեսաւ նաև թէ Թընդանօթապետն արձակման ուղղութիւնը փոխելով Թնդանօթին բերանը դէպ 'ի ձախակողմը կը ծռէ Թէթևակի : Թնդանօթապետն ինք հրարկու պաւաղանն առնելով Թնդանօթին լուսնակին մօտեցուց :

— Գլուխդ ծռեցէք , պատին մօտեցէք , և ամենքդ ալ պատնէշին քովը ծունկի վրայ եկէք , գոչեց Անժօլրա :

Ապստամբներն որք Կավրօշին եկած ժամանակ իրենց կուիւ կայանը Թողլով ցիրուցան կը կենային կապելիոնին առջև , խառնիխուռն խուժեցին դէպ 'ի պատնէշը : Բայց Անժօլրային հրամանը կատարուելու ժամանակ չունեցաւ . Թնդանօթը նետուեցաւ երկաթի բեկորներով լի հրանօթի մը պէս ահագին հունչումմ մը հանելով : Իրօք Թնդանօթին երկաթի բեկորներով լեցուած էր :

Թնդանօթը դէպ 'ի պատնէշին ճեղքը արձակուած և երկաթի բեկորները պատին վրայ ոստոստած ըլլալով , այս ահարկու ոստոստումը երկու հոգի մեռցուցած և երեք հոգի վիրաւորած էր :

Եթէ այսպէս շարունակուելու ըլլար , պատնէշն ալ չէր կրնար դիմանալ , վասն զի Թնդանօթին արձակած երկաթի բեկորները նեռս կը մանէին :

Պատնէշին մէջ ահաբեկ շշուկ մ'եղաւ :

— Ան այժմ դէթ երկրորդ անգամ նետուելն արդիլենք , ըսաւ Անժօլրա :

Եւ իր զարապինան վար ընկելով Թնդանօթապետին ուղղեց որ նոյն պահուն Թնդանօթին ետևին վրայ ծռուելով որոշակի կը կարդադրէր և կը հասստատէր Թնդանօթին ուղղութիւնը :

Այս Թնդանօթապետը գնդընկերներու գեղանձն , անտիանկան , խարտեաշ և քաղցրադէմ տասնապետ մ'էր . յատկապէս հմուտ կերևար այն նախասահմանուած և ահարկու գէնքին որ սարսափի մէջ օրէ օր կատարելագործուելովը վերջապէս պատերազմը պիտի մեռցունէ :

Գօմպրֆէր՝ Անժօլրային ետևէն ոտքի վրայ կայնած՝ այս երիտասարդը կը դիտէր :

— Մէկը , ըսաւ Գօմպրֆէր . ինչ նողկալի բաներ են եղեր այս սպանութիւնները . ա՛հ , երբ Թագաւորները պիտի վերնան , պատերազմն ալ պիտի վերնայ : Անժօլրա , նշան կառնուս այդ տասնապետը , բայց չես նայիր Թէ ինչ է : Տես անդամ մը ինչպիսի սիրուն երիտասարդ մ'է , արի է ան . կը տեսնեմ որ կը խորհի . այս Թնդանօթաձիգ երիտասարդները խիստ կրթեալ կըլլան . հայր մը , մայր մը , ընտանիք մ'ունի ան . Թերևս սիրուհի մ'ալ ունի . հաղիւ հազ քսանուհինդ տարեկան է . կրնայ եղբայրդ ըլլալ :

— Եղբայրս է արդէն , ըսաւ Անժօլրա :

— Այո՛ , կրկնեց Գօմպրֆէր , նաև իմ եղբայրս է : Ուրեմն չմեռցունենք զինքը :

— Թող զիս : Հարկ է ինչ որ հարկ է :

Եւ Անժօլրայի մարմարեայ այտին վրայէն արտօսր մը հոսեցաւ :

Մի և նոյն միջոցին քաշեց կայծահանը : Զարապինան նետուելով փայլակ մը ժայթքեցաւ : Գնդընկեց տասնապետն երկու անգամ դարձաւ ինքն իր վրայ՝ Թևերն առջևը տարածած և գլուխը վեր ըրած՝ կարծես օդը շնչելու համար , ապա Թնդանօթին վրայ տապալեցաւ քովնտի և հոն մնաց անշարժ : Կը տեսնուէր իր կռնակն որու կեդրոնէն ուղղակի աբեան վտակ մը կը հոսէր : Զարապինային դնտակը տասնապետին կուրծքէն մտնելով և կռնակէն դուրս ելնելով մեռցուցած էր զան :

Հարկ եղաւ առնուլ տանիլ դիակը և տեղն ուրիշ մը բերել : Իրօք այս կերպով ապստամբները քանի մը րոպէ վաստկեցան :

ԳԼՈՒԽ Ը.

ՈՒՐ ԿԸ ԴՈՐԹԸԹՈՒԻ ԴԱՂՏԱԴՈՂԻ ՈՐՍԼՈՒՆ ԵՒ ՄՑԳԱԼԻՍ ՀՐԱՑԱՆ ԱՐՋԱԿԵԼՈՒՆ ԱՑՆ ՀԻՆ ՏԱՂԱՆԴՆ ՈՐ 1796ի ԳԱՏԱԳԱՐՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ ԱՋԳԵՑ

Կարծիքները կը հակառակէին պատնէշին մէջ։ Թրքադանօքը վերսաին պիտի սկսէր նետուիլ։ Պատնէշը քառորդ մը չպիտի գիմանար եթէ երիտթի բեկորները շարունակուէին նետուիլ։ Անհրաժեշտաբար պէտք էր արգիլել անոնց սաստկութիւնը։

Անժօլրա սա հրամանը տուաւ.

— Պէտք է անկողին մը դնել հոն։

— Անկողին չկայ. եղածին վրայ վիրաւորները կան, ըսաւ Գօմպըֆէը։

Ծան Վալժան կապելային անկիւնը քարի մը վրայ նստած և հրացանն ոտներուն մէջ տեղը դրած էր՝ մինչև այն րոպէն ոտանց մասնակցած ըլլալու կռիւին։ Կարծես թէ չէր լսեր կռուողներուն խօսքը որք իր քովը կըսէին. Ահա հրացան մը որ բան մը չընէր։

Ծան Վալժան Անժօլրային հրամանը լսելուն պէս ելաւ։

Ընթերցողը կը յիշէ անշուշտ թէ ապստամբներն երբ Տը Լա Շանվըրըի փողոցն եկած էին, պատուհանիկ մը գնտակները նախատեսելով անկողին մը դրած էր իր պատուհանին առջև։ Այս պատուհանը՝ որ վերնայարկի պատուհան էր՝ պատնէշէն սակաւ ինչ դուրս կանգնուած վեց դասիլոնով տուների մը տանիքին վրան էր։ Անկողինը խոտորնակի դրուած, վարի կողմը Ճերմակղէն չորցուներու յատուկ երկու թառի վրայ կռթնած, վերի կողմն ալ կապուած էր երկու չուանով որք հեռուէն կարծես թէ երկու առասան էին և որք վերնայարկի գուռին ծնօտին դամուած բեհեզներուն կապուերը էին։ Այս երկու չուաններն օդին մէջ որոշակի կը տեսնուէին իրը երկու մազ։

— Ո՞վ կրնայ երկիթէ գարապինա մը տալ ինձ, ըսաւ Ծան Վալժան։

Անժօլրա իր գարապինան տուաւ զոր նոր լեցուցած էր։

Ծան Վալժան վերնայարկը նշան առաւ և նետեց։

Անկողնին երկու չուաններուն մին կտրուած էր։

Անկողինն ալ դերձանէ մը միայն կախուած էր։

Ծան Վալժան գարապինային երկրորդ փողին ալ կրակ տուաւ։ Երկրորդ չուանը վերնայարկին ապակին մորթակեց։ Անկողինն երկու ձողերուն մէջ տեղէն սպրդելով փողոցն ինկաւ։

Պատնէշին մարդերը ծափ զարնելով ամենքն ալ գոչեցին.

— Ահա անկողին մը։

— Այո՛, ըսաւ Գօմպըֆէը, բայց ով պիտի երթայ տանելու։

Իրօք անկողինը՝ պատնէշէն դուրս՝ պաշարեալներուն և պաշարողներուն մէջ տեղն ինկած էր։ Արդ գնդրնիչներուն տասնապետին մահուան պատճառ զօրքը զայրացած ըլլալով, զինուորները քանի մը վայրկեանէ՝ի վեր փորի վրայ պառկեր էին այն պատին եաևը զոր սալաքարերով շինած էին, և որովհետև թնդանօթն իր պիտոյից մինչև պատրաստուիլը սպասելով բունագատուած էր լռելու, զինուորներն այս լռութեան տեղը լեցուներու համար հրացան կը պարպէին պատնէշին վրայ։ Ապստամբներն իրենց պաշարքը խնայելով չէին պատասխաներ այս հրացաններուն, որոնց գնդակները քնաւ չէին ազդեր պատնէշին, այլ անձրևի պէս կը տեղային փողոցին մէջ. հետևաբար սոսկալի էր փողոցը։

Ծան Վալժան դուրս ելաւ ձեղքէն, փողոցը մտաւ, անցաւ գնդակներու մրրիկին մէջէն, հասաւ անկողնին քով, զոր առնելով շալկեց և պատնէշը վերադարձաւ։

Ինքն անձամբ ձեղքը գոցեց այս անկողնով։ Աղէկ մը պատին կռթնցուց զայն այնպիսի կերպով մ'որ գնդրնիչները չտեսան զինքը։

Աս ըլլալէն ետք սպասեցին որ թնդանօթին երկաթի քեռկորները նետուին։

պրով հոգին երբէք չհաւանիր դժբաղդութեան, ընդհիմադրծութիւն զոր նաև Ժան Վալժան քանի մը ժամ առաջ կրած էր հոգիին մէջ։ Անտիական աղջիկը սկսաւ յուսալ իր բոլոր այժերովը, առանց գիտնալու թէ ինչո՛ւ կը յուսայ։ Ցեղոյ սիրտը սկսաւ դառնապէս բրտմիլ։ — Երէք օրէն ՚ի վեր տեսած չեմ Մարիուսը, ըսաւ մտապէս։ Ըսաւ նաև իւրովի թէ Մարիուս անշուշտ ընդունած էր իր նամակը, թէ դիտէր իր ուր ըլլալը, թէ շատ խելացի է և թէ մինչև իր գովը գալու միջոց մը պիտի գտնէ։ — Եւ տարակոյս չկայ թէ այսօր, դույլ հիմակ առաւ պիտի գայ։ — Բոլորովին յորեկ էր արդէն, բայց լոյսի ձառագայթը խիստ հորիզոնական ըլլալով, Գօզէթ կարծեց թէ կանուխ է տակաւին, թէ սակայն պէտք էր անկողնէն ելնել, — Մարիուսը ընդունելու համար —։

Կզգար թէ չէր կրնար ապրիլ առանց Մարիուսի, և թէ հետևաբար այս միայն կը բաւէր պարտաւորելու Մարիուսը որ գայ։ Ինաւ առարկութիւն մ՚ընդունելի չէր։ Այս ամենը ստուգութիւն մ՚էր։ Երէք օր տառապած ըլլալն արդէն մեծ անդթութիւն մ՚էր։ Մարիուսի երէք օրուան տարակոյսին սոսկալի անիրաւութիւն մ՚էր սուրբ Աստուծոյ կողմէն։ Հիմակ ալ անցած գայած փորձանք մ՚է ՚ի վերուստ եղած այս անպատրոյն խեղութիւնը, հետևաբար պիտի գայ Մարիուս և բարի լուր մը պիտի բերէ —։

Ահա պատանութիւնն ասանկ է։ Շուտ կը սրբէ իր աչքերուն արտասուքը։ անօգուտ կը սեպէ վիշտը և չընդունիր։ Երիտասարդութիւնն ապագային ժպիտն է անձանօթի մ՚առջև որ նոյն իսկ ապագան է։ Երջանիկ ըլլալը բնական բան մ՚է երիտասարդութեան համար։ կարծես թէ յոյսով կազմուած է ատոր շնչառութիւնը։

Սակայն Գօզէթ չէր կրնար յաջողիլ յիշելու թէ Մարիուս ինչ ըսած և ինչ բացատրութիւն տուած էր իրեն այս բացակայութեան նկատմամբ որ մէկ օր պիտի տևէր միայն։ Ա-

Զուշացաւ արձակումը։

Թնդանօթը մռնչումով մը գուբս թափեց իր գնտակներով լի ծրարը, բայց ասոնք չոստոստեցին։ անկողնին վրայ վիժեցան երկաթի բեկորները։ Ապստամբները սաստկան այն արգիլքը զոր կը յուսային։ Պատնէշն ազատ կը մնար թնդանօթին արձակումներէն։

— Քաղաքացի՛, ըսաւ Անժօլրա Ժան Վալժանին, հանրապետութիւնը շնորհակալ է ձեզմէ։

Պօսիւէ սքանչանալով և խնդալով գոչեց։

— Անկողնի մ՚այսքան զօրութիւն ունենալն անբարոյական բան մ՚է։ Ծալլուող իր մը կը յաղթահարէ ինչ որ չանթ կարձակէ։ Բայց հոգ չէ, փա՛ռք անկողնին որ թնդանօթ մը կը ջնջէ։

ԳԼՈՒԽ Ա.

ԱՐԾԱԼՈՑՍ

Նոցն միջոցին Գօզէթ կարթննար։

Իր նեղ, մաքուր և զուշաւոր սենեակն արևելքի կողմէն տունին յետնաբակին վրայ նայող երկայն պատուհան մ՚ունէր։

Գօզէթ ամենևին տեղեկութիւն չունէր Բարիզի մէջ անցնող դէպքերու վրայ։ Նախորդ օրը հոն չէր, և երեկոյին արդէն իր խուցը մտած էր երբ Թուսէն ըսաւ իրեն։ Կերեւայ թէ աղմուկ կայ։

Գօզէթ քիչ բայց աղէկ քնանալով հեշտալի երազներ տեսած էր, որոնց փոքր ինչ պատճառն էր թերևս իր անկողնին խիստ սպիտակ ըլլալը։ Լոյսին մէջ մարդ մ՚այսինքն Մարիուսը տեսած էր։ Երբ արթնցաւ, արև կար աչերուն մէջ, հետևաբար ՚ի սկզբան կարծեց թէ տեսած երազը տակաւին կը շարունակուի։

Այս երազին ելնող իր առաջին մտածումը զուարթապէս մտածում մ՚եղաւ։ Բոլորովին փարատեցան Գօզէթին կասկածները։ Գօզէթ ևս կը կրէր այն ընդհմադրծութիւնը

մէն մարդ դիտած է թէ պետինն իյնող դրամ մ՚ինչ յաջողակութեամբ կը վազէ պահուելու և թէ ո՛րքան կարող է անպատանելի ըլլալու : Կան մտածումներ որք մի և նոյն խաղը կը խաղան , միշտ մեր ուղեղին մէկ անկիւնը կը կղկտուին , ա՛լ ձաբը չկայ , ա՛լ կտրտուած են· անհնարին է որ յիշողութիւնը պահէ զանոնք : Գօղէթ սակաւ ինչ կը զայրանար իր յիշողութեան ըրած պղտի և ապարդիւն չանադրութեանը համար : Կըսէր իւրովի թէ ինք՝ Գօղէթ՝ շատ պէշ ըրած , մեծ յանցանք մը գործած կը սեպուէր՝ մոռնալով այնպիսի խօսքեր զոր Մարիուս ըսած էր իրեն :

Գօղէթ անկողնէն ելնելով հոգիին ու մարմինին երկու ապրեշները առաւ , այսինքն աղօթք և պաճուճանք :

Թերևս ներելի ըլլայ ընթերցողը հարսանեկան սենեակ մը տանիլ , բայց ոչ կուսական սենեակ մը : Տաղերգութիւնը հաղիւ կը համարձակի մտնել հոն , բայց արձակաբանութիւնը պէտք չէ որ մտնէ :

Այրի մը սենեակը դեռ չբացուած ծաղկի մը ներքին կողմն է , սուուերին մէջ սպիտակութիւն մ՚է , անփթիթ շուշանի մը ներքին մեկուսարանն է , շուշանի մ՚որու մարդս չկրնար նայիլ քանի որ արևը տակաւին նայած չէ : Նուիրական է կինն երբ կոկոն է դեռ :

Այն անմեղ անկողինն որ կը բացուի , այն կէս-մերկութիւնն որ ինքն իրմէն կը վախնայ , այն սպիտակ ոտքն որ շղուակտնի մէջ կապաստանի , այն վիճն որ հայելիի մ՚առջև կաքօղի՝ իբր թէ բիբ մ՚ըլլար հայելին , այն շապիկն որ կոթասի մը շաչիւնը կամ կաւքի մ՚անցնելը լսելուն պէս կը փութայ վեր երթալու և ուսը ծածկելու , կապուած ժապաւէնները , դրուած ձարմանդները , զօրսէին քաշուած կապերը , սարսուռները , յուրտի և համաստութեան սրսփուքները , այն շարժուձեերու դեղընտիր խրաչուրը , այն պրեթէ թևաւոր վրդովումն ուր որ վախնալու բան մը չկայ , և հապուսաին հետ գնետէ առած այն կերպարանները որք արշալոյսին ամպերուն պէս սիրուն են , այնպիսի բաներ են զոր ներելի չէ պատմել և զոր այսքան նշանակելն անգամ հաղիւ թէ ներելի եր :

Մարդուս աչքն նորաբոյս կոյսի մը զարթուիին առջև կը պարտաւորի ա՛լ աւելի երկիւղած ըլլալ քանթէ աստղի մը ծագումին առջև : Մարդս որքան աւելի կարողութիւն զգայ ներս թափանցելու , նոյնքան և ա՛լ աւելի պարտաւոր է յարգանք ղալու : Դեղձին սակը , սալորին փուշին , ձիւնին ճաճանչաւոր բիւրեղը , թիթեռնիկին փոշիանման փետուրներով թևը խոշոր բաներ կը սեպուին այն անարատութեան քով որ և ոչ իսկ դիտէ իր անարատ ըլլալը : Նորատի աղջիկն երազի նշոյլ մ՚է միայն և դեռ արձան մը չէ : Իր ննջեակը սեսլականին մեծին կողմը պահուած է : Նայուածքին անզգայ շոշափումը տմարդի ընթացք մ՚է այս աղօտ կիսատուերին նկատմամբ : Նայիլը պղծել է հոս :

Հետևաբար Գօղէթի զարթուիին հետևող այս տնական փոքր և հեշտալի իրարանցումին նկատմամբ բան մը չպիտի ցուցընենք :

Արևելեան առասպել մը կըսէ թէ վարդը Ջերմակ ստեղծուած էր Աստուծմէ , բայց փթթելու միջոցին Ագամն նայուելով ամչցաւ և կարմրեցաւ : Մենք այն անձերու կարդէն ենք որք խոովիլ կզգան ծաղկահաս աղջիկներու և ծաղիկներու առջև , վասն զի պատկառելի կը համարինք զանոնք :

Գօղէթ շուտ մը հազուեցաւ , սանտրուեցաւ , շքուեցաւ :

Պէտք չէ զարմանալ երբ շուտ մը կըսենք , վասն զի այն ժամանակ կիներն իրենց խոպոպիքը և ապարօշները չէին ուռեցներ բարձիկներով և տակառիկներով , ոչ ալ էրենօլիններ կը դնէին իրենց մազերուն մէջ :

Ապա Գօղէթ պատուհանը բացաւ և չորս դին նայեցաւ՝ յուսալով փողոցէն տեղ մը , տունի անկիւն մը , քարայատակներու խորշ մը նշմարել և հոն կարենալ դիտել Մարիուսին դալը : Բայց բան մը չէր տեսնուեր դուրսէն : Ցետնաբակը բաւական բարձր պատերով շրջափակուած էր և հե-

տուն դիտուելու յատուկ շաւիղ մը չունէր բայց՝ի քանի մը պարտէզ:

Գօզէթ դարձեալ համարեց այս պարտէզները· իր կեանքին մէջ իբր առաջին անգամ դիտեց թէ տղեղ են ծաղիկները: Քառուղիի բերանէն անցնող ուղևի մը ծայրն աւելի աղէկ պիտի դար իր գործին: Ուստի սրոշեց երկինք նայիլ կարծես մտածելով թէ Մարիուս կրնար երկինքէն ալ դալ:

Ցանկարծ սկսաւ արտասուել Գօզէթ: Արցունք որ չէ թէ հոգիի փոփոխականութենէ մ՚այլ միթէ ընդ միթէ վհատութիւններով խառն յոյսերէ կարտադրուէր, վասն զի Գօզէթին սրդի վէճին այս էր: Զգիտեմ ինչ սոսկալի բան մը զայ անորոշապէս: Օդին մէջէն իրեր կանցնին ստուգիւ: Ըսաւ իւրովի թէ որ և է բանի նկատմամբ ապահով չէր· թէ տեսնուելէ դադրիլը կորսուիլ է, և Մարիուսի երկինքէն վերադառնալու հաւանականութեան դաղափարն ալ չէ թէ զմայլելի այլ սոսկալի երևցաւ իրեն:

Ցետոյ նորէն հանդարտեցաւ, յուսաց և ժպտեցաւ, ժպիտ որ անդիտակից այլ Աստուծոյ վրայ վստահ էր: Ահա այսպէս են սրտին այս ամպերը:

Տունին մէջ գեռ քնացած էր ամէն մարդ: Գաւառային քաղաքի յատուկ լռութիւն մը կը տիրէր: Պատուհան մը բացուած չէր տակաւին: Դռնապանին օթեակն ալ դոց էր: Թուսէն եղած չէր, և Գօզէթ բնականաբար կարծեց թէ կը քնանար հայրը: Հարկաւ շատ տառապանք կրած էր և տակաւին կը տառապէր, վասն զի կըսէր իւրովի թէ չարասրտութիւն ըրած էր հայրը, բայց Գօզէթ Մարիուսին վրայ դրած էր յոյսը: Այսպիսի լոյսի մը խաւարումը սոսկալի անհնարին էր: Միթէ ընդ միթէ ինչ ինչ հեռաւորութեամբ տեսակ մը խորին ցնցումներ լսելով կըսէր իւրովի· Մեծ դուռերուն այսքան կանուխ բացուիլ դռնապետը տարօրինակ կերևայ ինձ: Սակայն լսած ցնցումները պատնէշին վրայ արձակաւած թնդանօթին ցնցումներն էին:

Գօզէթին պատուհանին տակ քանի մ՚ոտք անդին ծիծեռնիկներու բոյն մը կար պատին բոլորովին սեցած և հին քիւին մէջ· այս բոյնը պատշգամի մը պէս փոքր ինչ դուրս ցցուած էր քիւէն, հետևաբար վերէն կարելի էր տեսնել այս պզտի դրախտին ներսը: Մայրը՝ որ բոյնին մէջն էր՝ թևերն իբր հովահար իր ձագերուն վրայ կը բանար· հայրը կը թռչտէր, կերթար ու կուգար՝ կտուցովը սնունդ և համբոյրներ բերելով: Աբևը ծագելով ոսկեգոյն փայլիւն մը կուտար այս երջանկաւէտ բանին, Բաղմացէ՛ մեծ օրէնքը հոն էր վեհ և զուարթագին, և այս հեշտալի խորհուրդն առաւօտեան շքեղութեան մէջ կը փթթէր: Գօզէթ, որու մազերն արևով և հոգին յոյսերով համակուած էր և որու ներսը սիրով և դուրսը արշալոյսով կը լուսաւորուէր, պրեթէ մեքենայաբար ծռուեցաւ, և պրեթէ առանց համաձակելու խոստովանիլ ինքնին թէ ու և նոյն միջոցին նաև Մարիուսի վրայ կը մտածէ, սկսաւ նայիլ այս թռչուններուն, ընտանիքին, էգին և արուին, մայրին և իր ձագերուն այն բուռն խռովութեամբ զոր բոյն մը կուտայ կոյսի մը:

ԳԼՈՒԽ ՃԱԹ·

ԸՐՋԱԿՈՒՈՂ ՀՐԱՑԸՆ Մ՚ՈՐ ԺԻԹՔ ՆՇԱՆ ԿԱՐՆՈՒ ԵՒ ՈՐ ՈՉ ՋՈՒՔ ԿԸ ՄԵՒՅԱՒՆԷ

Յարձակողները շարունակ հուր կը տեղային: Հրացանն ի գնահատեն և թնդանօթին ռումբերն իբարու կը յաջորդէին առանց սակայն մեծ աւերումներ ընելու: Կորնթոսի Ճակատին վերի կողմը միայն հարուած կը կրէր· առաջին դասիկոնն և վերնայարկին սենեակները գնահատեն և պիսպայեանները մաղի պէս ծակծկուելով յամրաբար կաւրուէին: Հոն կեցող ապստամբները ստիպուած էին անընդհատ ըլլալ:

Պատնէշներու դէմ կուռողները ռազմապատական վարպե-

տուքիւն մ'ունէին որ է երկար ժամանակ անօգուտ կերթոյ առէպ հրազէն արձակել՝ ապստամբներուն պաշարքը սպառելու համար, եթէ ասոնք պատասխան տալու սխալն ընեն: Երբ ասոնց հրացաններըը կսկսին ոչ այնքան առէպ նետուիլ, կը նշմարեն թէ ա՛լ ոչ վառօդ և ոչ գնդակ ունէին, և ահա անտառէն կը յարձակին պատնէշին վրայ:

Անժօլրաս այս ծուղակն ինկած չէր· պատնէշը պատասխան չէր տար իրեն արձակուած հրացաններուն:

Զօրախումբն ամէն անդամ որ հրազէն կը պարպէր, դավրօշ իր բուռն արհամարհանքը յայտնելու համար այտը կուռեցնէր լեզուովը:

— Լաւ, լաթ խլտեցէք, վերքի համար պատրոյդի հարկաւորութիւն ունինք, կըսէր ստամբակը:

Գուրֆէյրաք կը հարցուփորձէր ուսմբն իր նուազ ներզօրծուքեան համար և կըսէր·

— Շատ խօս կը դառնաս, ծերո՛ւկ:

Կիւլի ժամանակ պատերազմողներն երկուստեք կասկածներ կընէն իրարու վրայ՝ պարահանդէսի մէջ դանուող անձերուն պէս: Հաւանական է թէ պատնէշին այս լուռութիւնը կսկսէր կասկած և վախ տալ պաշարողներուն թէ դուքէ անակնկալ դէպքի մ'ենթարկուած են· թերևս ղղացին ասոնք նաև թէ պէտք էր յայտնապէս տեսնել այս սալաքարերու դէղին ներսի կողմը և դիտնալ թէ ինչ կանցնէր այս անդրդուելի պատին ետևն որ հրազինուց յարձակումը կը կրէր առանց փոխադարձ պատասխան տալու: Ապստամբները յանկարծ սաղաւարտ մը տեսան որ մօտակայ տանիքի մը վրայ կը փայլէր արևին: Ջրհանակիր մը բարձր ծխահանի մը կռթնելով կեցած էր կարծես իբր պահնորդ մը: Իր նայուածքը պատնէշին մէջը կը սուղէր ուղղակի:

— Ահա անախորժ դիտող մը, ըսաւ Անժօլրաս:

Ժան Վալժան զարապինան ետ տուած էր Անժօլրային, քայց իր հրացանն ունէր:

Առանց խօսք մ'ըսելու նշան առաւ ջրհանակիրը, և ահա մանրերկրորդէ մ'ետք սաղաւարտը դնտակ մ'ընդունելով փողոցն ինկաւ աղմուկով: Ջինուորը վախնալով շուտ մ'անհետ եղաւ:

Երկրորդ դիտաւորմը յաջորդեց անոր: Պաշտօնատար մ'էր յաջորդողը: Ժան Վալժան՝ հրացանը նորէն լեցուցած ըլլալով՝ նորեկին ուղղեց և անոր սաղաւարտն ալ միւսին քովը ղրկեց: Պաշտօնակիրը չսամառեցաւ և շուտ մ'անհետ եղաւ: Այս անգամ հասկցաւ խրատը: Ոչ ոք երեցաւ տանիքին վրայ և պատնէշը դիտաւելի դադրեցաւ:

— Ինչո՞ւ չմեղցուիր մարդը, հարցուց Պօսիւէ Ժան Վալժանին:

Ժան Վալժան պատասխան չտուաւ:

ԳԼՈՒԽ ՃԶ·

ԱՆԿԱՐԳԱՒԹԻՒՆԸ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԿԱՒՍԿԻՑ

Պօսիւէ Գօմպըֆէրի ականջին փսփսաց·

— Զպատասխանեց հարցուփիս:

— Հրացան նետելով աղէկութիւն ընող մարդ մ'է ան, ըսաւ Գօմպըֆէրը:

Որոնք որ դեռ փոքր ինչ կը յիշեն այն թուականը որ արդէն հեռի է մեզմէ, կիտեն թէ արուարձաններու ապստամբութեանց պահակները քաջութեամբ կը կռուէին ապստամբութեանց դէմ: Մասնաւորապէս 1832ի յունիսին օրերը անզսպելի յարձակումով և աներկիւղութեամբ կռուեցան: Թանթէնի, Վէրթիւրի կամ Գիւնէթի այս կամ այն բարեմիտ կտպէլապետը՝ որու առուտուրը կը դադրեր ապստամբութեան պատճառաւ՝ կարիճ մը կըլլար իր պարի օրահին ամայի մնալը տեսնելով և կուխին մէջ մտնելու կերթար զայն պատելու համար բարեկարգութիւնը զոր կը ներկայեր իր գինեանիկը: Այն քաղաքացութեան ու միանգամայն դիւցազնութեան ժամանակ շա-

հերն ալ իրենց շահատակներն ունէին իրենց առաքեանքին ուղեցող դաղափարներուն դէմ: Շարժառիթին փոքրութիւնը շարժումին քաջութիւնը չէր փոքրեր: Թալէրներու կոյտի մը նուաղումը Մաքսէյլէզը երդել կուտար սեղանաւորներու: Մարդ քնարերգութեամբ իր արիւնը կը թափէր հաշիւի տրապիզին համար, և լաիէդէմոնական աւիւնով մը կը պաշտպաներ խանութը որ հայրենիքի անբաւ մասնիկն է:

Ստուգապէս նկատելով փութանք ըսելու թէ այս կիւնեռու մէջ կատակ չկար ամենևին: Ընկերային տարբերն էին կիւի մեռնողները, սպասելով որ դայ այն օրը յորում պիտի հաւասարակշռին:

Այն ժամանակի նշաններուն մին ալ էր վարչականութեան (ուղղուած կուսակցութեան բարբարոս անունը) հետ խառնուած անիշխանութիւնը: Մարդիկ կարգաւորութեան կողմը կը քունէին անկարգութեամբ: Թմբուկը՝ ազգային պահակներու այսինչ դնդապետին հրամանաւը յանկարծուստ կը զարնէր՝ քմահաճութեանը համեմատ ազգային պահակները կիւի կոչելու համար· այնինչ հարիւրապետը պատերազմելու կերթար ներշնչումով· այսինչ ազգային պահակը «դաղափար» մ'ունենալուն և իր սեպհական հաշիւին համար կը կուուէր: Վտանգի ժամանակները, կիւի օրերը կուուղներն աւելի իրենց բնազդումն քանթէ պարագլուխներէն խրատ կառնէին: Կարգաւորութեան բանակին մէջ կուսակիցներու նման առանձին կուուղներ կային, ոմանք սուրով, ինչպէս էր Փանիպօ, ոմանք ալ գրիչով, ինչպէս էր Անրի Փոնֆրէտ:

Վտանգի մէջ էր կամ ըլլալ կը կարծէր քաղաքակրթութիւնն որու այն ժամանակուան երեսփոխանը դժբաղդաբար շահերու միաւորութիւն մ'էր աւելի քանթէ սկզբունքներու խումբ մը: Քաղաքակրթութիւնը վտանգի մէջ եմ, կը դոչէր, իւրաքանչիւր օք կեդրոն մը ձևանալով տէրութիւն, օդնութիւն և պաշտպանութիւն կընէր անոր իր խելքին համեմատ, և ով ըլլալն անյայտ այս կամ այն մարդն իր վրայ կառնէր ընկերութիւնն ազատելու պաշտօնը:

Եւ անդէն այն ատիճան կը շատնար որ մինչև անդամ մարդ կը ջարդէր:

Ազգային պահակներու այս կամ այն խմբիկին իր մասնաւոր իշխանութեամբը ռազմական տեսան մը կըլլար, և հինգ վայրկեանի մէջ ապստամբ մը դատելով մեղցնել կուտար: Այս տեսակ յանկարծակազմ տեսան մ'էր Ծան Բրուվերը մեռցնող խումբն ալ: Լէյնխի անդադրոյն օբէնքն է այս որու համար բնաւ կուսակցութիւն մը չկրնար ուրիշները յանդիմանել վասն զի Ամերիկայի մէջ հանրապետութիւնը և Եւրոպայի մէջ միապետութիւնը կը գործադրեն այս օրէնքը:

Լէյնխի այս օրէնքը սխալներու տեղի կուտայ: Ապստամբութեան օր մը Բօլ-Էմ-Կարնիէ անունով անտիկան բանաստեղծ մը Արքայական հրապարակին վրայ հալածուեցաւ փողերին վրայ ունենալով հալածողին սուինին ծայրը, և թիւ 6 տունին մէջ դուռին ներքևն ապաւինելով միայն կրցաւ ազատիլ: Ահա ոբիշ Սէն-Սիմոնեան մ'ալ, կը դոչէին եաեէն և կուղէին մեղցունել զան: Այս բանաստեղծը Տը Սէն-Սիմոն դուքսին յիշատակագրութեանց հատորներուն մին ունէր թևին տակ: Ազգային պահակներն այս պըրկին վրայ Սէն-Սիմոն անունը կարդալով, մեղցնեցնք, դոչած էին:

1832 յունիսի 6ին շրջավայրները պահպանող ազգային պահակներէն խումբ մը՝ որու հրամանակալն էր քիչ մ'առաջ յիշուած Փանիպօ հարիւրապետը, քմահաճութեամբ և սիրտն ուղելուն համար լաւ ջարդ մը կերաւ Տը Լա Շանվըրըի փողոցը: Այս իրողութիւնը որքան ալ տարօրինակ երևայ, հաստատուած է 1832ի ապստամբութեան վրայ եղած դատական խուզարկութեան մէջ: Փանիպօ, անհամբեր և յանդուգն քաղաքաւոր մը, կարգաւորութեան տեսակ մը ֆաշորնիներէ, պահ մ'առաջ մեր նկարագրած մարդերուն մին, մոլեռանդ և անհնազանդ վարչական մ'ըլլալով, ժամանակէն առաջ հուր տեղալու հրապոյրին և մինակը այսինքն միայն իր խումբովը պատնէշին տիրելու փառասիրութեան չկրցաւ դիմադրել: Զայ-

բանալով կարմիր դրօշակին և իրմէ սև թրօշակ մը կարծուած հին ղեստին հետ դէտե երևալէն, Փանիպօ արձակ համաձակ կը պախարակէր բանակի զօրապետները և պարագլուխները որք ժողով կընէին, վերջնական յարձակումի ժամը դեռ չհասած կը համարէին և կը ձղէին որ «ապստամբութիւնը եփի իր արդանակին մէջ», խօսք անուանի զօր անունց մին ըսած է:

Բայց Փանիպօ պատնէշը հասուն տեսնելով յարձակելու փորձն ըրաւ, մտածելով թէ կը պարտաւորի ինքնալ ինչ որ հասուն է:

Փանիպօ կը հրամայէր իրեն պէս յանդուգն մարդերու, «կատղածներու», ըսաւ վիայ մը: Իր խումբը, այն որ հրացանի բռնած էր ծան Բրուվէր բանահիւսը, վաշտին միւս խումբերէն առաջ տեղաւորուած էր փողոցին անկիւնը: Հաբիւրապետը պատնէշին վրայ յարձակել տուաւ իր մարդերը այնպիսի ժամանակ մ'ուր բնաւ չէր յուսացուեր այսպիսի յարձակում մը: Փանիպօյի խումբին սուղի նստաւ այս յարձակումն որու մէջ աւելի աներկիւղութիւն քանթէ ռազմագիտութիւն կար: Դեռ փողոցին երկու երրորդը հասած չէր և ահա պատնէշին բոլոր հրացէններն իր վրայ դնռատկ տեղացեր էին: Զօրս Հոգի, ամենէն յանդուգնները որք առջևէն կը վազէին, Ճիշդ պատնէշին տակը գլորեցան դնդամահ՝ ի մօտուստ արձակուած հրացէններէն շանթահարուելով, և ազգային պահակներու այս խումբն որ շատ քաջ այլ ռազմական յամառութենէ զուրկ էր, պահ մը վարանեցաւ ետ պարտաւորեցաւ ետ քաշուիլ՝ քարայատակին վրայ տասնուհինդ դիակ թողլով:

Վարանումի միջոցը ժամանակ տուած էր ապստամբներուն վերստին լեցնելու իրենց հրացանները, և մինչև փողոցին անկիւնը հասնիլը որ Փանիպօյի խումբին ապաստանարանն էր, աւելի մահատու հրատարափ մ'ևս տեղայ պատնէշէն իր վրայ: Պահ մ'երկու կրակի մէջ մնայ, և որովհետև Թնդանօթը՝

հրաման ընդունած չըլլալով՝ արձակումը ընդհատած չէր, խումբին Թնդանօթէն նետուած ռումբերն ընդունեցաւ: Այս ռումբերէն մեռնողներուն մին եղաւ Փանիպօ աներկիւղ և անխոհեմ հարիւրապետը: Թնդանօթը, այսինքն կարգապահութիւնը մեռցուց զան:

Անժօլրային զայրոյթ պատճառեց այս յարձակումն որ աւելի յանդուգն քանթէ ծանրակշիռ էր:

— Աւանակները, ըսաւ Անժօլրա: Պարապ տեղը իրենց մարդերը մեռցնել կուտան և մեր ալ պաշարքը կսպառեն:

Անժօլրա ապստամբութեան ձշմարիտ զօրապետ մ'էլլլով, իրը այն կը խօսէր: Ապստամբութիւնը և զսպումը հաւասար զէնքով չեն կռուիր: Ապստամբութիւնը՝ որ շուտ մը սպառելի է՝ սակաւաթիւ հրացան և սակաւաթիւ կռուող ունենալով, համրանքով կը վատնէ զանոնք: Երբ փամփուշտի պարկ մը կը պարպուի, երբ մարդ մը կը մեռնի, տեղը չլեցուիր: Բայց զսպումը համրանքով չվատներ մարդերը, վասն զի բանակն ունի, համրանքով չպատներ հրացանը, վասն զի վէնտէն ունի: Զսպումն այնքան զօրապունդ ունի որքան մարդ ունի պատնէշը, և այնքան զինարան ունի որքան փամփշտարան ունի պատնէշը: Հետևաբար հարիւրին դէմ մէկ հոգի կռիւներ են ասոնք որոնց հետևութիւնն է պատնէշներուն Ճմլումը, եթէ սակայն յեղափոխութիւնը՝ յանկարծ երևան ելնելով՝ կշիռին մէջ չնետէ իր հրեշտակապետային շղթափայլ թուրը: Երբեմն կը պատահի այս բանը: Անատեն ամէն բան կապստամբի, քարայատակները կռուան, ժողովրդային ամրոցները կը վխտան, Բարիզ վեհապետաբար կը սարսռի, երևան կուգայ ինչ որ երկնային է, օդին մէջ օդոստոսի 10 մը կը տեսնուի, օդին մէջ յուլիսի 29 մը կը տեսնուի, ահագին լոյս մը կերևայ, զօրութեան բայ որկորը կը նահանջէ, և բանակը՝ որ առիւծ է՝ իր առջև կանգուն և հանդարտ մարդարէ մը կը տեսնէ որ է Փրանսա:

ԳԼՈՒԽ ՃԳ.

ՆՇՈՑԼՆԵՐ ՈՐՔ ԿԱՆՑՆԻՆ

ՊԱՏՆԷՀ մը պաշտպանող զգայուններու և կրից քաջութին մէջ ամէն բան կայ։ Այս քառսը կը պարունակէ արիւնթիւն, երիտասարդութիւն, պատուոյ նախանձախնդրութիւն, եռանդ, տեսլական, համոզում, խաղամոլի կատղութիւն, և մանաւանդ յուսադիր ընդհատումներ։

Տը Լա Շանվըրրի փողոցին պատհէշը յանկարծ և անակընկալ առեն մ'ունեցաւ այս ընդհատումներուն մին, յուսադիր առաջուս մ'ունեցաւ անորոշապէս։

— Մարիկ ըրէք, գոչեց Անժօլրա որ միշտ ականջ կուտար լսելու համար, կարծեմ թէ Բարիզ կարձենայ։

Ստոյգ է թէ յունիսի 6ի օրն առաւօտ ապստամբութիւնը մէկ կամ երկու ժամի չափ վերաձուում մ'ունեցաւ։ Սէն-Մէրբիի զանգակին յարատեւութիւնը այժ տուաւ քանի մը տակար համքերու։ Բուարիէ և Կրամվիլիէ փողոցներուն մէջ պատնէշներ ծրագրուեցան։ Սէն Մարթէնի դուռին առջև զարապինայկիր երիտասարդ մը մինակը յարձակեցաւ վաշտ մը ձիաւորներու դէմ։ Պուլվարին վրայ, բայց տեղ մը կենալով ծունկին մէկը գետինը դրաւ, ուսն առաւ հրացէնը, նետեց, վաշտին պարագլուխը մոռցուց, և եռևը դարձաւ, ըսելով. Ահա ուրիշ տ'Լա որ ֆէշ-ֆէշ կ'ելլէ ընէ ձեզ։ Թրէ անցաւ այս երիտասարդը։

Սէն-Տընի փողոցը կին մը վար առնուած պատուհանի մանդակի մ'եռևէն հրացէնը կը նետէր քաղաքային պահակներուն վրայ։ Գօսծրերի փողոցը տասնուչորս տարեկան տղայ մը ձերբակալ եղաւ, որուն գրպանները փամփուշտներով լի էին։ Բազմաթիւ պահնորդարաններ յարձակում կրեցին։

Պերթէն փողոցին բերանը սաստկապէս և անակնկալ կերպով մը բազմաթիւ հրացաններ պարպուեցան զրահաւորներու

դունդի մը վրայ որուն հրամանատարն էր Գավէնեագ Տը Պարաներ զօրապետը։ Բլանշ-Միպրէյ փողոցն ալ տանիքներուն վերէն սեղանի հին թեցիներ և տնական անօթներ նետուեցան զօրքին վրայ։ գէշ նշան։ և երբ այս իրողութիւնը հաղորդուեցաւ մարէշալ Սուլթին, Նաբոլէոնին ծեր տեղակալը սկսաւ մմնջալ՝ յիշելով Սիւզէյի սա խօսքը զոր ըսած էր Սարաիօսի մէջ. Կոբոօաթ էնէ երբ պոռաս կ'իները վեր ելնուն վրայ կը պոռչեն էրէնց կեցցները։

Այս հանրական նշաններն որք կերևային երբ կը կարծուէր թէ ապստամբութիւնը մանաւորուած է, այս բարկալի երանդն որ կսկսէր եռալ, այն կայծերն որք հոն հոս կը թըռչէին Բարիզի արուարձաններն ըսուած դիւրավառ և խորունկ դէզերուն վերևը, վախ տուին ռազմական պարագլուխներուս։

Ա՛ճապարեցին մարելու այս հրդեհի սկզբնաւորութիւնները։ Նախ այս կայծերը մարելու համար ուշացան յարձակելու Մօպիւէի, Տը Լա Շանվըրրիի և Սէն-Մէրբիի պատնէշներուն վրայ, որպէս զի եռքը միայն անոնց հետն ըլլայ կռիւը և որպէս զի մէկ յարձակումով վերջ տան ապստամբութեան։ Զօրագունդեր ղրկուեցան եռուեփ եղնող փողոցները, որոնց մէծերն աւելցին, պղտիկները՝ յայլ և յայհեակ խուզարկեցին՝ երբեմն ղղուշակի և յամրաբար, երբեմն յարձակողական քայլով յառաջանալով։ Զօրքերը կը խորտակէին այն դուռերը ուսկէ հրացան կը նետուէր։ Մի և նոյն ժամանակ հեծելազօրներու շարժումները պուլվարներուն խումբերը կը ցրուէր։ Այս կսպառմէն հետևեցաւ այն ժխորն և աղմկալի աղաղակը որ բանակին և ժողովուրդին ընդհարումներուն յատուկ է։

Այս էր ահա Անժօլրային ականջին լսածն այն ինչ որ թնդանօթն և հրացանները զգրեր էին արձակուելէ։ Ասկէ՝ յետ փողոցին ծայրէն պատգարակներու վրայ դրուած վիրաւորներու անցնիլը տեսած ըլլալով Գօմպըֆէրին կըսէր.

— Այս վիրաւորները մեզմէ չեն։

Քիչ ևեթ յոյսը. շուտ խաւարեցաւ նշոյլը։ Գրեթէ կէս

ժամի մէջ անհետ եղաւ ինչ որ կար օդին մէջ. անշանթի վայլակի նման բան մ'եղաւ այն, և ապտամբները զդացին թէ իրենց վրայ կիյնայ այն տեսակ մը կապարեայ շուրջառը զոր ժողովուրդին անտարբերութիւնը կը նետէ անօդնական յանձնառուներուն վրայ։

Վիժած էր այն հանրակոչ շարժումն որ կերևար թէ անոր շաղախը կը ծրագրուի. և պատերազմի պաշտօնէին ուշադրութիւնը և զօրապետներու ռազմագիտութիւնը կրնային հիմա կեդրոնաւորիլ կանգուն կեցող երեք կամ չորս պատնէշներուն վրայ։

Արևը հորիզոնին վրայ կը բարձրանար։

Ապստամբ մը հարցուց Անժօլրասին.

— Անօթի ենք. մի՞թէ իրաւ առանց բան մ'ուտելու պիտի մնանինք։

Անժօլրաս, որ շարունակ իր պարապի ժայռին կռթնած փողոցին ծայրը կը դիտեր անընդհատ, դլուխովը ատորատական նշան մ'ըրաւ։

ԳԼՈՒԽ ՃԳ.

ՈՒՐ ՊԻՏԻ ԿԵՐԹԱՆՔ ԱՆԺՕԼՐԱՑԻ ՏՐՓՈՒԻՀԻՆ ԱՆՈՒՆՔ

Գուրֆէյրաք՝ Անժօլրային քով քարի մը վրայ նստած՝ շարունակ կը նախատէր թնդանօթը, և երբ որ իր հրեշային ժխորովը կանցնէր ռումբերու այն տխրալի երաժշտութիւնը որ կանուանի երկաթի կտորներ, Գուրֆէյրաք հեղնալի խօսք մը կը նետէր անոր։

— Թոքերդ կը յոդնեցնես, խեղճ ծերուկդ իմ սմարդի, դլուխս կը ցաւցնես պարապ տեղը պոռչտալով։ Ամի որոշում չէ, հազ է առ։

Եւ իր քով դանուողները կը խնդային։

Գուրֆէյրաք և Պօսիւէ՝ որոնց արի զուարթութիւնը՝ վտանգին հետ կաձէր՝ տիկին Սգարօնին պէս՝ կերակուրը կատա-

կով կը փոխանակէին և դինիի տեղ՝ որ չկար՝ զուարթութիւն կուտային ամենուն։

— Կաքանչանամ Անժօլրասին վրայ, կըսէր Պօսիւէ։ Իր անդրդուելի յանդգնութիւնը զարմանք կուտայ ինձ։ Մինակ կապրի, և այս առանձնութիւնը թերևս փոքր ինչ կը տրամդինքը։ Անժօլրա կը դանդատի իր մեծութենէ որ այրիուհան կը գատապարտէ զինքը։ Մենք քիչ կամ շատ, ամենքս ալ տարփուհիներ ունինք որք յիմարութիւն այսինքն քաջութիւն կուտան մեզ։ Երբ մարդս վազրի մը պէս սիրասհար է, առիւծի մը մարանչելն անգամ մեծ բան մը չէ։ Ասի տեսակ մը վրէժ առնել է մեր բամբիշ տարփուհիներէն այն սլաքներու փոխարէն որոնցմով կը խայթեն մեզի։ Բօլան մահ կընդունի Անժելիքը զայրացնելու համար։ Մեր ամէն գիւցազնութիւնները մեր կիներէն կուգան։ Առանց կնիկի մարդ մ'առանց շունի տարօրինակ մ'է. կինն է մարդուս կրակ տուողը։ Արդ Անժօլրա կին չունի։ Սիրահար չէ, բայց աներկիւղ ըլլալու միջոցը կը գտնէ։ Անլուր բան մ'է առանց պէս ցուրա և կրակին պէս յանդուգն ըլլալու կարողութիւնը։

Անժօլրա կարծես թէ մտիկ չէր ըներ, բայց եթէ մարդ մ'ըլլար քովը, անոր կէս ձայնով Հայրենիք+ մրմնջելը պիտի լսէր։

Պօսիւէ տակաւին կը խնդար երբ Գուրֆէյրաք պօռաց.

— Նորեկ մը։

Եւ ազդարարութիւն ընող նուիրակի ձայն մը հանելով, շարայարեց.

— Ուղինոյ թնդանօթի է անուններ։

Իրօք նոր անձ մ'երևած էր տեսարանին վրայ։ Երկրորդ թնդանօթ մ'եկած էր։

Գնդընկէցները թնդանօթին համար հարկաւոր եղած այժմ շարժումներն ընելով երկրորդ հրանօթին ալ մարակոցի ձև տուին առջինին քով։

Ասով կը ծրագրուէր կռիւին վախճանը։

Քանի մը վայրկեան ետք երկու թնդանօթներն ազդուե-
թեամբ խնամուելով պատնէշին վրայ կարձակուէին դէպու-
ղիղ։ Բանակի և շրջավայրերու զօրաց խումբերուն կրակներն
ալ մարտկոցը կը պաշտպանէին ,

Քիչ մը հեռուէն արձակուող թնդանօթներու դոռումներն
ալ կը լսուէին ։ Մինչդեռ երկու թնդանօթները կատաղաբար
կը ռմբակոծէին Տը Լա Շանվըրբի փողոցին ամրոցը , ուրիշ
երկու թնդանօթ ալ , մին Սէն Տընի փողոցէն , միւսն ալ
Օպրի-Լը-Պուշէ փողոցէն Սէն-Մէրիի պատնէշին վրայ
ռումբ կը տեղային ։ Զօրս թնդանօթները սոսկալի արձա-
գանքներ կուտային իրարու ։

Պատերազմին սխուր շուներուն հաչուձները մէկ մէկու կը
պատասխանէին ։

Հիմա Տը Լա Շանվըրբի փողոցին վրայ արձակուող թըն-
դանօթներուն մին երկաթի բեկորներ , միսն ալ գունդ կը
նետէր ։

Գնդաձիգ հրանօթը քիչ մը դէպ 'ի վեր ուղղուած էր , և
արձակումին ուղղութիւնն այնպէս կարգադրուած էր որ գուն-
դը պատնէշին վերին անկիւնին յետին եզրը կը հարուածէր,
կը խորտակէր և սալաքարերն ապստամբներուն վրայ կը փըշ-
րէր իբր պայթող երկաթի բեկորներ ։

Թնդանօթին այս կերպով արձակուելուն նպատակն էր կըռ-
ւողները հեռի կեցնել ամրոցին կատարէն և պատնէշին ներսը
խմբուելու սոսկել , ըսել է թէ յարձակումին նշանն էր այս։

Երբ գունդը պատնէշին կատարէն և երկաթի բեկորները
կապէլհոնին պատուհանէն պիտի արտաքսէին ապստամբները,
յարձակող խումբերը պիտի կրնային փողոցէն յառաջանալ
առանց նշան առնուելու հրացաններէն , գուցէ նաև առանց
նշմարուելու , և առջի օրուան երեկոյին պէս յանկարծ ամ-
րոցէն վեր ելնել , և ո՛վ գիտէ թերևս յանկարծ տիրել պատ-
նէշին ։

— Պէտք է անհրաժեշտաբար նուաղիլ այս թնդանօթնե-

րուն մեղ տուած անհանդստութիւնը , ըսաւ Անժօլրաս և
կրակ դնդընկէցներուն վրայ , պօռաց ։

Ամենքն ալ պատրաստ էին ։ Պատնէշն որ երկար ժամա-
նակէ 'ի վեր կը լռէր , մոլեգնաբար արձակեց հրացանները։
տեսակ մը կատղութեամբ և ուրախութեամբ եօթ կամ ութն
անգամ կրկնուեցաւ հրացանաց արձակումը։ փողոցը լեցուե-
ցաւ մուխով մ'ուսկէ անդին ոչինչ կերեւար , և քանի մը
րոպէէն ետք , այս բոցավառ մէղմ մէջէն ապստամբք կրցան
աղօտապէս տեսնել դնդընկէցներուն երկու երրորդն որ թըն-
դանօթներուն անիւներուն վրայ պառկած էր ։ Կանդուն մնա-
ցողները խստմբեր հանդարտութեամբ մը կը շարունակէին
ծառայել թնդանօթներուն , բայց կրակը մեղմած էր ։

— Աղէկ եղաւ , յայղողեցանք , ըսաւ Պօսիւէ Անժօլրային։

Անժօլրա գլուխն օրօրով պատասխանեց։

— Եթէ քառորդ մ'ևս այսպէս յայղոզինք , պատնէշին մէջ
տաս փամփուշտ անգամ չպիտի ունենանք ։

Ներեայ թէ կավրօշ լսեց այս խօսքը ։

ԳԼՈՒԽ ԾԵ։

ԿԱՎՐՕՇ ԳՈՒՐՍ ԿԵԼՆԷ

Գուրֆէյրակ յանկարծ պատնէշին ստորոտը , դուրսը,
փողոցին մէջ և դնտահներուն տակ մէկը տեսաւ ։

Կավրօշ գինիի շիշի կողով մ'առնելով կապէլհոնէն դուրս
ելած էր պատնէշին ձեղքէն , և հանդարտօրէն կզբաղէր իր
կողովին մէջ պարպելու ամրոցին գաւիթին վրայ մեռած ազ-
գային պահակներուն փամփուշտով լի պարկերը ։

— Ինչ կընես հոգ , ըսաւ Գուրֆէյրակ ։

Կավրօշ քիթը վեր ընելով ,

— Կողովս կը լեցունեմ , քաղաքացի , ըսաւ ,

— Ձեռնոցս ռումբերը ։

Կավրօշ պատասխանեց ,

— Է՛, ինչ ընեմ, անձրեւ կուգայ : Եա՛քը :
Գուրփէյրադ գոչեց·
— Նէրս մաիր :
— Հիմա, ըսաւ Կավրօշ :
Եւ անդամ մը յատկելով փողոցին մէջ սուզեցաւ :
Ընթերցողը կը յիշէ անշուշտ թէ Ֆանիդօյի խումբն ետ քաշուած ժամանակ դիակներու շաւիղ մը թողած էր իր ետեւը:
Քսանի չափ դիակներ փողոցին երկայնութեամբը պառկեր էին քարայատակին վրայ : Կավրօշին համար քսանի չափ պարկ կար փամփուշտով լի : Պատնէշին համար պաշար մ'էր այս :
Մուխը մառախուղի մը պէս էր փողոցին մէջ: Ով որ լեռներու կիրճի մը եւ երկու ուղղաձիգ զառիվերներու մէջ ինկած ամպ մը տեսած է, կրնայ երեւակայել այս մուխը զոր բարձրաշէն տուներու երկու ախրաձեւ պիծեր սեղմած եւ կարծես թէ թանձրացուցած էին : Այս մուխը յամրաբար վեր կելլէր եւ անընդհատ կը նորոգուէր· ուսկէ կը հետեւէր աստիճանական մթութիւն մը որ յօրեկուան լոյսը անգամ կը տրժդուներ : Կուռողները հաղիւ հազ միկմիկ կը նշմարէին փողոցին մէկ ծայրէն միւս ծայրը, թէեւ շատ կարճ էր փողոցը:
Հասանական է թէ որոնք որ պիտի վարէին պատնէշին յարձակումը, ուզեր եւ հաշուեր էին այս մթութիւնը որ սակայն օգտակար եղաւ Կավրօշին :
Կավրօշ այս միայն քօղին ծալերուն տակէն եւ իր փոքրուիկ թեհան շնորհիւ կրցաւ յառաջանալ եւ բաւական հեռանալ փողոցին մէջ առանց տեսնուելու : Առանց մեծ վտանգի կողոպտեց փամփուշտի եօթ կամ ութ պարկերը որոնց հանդիպեցաւ նախ եւ առաջ:
Փորի վրայ կը սողար, չորքոտանիի ձեւով կրնթանար, ականաներովը կողովը կը բռնէր, կը դալարուէր, կսպրդէր, կը ծփար, օձասէս կերթար դիակէ մը դէպ ուրիշ դիակ, եւ ընկղմած մը բացող կապիկի մը պէս փամփուշտի պարկերը կը պարպէր :

Պատնէշէն որու բաւական մօտ էր տակաւին ոչ ոք կը համարձակէր գոչելու որ ետ դառնայ, վախնալով որ ուշադրութիւն չգրգռայ իր վրայ :
Վառօդամանը մը գտաւ դիակի մը վրայէն որ տասնապետ մ'էր :
— Ծարաւի համար, ըսաւ Կավրօշ, զրպանը դնելով վառօդամանը :
Հետզհետէ յառաջանալով հասաւ մինչեւ այն կէտն ուր նետուած հրացաններու մէջը թափանցիկ կը լլար :
Հետեւաբար իրենց սալաքարերու թումբին ետեւը շարուող եւ դիտելով սպասող զօրաց արձակամարտները եւ փողոցին անկիւնը դումարուած շրջապատերու պահակներուն արձակամարտները յանկարծ իրարու բան մը ցուցուցին որ կը շարժէր մուխին մէջ :
Կավրօշ երբ դուռի քարի մը քով պառկած գինուորի մը փամփուշտները կողովը կը լեցուներ, դնտակ մը զարկաւ դիակին :
— Անպիտանները, ըսաւ Կավրօշ: Ահա մեռելներս կը մեռցուներն :
Երկրորդ դնտակ մը Կավրօշին քովի սալաքարին հանդիպելով կայծեր հանեց : Երրորդ մ'ալ նետուելով անոր կողովը տապալեց :
Կավրօշ նայեցաւ եւ տեսաւ որ շրջապատերէն կուգային դնտակները :
Ելաւ կայնեցաւ ուղղապէս, եւ մինչդեռ մաղերը հովէն կը շարժէին, ձեռներն ազդրերուն վրայ դնելով եւ ակնոցները նայելով ազգային պահակներու որք հրացան կարձակէին, երգեց յետադայ երգը·

Տգեղ եմ 'ի Նամիէր,
Յանցանք է Վօլթերին.
Ի' ապուշ 'ի Բալեզօ,
Յանցանքն է Բուազին :

Յետոյ կողովը դետնէն առաւ, մէջէն ինկած փամփուշտները՝ առանց և ոչ մին կորուսեալու՝ մէջը լեցուց, և դէպ՚ի հրացանները յառաջանալով դնաց կողոպտելու փամփուշտի տուրիշ պարկ մ՚ալ: Հոն չորրորդ դնտակ մ՚ևս արձակուեցաւ՝ առանց դպնալու կավրօշին: Սատմբակը երգեց՝

Ես քնաւ չեմ ճտտար,
Յանցանքն է վօլթերին.
Փորրիկ մի թուչուն եմ,
Յանցանքն է Բուասշին:

Հինգերորդ դնտակ մ՚ևս նետուելով ոչ այլ ինչ կրցաւ քնել կավրօշին եթէ ոչ աւելի տալ անոր երրորդ տունն մը երգելու.

Քնութեամբ ուրախ եմ,
Յանցանքն է վօլթերին.
Օժիտս է հիքութիւն,
Յանցանքն է Բուասշին:

Ասի ժամանակ մը շարունակուեցաւ այսպէս:

Ահարկու և զմայլելի էր տեսարանը: Կավրօշ հրացանի գունդերով կը հեղհեղէր հրացանները: Կերևար թէ շատ կը զուարճանար: Կառուցին որսորդները հարուածող ձնձղուկին կը նմանէր: Իբր պատասխան տուն մը կերգէր ամէն անգամ որ հրացան կը նետուէր իրեն: Անընդհատ նշան կառնուէր հրացաններէն, բայց միշտ ազատ կը մնար դնտակներէն: Ազատին պահակներն և զինուորները կը խնդային նշան առնելով զան: Կավրօշ կը պառկէր, յետոյ կելլէր, դուրսի խորշի մը մէջ անհետ կըլլար, ապա կը ցատկէր, կաներևութանար՝ վերսին կերևար, կը փախչէր, ետ կուգար, ռումբին պատսխան կուտար քիթովը հեղհեղական ձևեր ընելով, այլ սատկան կրակոցներ փամփուշտները, կը պարպէր պարկերը և կողովը կը լեցուներ: Ապստամբներն՝ անձկութեամբ ընդառաջ՝ անոր եաւէն կը նայէին: Պատնէշը կը սարսափէր,

բայց ստամբակը կերգէր: Կավրօշ պատանի մը չէր, կավրօշ մարդ մը չէր, այլ տարօրինակ ստամբակ վհուկ մ՚էր: Կրնար կարծուիլ թէ կրնին անվիրելի (invulnerable) թզուկն էր: Գնտակներն եաւէն կը վազէին, այլ դնտակներէն աւելի արագաշարժ էր ան: Մահուան հետ չգիտեմ ինչ ահարկու պահուըտուկի խաղ մը կը խաղար: Ամէն անգամ որ Ճիւաղին տափաքիթ դէմքը կը մօտեր, ստամբակը կոկն մը կուտար անոր:

Սակայն միւսներէն աւելի աղէկ ուղղուած կամ աւելի մատնիչ դնտակ մը վերջապէս գպցաւ շրջմոլի հուր պատանիին: Կավրօշ երերալէն ետք կքեցաւ: Պատնէշին բոլոր ապստամբներն աղաղակ մը հանեցին. բայց այս պատանին թզուկ ու միանդամայն Անթէի պէս հսկայ մ՚էր. ստամբակի մը քարայատակին հպիլը կարծես թէ հսկային երկրիս հպելուն կը նմանի. կավրօշ վերստին կայնելու համար ինկած էր. ուստի եաւ նստաւ և՝ մինչդեռ արիւնի երկայն թել մը կը գծաւորէր իր երեսը՝ վեր ըրաւ երկու թևերը, նայեցաւ այն կողմը ուսկէ եկած էր դնտակն և սկսաւ երգել.

Աչ, գետինն արդ ինկայ,
Յանցանքն է վօլթերին.
Քիթըս է ուղխին մէջ,
Յանցանքն է...

Ձլմեցուց երգը: Մի և նոյն հրացանակիրէն երկրորդ դնտակ մ՚ալ ընդունելով յանկարծ դադրեցաւ երգելէ: Այս անգամ երեսի վրայ ինկաւ դետինը և ա՛լ չշարժեցաւ: Թուած էր ա՛լ այս պզտիկ վհուկ հոգին:

ԳԼՈՒԽ ՃԶ.

ԻՆՉՊԷՍ ԵԼՐԱՑՐԸ ՀԱՑՐ ԿԸԼԼԱՑ

Ու և նոյն միջոցին Լիւքսանպուրի պարտէզին մէջ, —

ըստ որում վիպական գործողութեան մ՚աչքը պարտաւոր է ամենուրեք նայիլ, — երկու տղայ կար որք ձեռք ձեռքի բռնած էին: Մին եօթ, միւսն ալ հինգ տարեկան կերևար: Անձրևէն թրջուած ըլլալով ծառուղիներուն արևուտ կողմերը կը քայլէին: Մեծը պզտիկին կառչնորդէր· դալկադէմ էին և ցնցոտիներ հագած· վայրենի թռչուններու յատուկ կերպարան մ՚ունէին: Պզտիկը մեծին կըսէր· Շատ անօթի եմ:

Մեծը՝ արդէն փոքր ինչ պաշտպան ըլլալով՝ ձախ ձեռքովին եղբայրը կը տանէր և աջ ձեռքն ալ պզտիկ գաւազան մ՚ունէր:

Մինակ էին պարտէզին մէջ: Պարտէզն ամայի էր, վանդակներն ալ ոսպիկանութեան հրամանաւ զոցուեր էին իբր զգուշութիւն ապստամբութեան դէմ: Կուիւն պիտոյից համար Լիւքսանպուրի պարտէզէն դուրս ելած էին այն զօրքերն որք հոն բանակ կազմեր էին:

Այս տղեկներն ինչպէս կը գտնուէին հոն· արդեօք դուռը կէս մը բացուած պահնորդարանէ մը փախած էին· մօտակայ տեղերը, Անֆերի քաղաքագուռին մօտ, կամ Օպսերվաթուարի (դիտարան) հրապարակին վրայ, կամ մօտակայ քաղուղիին բերանը որու վրայ կը նայի Invenerunt parvulum pannis involutum*. փորագիրով ձակատազարդ մը, կամ արդեօք ձեռնածուներու խրճիթ մ՚ուր թերևս պահուած էին անոնք· կամ թէ առջի օրն իրիկուն փակման միջոցին պարտէզին վերակացուներուն հսկողութենէ վրիպելով պիշերն անցուցեր էին արդեօք այն պահնորդական խուցերուն մէկին մէջ ուր օրապէրները կը կարգացուին: Ստոյգ է սակայն թէ այս տղեկները թափառական էին և ազատ կերևային:

Թափառական ըլլալ և ազատ երևալը կորսուիլ է:

Իրօք կորսուեր էին այս երկու խեղճ պզտիկները:

Այս երկու տղեկներն էին այն մանուկներն որոնց հոգը քաշած էր կավրօշ և զորս ընթերցողը կը յիշէ: Այսինքն Թենարիէի զաւակներն որք Մանեօն անուն կնիկին վարձուած

* Կողովի մէջ փաթթուած բան մը գտան:

և պ· Թիլնօրմանին զաւակները կարծուած էին, և որք հիմակ այս ամէն անարմատ ոստերէն ինկած տերևներ ըլլալով՝ գետնին վրայ կը տարուբերէին հովէն:

Իրենց զգեստներն որք Մանեօնին օրովը մաքուր ըլլալով յայտարարութեան տեղ կը ծառայէին պ· Թիլնօրմանի առջև, հիմա քուրջ դարձեր էին:

Այս էակներն ալ կը վերաբերէին վիճակագրութեան մը· վիճակագրութիւն Լուսն Մանկանց զոր ոսոխականութիւնը կը ձշդրտէ, կը ժողովէ, կը կորուսէ և վերստին կը գտնէ բարիզի փողոցներուն մէջ:

Այսպիսի օրուան մը խռովութեան շնորհիւ միայն կրնային Լիւքսանպուրի պարտէզը գտնուիլ այն երկու պզտիկ թրշուառները: Եթէ վերակացուները նշմարած ըլլային, արտաքսած պիտի ըլլային այս ցնցոտիներ հագած մանուկները: Պզտիկ աղքատները հասարակայ պարտէզները չեն մտներ· սակայն պէտք է մտածել թէ անոնք իրր մանուկ ծաղիկները վայելել պահանջելու իրաւունք ունին:

Սակայն զոցուած վանդակներուն շնորհիւ այն երկու պզտիկները պարտէզին մէջ էին՝ կանոնազանցութիւն ընելով: Պարտէզը սպրդելով հոն մնացեր էին: Վանդակներուն փակումն արձակուրդ չտար վերակացուներուն· ասոնց հսկողութիւնը կը շարունակուի առերևութապէս, վասն զի կը թուլնայ և կը հանդստանայ· և վերակացուները նոյնպէս հասարակայ անձկութենէ յուզուելով և իրենց ուշադրութիւնն աւելի դուրս քանթէ ներսը տալով պարտէզին չէին նայեր և չտեսեր էին երկու կանոնազանցները:

Առջի օրը, քիչ մ՚ալ առտու անձրև եկած էր: Բայց յունիսի մէջ անձրևի տարափները չեն համրուիր: Մրրիկէն ժամ մ՚ետք հազիւ հաղ կը նշմարուի թէ արտասուած է այն խարտեշաղեղ օրը: Ամառը պետինը շուտ մը կը չորնայ մանկան մ՚այտին պէս:

Այս արևադարձի միջոցին կէսօրուան լոյսը կրնայ ըսուիլ

թէ կսկծալի է : Ամէն բան կառնու այն : Երկրին կը յարի և կը վերադրի տեսակ մը ծծումով : կարծես թէ ծարաւի է արևը : Տեղատարափ մը բաժակ մը ջուր է· անձրև մ'ան- միջապես կը խմուի : Մինչդեռ առաու ամէն բան ջուրով ո- ղողուած էր , կէսօրէն ետք ամէն բան փոշի կարատադրէ :

Խիստ սքանչելի բան մ'է խոտն երբ անձրևէն կը մաք- րուի և ճառագայթէն կը սրբուի· տաք զովութիւն մ'է այն: Պարտէզները և մարզագետիններն իրենց արմատին մէջ ջուր և ծաղիկներուն մէջ արև ունենալով խնկամանուշ կը լլան և իրենց ամէն անուշահոտութիւններովը հանդերձ կը բուրեն : Ամէն բան կը խնդայ , կերդէ և կընճայուի : Մարդ հեշտա- պես կզգայ թէ արքշիւ է : Գարունն առժամանակեայ դրախտ մ'է· արևը կօդնէ մարդուս որ համբերութեամբ սպասէ :

Կան էակներ որ ասկէ աւելին չեն ուզեր· ապրողներ որք երկնից կապոյտն ունենալով , բաւական է այս , կըսեն· մտա- խոհներ որոնց միտքը սքանչելեայ մէջ սուզած է· որք բնու- թիւնը պաշտելով բարութեան և չարութեան նկատմամբ ան- տարբեր կըլլան , և իրենց միտքը մարդէս հեռացնելով զուար- թութեամբ տիեզերքիս կը նային ակնապիշ , և որոնց համար աւելորդ բան մ'է զբաղիլ ոմանց անօթութեան , ոմանց ծա- րաւին , ձմեռուան մէջ աղքատին մերկութեան , պզտի ողնա- սիւնի մ'ուշային ծռութեան , խշտեակին , հիւղին , զնդանին և ցրտահար նորաբոյս աղջկանց ցնցոտիներուն , քանի որ կա- րելի է մտախոհել ծառերուն տակ· հանդարտ և սոսկալի միտքեր որք զոհ են անդթաբար , որոնց կը բաւէ անսահ- մանը , — զարմանալի բան , — և որք չեն պիտեր սահմանա- ւորը (fini) , այսինքն մարդուս այն մեծ պիտոյքն որ խանդա- ղատանքը կընդունի : Զեն խորհիր սահմանաւորին վրայ որ յա- ռաջդիմութիւնը , վէհ աշխատութիւնը կընդունի : Զեն տես- ներ անորոշը որ անսահմանին և սահմանաւորին մարդկային և երկնային կարգաւորութենէն կը ծնի : կը ժպտին , բաւական է որ դէմ առ դէմ ըլլան անբաւութեան հետ : Ուրախու-

թիւն՝ բնաւ , հիացում՝ միշտ : Անոնց կեանքն է խորասուզիլ : Մարդկութեան պատմութիւնն ատոնց համար փոքրիկ մասերու բաժնուած յատակագիծ մ'է միայն : Ոոլորն այս յատակա- գծին մէջը չէ , ձշմարիտ բոլորը դուրսն է· ինչ օգուտ ունի զբաղիլ մանր պարագայի մ'որ է մարդս : Մարդս կարելի է թէ կը տառապի· բայց նայէ՛ սա Ալէքսպարան աստղին ո՞ր կը ծագի : Մայրն ալ կաթ չունի եղեր , նորածինը կը մեռնի եղեր , լմնի ինչ· բայց նկատէ սա հրաշալի վարպետն զոր եղնինի սպիտակուցին մանրադիտակով զննուած կլորակը (ron- delle) կը կազմէ· բազդատէ նայիմ ալի մանկան ամենէն դեղեցիկ տանթելային հետ : Այս խոհուն միտքերը կը մռնան սիրե- լը : Զոդիակոսն այնքան կը դրաւէ այս միտքերը որ մանկան մ'արտասուքը տեսնելու ժամանակ չեն ունենար : Աստուած կը խաւարէ անոնց հոգին : Փոքր ու միանգամայն մեծ միտքերու ընտանիք մ'են անոնք : Այս ընտանիքէն էր Ովրատիոս , նաև Նէօթէ , նաև Լաֆոնթէն թերևս· անսահմանին շքեղ ինք- նամոլներն և վշտին անտարբեր ականատեսներն են անոնք· ինքնամոլներ և ականատեսներ որք չեն տեսներ ներսնը եթէ դեղեցիկ օդ ըլլայ· որոնցմէ արևը կը պահէ հրատը· որք թերևս կատարեալ գործողութիւնը նային լոյսի ազդեցու- թիւն մը փնտռելով անոր մէջ· որք չեն լսեր ոչ աղաղակը, ոչ հեծկլտանքը , ոչ հռնչումը , ոչ վտանգի զանգակը , ո- րոնց համար բարի է ամէն բան քանի որ մայիս ամիսը կայ , որք կը խոստովանին թէ զոհ են քանի որ իրենց գլխուն վե- րևը ծիրանեփայլ և ոսկեզոյն ամպեր պիտի ըլլան , և որք որոշած են երջանիկ ըլլալ աստղերու փղփղուքին և թըռ- չուններու ճռուողումին մինչև սպառիլը :

Ճաճանչաւոր խաւարեալներ են անոնք· չեն պիտեր բնաւ թէ պթալի է իրենց վիճակը : Ստուգիւ պթալի է : Ով որ չլար , կոյր է : Մարդ պէտք է որ սքանչանայ և մեղքնայ այս միտքերու վրայ : Սքանչանալով և մեղքնալով իբր այնպիսի էակի մը վրայ որ խաւար ու միանգամայն լոյս ըլլալով՝ աշ-

տեսանուքին տակ աչք չունի և Ճակատին մէջ տեղն ասող մ'ունի։

Ոմանք կը կարծեն թէ այս խորհողներուն անտարբերութիւնը բարձր փիլիսոփայութիւն մ'է։ Թող ըլլայ, բայց հիւանդութիւն կայ այս բարձրութեան մէջ։ Մարդս կրնայ անմահ և կաղ ըլլալ։ վկայ է Վիւլկէն։ Կրնայ մարդէս գերազոյն և մարդէս ստորին էակ մ'ըլլալ։ Անկատար անբաւութիւնը բնութեան մէջն է։ Ո՞վ գիտէ թէ արևը կոյր մը չէ։ Բայց անատեն ինչ ընենք, որո՞ւ վստահինք։ Solem quis dicere falsum audeat*. Ուրեմն կը սխալի՞ն եղեր նաև այն էակներէ ոմանք որք հանճարներ, մարդկային Ամենաբարձրեալներ, աստղանման մարդեր են։ Կարելի՞ է որ նուազ տեսնէ, աղէկ չտեսնէ, բնաւ չտեսնէ այն որ հոն վերն է, կատարն է, գագաթն է, զէնիթն է, այն որ այնքան լոյս կարձակէ երկրիս վրայ։ Մի՛թէ յուսահատական բան մը չէ այս։ Ոչ։ Բայց ինչ կայ ուրեմն արևին վերևը։ Աստուած։

1832 յունիսի 6ին, առտու ժամը 11ի մէջտեղն զմայլելի կերեւար Լիւքսանպուրի պարտէզն որ առանձին և ամայի էր։ Կարգաւ տնկուած բոյսերու տողանները (quinconce) և բուրաստանները փոխադարձապէս անոյշ հոտեր կը ղրկէին իրարու և կը շլանային յարևու։ Ոստերը՝ կէսօրուան պայծառութեամբն արբշիռ՝ կարծես թէ կը չանային իրարու փարիլ։ Մոլեզնութիւններու մէջ շիկահաւերու շղթայ մը կար։ Ձնծաղուկները կը յաղթանակէին։ փայտիկորները (pique-bois) կասկինները երկայնութեամբը կը մաղէին իրենց կտուցովը կեղևին ծակերը հարուածելով։ Ծաղկոցները կընդունէին շուշանները օրինաւոր թագաւորութիւնը։ անուշահոտութիւնները ամենէն վեհափառն է սպառակութենէ արտադրուող անուշահոտութիւնը։ Շահպրակներու պղպղեհամ հոտը կը շնչուէր։ Մարի Տը Մէտիսիի ծերը որիները սիրահար էին մեծ ծառերուն վրայ։ Արևը կոսկեզօծէր, կը շաղոտներ և

* Ո՞վ կը համարձակի արևը իբր կեղծ ամբաստանել։

կը վառէր կաիաչները որք ոչ այլ ինչ են բայց եթէ բոցկին ծաղկի փոխուած ամէն տեսակ զանազանութիւնները։ Կաիաչներու նստարանները բոլորտիքը պտոյտ կատնէին մղոններն որք այս բոցեղէն ծաղկներու կայծերն էին։ Ամէն բան, նաև մօտալուտ անձրևը շքեղութիւն և զուարթութիւն էր։ այս վերապատուութիւնը որմէ պիտի օգտեին հովվի շուշաններն և այծատեսները, սպառնական բան մը չունէր բնաւ։ Ծիծեռնիկները վարէն թռչտելու սիրուն սպառնալիքը կընէին։ Ով որ հոն ըլլար, երանութիւն կը շնչէր։ կեանքն անոյշ հոտ կը բուրէր։ այս բնութիւնը բոլորովին անմեղութիւն, օդնութիւն, ձեռնտուութիւն, հայրութիւն, գոյութիւն, արշալոյս կարտաբուրեր։ Երկինքէն խնդուն խորհուրդները համբուրուող մանկային թաթիկի մը պէս քնքուշ էին։

Ծառերուն ներքև արձանները՝ մերկ և սպիտակափայլ լոյսէ ծակծկուած ստուերային զգեստներ հագեր էին։ այս աստուածուհիներն արևային ցնցոտիներ կը կրէին զլուվին։ անոնց ամէն կողմէն Ճառագայթներ կախուած էին։ Մեծ աւազանին բոլորտիքը հողն այրելու աստիճանի տաքութեամբ չորցած էր արդէն։ Բաւական հով կար որ հոն հաս փուշիի աղմուկները կը հանէր։ Վերջին աշունէն մնացած քանի մը դեղին տերևներ զերթալ կը հալածէին զուարթապէս և կարծես թէ կուտամբակէին։

Լոյսին առատութիւնը չգիտեմ ինչպիսի բան մ'ունէր որ վստահութիւն կուտար։ կենդանութիւնը, հիլքը, ջերմութիւնը, արտաբուրումները կը յորդէին։ մարդ կզգար թէ ստեղծումին աղբիւրին ահագին է։ սիրով համակուած այս ամէն շունչերուն մէջ, ղոզումներու և ցոլումներու այս երթևեկութեան մէջ, Ճառագայթներու այս ահագին վատնումին մէջ, հոսանուտ ոսկիի այս անհուն հոսումին մէջ անսպառելիին զեղուութիւնը կզգայիր, և այս շքեղութեան եռանդն իրը բոցեղէն վարագոյրի մ'եռակ Աստուած կընդհնշմարուէր, այսինքն այն որ միլիոնատէր մ'է աստղերով։

Աւազին չնորհիւ ոտքի բիծ մ՚անգամ չկար։ անձրեւին չնորհիւն ալ մխրճի հատ մ՚անգամ չկար։ Փունջերը նոր լուացուած էին։ ծաղկի ձեռվ երկրիս տակէն ելնող բոլոր թաւիշները, անդուռները, ջնարակները, ոսկինները անպտաստելի էին։ Մաքուր էր այս պերճութիւնը։ Երանաւէտ բնութեան մեծ լռութեամբը կը համակուէր պարտէզը։ Լռութիւն երկնային՝ որու կը յարմարէին բոյներու ճչիւնները, երամ ներու բզզումները, հովին բաղխումները։ Եղանակին ամէն ներգաշնակութիւնները չնորհալի ամբողջութեամբ մը կը կազմուէին։ դարնան մուտքն և ելքն ուղուած կարծին համեմատ տեղի կունենային։ Շեփորուկները կը վերջանային, յասմիկները կսկսէին։ քանի մը ծաղիկներ ետ մնացած, քանի մը զեռուններ ալ յառաջ անցած էին։ յունիսի կարմիր թիթեռնիկներու յառաջապահները կը բարեկամանային մայիսի ոսկեգոյն թիթեռնիկներու թիկնապահներուն հետ։ Ցօսխները կեղև կը փոխէին։ Քամին ահագին կասկենիներու մէջ շքեղապէս ալեպտոյտ շարժումներ կը կազմէր։ Սքանչելի էր բնութեան տեսարանը։ Մօտակայ ձմերոյկն հինաւուրց զինուոր մը վանդակէն Լիւքսանպուրի պարտէզը նայելով կըսէր. Ահա դարուն զինուած և փառաւորապէս հագուած շքուած է։

Բնութիւնը համայնապէս կը նախաձաշէր։ ժամն էր նախաձաշելու։ արարածները սեղան նստեր էին։ կապտագոյն մեծ փուցն երկնից և դալարագոյն մեծ փուցն ալ երկրիս վրայ դրուած էր։ արևը բոլորովին կը լուսաւորէր ամէն տեղ։ Աստուած տիեզերական կերակուրը կը բաժնէր։ Մէն մի էակ իր ձարակը կամ բլիթն ունէր։ Հաւփալը կանեփհատ կը գտնէր, սարեկիկը կորեակ կը գտնէր, եկքանիկը մկնականջ (mouron) կը գտնէր, կարմրավիզը որդ կը գտնէր, մեղուն ծաղիկ կը գտնէր, ձանձը որդիկ (infusoire) կը գտնէր, հովկուլը (engoulevent) ալ ձանձ կը գտնէր։ Ոմանք ալ փոքր ինչ մկկմկ կուտէին անշուշտ. ասի բարիին հետ խառնուած շարին դաղտնիքն է. բայց չկար անսասան մ՚որու ստամքը դատարկ ըլլար։

Երկու լքուն տղեկները մեծ աւազանին քովը եկեր էին, և՝ թակաւ ինչ խոովուելով այս ամէն ըղձերէն՝ կը ջանային պահուիլ, շքեղութեան, նաև անանձնական շքեղութեան առջև աղքատին և ոտարին զգացած բնազդումն դրդուելով, և կարապներուն խրճիթին եռևը կը կենային։

Մերթ ընդ մերթ, հոն հոս, և հովէն բերուելով խառն ի խուռն կը լսուէին աղաղակներ, ժխոր մը, տեսակ մ՚աղմկալի հռնչումներ որք հրաձիգուց արձակումներ էին, և խորին բաղխումներ որք արձակուող թնդանօթի զոռումներ էին։ Տէ Հալի կողմէն մուխ կար տանիքներու վերևը։ կարծես հրաւէր կարդացող զանգակ մը կը հնչէր հեռուէն։

Երկու մանուկները կարծես թէ չէին լսեր այս ձայները։ Պզտիկը մերթ ընդ մերթ, Անօթի եմ, կը կրկներ կէս ձայնով։

Գրեթէ մի և նոյն պահուն ուր այս երկու պզտիկները հասեր էին մեծ աւազանին քով, ուրիշ զոյգ մ՚ալ կը մօտէր։ Այս զոյգն էր յիսնամեայ ծերուկ մ՚որ վեցամեայ տղեկի մը ձեռքէն բռնելով կուգար։ Անշուշտ հայր ու տղայ էին։ Տղեկը մեծ բլիթ մը բռնած էր։

Այն ժամանակ Մաւտամ և Տ՚Անֆեր փողոցին գետզրեայ կալուած ատերներէն ամենք Լիւքսանպուրի բանալի մ՚ունէին զոր վարձաբնակները կը վայելէին վանդակները գոցուելէն ետք։ այս թոյլտուութիւնն անկէ ի վեր վերցուած է։ Հայրն ու տղան անշուշտ այս տուներուն մեկէն եկեր էին։

Երկու պզտիկներն «այս պարոնին» գալը դիտեցին և քիչ մ՚աւելի պահուեցան։

Այս պարոնը քաղաքաւոր մ՚էր, թերևս այն որ օր մը մի և նոյն աւազանին քով խրատ տուած էր իր որդւոյն «ըզդուշանալ ծայրայեղութիւններէ», խրատ զոր Մարիուս լսած էր իր սիրային տենդովը համակուած ժամանակ։ Քաղաքաւորը սիրուն և սեպ կերպարան մ՚ունէր, նաև բերան մ՚որ չդադարելով միշտ կը ժպտէր։ Ծամչէքի ահագին մեծութենէ և կաշիի կարի նուաղութենէ արտադրուած այս ժպիտն աւելի

ակռաները քանթէ հոդին կը ցուցունէ : Տղան իր խածած բլիթովը զոր չէր լմցներ , յաղած կերևար : Ապստամբութեան պատճառաւ ազգային պահակի զգեստ հագած էր ան , հայրն ալ՝ խոհեմութեան համար քաղաքացւորի զգեստով մեացած էր:

Հայր ու տղայ կանկ առեր էին աւազանին քով ուր կըսթափէին երկու կարապները : Այս քաղաքացորը կերևար թէ տովորութիւն ունէր մանաւորապէս զբաղնչանալ կարապներուն վրայ : Անոնց կը նմանէր մէկ կէտով, այսինքն կարապներուն պէս կը քայլէր :

Ա՛յն միջոցին կարապները կը լողային , — լողալն անոնց ղլխաւոր տաղանդն է , — և շքեղ էին :

Եթէ երկու խեղճ պղտիկներն ուշ դրած և հասկնալու հասակն ունեցած ըլլային , պիտի կրնային ծանրաբարոյ մարդու մը խօսքերը լսած ըլլալ: Հայրը տղուն կըսէր·

— Իմաստունը քիչով գոհանալով կապրի : Նայէ ինձ , որդեակ իմ: Ձեմ սիրեր զեղխութիւնը : Ոչ ոք տեսած է ոսկեթել ժապաւէններով և ադամանդներով զարդարուած զգեստ հագնիլը : Գէշ կազմուած հոգիներու կը թողում այս տիպ փառաւորութիւնը :

Նոյն պահուն Հալի կողմէն եկող խորին աղաղակները լսեցան զանդակի և աղմուկի աւելի սաստիկ ձայներու հետ :

— Ի՞նչ է այս , հարցուց տղան :

Հայրը պատասխանեց·

— Կառնոսեան ժողովրդութիւնները :

Ցանկարծ երկու կիսամերկ պղտիկները տեսան որք կարապներու մոտիկն եռուն էին անշարժ :

— Ահա սկիզբը , ըսաւ :

Եւ պահ մը մտիկ ընելէն ետք շարսյարեց·

— Անիշխանութիւնն այս պարտէզը կը մտնէ :

Սակայն տղան խածաւ բլիթը , յետոյ դեմինը թքնալով խածած պատառը , յանկարծ սկսաւ լալ :

— Ինչո՞ւ կուլաս , հարցուց հայրը :

— Ա՛լ կշտացայ , ըսաւ տղան :

Հայրը ժպտեցաւ :

— Կարկանդակ մ՚ուտելու համար անօթի ըլլալու հարկ չկայ :

— Ա՛լ սիրոս չուզեր : Օթեկ կարկանդակ մ՚է ասի :

— Ձես ուզեր ալ :

— Ոչ :

Հայրը կարապները ցուցունելով , ըսաւ·

— Սա տափտաներուն նետէ :

Վարանեցաւ տղան : Կարկանդակն ուտել չուզելը ուրիշի մը տալու պատճառ չէ :

Հայրը շարայարեց·

— Անգութ մի ըլլար : Պէտք է մեղքնալ կենդանիներուն վրայ :

Եւ զաւկին ձեռքէն կարկանդակն առնելով աւազանը նետեց: Կարկանդակն աւազանին եղերին բաւական մօտ ինկաւ :

Կարապները հեռու , այսինքն աւազանին կեդրոնն էին· որսի մը պարապելով չտեսան էին ոչ քաղաքացորը , ոչ ալ կարկանդակը :

Քաղաքացորը զգալով թէ կարկանդակը կորսուելու վտանգին կենթարկուէր , և յուզուելով այս անօգուտ նաւարեկութենէ , սկսաւ հեռագրական շարժուձեր ընել որով վերջապէս կարապներուն ուշադրութիւնը հրաւիրեց :

Կարապները ջուրին վրայ տարուբերող բան մը նշմարեցին, և նաւերու պէս՝ ինչպէս են այս թռչուններն ալ՝ իրենց ուղղութիւնը շրջելով յամրաքայլ դէպ 'ի կարկանդակն ուղղեցան սպիտակ կենդանիներու վայելուչ բարեպաշտական վեհափառութեամբ :

— կարապները կը հասկնան նշանները , ըսաւ քաղաքացորը , ուրախանալով իր հանճարամտութեան վրայ*:

* Կարապին ֆրանսերէնը սինը (cygne) և նշանին ֆրանսերէնն ալ սինը (signe) է : Քաղաքացորին ահա այս երկու հոմանուն բառերը յարմար առիթ մը դարձածնէն է վ. Հիւկոյին ակնարկած հանճարամտութիւնը : Ծ. Թ.

Նոյն պահուն քաղաքին հեռաւոր աղմուկը յանկարծ եւս աւելի մեծցաւ : Այս անգամ աղետալի էր այն : Կան այնպիսի հովային շունչեր որք ուրիշ շունչերէ աւելի որոշ կերպով կը խօսին : Նոյն միջոցին փչող հովը թմբուկներու ձայները , ժխորները , զօրաց խուռմբերու հրազինուց արձակումներ և վտանգի զանգակին ու թնդանօթին աղետալի պատասխանները բերաւ որոշապէս : Ճիշդ մի և նոյն րոպէին սև ամպ մը դալով յանկարծ արևը վարագուրեց :

Կարապները դեռ հասած չէին կարկանդակին :

— Տունը դառնանք , Թիւիլըրիի վրայ կը յարձակին , ըսաւ հայրը :

Նորէն բռնեց աղուն ձեռքը : Ցետոյ շարայարեց·

— Թիւիլըրիի պալատը Լիւքսանպուրգէն այնքան հեռի է որքան է թագաւորութիւնն ատենակալութենէ : Հրացաններու դնոտակները պիտի տեղան :

Եւ ամպին նայելով ,

— Եւ դուք անձրևն իսկ տեղայ· երկինքն ալ կը խառնուի գործին· Պաւարդնեան գերդաստանին կրասեր ճիւղը պատսպարուած է : Ըսա տուն դառնանք :

— Կուզէի տեսնել թէ կարապներն ինչպէս պիտի ուտեն կարկանդակը , ըսաւ աղան :

Հայրը պատասխանեց·

— Անխոհեմութիւն մ'է ատի :

Եւ առաւ տարաւ պզտի քաղաքաւորը :

Պզտիկը՝ յաւելով կարապներուն նկատմամբ՝ դլուխը դէպ աւազանը դարձուց մինչև ծառերու անկիւն մ'ուր ալ աւազանը կը դադրէր տեսնուելէ :

Բայց կարապներուն հետ մի և նոյն ժամանակ նաև երկու թափառական աղէները մօտեցած էին կարկանդակին որ Ջուրին վրայ կը ծփար : Փոքրագոյնը կարկանդակին կը նայէր , մեծն ալ քաղաքաւորին երեսը կը դիտէր :

Հայրն ու աղան մտան ծառերու այն լափիւրինթոսը որ Մա-

ամ փողոցին կողմի թաւնձրախիտ ծառերուն մեծ սանդուղը կը տանի :

Երբ աներևոյթ եղան , աղէներուն մեծը շուտ մը փորի վրայ երկնցաւ աւազանին բոլորշի եղերին վրայ , զոր ձախ ձեռքովը բռնելով Ջուրին վրայ ծռուեցաւ՝ դրեթէ խնալու պատրաստ , և աջ ձեռքովը դէպ 'ի կարկանդակը երկնցուց իր նուրբ գաւազանը : Կարապները՝ թշնամին տեսնելով՝ աճապարեցին , և աճապարելով՝ Ջուրը իրենց լանջերովը յուզեցին յօդուտ պզտիկ որսորդին· Հեռւաբար համակիդրոնական թոյլ ալիներ կազմուեցան , որոնց մին կարկանդակը դէպ 'ի պատանին մղեց , և որովհետև կարապները կը մօտէին , գաւազանը կարկանդակին դպաւ : Պատանին ուժով մը զարնելով իրեն մօտեցուց բլիթը , վախցուց կարապները , բռնեց բլիթը և ոտքի վրայ ելաւ : Թրջուած էր բլիթը , բայց երկուքն ալ անօթի և ծարաւի էին : Մեծն երկու մասի բաժնեց կարկանդակը , մին մեծ և միւսը պզտիկ· Ինքն առաւ պզտի մասը , և մեծը իր պզտիկ եղբօրը տալով ըսաւ·

— Նեղս նեղէ ալ :

ԳԼՈՒԽ ԺԵ·

ՄԵԹԱՆ ՀՂՕՐ ՄԸ ԻՐ ՈՐԴԻՈՑՆ ՄԵՒՆԵԼՈՒՆ ԿՍՊՉԱՆՔ

ՄԱՐԻՈՒՍ պատանէչէն դուրս ցատկած էր , եռևէն ալ Գօմպըֆէր , բայց շատ ուշ : Կավրօշ մեռած էր : Գօմպըֆէր փամփուշտները բերաւ , Մարիուս ալ պատանին :

Ափսոս , կըսէր մտապէս : Ինչ որ Հայրին իր Հայրին համար ըրած էր , նոյնը կընէր ինքն ալ տղուն· միայն թէ Թենարտիէ կենդանի բերած էր Հայրը , իսկ ինք մեռած կը բերէր զաւակը :

Երբ Մարիուս՝ պատանին թևերուն վրայ առնելով՝ պատնէշը մտաւ , իր երեսն ալ պատանիին պէս արիւնաթաթաւ էր·

Իրօք երբ Մարիուս ծռուած էր կավրօշը վերցնելու հա-

մար , դնտակ մը դպած էր իր գանկին· Մարիուս նշմարած չէր վիրաւորուիլը :

Գուրֆէյրագ վկնոցը հանելով Մարիուսին ձակատը կապեց:

Կավրօշն ալ Մապէօֆի սեղանին վրայ դրուեցաւ , և սև շալը երիւքին վրայ տարածեցին : Ծերին ալ , պատանիին ալ բաւեց շալը :

Գօմպըֆէր՝ բերած կողովին փամիուշտները ապատամբներուն բաշխեց :

Իւրաքանչիւր ոք տանուհինդ արձակումի փամփուշտ ունենայաւ :

Ժան Վալժան միշտ իր քարին վրայ նստած կը կենար անշարժ : Երբ Գօմպըֆէր անոր ալ տալ ուզեց տասնուհինգ փամփուշտ , Ժան Վալժան մերժողական նշան մ՚ընել ուզեց:

— Հազուադիւտ արտակերպ մարդ մ՚է աս , ըսաւ կամաց մը Գօմպըֆէր Անժօլրային : Պատնէշին մէջ չկուենալուն ինչպէս կը գտնէ :

— Բայց և այնպէս կը պաշտպանէ պատնէշը , պատասխանեց Անժօլրա :

— Գիւցազնութիւնն ալ իրեն յատուկ տարօրինակ մարդեր ունի , կրկնեց Գօմպըֆէր :

Եւ Գուրֆէյրագ լսած ըլլալով այս խօսակցութիւնը , ըսաւ·

— Ուրիշ տեսակ Մապէօֆ մ՚ալ ան է :

Բան մը կայ զոր պէտք է նշանակել . պատնէշին վրայ արձակուած թնդանօթին հուրը հալիւ հալ կը խառվէր անոր ներսը : Որոնք որ երբէք անցած չեն այս տեսակ պատերազմներու յորձանքէն , բնաւ չեն կրնար երևակայել այն վայրկենական տարօրինակ հանդարտութիւնները որք կը խառնուին այս բուռն շարժումներուն հետ : Ապատամբք կերթան ու կուգան , կը խօսակցին , կատակներ կընեն , կը դեգերին մտահոգութեամբ : Մէկը կը ձանչնանք որ կուռուղի մը բերնէն սա խօսքը լսած է ՀԻՂԴ այն միջոցին ուր ռումբի բեկորները կը տեղային : Մեղէ հարթ հոս կոռնէլը ամոթքներուս յարմար չէ ըսել նախաճաշէ՛ ս՚ընել է : Կը կրկնենք թէ Ծը Լա Շանվըրի փողոցին պատնէշին ներսը շատ հանդարտ կերևար : Կուիւին ամէն յանկարծական փոփոխութիւնները և կերպարանները ալ վերջացեր էին կամ պիտի վերջանային : Պատնէշին դիրքը տագնապալի ըլլալէ դադրելով վտանգաւոր եղած էր , և հաւանական է թէ վտանգաւոր ըլլալէ դադրելով յուսահատական պիտի ըլլար : Քանի որ վիճակը սխրապէս կը սևնար , դիւցազնական նշոյլն ևս քան զևս կը շառաղունէր պատնէշը : Անժօլրա ծանրութեամբ կը նայէր պատնէշին՝ իր մերկ ուրը Ներիսօթաս սխուր ոգիին նուիրող երիտասարդ սպարդիացիի մը դիրքովը :

Գօմպըֆէր՝ փորին վրայ զինջակ մ՚առած՝ կը դարմանէր վիրաւորները· Պօսիւէ և Ֆէօյէի փամփուշտ կը շինէին այն վառօդամանով զոր Կամրօշ մուած տասնապետին վրայէն առեր էր· իսկ Պօսիւէ կրսէր Ֆէօյէին· — Պահ ս՚Լա , և ահա ճամբայ պիտի ելլենք ոտքիդ մալըթակ ս՚երթալու համար :

Գուրֆէյրագ քանի մը սալաքարերու վրայ զոր իրեն յատկացուցած էր Անժօլրային քով , ամբողջ զինարան մը կը պատրաստէր և կը կարգադրէր , այսինքն իր սքաւոր գաւազանը , հրացանը , երկուատրճանակները , և ուրիշ կարճ հրացանակ մը՝ պզտի Ցիւնքէրք մը կարպի դնող անտիական օրիորդի մը խնամքով : Ժան Վալժան՝ անմուունչ՝ իր դիմացի կողմին պատը կը նայէր : Քանաւր մ՚առաստանով դլխուն վրայ կը տեղաւորէր Հիւշլու խաթունին յարգեայ ըսյնեղը դլխարկը , ըսելով· Ոչպէս չի պրնը ֆլօրֆա չըպրնէ : Լա Գուհուրա տ՚էքսի երիտասարդները զուարթօրէն նշանաբաններ կըսէին իրարու , իբր թէ ուզէին փութալ վերջին անգամ մ՚ալ ռամկական լեզուով խօսելու : Ժօլի իր լեզուն կը գնէր Հիւշլու խաթունին հայելիին մէջ զոր վար առած էր կախուած տեղէն : Քանի մ՚ապատամբ զզրոյի մը մէջէն քանի մը գրեթէ մկլտած հայի կեղևներ դուած ըլլալով անյագաբար կուտէին : Մարիուս տաղնապի մէջ էր մտածելով ինչ ոք պիտի լսէր իր հայրէն :

ՓԱՌՔ ՃԸ·

ՈՐՍ ԿԸԼԼԱՑ ԱՆԴԼԸ

ՊԱՏՆԷՇՆԵՐՈՒ յատուկ հոգեբանական իրողութեան մը վրայ դարձեալ կուզենք խօսիլ: Այս փողոցային զարմանալի պատերազմը նկարագրող իրերուն և ոչ մին պէտք չէ որ մոռցուի:

Ի՞նչ կուզէ թող ըլլայ այն տարօրինակ ներքին հանդարտութիւնն որու նկատմամբ խօսեցանք քիչ մ՚առաջ, պատնէշը դարձեալ ցնորական տեսիլ մ՚է իր մէջը պտտուղ անձերուն համար:

Ընտանի կռիւին մէջ Ցովհաննու Ցայտնութեան յատուկ խորհուրդներ կան· անձանօթին ամէն մտահղացումներն այս վայրենական փայլատակումներուն հետ կը խառնուին· յեղաշրջումները սպրիգս են, և ով որ պատնէշի մը մէջ կռուած է, երազ մը տեսած ըլլալ կը կարծէ:

Մարիուսի վրայօք արդէն նշանակեցինք ինչ որ մարդս կզայ այս տեղերը, և հետևանքը պիտի տեսնենք ետքը· կեանքէն աւելի, նաև նուազ բան մ՚է այն: Ով որ պատնէշէ մ՚ելած է, ալ չդիտեր թէ ինչ տեսած է հոն: Սոսկալի ընթացք մ՚ունեցած էր, բայց հիմա մոռցած է իր այն ընթացքը: Շրջապատուած էր պատերազմող դաղափարներէ որք մարդկային դէմք ունէին· դլուխն ապազային լոյսովն ողղուած էր: Պառկած դիակներ և կանդուն ուրուականներ կային: Ծամերն ակատին և կարծես թէ յաւիտենական ժամեր էին: Մահուան մէջ ապրած էր այն ապստամբքը: Սաուերներ անցեր էին քովէն· ինչ էին այս սաուերները: Ձեռքեր դիտած էր որոնց վրայ արիւն կար· զարհուրելի ազմուկ մը, նաև սոսկալի լռութիւն մը տեսած էր· բայց բերաններ կային որք կը գոչէին· և ուրիշ բայց բերաններ ալ կային որք կը լռէին· մուխին մէջ, թերևս խաւարին

մէջն էր այն պատերազմողը: Անծանօթ անդունդներու աղետալի քրտինքը շօշափել կարծած էր· ըղանդներուն մէջ կարմիր բան մը նայած էր, բայց ասոնց և ոչ մին կը յիշէ ալ:

Դառնանք Ցը Լա Շանվըրըի փողոցը:

Երկու հրազինային արձակումի միջոցին յանկարծ հեռաւոր ձայն մը լսեցին որ զարնող ժամացոյցի մը ձայնն էր:

— Կէսօր է, ըսաւ Գօմպըֆէր:

Դեռ ժամը տասներկու զարկած չէր երբ Անժօլրաս բոլոր կռիւին ոտքի վրայ եղնելով պատնէշին վերէն որոտալի աղմուկով մը գոչեց·

— Քար կրեցէք տունին վերի դասիկոնը, պատուհանին և երդերուն եղերը ամրացուցէք անոնցմով· մարդերուն կէսը հրացաններուն առնու, կէսն ալ քարերը կրէ: Վայրկեան մը անգամ չկորուսանք:

Ջրհանակիր խրամահատներու խումբ մը՝ կայծին յուսա՝ փողոցին ծայրը սկսած էր երևալ պատերազմի կարգաւ:

Անշուշտ զօրախումբի գլուխն էր այն· և ինչ խումբի: Հարկաւ յարձակումի խումբին: Վասն զի պատնէշը քանդելու պաշտօն ունեցող խրամահատները պատնէշէն վեր ելնելու պաշտօն ունեցող զօրքերուն առջևէն երթալու պարտաւոր են միշտ:

Անտարակոյս կը մտեր այն վայրկեանը զոր Պ· Ցը Գլէրմօն Թօնէր 1822ին քու փը ֆօլիէ* կանուանէր:

Անժօլրային հրամանը նաւերուն և պատնէշներուն յատուկ անսխալ ակռապարումով մը կատարուեցաւ· նաւերն և պատնէշները պատերազմի երկու տեղեր են ուսիկ փախչելն անհնարին է: Դեռ վայրկեան մ՚անցած չէր և ահա առաջին դասիկոնը և վերնայարկը կրուեցաւ Անժօլրայի հրամանատնէն քովի դիզուած սալաքարերուն երկու երրորդը, և՝ երկրորդ վայրկեան մը չանցած՝ այս սալաքարերը

* Ցօհէ Կօն քու փը ֆօլիէ Ֆրանսերէնի մէջ կը նշանակէ· նոր ընտ մը ընել քարէ մը յարուցք պոնելու համար: Ծ· Թ·

վարպետութեամբ վրայ վրայի գրուելով առաջին դատիկոնի պատուհանին և վերնայարկերուն պատուհաններուն մինչև կէս բարձրութիւնը քաշուած պատերը կը կազմէին : Փէօյեի որ այս պատերը շինողներուն գլխաւորն էր , անոնց վրայ զգուշութեամբ անջրպետներ ձգած էր որոնցմէ կրնային անցնիլ հրայանի փողերը : Թնդանօթին արձակած ռումբի բեկորները պատրաստ ըլլալով պատուհաններն ալ դիւրութեամբ կրցան ընդունիլ այս ամրութիւնը : Երկու թնդանօթները հիմա պտտնիլ կարձակէին պատնէշի կեդրոնին վրայ՝ հոն ծակ մը բանալու և՝ եթէ կարելի էր՝ յարձակողներուն համար ճամբայ մը բանալու համար :

Ցերեկուան պաշտպանութեան սահմանուած սալաքարերն երբ տեղաւորեցան , Անժօլրա առաջին դատիկոնը բերել տուաւ այն շիշերը զոր Մագէօֆի սեղանին տակ դնել տուած էր :

— Ո՞վ պիտի խմէ այս գինիները , հարցուց անոր Պօսիւէ :

— Անոնք , պատասխանեց Անժօլրա :

Ցերեկ վարի պատուհանը գոցեցին ամրապէս և պատրաստ բունեցին այն երկաթէ պահանգները որք դիշերը կապելային դուռն ամրապահելու կը ծառայէին :

Անթերի էր բերդը : Ասոր պատուարն էր պատնէշը և աշտարակն էր կապելան :

Մնացած սալաքարերով ալ պատնէշին նեղանցքը գոցեցին :

Պատնէշ մը պաշտպանողներն իրենց պաշարքը խնայելու միշտ ստիպուած են , և պաշարողները գիտնալով անոնց այս հարկադրական խնայողութիւնը տեսակ մը զրդռիչ անդորձութեամբ կը կարգաւորեն իրենց կարգադրութիւնները , ժամանակէն առաջ հուրին կենթարկին աւելի առերեսութեամբ քանթէ իրապէս , և առանց անհանգստութիւններ կրելու : Ցարձակումի պատրաստութիւնները միշտ կանոնաւոր յամրութեամբ մը կըլլան , ուսկէ եռք շանթը կարձակուի :

Անժօլրա այս յամրութեան շնորհիւ կրցաւ ամէն բան դադրեցնել և կատարեալ զօրձել : Կզդար թէ քանի որ այս պիսի մարդեր պիտի մնային , անոնց մահը պէտք էր հրաշակերտ մ'ըլլալ :

Անժօլրա ըսաւ Մարիուսին :

— Մենք պատնէշին երկու պարագլուխներն ենք : Հիմա վերջին հրամանները պիտի տամ ներսը : Դուն դուրսը կեցիր և դիտէ :

Մարիուս պատնէշին կատարն ելաւ և հոն կեցաւ դիտելու համար :

Անժօլրա բևեռել տուաւ խոհանոցին դուռը որ՝ ինչպէս կը յիշէ ընթերցողը՝ վիրաւորներուն հիւանդանոցն էր :

— Պէտք չէ որ վիրաւորները նորէն վէրք ընդունին մեզի հետ , ըսաւ :

Ստորին սրահին մէջ իր վերջին հրահանգները տուաւ կարճ այլ ամենահանդարտ ձայնով մը· Փէօյեի մսիկ կընէր և կը պատասխանէր յանուն ամենքուն·

— Առաջին դատիկոնը կապիններդ պատրաստ բունեցէք սանդուղը կտրելու համար : Հո՞ս են կապինները :

— Այո՛ :

— Ո՞րքան են :

— Երկու կապին և մէկ տապար :

— Լա՛ւ : Քսանուվեց պատերազմող ենք կանդուն : Քանի՞ հրացան կայ :

— Երսունը չորս :

— Ութն աւելի : Այդ ութն ալ լեցուցէք և պատրաստ ունեցէք ձեռքի տակ : Թուրերը և տարձանակները մէջքերնիդ : Քսան մարդ պատնէշը : Վեցն ալ վերնայարկի երդերուն և առաջին դատիկոնի պատուհանին եռևր դարանը մնանեն՝ յարձակողներուն վրայ սալաքարերու ծակերէն հրայան արձակելու համար : Աշխատողներուն և ոչ մին անօգուտ չմնայ հոս : Երբ պիտի զարնէ յարձակումին թմբուկը , և հիմա ուր որ է կը զարնէ , վարի քսանները թող պատնէշը վազեն շուտ մը : Առաջին հասնողներն ամենէն աղէկ պիտի տեղաւորին :

Անժօլրա այս պատրաստութիւնները տեսնելէն ետք դէպ՝ի Ծավէը դառնալով ըսաւ.

— Մոռցած չեմ քեզի։

Եւ սեղանին վրայ ատրճանակ մը դնելով, շարայարեց.

— Ով որ ամենէն ետք պիտի ելնէ այս սրահէն, թող ջախջախէ այս լրտեսին գլուխը։

— Հմ՛, հարցուց ձայն մը։

— Ոչ, այս դիակը մերիններուն հետ չխառնենք։ Պզտիկ պատնէշէն կարելի է Մօնտէթուր դիւիզը ցատկել։ Ձորս ոտք է միայն պզտի պատնէշին բարձրութիւնը։ Լրտեսը լաւ կաշկանդուած է։ Թող Մօնտէթուր դուիզը տարուի և հոն ջախջախուի։

Նոյն միջոցին Անժօլրայէն աւելի անտարբեր մարդ մը կար հոն, այսինքն Ծավէը։

Ծան Վալժան երեսն ելաւ նոյն պահուն։

Ապստամբներուն խումբին հետ խառնուած էր։ Ելաւ խումբէն և ըսաւ Անժօլրային.

— Դո՞ւք էք հրամանակալը։

— Այ՛ ։

— Պահ մ՛առաջ հնորհակալ եղաք իմէ։

— Ցանուն հանրապետութեան։ Պատնէշն երկու ազատիչ ունի. Մարիուս Բօնմէրսի և դուք։

— Կը կարծէք թէ վարձատրութեան մ՛արժանի ըլլամ։

— Անշուշտ։

— Ուրեմն վարձատրութիւն մը կուզեմ։

— Ի՞նչ է ուզածդ։

— Կուզեմ ես անձամբ ջախջախել այդ մարդուն գլուխը։

Ծավէը վեր բռաւ գլուխը, տեսաւ Ծան Վալժանը, և անշմարելի շարժուամբ մ՛ունենալէն ետք ըսաւ.

— Իրաւունք ունի։

Իսկ Անժօլրա սկսելով լեցուներ իր պարապիճան՝ չորս կողմը նայեցաւ անդամ մը։

— Հակառակող չկայ։

Եւ դէպ՝ի Ծան Վալժան դառնալով,

— Ձեզի ըլլայ լրտեսը, ըսաւ։

Իրօք Ծան Վալժան պրաւեց Ծավէրը՝ սեղանին Ծայրին վրայ նստեցուց։ Առաւ սեղանին վրայ դրուած ատրճանակը, և պզտի ձայն մ՛ելնելով իմաց տուաւ Ծավէրին թէ Ծան Վալժան ատրճանակին շունը քաշեց կրակ՝ տալու համար։

Գրեթէ միևնոյն պահուն փողարի մը հնչեցնելը լսուեցաւ։

— Պատրաստ եղիք, գոչեց Մարիուս պատնէշին վերէն։

Ծավէրը սկսաւ խնդալ այն անձայն խնդումով որ իրեն յատուկ էր, և ապստամբներուն նայելով ականայեռ՝ ըսաւ ապտոնոյ.

— Դուք ալ դրեթէ իմի՜ պէս քաջողջ չէք։

— Ամենքն ալ դո՛ւրս, գոչեց Անժօլրա։

Ապստամբներուն ամենքն ալ շփոթալի արագութեամբ մը վազեցին, և երբ դուրս կելնէին, իրենց կռնակէն, — թող ներուի մեզ այս ըսուածը, — Ծավէրին սա խօսքը ընդունեցան։

— Հիմա պիտի տեսնենք։

ԳԼՈՒԽ ՃԶ։

ԾԱՆ ՎԱԼԺԱՆ ՎՐԻԺԸ ԿԸ ԼՈՒԾԻ

Երբ Ծան Վալժան միևնոյն ատեն Ծավէրին հետ, քանկիկ չուանը որով կապանաւորին մէջքը կաշկանդուած էր և որու հանդոյցը սեղանին տակն էր։ Ապա նշան բրաւ Ծավէրին որ ելնէ։ Ծավէրը հնազանդեցաւ այն անտանելի ժպիտով ուր կամիտութեան շղթայակապ իշխանութեան դերիշխանութիւնը։

Ծան Վալժան Ծավէրի կուրծքին վրայ կապուած չուանը բռնեց բռնակիր անասունի մը լանջափոկը (bricole) բռնելու պէս, և զան եռանկիւն քաշելով դուրս ելաւ յամրաքայլ,

վասն զի Ծավէը՝ ոտները կապուած ըլլալուն չէր կրնար մեծ քայլեր առնուլ։

Ծան Վալժան ձեռքը բռնած էր ատրճանակը։

Այսպէս անցան պատնէշին ներքին տրապիզէն։

Ասլատամբները մօտալուտ յարձակումին զբաղած ըլլալով բոլորովին, ետևնին չէին դառնար։

Մարիուս միայն՝ պատնէշին ձախակողմեան ծայրը քսվելով կեցած ըլլալով՝ տեսաւ Ծան Վալժանին և Ծավէրին անցնիլը։ Մահապարտին և դահիճին այս խումբը լուսաւորեցաւ այն դերեզմանական նշոյլով զոր ունէր իր հոգիին մէջ։

Ծան Վալժան փոքր ինչ դժուարութեամբ այլ առանց և ոչ իսկ վայրկեան մը ձդելու Ծավէրը՝ Մօնտէթուր գիհին պզտի պատնէշին վրայէն անցուց զան։

Երբ անցան այս փոքր պատնէշին վրայէն, առանձին եղան փողոցին մէջ։ Ոչ ոք կը տեսնէր զանոնք։ Տուներուն անկիւնը ապստամբներէն կը պահէր Ծան Վալժանը և Ծավէրը։ Պատնէշէն առնուած դիակները քանի մը քայլ անդին սոսկալի դէզ մը կը կազմէին։

Դիակներու դէզին մէջ կապարագոյն դէմք մը, քակուած մազեր, ծակ ձեռք մը և կիսամերկ կնիկի մը կիսամերկ կուրծք մը կը տեսնուէր։ Էպօնինն էր ան։

Ծավէր ղլուխը դարձունելով նայեցաւ այս կնային դիակը, և անթերի հանդարտութեամբ ու կէս ձայնով մ'ըսաւ։

— կարծեմ թէ կը ճանչնամ այս աղջիկը։

Ապա դէպ 'ի Ծան Վալժան դարձաւ։

Ծան Վալժան թևին տակն առաւ ատրճանակը և ուղղակի Ծավէրին նայեցաւ այնպիսի նայուածքով մ'որ խօսքի պէտք չունէր ըսելու համար։— Ե՛ս եմ, Ծավէր։

Ծավէր պատասխանեց։

— Ա՛ռ վրէժդ։

Ծան Վալժան դրպանէն դանակ մը հանեց և բացաւ։

— Դանակի, դոչեց Ծավէր։ Իրաւունք ունիս։ Ահա աւելի յարմար դէնք մ'է քեզի համար։

Ծան Վալժան Ծավէրին վզին կապը կտրեց, ապա ձեռնեռուն չուաններըը և ոտներուն չուանը կտրեց, և կայնելով, ըսաւ։

— Ազատ էք։

Ծավէր շուտով զարմացող մարդ մը չէր։ Սակայն որքան ալ տեր ըլլար ինքն իրեն, չկրցաւ աղաթիլ ներքին ցնցումմը։ Բերանաբաց և անշարժ մնաց։

Ծան Վալժան շարայարեց։

— Ձեմ կարծեր թէ պիտի երևնեմ ասկէ։ Սակայն եթէ բաղդն ուղէ որ երևնեմ, Օմ–Արմէ փողոցը, թիւ 7 տունը կը բնակիմ Ֆօշլեվան անունով։

Ծավէր վագրի մը պէս ունքը պռստելով բերնին մէկ խորշը բացաւ կէս մը, և մրմնաց կամաց մը։

— Զգուշացիր։

— Գացէք, ըսաւ Ծան Վալժան։

Ծավէր կրկնեց։

— Օմ–Արմէ փողոցը, Ֆօշլեվան ըսիր, այնպէս չէ՞։

— Թիւ 7։

— Թիւ 7, կրկնեց Ծավէր կէս ձայնով։

Կոճկեց թիկնոցը, երկու ուսերուն մէջ տեղը վնասուածքի մը պէս ձկտեց, կէս շրջան մ'ըրաւ, թևերը կուրծքին վրայ առաւ՝ մէկ ձեռքովը կզակը բռնելով և սկսաւ քայլել դէպ 'ի Հալ ուղղելով։ Ծան Վալժան ետևէն կը նայէր։ Ծավէր քանի մը քայլ առնելէն ետք ետևը դարձաւ և գոչեց Ծան Վալժանին։

— Ձանձրութիւն կուտաք ինձ։ Աւելի աղէկ է որ մեռցունէք զիս։

Ծավէր ինքն ալ չէր նշմարեր թէ ալ չէր դուդեր Ծան Վալժանը։

— Գացէք, ըսաւ Ծան Վալժան։

Ծավէր յամրաքայլ հեռացաւ։ Վայրկեան մ'ետք Տէ Բրէշէօր փողոցին անկիւնէն դառնալով անհետացաւ եղաւ։

Երբ ծավէրը դադրեցաւ տեսնուելէ, ծան Վալժան դէպ օդը պարպեց ատրճանակը։

Ապա պատնէշը վերագառնալով, ըսաւ.

— Լմնցաւ։

Ահա ըսենք թէ ինչ կանցնէր։

Մարիուս աւելի դուրսին քանթէ ներսին զբաղելով մինչեւ անատեն ուշադրութեամբ նայած չէր վարի սրահը մթին խորշը կաշկանդուած լռտեսը։

Երբ մտնելու համար ցորեկը պատնէշէն ծավէրին անցնելը եւ երթալը տեսաւ, ճանչցաւ զան։ Ցանկարծ բան մը ինկաւ միտքը։ Բօնթուազ փողոցին ոստիկանութեան տեսուչը, նաեւ անորմէ ընդունած երկու ատրճանակները յիշեց, ատրճանակներ, զոր ինք՝ Մարիուս՝ դործածեր էր ձիշդ այս պատնէշին մէջ. եւ ոչ միայն անոր կերպարանը, այլ նաեւ անունը յիշեց։

Սակայն այս յիշատակն անոր ամէն դաղափարներուն պէս միդապատ եւ շփոթ էր։ Ինքն իրեն չէ թէ հաստատեց այլ հարցուց.— Միթէ ասի չէ այն ոստիկանութեան տեսուչն որ ըսաւ ինձ թէ ծավէրը է իր անունը։

Թերեւս տակաւին ժամանակ կար միջամտելու այս մարդուն համար։ Բայց նախ պէտք էր դիտնալ թէ արդեօք իրօք ծան վէրն էր ան։

Մարիուս հասկնալու համար Անժօլրայի հարցափորձ ըրաւ որ պատնէշին միւս ծայրը կը տեղաւորուէր նոյն միջոցին։

— Անժօլրա։

— Ինչ է։

— Ինչ է սա մարդին անունը։

— Որո՞ւ։

— Ոստիկանութեան դործակալին։ Գիտես անունը։

— Անշուշտ։ Ըսաւ մեզ իր անունը։

— Ինչ է անունը։

— Ծավէր։

Մարիուս կայնեցաւ։

Նոյն պահուն հրացանակին արձակուիլը լսուեցաւ։

Ծան Վալժան երևնալով գոչեց. Լմնցաւ։

Մարիուսի սիրտը ախուր սրսփուք մը զգաց։

ԳԼՈՒԽ Ե.

ՄԹՈՒԵԼՆԵՐՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԻՆ, ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ՑԱՆՑԱՆՔ ՉՈՒՆԻՆ

ՊԱՏՆԷՇԻՆ հոդեվարութիւնը պիտի սկսէր։

Այս յետին վայրկեանին եղերերգային վսեմութեան կը նպատէր ամէն բան, այսինքն օդին մէջ հազարումէկ խորհրդաւոր շառաչիւնները, գինաւոր բազմութիւններու շունչն որք աներեւոյթ փողոցներու մէջ կը յուզուէին, ձիաւոր զօրաց ընդհատական արշաւը, քայլող մարտիկներու ծանր դղրդումը, Բարիզի բաւիղին մէջ զօրախմբիկներու հրացանները եւ թնդանօթներու համայնական արձակումները, պատերազմին մուխերը որք տանիքներու վերեւը կը վերանային բոլորովին ոսկեփայլ, չգիտեմ ինչպիսի հեռաւոր եւ անորոշ շապէս սոսկալի աղաղակներ, ամենուրեք սպառնական փայլակներ, Սէն-Մէրիի վտանգի զանգակն որ հիմա հեծկլտալու պէս կը հնչէր, եղանակին քաղցրութիւնը, արեւափայլ եւ ամպախառն երկնից շքեղութիւնը, օրուան գեղեցկութիւնը եւ տուներուն ահարկու լռութիւնը։

Վասն զի առջի օրէն 'ի վեր Տը Լա Շանվըրըի փողոցին երկու կողմի տուները պատ դարձեր էին. անագործն պատեր։ Դուռերը գոց, պատուհանները գոց, փեղկերն ալ գոց էին։

Այն ժամանակներն որք արդի ժամանակներէն շատ տարբեր էին, երբ եկած կըլլար այն ժամն ուր ժողովուրդը կուզէր վերջ տալ արդէն շատ աւելոր կացութեան մը, շնորհուած սահմանադրութեան մը կամ օրինաւոր երկրի մը, երբ հանրական բարկութիւնը մթնոլորտին մէջ կը սփռուէր,

երբ քաղաքը կը զինչանէր իր քաղաքատակներուն ապստամբութեանը, երբ ապստամբութիւնը քաղաքավարութիւնը կը ժպտեցնէր իր նշանախօսն անոր ականջին փսփսալով, այն առեն մնաքնակ մարդը կրնայ ըսուիլ թէ ապստամբութեամբ համակուելով պատերազմողին օգնականն էր, և տունը կը բարեկամաձար յանկարծաշէն ամրոցին հետ որ իր վրայ կը կրնէր: Եթէ հասուն չըլլար իրերու կացութիւնը, եթէ ապստամբութիւնը ձշմարիտ ընդունուած չըլլար, եթէ ժողովուրդը չհաւանէր ապստամբական շարժումին, պատերազմողներն անօգնական մնալով կը կորսուէին, քաղաքն անպատի կը փոխուէր ապստամբութեան բոլորտիքը, հոդիները կը սառէին, պատսպարանները կը դոցուէին, և փողոցը կիրճ կըլլար, թողլով որ բանակն անցնի և պատնէշն առնու:

Ցամրաբար քայլող ժողովուրդ մը յանկարծ աւելի շուտ քայլեցնելն անկարելի է: Վայ անոր որ կուզէ բռնութեամբ քայլեցնել զան: Ծողովուրդ մ'ուրիշին սախսումովը չըներ ինչ որ չուզեր ընել ինք: Անատեն մինակ կը թողու ապստամբութիւնը: Ապստամրները ժանտախտահար կը դառնան: Ցուն մը զոհվեր մ'է, դուռ մը մերժում մ'է, տունի ձայական մը պատ մ'է: Այս պատը կը տեսնէ, կը լսէ և չուզեր: Եթէ ուզէ, կրնայ կիսովին բացուիլ և ազատել քեզի: Բայց ոչ: Այն պատը դառաւոր մ'է: Կը նայի քեզ և կը պատապարտէ: Ի՛նչ սխուր բան է այս զոյ տուները: Մեռած կերևան, բայց կենդանի են: Անոնց մէջ կեանքը կարծես ընդհատուած է, այլ հաստատուն կը կենայ: Քանի ոք չորս ժամէ՝ի վեր ոչ ոք դուրս ելած է, այլ ոչ ոք կը պակսի հոն: Այս ժայռին ներսը մարդիկ կերթևեկեն, կը պատկին, կենդանեն, ընտանեբար կապրին· կուտեն, կը խմեն, նաև կը վախնան· սոսկալի բան: Վախը կը ներէ այս ահարկու անհիւրասիրութիւնը: Վախն այս անհիւրասիրութեան հետ խրոչում կը խառնէ, որ մեղմարար (attenuant) պարա՛ ՝ մ'է: Երբեմն ալ, և տեսնուած բան է մը այս ըսելը՝

դայ

քը, վախը կիրք մը կըլլայ· երկիւղը կրնայ մոլեդնութեան փոխուիլ խոհեմութեան պէս որ կատղութեան կը փոխուի· ասկէ յառաջ եկած է սա ամենանուրբ խօսքը· Ձոխաբանքեան կոտորածները: Ցետին սարսափի փայլատակումներ կան ուսկէ իրը աղետալի մութ մը՝ բարկութիւնը կարտադրի: — Ի՞նչ կուզեն այս մարդերը: Ամենէն դոհ չեն ըլլար, խաղաղասէր մարդերը վտանգի կենթարկեն իրը թէ բաւական եղած չըլլան մինչև հիմա պատահած այսպիսի յեղափոխութիւններ: Ի՞նչ կար, ինչ ընելու եկան հոս: Թող ինչպէս որ բռնուեցան, անանկ ալ ազատին: Թող սովրին և մեյ մ'ալ չըննեն: Ցանցանքն իրենցն է: Իրենց արժանաւոր պատիժը կը կրեն: Մեզի վերաբերող բան մը չէ ատ: Ահա տեսէք ինչպէս մազի պէս դնատակներէն ձակձուեցաւ մեր խեղճ փողոցը: Խել մը սրիկաներ են անոնք: Մանաւանդ դուրը չբացանք: — Եւ դերեզմանի կերպարան մը կառնու տունը: Ապստամբը կը հոդեվարէ այս տունին առջև· կը տեսնէ ուսմբի բեկորներուն և մերկ սուրերուն դէպ իրեն գալը· եթէ դոչէ, պիտի թէ պիտի լսուի աղաղակը, այլ պիտի նաև թէ ոչ ոք պիտի հասնի· պատեր կան հոն որք կրնան պաշտպանել զինքը· նաև մարդեր որք կրնան փրկել· և այս պատերը մարմնեղէն ականջներ ունին, մարդերն ալ քարեղէն ազնք:

Ո՞վ պէտք է ամբաստանուիլ:

Ոչ ոք, և ամէն մարդ:

Անկատար ժամանակներն ուր կապրինք:

Լեթօփին միշտ վտանգները և տաղնապները վրան առնելով ապստամբութեան կերպարան կառնու, փիլիսոփայական քաղաք մ'ըլլալէ դադրելով զինաւոր բաղաք մը կըլլայ, և Աթենասն Արէսի կը փոխուի: Չհամբերող և ապստամբող լեթօփին պիտէ թէ ինչ է իր վերջը· գրեթէ միշտ շատ կանուխ կը հասնի այն: Անատեն կը համակերպի, և ստոյիցիզմն աղէտքը կընդունի յաղթանակին տեղ: Լեթօփին զինքն ուրացողներուն կը ծառայէ՝ առանց դանդատելու, նա մանա-

ջանդ առանց յանցաւոր սեպելու զանոնք, և իր վեհանձնութիւնն է հաւանիլ լքումին: Անզսպելի է խոչընդոտին առջև, և հեզաբարոյ՝ ապերախտութեան նկատմամբ:

Մանաւանդ միթէ ապերախտութիւն է այս:

Այո՛, եթէ մարդկային սեռի տեսութեամբը նկատուի:

Ոչ, եթէ անհատին տեսութեամբը նկատուի:

Յառաջդիմութիւնը մարդուս պայմանն է: Մարդկային սեռի հանրական կեանքը Յառաջդիմութիւն կանուանի. մարդկային սեռի հաւաքական քայլը Յառաջդիմութիւն կանուանի: Յառաջդիմութիւնը կը քայլէ. մարդկային և երկրային մեծ ճամբորդութիւնը կընէ դէպ երկնայինը և աստուածայինը դիմելով, ճամբան տեղ տեղ կը դադարի ուշացողները վերախմբելու (rallier) համար. կայարաններ ունի ուր կը խորհի յանկարծ իր հորիզոնը երևան հանող շքեղ փանտանի մ'առջև. իր պիշերներն ունի ուր կը քնանայ. և խորհողներուն կսկծալի անձկութիւններուն մին է մարդկային հոգին վրայ մթութիւնը տեսնել և նիրհող յառաջդիմութիւնը խաւարին մէջ շօշափել՝ առանց կարենալու արթնցնել զայն:

— Ասոնք գոյք դեռ ե՛ն, կըսէր օր մը Ժէբար Ցը ընդվզել այս տողերը գրողին, յառաջդիմութիւնը Աստուծոյ հետ շփոթելով, և կարծելով թէ շարժումին ընդհատումն Էակին մահն է:

Ով որ կը յուսահատի անիրաւ է: Յառաջդիմութիւնն անհրաժեշտապէս կարթնայ, և՝ մէկ խօսքով՝ կրնայ ըսուիլ նաև թէ քնացած միջոցին կը քայլէ, վասն զի քունին մէջ մեծցած է: Երբ կանգուն կը տեսնուի, աւելի բարձրահաս կերևայ այն: Միշտ խաղաղ ըլլալն ինչպէս գետէն նոյնպէս ալ յառաջդիմութենէ կախում չունի. այդ գետին առջև մի կանգներ թումբ, այդ գետին մէջ մի նետեր ժայռ. խոչընդոտը կը փրփրեցնէ ջուրը և կեռացնէ մարդկութիւնը: Ասկէ կը հետևին պղտորութիւններ. բայց այս պղտորութիւններէ ետք կը հասկցուի թէ ճամբայ առնուած է: Մինչև բարեկարգու-

թեան հաստատուիլն որ ոչ այլ ինչ է բայց եթէ տիեզերական խաղաղութիւնը, մինչև ներդաշնակութեան և միութեան իշխելը յեղափոխութիւնները պիտի ըլլան չուղղ յառաջդիմութեան օթևանները:

Ի՞նչ է ուրեմն յառաջդիմութիւնը: Արդէն ըսինք. ժողովուրդներուն մշտակայ կեանքը:

Արդ երբեմն կը պատահի որ անհատներուն վայրկենական կեանքը կը դիմադրէ մարդկային սեռին յաւերժական կենաց:

Խոստովանինք առանց դառնութեան թէ անհատն իր մասնաւոր շահն ունի, և կրնայ առանց ոճիրի գաշնադրել այս շահուն համար և պաշտպանել զայն: Ներկայն ալ իր երեւութիւնն ունի որ ներելի է. վայրկենական կեանքն իր իրաւունքն ունի, և պարտաւոր չէ անընդհատ զոհուելու ապագային համար: Այն սերունդն որու կարգն եկած է հիմակ անցնիլ երկրիս վրայէն, ստիպուած չէ իր անցը համառօտելու այն սերունդներու համար որք վերջալոյս իր հաւատարներն են և որոնց կարգն ալ պիտի գայ անցնելու այս աշխարհէս:

— Կատրիմ, կը մրմրայ այն անյորդն որ կանուանի Ամեն Մարդ: Երիտասարդ եմ և սիրահար, ծեր եմ և կուզեմ հանդչիլ, ընտանիքի տէր եմ, կաշխատիմ, յառաջ կերթամ, աղէկ առուտուրներ կընեմ, վարձու առուներ ունիմ, պետութեան վրայ ստակ ունիմ, երջանիկ եմ, կին ունիմ, զաւակներ ունիմ, սիրելի են ինձ այս ամեն բաները, կը փափաքիմ ապրիլ, հանդիստ թողէք զիս —:

Ահա այս պատճառաւ կան ժամեր ուր ոտտիկ ցուրտ մը կը ծաւալի մարդկային սեռի վրայ յառաջապահներուն վրայ:

Հաւանինք սակայն թէ իւթօփին երբ կը պատերազմի, իր փողփողուն շրջանէն կելնէ: Իւթօփին որ վազուան ճշմարտութիւնն է, երեկուան տառութենէ փոխ կառնու իր գործողութիւնը որ է պատերազմը: Ապագան է այն, բայց իբր անցեալ կը շարժի: Անարատ դաղափարն է այն, և քանա-

գործութիւն (voie de fait) մը կըլլայ: Իր դիւցազնութիւնը կը խառնէ բռնաբարութեան մը հետ որու պատասխանատու պէտք է որ ինքն ըլլայ: Առիթի և միջոցի բռնաբարութիւն որ ներհակ է սկզբունքներու և որու պատիժը կը կրէ ազէատապէս: Ապստամբութեան փախուղ իթօփին ռազմական հին օրինագիրն 'ի ձեռին կը կռուի· լրտեսները հրացանի կը քունէ, մատնիչները կը մեղադրէ, կենդանի էակներ ջնջելով անծանօթ խաւարին անդունդը կը նետէ: Կը գործածէ մահը, ծանր բան: Կարծես թէ իթօփին ալ չհաւատար ճառագայթումին որ իր անդիմադրելի և անապականելի ոյժն է: Թուրով կը զարնէ այն: Արդ չկայ թուր մ'որ միասայր ըլլայ: Ամէն թուր երկու սայր ունի· ով որ կը վերաւորէ մեկուվը, կը վիրաւորի միւսովը:

Այս զղուշաղնական դիտողութիւնն ընելէն, և ամենայն ազնաւութեամբ ընելէն ետք, կըսենք թէ ապագային փառաւոր մարթիները, իթօփիին հաւատացեալները յաջողին կամ չյաջողին, անկարելի է մեզ չսքանչանալ անոնց վրայ: Մեծարելի են անոնք եթէ նաև չյաջողին, և թերևս աւելի վեհութիւն ունին երբ չեն յաջողիր: Ցաղթութիւնն երբ յառաջդիմութեան համեմատ է՝ ժողովուրդներու ծափահարութեան արժանի է, բայց դիւցազնական պարտութիւն մ'անոնց արգահատութեան արժանի է: Մին չքեղ է, միւսը վսեմ: Մենք մարթիրոսը յաջողութենէ նախապատիւ սեպող մ'ըլլալով, մեզի համար Ճօն Պրաուն աւելի մեծ է քանթէ Ուօշինկթըն և Բիզագան աւելի մեծ է քանթէ Կարխպալտի:

Պէտք է անշուշտ որ յաղթահարները կողմնակից մ'ունենան: Մարդս անիրաւութիւն կընէ ապագան փորձող այս մեծ մարդերուն համար երբ չեն յաջողիր:

Ցեղափոխականները կամբաստանուին, վասն զի երկիւղ կը տարածեն: Ամէն պատնէշ ոճրագործութիւն մը կը կարծուի: Անոնց տեսակներն կը մեղադրուին, նպատակը կասկածելի, թագուն խորհուրդն ահարկու կերևայ, և խիղճը կամբաստանուի: Մարդս կամբաստանէ զանոնք ըսելով թէ իշխող ընկերային իրողութեան դէմ թշնաութեան, վիշտերու, անօրէնութիւններու, պանդատներու, յուսահատութիւններու շղթ մը կը կազմեն և կը գիլեն, և թէ տառապարիկեր խաւարային կոյտեր կը հանեն անոնց եաևը ամրափակուելու և կռուելու համար: Դժոխքին քարայատակները կը քակէք, կը դուէ անոնց: — Ահա տառ համար է որ լաւ դիտաւորութիւններով շինուած է մեր պատնէշը, պատասխանեն թերևս յեղափոխականները:

Անշուշտ լաւագոյնը խազաղական լուծումն է: Վերջապէս կը հաւանինք թէ մարդս երբ քարայատակը կը տեսնէ, արթը կը բերէ միտքը, և քարայատակն այնպիսի եռանդ մ'է որմէ ընկերութիւնը կը վախնայ: Բայց ինքնին փրկութիւն ընկերութեան ձեռքն է· մենք իր յատուկ եռանդին կը դիմենք: Որ և է բռնի գործման հարկ չկայ: Պէտք է բարեհամաբար զընել ատոր, հասկնալ, և ապա բուժել: Ահա մենք այս գործողութեան կը հրաւիրենք մարդկային ընկերութիւնը:

Ինչ և իցէ, նաև ընկած, նա մանաւանդ ընկած՝ վեհ են այն մարդերն որք տիեզերքիս ամէն կողմէն Փրանսայի հայելով ակնարկեն՝ մեծ գործին համար կը կրուին տեսլականին անողոքելի արամաբանութեամբը· իրենց կեանքն անշահախնդրութեամբ կը պարգևեն յառաջդիմութեան համար· նահանջութեան կամքը կը կատարեն· կրօնական գործ մը կընեն: Երբ որոշեալ ժամը կը հասնի, պատասխանը տալու համար տեսարանն եկող դերասանի մը չափ անշահախնդրութեամբ դերեզմանը կը մտնեն երկնային տեսարանին հնազանդելով: Եւ կընդունին այս անոյշ կուբը, կընդունին ատոյիկեան անհատումը՝ հրապարակելու համար այն տիեզերական չքեղ և յետին հետևութիւնները զոր կը պարունակէ 1789 յուլիսի 14ին անդիմադրապէս սկսող մարդկային փառաւոր շարժումը· այս գիտուրները քահանայ են: Գաղղիական յեղափոխութիւնն Աստուծոյ մէկ շարժումն է:

Բայց արդէն ուրիշ դլուխի մը մէջ նշանակուած զանազանութիւններուն վրայ կը վայելէ աւելցունել նաև սա զանազանութիւնը· կան ընդունուած ապստամբութիւններ որք կանուանին յեղափոխութիւն· կան մերժուած ապստամբութիւններ որք կանուանին խռովութիւն: Երբեմն եղծող ապստամբութիւն մը գաղափար մ'է որ իր քննութիւնը կուտայ ժողովուրդին առջև: Եթէ ժողովուրդին ձգած քուէին պոյնը ան է, գաղափարը չոր պատուղ է· ապստամբութիւնն անհիմն մրիւ մ'է:

Ժողովուրդները սովորութիւն չունին ամէն անգամ իրենց ուղղուած հրաւէրին և իւթօփիին փափաքին համեմատ պատերազմին ասպարէզը նետուելու: Ազգերը դիւցազներու և մարտիրոսներու բնաւորութիւնը չեն ունենար միշտ և ամեն ժամանակ:

Ազգերը դրական են: Ապստամբութիւնն 'ի յառաջադունէ առելի է անոնց· նախ՝ վասն զի շատ անգամ իր հետևութիւնն է մեծ աղէտք մը· երկրորդ՝ վասն զի միշտ իր սկզբնական վերացականութիւն մը:

Ըստ որում որոնք որ կը զոհուին, միշտ տեսլականին և մի միայն տեսլականին համար կը զոհուին· ինչ վսեմ զոհողութիւն: Ապստամբութիւն մ'եռանդ մ'է: Եռանդը կրնայ բարկանալ· այս բարկութենէ կը հետևին գինական կռիւները: Բայց այն ամեն ապստամբութիւններն որք կատարութիւն մը կամ վարչութիւն մը տապալել կուզեն, նպատակ ունին աւելի մեծ բան մը տապալելու: Այսպէս ալ օրինակի համար և յատկապէս կրսենք թէ 1832ի ապստամբութեան պարագլուխները, և մանաւորապէս Տը Լա Շանվըրըի փողոցին երիտասարդ եռանդոտները ձշդապէս Լուի-Փիլիբին դէմ չէին կռուեր: Անոնց մեծագոյն մասը՝ մոերմապէս խօսակցելով կը գովէին միապետութեան ու միանդամայն յեղափոխութեան կից այս թագաւորին յատկութիւնները· ոչ աք կատէր զան: Բայց Լուի-Փիլիբին դէմ յարձակելով երկնային իրաւունքի կրտսեր ճիւղին դէմ կը յարձակէին, ինչպէս անդրանիկ ճիւղին դէմ յարձակեր էին Շարլը Ժ·ի դէմ յարձակելով· և՝ ինչպէս բայսարեցինք արդէն՝ անոնք Ֆրանսայի մէջ թագաւորութիւնը տապալելով կուզէին բոլոր տիեզերքի մէջ տապալել մարդերու վրայ իշխող մարդերու տիրապետութիւնը և իրաւունքին վրայ իշխող առանձնաշնորհութեան տիրապետութիւնը: Երբ Բարիզ առանց թագաւորի կը մնայ, իր հետևութիւնն է աշխարհիս բռնամոլներուն բարձումը: Այն ապստամբներուն նպատակն անշուշտ հեռաւոր, թերևս անորոշ և չանազդութեան առջև ընկրկող, բայց վսեմ նպատակ մ'էր:

Այս է ահա ճշմարտութիւնը: Եւ մարդիկ կը զոհուին յանուն այս տեսիլներու որք՝ զոհողներու համար՝ գրեթէ միշտ պատրանք են, բայց այնպիսի պատրանք որու հետ վերջապէս խառնուած է մարդկային ամեն ստուգութիւնը: Ապըստամբները բանաստեղծական և ոսկեփայլ հանդամանք մը կուտան ապստամբութեան: Կը նետուին այս եղերերգային իրերու մէջ՝ զգլխելով իրենց ընելու գործովը: Ո՞վ գիտէ· թերևս պիտի յաջողին: Սակաւաթիւ են, ամբողջ բանակ մը ունին իրենց դէմ, բայց իրենց պաշտպանածն է իրաւունքը, բնական օրէնքը, իւրաքանչիւր անհատին բացարձակ ինքնիշխանութիւնը որմէ անհնարին է հրաժարիլ, արդարութիւնը, ճշմարտութիւնը, և՝ ի պահանջել հարկին կը մեռնին երեք հարիւր սպարտիացիներուն պէս: Կը յիշեն չէ թէ Տօն Գիշոթը այլ Լէօնիտասը: Առջևէն կերթան, և անգամ մը յառաջանալեն ետք ալ չեն նահանջեր, և դլխիվայր կը գահավիժին՝ յուսալով անլուր յաղթութիւն մը, կատարեալ յեղափոխութիւնը, յառաջդիմութեան ազատումը, մարդկային սեւի ճաշումը, տիեզերական փրկութիւնը· իսկ եթէ 'ի դերև ելնէ այս յոյսը, ըլլայ ըլլայ Թերմօփիլի կիրճն է իրենց վերջը:

Յառաջդիմութեան համար այսպէս գինուող և կռուողները

շատ անդամ չեն յաջողիր, և արդէն ըսենք թէ ինչու։ Բազմութիւնն ասպետներուն մղումին խեռութեամբ չհնազանդիր։ Ծանր մարմինները, բազմութիւնները՝ որք նոյն իսկ իրենց ծանրութեան պատճառաւ դիւրաբեկ են՝ կը վախնան արկածներէն։ Եւ իրօք տեսլականին մէջ արկած կայ։

Մանաւանդ պէտք չէ մոռնալ շահերու էութիւնը որք ոչ այնքան կը սիրեն ինչ որ տեսլական և զգացական (sentimental) է։ Երբեմն ստամոքսը կը հաշտէ սիրտը։

Ֆրանսայի մեծութիւնը և չքեղութիւնն է միւս ժողովուրդներէ նուազ մեծցունել փորը։ ան աւելի դիւրութեամբ կը կապէ օտարին մէջքը։ Ամենէն առաջ կարծենայ, ամենէն եաք կը քնանայ։ Յառաջ կերթայ։ Փնտռող է այն։

Վատն ալ ճարտարապետ է։

Տեսլականն ոչ այլ ինչ է բայց եթէ տրամաբանութեան ամենաբարձր զազաթը, ինչպէս գեղեցիկն ալ ոչ այլ ինչ է բայց եթէ ճշմարտին կատարը։

Ճարտարապետ ժողովուրդները, նաև սկզբունքի համեմատ գործող ժողովուրդները են։ Գեղեցկութիւնը սիրելը լոյսը տեսնել է։ Ահա այս պատճառաւ Եւրոպային այսինքն քաղաքակրթութեան ջահը նախ Յունաստանի մէջ վառեցաւ, անկէ Իտալիա անցաւ, Իտալիայէն ալ Ֆրանսա։ Լուսաւորող երկնային ժողովուրդներ։

Ի՛նչ սքանչելի բան, ժողովուրդի մը բանաստեղծութիւնն իր յառաջդիմութեան տարրն է։ Քաղաքակրթութեան քանակութիւնն երևակայութեան քանակութեամբը կը չափուի։ Միայն թէ քաղաքակրթիչ ժողովուրդ մը կը պարտաւորի առնական ժողովուրդ մը մնալ։ Կորնթոս, այո՛· Սիպարիս, ոչ։ Ով որ կը կնատի (s'efféminer), կը վատթարանայ։ Վէպք չէ ոչ սիրող, ոչ ալ քաջասիրտ ըլլալ, այլ ճարտարապետ։ Քաղաքակրթութեան մասին պէտք չէ բարակնալ այլ վսեմ։ Ան թէութեամբ տեսլականին կաղապարը կը տրուի մարդկային սեռի։

Մեր օրերու տեսլականին տիպարը ճարտարութեան և մեքենայութեան մէջն է։ Գիտութեամբ միայն պիտի իրագործուի բանահիւսներուն սա վեհ տեսիլն որ է ընկերային դեղեցիկը։ Եդեմը Ա–Բ ով պիտի վերաշինի։ Քաղաքակրթութեան արդի վիճակին մէջ Հիւգը չքեղչի հարկաւոր տարր մ'է, և գիտական գործիքն ոչ միայն կը ծառայէ ճարտարապետական զգացումին, այլ նաև կամրողջէ զայն· երազը կը պարտաւորի հաշուել։ Ճարտարութիւնը՝ որ աշխարհականն է՝ կը պարտաւորի իրեն յենարան ընտրել դիտութիւնը որ քայլողն է։ Անդրովարին հաստատութիւնը կարևոր է։ Արդի ժամանակիս ոգին Յունաստանի հանճարին է՝ միջնորդ ուղեղով իրեն։ Ինտիայի հանճարը· Աղէքսանդր փղին վրայ։

Վարդապետութեան մէջ քարացած և շահու համար անբարոյականութեամբ շաղուած ցեղերն անյարմար են քաղաքակրթութիւնն առաջնորդելու։ Թէ կուռքին և թէ թալեռին առջև ծնրադրութիւնը կը մաշէ ջիլը՝ որ կը քայլէ և կամքը՝ որ կերթայ։ Քրմական կամ վաճառականական ղեկավարութեան մէջ թալուիլը ժողովուրդի մը ճառագայթումը կը նուազէ, կը յածցնէ անոր հորիզոնը՝ հարթութիւնը յածցնելով, կը զրկէ զան տիեզերական նպատակի ըմբռնող այն մարգկային ու միանդամայն աստուածային իմայականութենէ որու շնորհիւ միայն քարոզիչ կըլլան ազգերը։ Բաբելոն տեսլական չունի· Կարթագինէ տեսլական չունի։ Աթէնք և Հռոմ՝ նաև դարերու խաւարամած թանձրութեան մէջ քաղաքակրթութեան փառապսակներ ունին և կը պահեն։

Ֆրանսայի ժողովուրդն ալ Յունաստանի և Իտալիայի ժողովուրդներուն մի և նոյն յատկութիւնն ունի։ Գեղեցկութեամբ աթենական և մեծութեամբ հռոմէական է Ֆրանսա։ Նաև բարի է։ Միւս ժողովուրդներէն աւելի ստեպ յօժարութիւն կունենայ անձնուիրութիւն և զոհողութիւն ընելու։ Միայն թէ այս յօժարութիւնը երբեմն կունենայ, երբեմն չունենար։ Եւ ահա այս է մեծ վտանգն այն մարդե-

բու համար որք կը վազեն երբ անի չուզեր քայլել, և կը քայլեն երբ անի կուզէ կանգ առնուլ: Ֆրանսան ալ երբեմնակի նիւթամոլութեան պիրկը կ'ունայ, և կան վայրկեաններ ուր այս վսեմ ուղեղը խափանող դաղափարներն ալ չուներ քան մ'որ յիշեցնէ դաղղիական մեծութիւնը, և Միսուրիի կամ Հարաւային Գարօլինի տարածութիւնն ունին: Ի՞նչ ընելու է ասոր: Տիտանուհին թղուկի ձևեր կընէ: Անբաւ Ֆրանսա երբեմն փոքր ըլլալու քմահաճութիւններ ունի: Այս է ահա բոլորը:

Ասոր ըսելիք չունինք: Ժողովուրդները՝ աստղերուն պէս՝ խաւարումի իրաւունքն ունին: Եւ ամեն ինչ բարի է, բաւական է որ լոյսը վերադառնայ և խաւարումը դիշերի չփոխուի: Արշալոյս և յարութիւն հոմանիշ են: Լոյսին վերերևումը (réapparition) նոյնութիւն ունի եսին յարատև դոյութեան հետ:

Հանդարտութեամբ հաստատենք այս իրողութիւնները: Պատնէշին վրայ մեռնելը կամ աքսորի մէջ գերեզման մըտնելն անձնուէրներու համար ընդունելի հաւանականութիւն մ'է: Անձնուիրութեան ճշմարիտ անունն է անշահախնդրութիւն: Թող լբեալները համակերպին լքումին, թող տարագիրները համակերպին աքսորին, և բաւական սեպենք աղերսել մեծ ժողովուրդները որ շատ հեռի չնահանջեն երբ կը նահանջեն: Ուշաբերելու պատրուակաւ պէտք չէ շատ յառաջ երթալ իջումին մէջ:

Նիւթը, ներկայ վայրկեանը, շահերը, որովայնն իրենց էութիւնն ունին· բայց պէտք չէ որ որովայնն ըլլայ միակ իմաստութիւնը: Կը հաւանինք թէ վայրկենական կեանքն իր իրաւունքն ունի, բայց մշտատև կեանքն ալ իրն ունի: Բարեբախտաբար, երկուքն իրարու արդելք չեն: Պատմութեան մէջ կարծուածէն աւելի կը տեսնուի սա իրողութիւնը· Ազգ մը մեծանայն է· տեսլականին ճաշակը կառնու· ապա տիղմը կը խածնէ և կը սիրէ, և եթէ հարցուի իրեն թէ ինչու կը

թողու Սոկրատը Փալեթափի համար, կը պատասխանէ՝ — Վասն զի պետական մարդերը կը սիրեմ:

Խօսք մ'ևս կուիւին առասպարեզը վերադառնալէ առաջ:

Հիմա մեր պատմած պատերազմին նման պատերազմ մ'ոչ այլ ինչ է բայց եթէ ջղաձգային շարժում մը դէպ 'ի տեսլականը: Թատերգուած յառաջդիմութիւնը հիւանդային է, և կունենայ այսպիսի եղերերգային յանկարծական թալկացումներ: Յառաջդիմութեան այս հիւանդութեան, այսինքն ընտանի պատերազմին պարտաւորեցանք հանդիպիլ մեր ճամբուն վրայ: Սոյն ընտանի պատերազմը՝ իբր արարք ու միանդամայն միջնարարք՝ այս թատերգութեան աղետալի կերպարանները միայն է, թատերգութիւն որու առանցքն ընկերային դեհենապարտ մ'է և որու բուն վերնադիրն է Ցառաջդիմութիւնը:

Ցառաջդիմութիւն:

Մեր բոլոր նպատակն այս աղաղակն է զոր ստէպ կը հանենք, և՝ թատերգութեանս արդի կէտն անոր պարունակած դաղափարը պարտաւոր ըլլալով տակաւին շատ մը փորձեր կրելու, թերևս ներելի է մեզ սոյն թատերգութեան՝ եթէ ոչ վարագոյրը վերցունել՝ դէթ թողուլ որ յայտնապէս ընդհնշմարուի անոր նշոյլը:

Այս դիրքն որ ընթերցողին առջևն է հիմա, սկիզբէն մինչև վերջը, իր ամբողջութեանը և մանրամասն պարագաներուն մէջ, իր ընդհատումներովը, բացատրութիւններովը կամ տակրութիւններովը հանդերձ ընթացք մ'է որով կը քայլէ չարը դէպ 'ի բարին, անիրաւը դէպ արդարը, սուտը դէպ 'ի ճշմարիտը, խաւարը դէպ 'ի լոյս, ախորժակը դէպ 'ի խիղճ, փտութիւնը դէպ 'ի կենդանութիւն, անառնութիւնը դէպ 'ի պարտաւորութիւն, դժոխքը դէպ երկինք, և ոչնչութիւնը դէպ Աստուած: Սկզբնակէտն է նիւթը, վերջակէտն է հոգին: Սկիզբը՝ հիդրա, վերջը՝ հրեշտակ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՓԻՒՑԱՁՆԵՐԸ

ՅԱՆԿԱՐԾ թմբուկը զարնելով յարձակումի նշանը տուաւ։

Ուրական (ouragan) մ՚եղաւ յարձակումը։ Առջի օր յարձակողները պօղի մը պէս ընելեայն մօտեցեր էին պատնէշին։ Հիմա՝ յորեկով՝ այս լայն փողոցին մէջ սառուի անհնարին եր յանկարծապէս պատնէշին տիրելը։ Մանաւանդ բուռն ղօրութիւնը երևան ելած, թնդանօթը մռնչել սկսած եր։ բանակը խուժեց պատնէշին վրայ։ Հիմա մոլեգնութիւնն էր սատանութիւնը։ Հետևակ զօրքերու հզօր սիւն մը, զոր հաւասար անջրպետներով կը բաժնէին ազգային պահակներն և քաղաքապետական պահակները, և որ առանց տեսնուելու լսուող սաստիկ բաղմութիւններու վրայ կը կրթնէր, փողոցը մտաւ արշաւաքայլ, թմբուկ զարնելով, փողեր հնչեցնելով, սուլիններով, խրամատներէ առաջնորդուելով, և ամբոխին բեկորներու տարափին ներքև առանց խուովելու ուղղակի պատնէշը հասաւ պատի մը վրայ ծանրացող արոյրէ գերանի մը ծանրութեամբը։

Պատն աղէկ դիմացաւ։

Ապստամբները կրակ տուին հրացաններուն սաստկապէս։ Պատնէշը՝ որու վրայ ելեր էին յարձակողները՝ փայլակնային բարշ մ՚ուներ։ Ցարձակողներն այնքան մոլեգնաբար յարձակեցան որ իրենց ներկայութեամբը պահ մ՚ողողեցին պատնէշը, որ շուներն իր վրայէն ցնծող առիւծի մը պէս գինուորները ցնցեց, և աներևոյթ եղաւ յարձակողներուն ներքև, սակայն փրփուրներու ներքև աներևոյթ մնացող ժայռի մը պէս պահ մ՚ետք գարձեալ սեպաձև, սևաթոյր և ահարկու երևալու համար ծածկուած եր։

Ջօրասիւնը նահանջելու բունադատուելով փողոցը մնաց ՚ի բայ և գումարուած· բայց սոսկալի եր այն, և հրազինուց աշխարհու արձակուածներով պատասխանեց ամբոխին։ Ով որ հրաձգութիւն մը տեսած է, կը յիշէ շանթերու խաչաձև հատումով մը կազմուող հրալի փամփուշտներու այն խումբը որ կանուանի փունջ։ Թող երևակայէ ընթերցողը թէ այս փունջը հօրիզոնական է և ոչ թէ ուղղաձիգ· թէ իր մէն մի հրացինն արձակուածներուն ծայրը դնտակ մը, դնտիկ մը կամ պիտի պայեան դունդ մը կը կրէ և թէ իր որոտալի ոդիպղներէն մահ կը թափթփէ։ Ահա պատնէշն այս մահացիր ոդիպղներուն տակն էր։

Երկու կողմէն ալ հաւասար քաջութիւն։ Այս մարտիներուն արիութիւնը գրեթէ բարբարոսական էր և կը խառնուէր տեսակ մը դիւցազնական անզգութեամբ որով ամեն մէկը նախ ինդնքը կը զոհէր։ Ասի այն ժամանակն էր ուր ազգային պահակ մը զուարճի մը պէս կը կռուէր։ Զօրքը կուզէր ապստամբութիւնն անմիջապէս ջնջել· ապստամբութիւնը կուզէր կռուիլ։ Կատարեալ երիտասարդութիւնը և քաջողջութիւնն երբ կընդունի հոգեվարութիւնը, իր քաջութիւնը մոլեգնութեան կը փոխուի։ Այս կռիւին մէջ իւրաքանչիւր ոք մեծ եր մահահրաւէր բոպէին պէս։ Փողոցը դիակներով ծածկուեցաւ։

Պատնէշին մէկ ծայրն Անժօլրա, միւս ծայրն ալ Մարիուս կը կենար։ Անժօլրա՝ որ ամբողջ պատնէշն իր գլուխին մէջ կը կրէր՝ կզգուշանար և կը պատսպարուէր· երեք գինուոր հետզհետէ դնդամահ լինկան իր կեցած ժայռին տակ՝ և ոչ իսկ նշմարելով զան։ Մարիուս յայտնապէս պատերազմելով թշնամիին կրակին նշանակէտ (point de mire) կըլլար։ Ամբոխին կատարին վերևը կերևար կես մէջքէն աւելի բարձրանալով։ Ոչ ոք կրնայ այնքան սաստիկ գեղն ըլլալ որքան է անզուսպ ձիու մը պէս կատղած և սանձը չզգացող ագահ մը· կռիւին մէջ ոչ ոք այնքան ահարկու կըլլայ որքան է երազող մը։ Մարիուս ահարկու եր և խոհուն։ Պատերազմին մէջն եր

երազի մը մէջ ըլլալու պէս : Կարծես հրացանաձիգ ուրուական մ'էր ան :

Պաշարեալներուն փամփուշտները կսպառէին , բայց ոչ իրենց հեղնութիւնները : Կը խնդային անոնք այս գերեզմանին մրրիկին մէջ :

Գուրֆէյրաղին ղլուխը քայ էր :

— Ի՞նչ ըրիր դլխարկդ , հարցուց Պօսիւէ :

Գուրֆէյրաղ պատասխանեց·

— Անոնք վերջապէս թնդանօթի արձակուածներով առին դլխարկս :

Կամ թէ արհամարհական բաներ կըսէին·

— Ի՞նչ կըսես սա մարդերուն , կը գոչէր գառնապէս Գէօյեի — (և անուններ , ծանօթ , նաև երևելի անուններ կուտար , որոնցմէ ոմանք հին բանակէն էին) — որք խոստացեր էին միանալ մեզի հետ , երդում ըրած էին օգնել· որք իրենց պատիւին վրայ խօսք տուած էին միանալու և օգնելու մեզի , որք մեր զօրապետներն են և որք միևնակ կը թողուն մեզի :

Եւ Գօմպըֆէր ծանր ժպիտով մը յետապայ պատասխանը կուտար միայն·

— Կան մարդիկ որ պատիւի կանոնները աստղերը դիտելու պէս կը դիտեն , այսինքն խիստ հեռուէն :

Պատնէշին ներսն այնքան պատուած փամփուշտներ ցանուեր էին որ կարծես թէ ձիւն եկեր էր :

Յարձակողներուն թիւը շատ , ապստամբներուն ալ դիրքը լաւ էր : Ասոնք պատի մը դադաթն էին և հրացաններն 'ի մօտուստ ուղղակի արձակելով կը շանթահարէին մեռելներուն և վիրաւորներուն մէջ գայթող և զառիվերին վրայ կարծես ոտնակապերով կապուած գինուորները : Այս պատնէշն իր շինուելեան ձևովն և նեցուկներովն որոնց վրայ սքանչելի կերպով մը կը յենուր՝ ստուգիւ այնպիսի դիրք մ'էր ուր ապի մը մարդիկ կրնային դէմ դնել դունդի մը : Սակայն անողոքպէս կը մօտեր յարձակող զօրասիւնն որ դնտակներուն անձրևին

ներքև անընդհատ ձեռնտու ընդունած և բազմացած էր , և հիմա բանակը սակաւ առ սակաւ , քայլ առ քայլ բայց ըստուգութեամբ կը ձնշէր պատնէշը՝ հնձանը ձնշող պատուաստկին պէս :

Յարձակումներն իրարու յաջորդեցին : Սարսափը հետզհետէ մեծցաւ :

Անատեն այս սալաքարերու դէզին վրայ , այս Տը Լա Շանվըրըի փողոցին մէջ Տրովադայի պատի մ'արժանի կռիւ մը սկսաւ : Տիտաններու փոխուելան այս ժամուն , պատառագեստ , յոգնաբեկ մարդերն որք քսանուչորս ժամ 'ի վեր ոչ բան մը կերած , ոչ ալ քնացած էին· որք ալ քանի մը փամփուշտ ունէին միայն· որոնց գրեթէ ամենքն ալ վիրաւորուած էին· որոնց ամեն մէկը գլուխը կամ թևը ժանգահար և սևկեկ լաթով մը կապած էր· որոնց զգեստները ծակեր ունէին ասկէ արիւն կը հոսէր , և հազիւ հազ զինուած էին յոռի հրացաններով և սղոցասայր հին թուրերով , և որք այս կայսրեթեան մէջ իրենց դասարկ դրպանները կը խառնէին փամփուշտ դտնելու համար : Թշնամին տասն անդամ պատնէշին մօտեցաւ , յարձակեցաւ , վեր ելաւ , այլ երբեք չկրցաւ տիրել :

Այս կռիւին վրայ դաղափար մ'ունենալու համար պէտք է երևակայել սոսկալի քաջութիւններու դէզի մը կրակ տրուիլը և նայիլ հրդեհին : Պատերազմ մը չէր այն , այլ հնոցի մը ներսը , ուր բերանները բոցեր կը շնչէին և ուր դէմքերը տաքցրնակ էին : Մարդկային կերպարանն անհնարին էր անոր մէջ· պատերազմողները կը փայլատակէին , և զարհուրելի բան մ'էր այն կռիւին սալամանտրերուն այս կարմիր մուխին մէջ երթևեկելը : Զանոնք կրնանք նկարագրել այս ահեղաշուք (grandiose) սպանութեանցը յաջորդական և համայնական տեսարանները : Գիւցազներզութիւնը միայն իրաւունք ունի պատերազմով մը տասներկու հազար տաղաչափութիւն յօրինել :

կարծես թէ այս պատերազմին ասպարէզը պրահմանութեան այն դժոխքն էր որ տասնուեօթը վիհերուն ամենէն ահարկուն է և զոր Վէտան Սուրերուն Անտառը կանուանէ :

Քով քովի , ոտն առ ոտն հրացան արձակելով , թուր զարնելով , կռուի իջեցնելով , հեռուէն , մօտէն , վերէն , վարէն , ամէն կողմէ , տուներու տանիքներէն , կապելիոնին պատուհաններէն կը պատերազմէին , նաև մառաններու օդահաններէն , որոնց մէջ սպրդեր էին ոմանք : Ապստամբները վաթսունին դէմ մէկ էին : Կորնթոսի կիսովին քանդուած Ձակատը տակալը էր : Պատուհանը՝ ռումբի բեկորներէն զարնուած և ծակծկուած ըլլալով ապակիներն և շրջանակները կորսուած և ալ սալաքարերով խառն ՚ի խուռն խցուած մնէր ծակ մ՚էր : Պօսիւէ , Ֆէօյեի , Գուրֆէյրադ , Ժօլի հետ զհետէ մեռան· Թոմպըֆէը՝ կուրծքը երեք անգամ սուին մխուելէն ետք՝ երբ վիրաւոր գինուոր մը կը վերցուներ , միայն անդամ մ՚երկինք նայելու ժամանակ ունեցաւ , և անմիջապէս հոգին աւանդեց :

Մարիուս՝ անընդհատ պատերազմելով՝ այնքան շատ վէրք ընդունած էր , մանաւանդ դլուխն վրայ որ դէմքն աներեւոյթ կըլլար արիւնին տակ , և սեսնողը կը կարծէր թէ ան կարմիր թաշկինակով մը ծածկած է երեսը :

Միայն Անժօլրա վիրաւորուած չէր : Երբ ալ զէնք չունէր , աջ կամ ձախ կողմը կերկնցուներ թևը , և ապստամբ մ՚այս կամ այն զէնքն անոր ձեռքը կուտար : Անժօլրա ալ չորս սուրերու բեկոր մ՚ունէր· այսինքն Մարինեանի պատերազմին մէջ Ֆրանսուա Ա·ին ունեցածէն մէկ աւելի :

Հոմերոս կըսէ·

« Տիօմէտ կը մորթէ Թէօթրանիսի տղան Ագսիլը որ երանաւէտ Արիսպայի մէջ կը բնակէր· Մէսխսթէի տղան՝ Էօրիալ՝ կը ջարդէ Տրէզսը և Օֆէլթիոսը , Էղերը և այն Բէսազսը զոր Ապարպարէ հայեատան անտպատանէլին Պուդոլիոնէն յղացաւ : Իւլիս՝ Բիսիթէ Տը Բէրդօզը , Անթիլօք՝ Ասլէ-

րը , Թօլիբաէթ՝ Ասթիալը , Բօլիտամաս՝ Օթոս Տը Սիլլէնը , և Թէօսէր՝ Արիթաօնը կը տապալէն : Մէկանթիոս Էօրիբիլի նիզակներն ուսելով նետահար կը մեռնի : Ականթոն՝ արքային դիւցազանց՝ կը տապալէ Էլաթոսը որ ծնած էր այն զառիվեր քաղքին մէջ զոր կարկաչասահ Սաթնօիս գետը կը թրջէ » :

Մեր ծէսթի հին քերթուածներուն մէջ Էսբլանտիան՝ հրայիւ դործիքով մը կը յարձակի Հսկայ Սիւանթիլօր մարդիպլին վրայ որ ինքզինքը պաշտպանելու համար ասպետը կը քարկոծէ աշտարակներով զոր արմատաքի կը խլէ : Մեր որմային հին նկարներուն մէջ նկարուած Պրբթանեի և Պուրպօնի երկու դուքսերը զէնք , զինանշաններ և սաղաւարտ կը կրեն պատերազմի մէջ , ձիու վրայ հեծած են , սրասայր տապար ՚ի ձեռին , երկաթէ դիմակներ , երկաթէ կօշիկներ , երկաթէ թաթպանոններ հագած իրարու կը մօտին՝ մին սպիտակ աքսէ մորթով , միսն ալ կապոյտ վերարկուով ծածկուած· Պրբթանները իր թագին երկու եղջիւրներուն մէջ տեղն իր առիւծունի , Պուրպօն շուշանագրոշմի ձևով և պահպանակով ահագին սաղաւարտ մ՚ունի :

Բայց վսեմ ըլլալու համար հարկ չէ՝ Իվօնին պէս՝ գքսական սաղաւարտը , Էսբլանտիանին պէս՝ կենդանի բոյը կրել ձեռքը , կամ Բօլիտամասի հայր՝ Ֆիլէսին պէս՝ Էֆիբէն լաւ վահան մը բերած ըլլալ որ Էօֆէթներու թագաւորին ընծան էր· համազումի մը կամ հաւատարմութեան մը համար կեանքը զոհելը կը բաւէ : Ահա քեզի պզտիկ պարզամիտ գինուոր մ՚որ երեկ Պօսի կամ Լիմուզէնի մէջ գիւղացի մ՚էր և որ՝ կազմաբահաստը (coupe-choux) քովը կախած՝ Լիւքսանպուրի մէջ կը թափառի մանկանց սպասուհիներու բոլորտիքը· ահա քեզ նաև թափկադեմ նորատի ուսանող մ՚որ անգամազնութեան հասարի կամ դրքի մը վրայ ծռուած է , խարտեաշ պատանի մ՚որ մկրատով մօրուսը կածիլէ· ան ասոնց երկուքն ալ , պարտաւորութեան շունչ մը ներշնչէ անոնց , Պուշըրայի քա-

ուղղին բերանը կամ Բլանշ-Միպրէյի անել փողոցն իրարու դէմ հանէ զանոնք, և Թոզ մին իր դրօշին, միւսն ալ իր պարտաւորութեան համար կռուի, Թոզ երևակայեն երկուքն ալ թէ հայրենիքի համար կը պատերազմին. կուն ահագին սլիսի ըլլայ, և այն դիւցազներգային դաշտին մէջ ուր կը յուզուի մարդկութիւնը, կուի բռնուող այս միամիտ զինուորին (pioupiou) և բժշկական դպրոցի աշկերտին շուքը պիտի հաւասարի Վապրալի Լիսիայի Թագաւոր Մեկաբիոնին արձակած շուքին՝ երբ անի աստուածներու հաւասար անբաւ Աժազսը կը ձմլէ հետը մարմնովին փաթթուելով։

ԳԼՈՒԽ ԲԵ։

ՈՑՆ ԱՒ ՈՑՆ

Երբ պատնէշին երկու ծայրն Անժօլրասէն և Մարիուսէն 'ի զատ կենդանի պարագլուխ չմնաց, սկսաւ նահանջել ապստամբներուն կեդրոնը զոր այնքան ժամանակէ 'ի վեր պաշտպաններ էին Գուրֆեյրագ, Ծօլի, Պօսիւէ, Ֆէօյեի և Գոմպֆերը։

Թնդանօթը թէև պատնէշին վրայ չկրցած էր բանալ ծակ մ'ուսկէ կարելի ըլլար ներս մտնել, սակայն ամրոցին միջավայրը բաւական լայնութեամբ բացած էր աղեղնապէս. հոն՝ պատին կատարն անընդհատ գնդակոծուելով փլուած, և իր բեկորներն երբեմն ներս և երբեմն դուրս խնամով դիզուած և վերջապէս պատնէշին երկու կողմն երկու տեսակ զառ 'ի վայր կազմած էր, մին ներսը և միսը դուրսը։ Գուրսի զառիվայրը շեղաձև յատակ մը կընծայէր մտնեցող և վեր ելնողներուն։

Յարձակողները վերջին յարձակում մ'ալ ըրին և այս անգամ յաջողեցան։ Գունդը՝ սուիններով և մարմնավարժային քայլով նետուելով հասաւ անդիմադրաբար, և յարձակումի զօրասիւնին պատերազմի թանձր ձակատը պատնէշին վերևն

երևցաւ մուխին մէջ։ Այս անգամ ալ փրկութիւն չկար ապստամբներուն։ Ասոնց խումբն՝ որ կեդրոնը կը պաշտպաններ՝ ետ փախաւ խառնիխուռն։

Անատեն ամանց սրտին մէջ կեանքի տխուր սէրն արթնցաւ։ Ճատերն՝ այս հրացաններու անտառներուն իրենց վրայ ուղղուիլը տեսնելով՝ ալ չուզեցին մեռնիլ։ Այնպիսի բոպէ մ'է այս ուր կեանքի պահպանութեան բնազդումը սաստկապէս կռնչայ և ուր մարդուս անասնական կողմը կերևայ։

Ապստամբները խոյս տալով կռնակ տուեր էին ամրոցին ներսի կողմը կազմող վեցնայարկ և բարձր տունին։ Այս տունը կրնար փրկութիւն ըլլալ։ Այս տունն ամրափակուած և կարծես թէ վերէն վար առջևը պատ մը քաշած էր։ Հետևակներու խումբը դեռ ամրոցին ներսը մտած չէր, և ահա դուռ մը՝ փայլակի մը տեսութին բառող մանրերկրորդի մը մէջ ժամանակ ունեցած էր բացուելու և դոցուելու, և յանկարծապէս կէս մը բացուած և անմիջապէս վերստին դոցուած այս տունին դուռը կեանք էր ապստամբներուն համար։ Այս տունին ետևը փողոցներ կային, հնարին փախուստ կար, անջրպետ կար։ Ապստամբները սկսան իրենց հրացաններուն բռնուիլ և ոտներովը զարնել այս դուռին, կոչելով, գոչելով, աղերսելով, ձեռնամած պաղատելով։ Բայց ոչ ոք բացաւ դուռը։ Երրորդ գտիկոնին պատուհանէն մեռելին գլուխն անոնց կը նայէր։

Բայց Անժօլրա և Մարիուս և իրենց հետ միացող եօթ կամ ութ հոգի արագապէս հասեր էին և կը պաշտպանէին այն դուռը գարնող և ազատիլ ուզող ապստամբները։ Մի մոտիք, գոչած էր Անժօլրա զինուորներուն, և պաշտօնատար մը չհնազանդելուն համար Անժօլրա մեռցուցած էր զան։

Հիմակ Անժօլրա ամրոցին ներքին պզտի բակին մէջն էր՝ Գորնթեսի տունին տալով կռնակը, մէկ ձեռքովը սուր մը, միսովը դարապինան բռնած և բաց բռնելով կապելիոնին դուռը ուսկէ չէր թողուր որ մտնեն յարձակողները։ Միայն

դուռ մը բաց է, և այս է, դուշեց յուսաբեկներուն, զոր մարմինովը ծածկելով և մինակը դէմ դնելով վաշտի մը, հուսն անցուցել տուաւ զանոնք: Ամենքն ալ շտապաւ ներս մտան: Անժօլրա որ հիմա իբր դաւազան կը գործածէր իր դարապինան, անով գործադրելով այն շարժումը զոր բրա. մարտները (batoniste) ֆոյ ֆլորէ (rose-couverte) կանուանեն, իրաւունքն և բոլորտիքը հաւքուող սուիններէն զգուշացաւ անձնաս, և ամենէն եաք ինք մտաւ կապէլհոնը: Եղաւ սոս. կալի վայրկեան մ'ուր զինուորները կուզէին ներս մտնել, ա. պատամբներն ալ դուռը գոցել որպէս զի չմտնեն: Դուռն այնքան ուժգնակի գոցուեցաւ որ իր ջրջանակին մէջ զետեղ. ուելէն եաք ներսէն իր ծնօտին վրայ կտրուած և փակած տեսնուեցան զինուորի մը հինգ մատերն որ այն ծնօտը բըռ. նած էր:

Մարիուս դուրս ճեպած և արձակուող հրացանի մը դէն. տակն անոր անդակը խորտակած էր: Մարիուս զգաց թէ կը նուաղէր և կ'ինամ: Նոյն պահուն՝ մինչդեռ աչերը գոցած էր արդէն՝ զինքը բռնող հուժկու ձեռքէ մը սաստանեցաւ, և իր նուաղումին մէջ ուր կորոյս ինքզինքը՝ հազիւ հազ ժա. մանակ ունեցաւ Գօզէթին անդամ մ'ալ յիշելէն եաք, մտա. պէս ըսելու.— կ'ամնաւոր եմ: Հրացանի պիտի բռնուիմ:

Անժօլրա ևս մի և նոյն մտածումն ունեցաւ՝ չտեսնելով Մա. րիուսը կապէլհոնը ապաւինողներուն մէջ: Բայց Անժօլրա և միւսները հիմակ այն վայրկենին մէջն էին ուր իւրաքանչիւր ոք իր մահուան վրայ մտածելու ժամանակ կունենայ միայն: Անժօլրա դուռին երկաթը դրաւ եռանէն, պարզունակը մղեց, կղպակը և ազնը գոցեց բանալին երկու անդամ դարձունե. լով, մինչդեռ եռանէն զինուորները հրացանի բռնելով և խրա. մահասներն ալ կացինով դուռին կը զարնէին կատաղաբար: Յարձակողներն այս դուռին վրայ խմբուեր էին: Հիմակ ալ կապէլհոնին պաշարումը կսկսէր:

Փութանք ըսելու թէ զինուորները բարկութեամբ կրակ ու բոց կտրած էին:

Գնդաձիգներու տասնապետին մահը զայրացուցած էր զա. նոնք. աւելի աղետալի պարագայ մ'ալ կար սակայն որով ալ աւելի զայրացած էին. այսինքն յարձակումն քանի մը ժամ առաջ ըսուած էր անոնց մէջ թէ ապստամբները կը հաշմին կալանաւորները և թէ կապէլհոնին մէջ կլուխը կտրուած զինուորի մը դիակը կար: Այս տեսակ աղետալի տա. րաձայնութիւնները սովորաբար կըլլան ընտանի պատերազմ. ներու մէջ, և ահա այս տեսակ սուտ տարաձայնութիւն մ'էր այն որ եաքէն թրանսնօնէն փողոցին աղետալի դէպքին պատ. ճառ եղաւ:

Երբ ամրապէս գոցուեցաւ դուռը, Անժօլրա ըսաւ միւս. ներուն.

— Սուղ ծախուինք:

Ապա մօտեցաւ այն սեղանին որու վրան էին Մապէօֆ և Կավրօշ: Սև ծածկոյթին ներքև երկու ուղիղ և խիստ կեր. պարանք կը տեսնուէր, մին մեծ, միւսը պզտիկ, և երկուքին դէմքն անորոշապէս կը ծրագրուէր մահաշուք ծածկոյթին ցուրտ ծալերուն տակ: Պատանքին տակէն ձեռք մ'ելած և դէպ'ի դետինը կախուած էր: Ծերունիինն էր այս ձեռքը:

Անժօլրա ծուռեցաւ և համբուրեց այս մեծարելի ձեռքը ինչպէս որ նախորդ օրն ալ Ճակատը համբուրած էր:

Անժօլրա բոլոր կեանքին մէջ այս երկու համբոյրը տուած էր միայն:

Կարճ կապենք: Պատնէշը կռուած էր թէպէի դուռի մը պէս. կապէլհոնն ալ կռուեցաւ Սարախօսի տունի մը պէս: Այս տեսակ դիմադրութիւնները բարկալի են: Ոչ թշնա. թիւն, ոչ ալ պատգամաւորութիւն կարելի է: Ամէն մարդ կուզէ մեռնիլ բաւական է որ մեռցունէ: Երբ — Անձնատուր եղէք, կըսէ Սիւշէ, Բալաֆօքս կը պատասխանէ. «Թնդանօ. թով պատերազմելէն եաք դանակով պիտի պատերազմինք»: Հիւշլոս կապէլհոնին յարձակմամբ առուծին առթիւ ամէն մի. ջոց 'ի գործ դրուեցաւ. սալաքարերը պատուհանէն և տա.

Ֆիքէէն յարձակողներուն վրայ տեղացին և սոսկալի ջախջախումներով զինուորներու զայրոյթը գրգռեցին. մատաններէն և վերնայարկին երդերէն հրացաններ արձակուեցան. յարձակումը կատաղի յարձակում եղաւ, պաշտպանութիւնը նոյնպէս կատաղի պաշտպանութիւն մը դարձաւ, և՝ վերջապէս՝ երբ սահպուեցաւ բացուելու դուռը, մոլեղնական յիմարութեամբ մը սկսան ջարդուիլ փոխադարձապէս։ Պապելհոնին մէջ խուժեցին յարձակողներն որոնց ոսքը խորտակուած և գեհինը նետուած դուռին սահմանակներու մէջը մնացին և որք կապելհոնին մէջ ոչ զոք գտան պատերազմողներէն։ Կայծնով կարուած ոլորաձև սանդուղը վարի սրահին մէջ տեղը կը կենար երկնցած, քանի մը վիրաւորներ իրենց վերջին շունչը կաւանդէին, որոնք որ չմնաց էին, առաջին դասիկոնն էին, և Հոն ահարկու հրատարափ մը սկսաւ ձեղունին ծակէն որ սանդուղին մուտքն եղած էր։ Վերջին փամփուշտներն էին արձակուող հրացանները։

Երբ սպաւեցան այս փամփուշտներն ալ, երբ այս ամէն հոդեվարներն ալ ոչ վառօդ և ոչ ալ դնտակ ունեցան, իրաքանչիւր ոք ձեռքն առաւ այն շիշերէն երկերկու հատ զոր Անժօլրա պահել տուած էր և որու վրայ արդէն խօսեցանք, և վեր ելնողներուն դէմ գրին այս մահակներով որք ամենահապէս դիւրաբեկ էին։ Այս շիշերուն մէջ գրուածը ժանտաջուր (քէզապ սույը) էր։ Առանց քան մ'աւելցնելու կամ պակսեցնելու կը խօսինք կոտորածին այս սխուր իրողութիւնները։ Բարեբէ, պաշարեալը զէնք կրնէ ամէն բան։ Յունական հուրը Արշիմէդի անպատուութիւն չբերաւ, խաշուած ոլոռն անպատիւ չբերաւ Պայարը։ Պատերազմի մէջ ամէն միջոց ապրպափելի է անհատիր, և այս միջոցներու մասին ընտրութիւն չկրնար ըլլալ բնաւ։ Յարձակողները վարէն վեր արձակելով իրենց հրացանները թէև նեղութիւն կը կրէին, բայց խիստ մահաւէտ էր անոնց կրակը։ Մեռած դլուխներով շուտ մը շրջապատուեցաւ ձեղունին ծակին եզրն ուսկէ երկայն կարմիր

և շղթեշունչ թելեր կարտահոսէին։ Անմեկնելի էր աղմուկը. ամիսի և կիզողական մուխ մը գրեթէ խաւարին վարագոյր մը կը կազմէր այս կռիւին վրայ։ Թառ չենք գտներ որպէս զի նկարագրենք թէ ինչպիսի բան է մինչև այս աստիճան հասնող սարսափը։ Ա՛լ մարդ չէին սեպուեր որոնք որ կը կռուէին այս կռիւին մէջ որ հիմա դժոխային էր։ Ա՛լ հակառակներու դէմ սիրտեներ չէին պատերազմողները։ Աւելի Միլտոնին և Տանթէին կը նմաներ այս կռիւը քանթէ Հոմերոսին։ Յարձակողները դևեր, դիմադրողներն ալ ճիւաղներ էին։

Հրեշային դիւցազնութիւնն էր այս։

ԳԼՈՒԽ ԼԶ.

ՕՐԻՍԹ ԱՆՕԹԻ ԵՒ ԲԻԼԱՏ ԸՐԹԻՒ

Վերջապէս քանի չափ զինուորներ, աղգային պահակներ, քաղաքապետական պահակներ մէկ մէկու վրայ ելնելով, սանդուղին կմախքն օդնական ընելով իրենց, ոմանք պատերուն վրայէն մագլցելով, ոմանք ձեղունէն կախուելով, վերջին դիմադիրները ձեղունին ծակին եզրին վրան իսկ սրէ անցուներով, այս ահարկու ելումին ժամանակ երեսնուն վրայ վէրքեր ընդունելով որք իրենց կերպարանը կապականէին, աբիւնէն կուրնալով, կատղութեամբ և վայրենութեամբ գլխովին համակուած՝ առաջին գտնիկանին սրահը թափեցան խառն ի խուռն։ Հոն ալ մէկ մարդ կար միայն կանգնուն, որ էր Անժօլրա։ Առանց վառօդի, դնտակի և սուրի մնալով իր ձեռքն ալ դարպասնային երկտեղը կար միայն որուն բունը խորտակած էր ներս մտնողներուն գլխուն գարնելով։ Գնդասեղնը յարձակողներուն և իր մէջ տեղը ձգելով՝ սրահին անկիւնը քաշուած էր, և հոն իր սեպ նայուածքովը, բարձր գլուխովը, ձեռքը բռնած զէնքի բեկորովը տակաւին բաւական սպառնալի ըլլալով, ոչ ոք մօտեցաւ իրեն։ Աղաղակ մ'եղաւ նոյն միջոցին.

— Պարապելուն է ան։ Ան է տասնապետը մեղցունողը։ Քանի որ հոն դնայ կեցաւ, աղէկ է տեղը։ Թող կենայ հոն։ Կեցած տեղը հրացանի բռնեցնք գինքը։

— Հրացանի բռնեցէք գիս, ըսաւ Անժօլրա։

Եւ իր պարապինային բեկորը նետելով և թևերը վրայ վրայի դնելով կուրծքը ներկայեց։

Քաջաբար մեռնելու յանդգնութիւնը միշտ կը յուզէ մարդերը։ Երբ Անժօլրա թևերը վրայ վրայի առաւ՝ յանձնառու ըլլալով վախճանին, դադրեցաւ կռիւին աղմուկը սրահին մէջ, և այս քառսը տեսակ մը գերեզմանական հանդիսաւորութեամբ յանկարծ հանդարտեցաւ։ Կարծես թէ անզէն և անշարժ Անժօլրայի սպառնալի վեհութիւնը կիշխեր այս ժխորին վրայ, և թէ այս վսեմ, արիւնաթոյր, սիրուն և անվրէպ մը պէս անառարքեր երիտասարդը՝ որ միայն ինք դեռ վերք մ'առած չէր՝ իր հանդարտ նայուածքին իշխանութեամբը կը բռնադատէր այս աղետալի ամբոխը յարգանօք մեղմելու գինքը։ Նոյն պահուն իր գեղութիւնը՝ աներկիւղութեամբն աւելնալով կը փոզփոզէր, և՝ իբր թէ անկարելի ըլլար իր ինչպես վիրաւորիլը նոյնպէս և յաղնիլը՝ այն քանուչորս ահարկու ժամերէն ետք որք անցեր էին, դեռ կարմիր և վարդագոյն էր։ Ետքէն վկայ մը պատերազմական ատենին առջև երբ կըսէր թէ «Ապտամը մը կար որու Ապողոն անուանելը լսած էինք», թերևս Անժօլրային կակնարկէր։ Ազգային պահակ մ'որ նշան կառնուր Անժօլրան մեղցունելու համար, վար ըրաւ հրացանը, ըսելով. Կը կարծեմ թէ ծաղկի մը պիտի մեղցուենեմ։

Տասներիւ մարդ խումբ մը կազմեցին Անժօլրայի հանդիպակայ անկիւնը և լռելեայն իրենց հրացանները պատրաստեցին։

Ապա տասնապետ մը գոչեց· — Նշան առէ՛ք։

Պաշտօնակիր մը միջամտելով ըսաւ·

— Սեցէ՛ք։

Եւ դեպ Անժօլրա դառնալով,

— Կուզե՞ս որ կապենք աչքդ։

— Ոչ։

— Դո՞ւն ես թնդանօթաձիգներուն տասնապետը մեղցնողը։

— Այո՛։

Քանի մը րոպէէն ՚ի վեր Կրանթէր արթնցած էր։

Ինչպէս կը լիշէ անշուշտ ընթերցողը, Կրանթէր նախորդ օրէն ՚ի վեր ամուռի մը վրայ նստած և սեղանի մը վրայ կըքաշած կը քնանար կապէլհոնին վերի սրահին մէջ։

Կրանթէր՝ կատարեալ էս և բաւին ամբողջ զօրութեամբը նկատուելով՝ արբշիռ-մեռած մ'էր, ինչպէս կըսուէր առնօք· Աւշինդրի, գարեջուրի, ալկօօլի սոսկալի խառնուրդը մահատիպ քունով մը թմրեցուցած էր զան։ Իր սեղանը պզտիկ ըլլալուն համար չէր կրնար ծառայել պատնէշին, հետևաբար Կրանթէրի ձգուած էր այն։ Տակաւին մի և նոյն դիրքին մէջն էր, այսինքն կուրծքը սեղանին վրայ ծռուած, գլուխը բոլորովին թևերուն վրայ կռթնած, և բաժակներէ, շշերէ և շիշերէ շրջապատուած։ Կը քնանար այն ամենածանր քունով որ թմրած արբեցու և ձարահուած տղրուկներու յատուկ է։ Ոչ հրացանաձգութեան գոռումները, ոչ գունդերը, ոչ պատուհանէն իր քնացած սրահը թափանցող ռումբի բեկորները, ոչ ալ յարձակումին ահագին ժխորը կրցած էին ընթափել զան։ Միայն թէ երբեմնակի թնդանօթին պատասխան կուտար խորդուբորմով մը։ Կարծես թէ հոն կսպասէր որպէս զի գնատակ մը գայ և վինքը զարթուցի աշխատանքէն ազատէ։ Բազմաթիւ դիակներ կային իր քովը, և՝ առջի անդամ անոր նայողմ՝ ամենևին չէր կրնար զանազանել վինքը մահուան անգունդը քնացող այն դիակներէն։

Ձայնը չարթնցներ գինովը, բայց լուսութիւնը կարթնցնէ։ Շատ անգամ դիտուած է այս զարմանալի իրողութիւնը։ Կրանթէրի բոլորտիքն ամէն բան լռնալով անոր մահաշունչ թմրութիւնը կաւելցուներ· փլուզը կորոշեր գինեմոլը։ — Անժօլրայի առջև աղմուկին կէսպիս մը դադարիլը ցնցում մը

եղաւ այս ծանրարթուն քունին համար: Արշաւաքայլ դաշտղ կառքի մը յանկարծ կանգ առնելուն հետեւութիւնն ունի այսպիսի դադարում մ'որ թմրածները կարթնցնէ: Կրանթէր յանկարծ արթնցաւ, թեւերը բացաւ, աչերը շփեց, նայեցաւ, յօրանջեց և հասկցաւ:

Վերջացող գինովութիւնը պատուող վարագոյրի մը կը նմանի: Գինովը մէկ անգամ նայելով ամենը մէկ միահաղոյն կը տեսնէ ինչ որ գինովութիւնը կը ծածկէր: Ամեն բան յիշողութեան մէջ կը ներկայի յանկարծ, և արբշիռը՝ որ ամենևին չգիտեր թէ ինչէր անցան քսանուչորս ժամէ 'ի վեր՝ հազիւ հազ կը բանայ աչուկները և ահա կիմանայ եղելութիւնը: Յանկարծական յայտնութեամբ մը գաղափարները կը ներկային անոր մտքին· կը ցրուի գինովութենէ արտադրուող ջնջումը, որ՝ իբր տեսակ մը շղարշ կը կուրէր (aveugler) ուղեղը, և այս ցրումէն ետք գինովն որոշապէս և յայտնապէս կը պաշարուի իրութիւններէն:

Կրանթէր սրահին մէջ անկիւն մը մնացած և կարծես գընդասեղանին ետեւը պատսպարուած էր, հետևաբար գինուորները՝ Անժօլրային նայելով ակնայեռ և ոչ իսկ նշմարած էին Կրանթէրը, և տանտապետը կը պատրաստուէր դարձեալ հրաման տալու գինուորներուն որ նշան առնուն Անժօլրան, երբ ձայն մը լսեցին որ իրենց քովէ կը գոչէր·

— Կեցցէ՛ հանրապետութիւնը: Ես ալ հանրապետական եմ:

Կրանթէր ելած էր:

Պատերազմին անբաւ նշոյլը, պատերազմ որու մէջ ոչ մը տած և ոչ ալ կուռած էր Կրանթէր, յղակերպեալ գինովին պայծառ նայուածքին մէջ երևցաւ:

— Կեցցէ՛ հանրապետութիւնը, կրկնեց· հաստատ քայլով մ'անցաւ սրահէն, և գնաց Անժօլրային քովէ կայնեցաւ հրացանեըուն առջևը:

— Մէկ արձակումով երկու հոգի մեռցուցէք, ըսաւ:

Եւ քաղցրութեամբ դէպ Անժօլրա դառնալով ըսաւ·

— Թոյլ կուտամ:

Անժօլրա ժպտելով Կրանթէրին ձեռքը սեղմեց:

Ծպիտը տակաւին լմնցած չէր, և ահա հրացանները դուռային:

Անժօլրա պատին կռթնած ձայց ուժ գնտակ ընդունելով որք կուրծքէն մտած և կռնակէն ելած էին և որք կարծես թէ պատին բևեռեր էին զան: Միայն իր գլուխը ծռեց:

Կրանթէր շանթահար գետինը գլորեցաւ անոր ոտներուն քով:

Քանի մը րոպէէն ետք գինուորները դուրս կը հանէին տուներին վերը ապաւինող յետին ապստամբները: Ասոնք վերնայարկին մէջ անկանոնապէս հրացան կը նետէին փայտաշէն վանդակապատի մ'եւևէն: Տունին վերնայարկի խուցերուն մէջ կը կռուէին: Պատուհաններէն մարմիններ կը նետէին, որոնց մէկ քանին կենդանի էր: Վերնայարկերէն ապստամբք երկու անգամ դարապնա նետելով մեռցուցած էին երկու ~~յաւաջամարտ գինուորներ~~ երբ ասոնք խորտակուած ուղեկատքը վերցունելու կը պարապէին: Կապա հագած մարդ մը վերնայարկէն վար դահավիժած էր՝ փորին վրայ սուին մը մխուելէն ետք, և գետինը կը հնչէր: Զինուոր մ'և ապստամբ մը յարկին կղմինդրներու զառիթափին վրայէն միասին կը սահէին՝ առանց թողուլ ուղելու մէկզմէկ, և վար կխրնային անդորդին փարումով մ'իրարու փաթած: Մի և նոյն կռիւը կըլլար նաև գինիի մառանին մէջ: Հոն ալ աղաղակներ, հրացանի արձակումներ, ոտներու վայրագ տատանումներ կը լսուէին: Ապա լռութիւնը տիրած էր: Պատնէշն առնուած էր:

Զինուորները սկսան շրջակայ տուները խուզարկել և փախստականները հալածել:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԿԱԼԸՆԵՒՈՐ

Իրօք կալանաւոր էր Մարիուս։ Ժան Վալժանին կալանաւորն էր։

Ժան Վալժանին էր այն ձեռքն որ եաէին բռնած էր զՄարիուս երբ պիտի խնար ասի, և որմէ բռնուիլը զգացած էր Մարիուս՝ նուաղելու միջոցին։

Ժան Վալժան կռիւին մէջ մոռած էր միայն իր կեանքը պահպանելով և առանց կռիւ ընելու։ Եթէ չըլլար ան, ոչ ոք պիտի մտածէր վիրաւորներուն վրայ հոգեվարութեան այս յետին կերպարանափոխութեան ժամանակ։ Ընդհակառակ Ժան Վալժանի որ կոտորածին ժամանակ իբր նախախնամութիւն մ'ամենուրեք կը գտնուէր, վիրաւոր խնդրողները կը վերցուէին, սարերին սրահը կը տարուէին և կը խնամուէին։ Մերթ ընդ մերթ պատնէշը կը նորոգէր։ Բայց իր ձեռներն երբէք չբերին այնպիսի բան մ'որ հրացանի արձակումի մը, յարձակումի մը կամ թէ դէթ անձնական պաշտպանութեան մը նմանէր։

Ժան Վալժան կը լռէր և ձեռնտու կըլլար։ Սակայն հազիւ հազ իր քանի մը տեղը կեղեքուած էր։ Գնտակները չուզեր էին հպիլ անոր։ Եթէ ինքնասպանութիւն ալ կար այն նպատակին մէջ զոր Ժան Վալժան երազած էր՝ այս դերեզմանը մտնելովը, այս մասին չյաջողած էր ամենևին։ Բայց տարակուսելի է մեզ Ժան Վալժանին ինքնասպանութեան նպատակ ունեցած ըլլալը, որ անկրօնութեան գործ մ'է։

Ժան Վալժան՝ պատերազմին թանձր ամպին մէջ՝ կարծես թէ չէր տեսներ Մարիուսը, բայց ստուգապէս ամենևին չէր հեռացներ իր նայուածքն անոր վրայէն։ Ուստի երբ վիրաւորեցաւ Մարիուս, Ժան Վալժան վազրային արագաշարժութեամբ մ'ոստեց, որպէսզի մը վրայ յարձակելու պէս անոր վրայ յարձակեցաւ և առաւ տարաւ վիրաւորը երիտասարդը։

Նոյն միջոցին յարձակման մբրիկը միայն Անժոլրայի և կապելիոնին դուռին վրայ սաստկապէս ամիոփուած ըլլալով, ոչ ոք տեսաւ Ժան Վալժանին՝ նուաղած Մարիուսը թևերուն վրայ առնելով պատնէշին քարայատակները քակուած դաշտէն անցնիլը և կորնթոսի տունին անկիւնին տեսեն անհետանալը։

Ինչպես կը յիշէ ընթերցողը, այս անկիւնը տեսակ մը հրուանդան կը կազմէր փողոցը, և ասոր քանի մը քառակուսի տեղը ղերծ կը պահէր գնտակներէն և ռումբի բեկորներէն, նաև նայուածքէ։ Երբեմն հրդեհներու մէջ ալ կըլլայ սենեակ մ'որ չայրիր, և ամենէն կատաղի ծուխերուն մէջն ալ հրուանդանի մ'ապրի կողմը կամ ժայռերու անհլանելի խորշի մը մէջ կը գտնուի պզտիկ անկիւն մ'որ հանգստարան է։ Այս քանի մը կանգուն տեղը պատնէշին ներքին տրապիզին տեսակ մը ծալքն էր, և Էբօնին ալ հոն հոգեվարելով մնացած էր։

Ժան Վալժան ահա հոն՝ կանգ առաւ, թողուց որ վար սպրդի Մարիուսը, կռնակը պատին տուաւ և սկսաւ չորս կողմը նայիլ։

Զարհուրելի էր վիճակը։

Առ այժմ, թերևս քանի մը րոպէի համար պատսպարան մ'էր այն մասնորմը, բայց ինչպես պիտի ազատեր այս կոտորածէն։ Ժան Վալժան կը յիշէր թէ մի և նոյն անձկութեամբ ութ տարի առաջ համակուած էր Բօլնոյի փողոցը, և թէ ինչ կերպով կրցած էր ազատիլ։ Այն կերպը դժուարին էր այն ժամանակ, իսկ այսօր անհնարին։ Հիմակ իր առջևն էր այն անողոքելի և խուլ տունն որ վեց դստիկոն ունէր և որու մէջ կարծես թէ պատուհանին ծուռուղ մեռած մարդը կը բնակէր։ Աջ կողմն էր պատնէշն որ բաւական ցած էր և կը գոցէր Բրթիթ-Թրիւանտըրի փողոցը։ Այս պատնէշին վրայէն ցատկելը դիւրին էր, բայց պատնէշին կատարին վերջն սուինի ծայրերու շարք մը կը տեսնուէր։ Սուինակիր-

ներն էին հետևակ զօրաց խումբն որ այս պատնէշին անդին կենալով կը դիտէր : Ցայտնի է թէ պատնէշին վրայէն անցնիլը խումբէն արձակուող հրացանի մը դնտակն ընդունելու երթալ էր , և թէ վաթսուն հրացանէ մաղի պէս դնտակներով պիտի ծակծկուէր այն գլուխն որ սալաքարերէ շինուած պատին վերևն երևալու պիտի համարձակէր : Իսկ ձախ կողմն էր կռիւին ասպարէզը : Մահը պատին անկիւնին եռևն էր :

Ի՞նչ ընէր :

Թուշուն մը միայն կրնար ազատիլ անկից :

Եւ պէտք էր անմիջապէս վճռել , հնարք մը դտնել , որոշում մ՚ընել : Երմ քանի մը քայլ անդին պատերազմ կըլլար · բարեբաղդաբար ամենքն ալ մէկ կէտի այսինքն կապելոնին դուռին վրայ կը յարձակէին մըէդնադաբար · բայց եթէ դինուոր մը , դինուոր մը միայն տունին եռևէն դառնալու , կամ կուշտէն յարձակելու դաղափարն ունենալու ըլլար , ամեն բան լմնցած էր :

Ժան Վալժան իր առջևի կողմին տունը նայեցաւ , քովի պատնէշը նայեցաւ , ապա յետին ծայրայեղութեան բռնութեամբը դետինը նայեցաւ մըէդնադրէս , և իբր թէ ուղեղ ուղիղ հոն ծակ մը բանալ աչերովը :

Այնքան նայեցաւ որ այսպիսի հոդեվարութեան մը մէջ չդիտեմ ինչ անորոշագրես նշմարելի բան մը սկսաւ ծրագրիլ և ձևաւորիլ իր ոտներուն քով , իբր թէ մարդուս նայուածքի կարողութիւններուն մին ըլլար երևան հանել ուզած բանը : Ժան Վալժան քանի մը քայլ անդին , դուրսէն կարի անդթաբար պահպանուած և հսկուած պղտի պատնէշին ստորոտը , փլուած մաս մը սալաքարերու ներքև մասամբ իւիք պահուած երկաթէ վանդակ մը տեսաւ որ տափօրէն (à plat) և դետնին հարթութեամբը դրուած էր : Այս վանդակը հաստատուն և խոտորնակ սիւնակներով շինուած և երեք քառակուսի կանդուն չափ լայն էր : Իր շրջանակը կազմող սալաքարերը հաճուեր էին , հետևաբար քակուածի պէս էր վանդակը : Սիւնակներուն մէջէն մեծին ծակ մը , չմինչ այի մը խողովակին կամ ջրամբարի մը գլանին նման բան մը կրնդնշմարուէր : Ժան Վալժան դէպ՚ի հոն խոյացաւ : Փաստներու նկատմամբ իր ունեցած հին պիտութիւնը ճառագայթի մը պէս իր ուղեղին մէջ պարզուեցաւ : Ժան Վալժան սալաքարերը մէկ դի բրաւ , վանդակը վերցուց , շալկեց Մարիուսը որ մեռելի մը պէս անշարժ էր , արմունկներուն և ծունկերուն օդնութեամբը՝ այս բեռը կռնակն ունենալով այն հոր նման ծակը իջաւ որ բարեբաղդաբար շատ խորունկ չէր , թող տեսաւ որ վերևին իր գլուխին վերևն իջնալով գոցուի երկաթէ ծանր կափարիչը՝ որու վրայ նորէն փլուեցան արդէն դղրդուած սալաքարերը , և գետնէն երեք ոտնչի չափ վար յատակաւոր մակերևոյթի մը վրայ կոխեց ոտքովը : Ժան Վալժան հսկայական ուժով մէկ արձուային արագութեամբ մը կատարած էր այս ամենը բանդագուշանքի ժամանակ՚ի գործ դրուած իրողութեան մը պէս : Հազիւ թէ քանի մը րոպէ տևած էր այս գործին կատարումը :

Ժան Վալժան տեսակ մը սառերկրային երկայն փողի մը մէջ գտաւ ինքզինքը Մարիուսին հետ որ դեռ նուաղած էր :

Հոն խորին հանդարտութիւն , բացարձակ լռութիւն և դիշերային մթութիւն մը կը տիրէր :

Վերտին ղոչց այն տպաւորութիւնը զոր ժամանակաւ ըզդացած էր փողոցէն Բրթի-Բիդբիսի վանքն իյնալով : Միայն թէ այսօր հետն առած էր չէ թէ Գօզէթը , այլ Մարիուսը :

Հիմակ իր վերևը հազիւ հազ իբր անորոշ շղութ մը կը լսէր յարձակմամբ առնուած կասելոնին զարհուրելի ազմուկը :

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԼԵՎԻԱԹԱՆԻՆ ԱՂԻՒԸ

ԳԼՈՒԽ ԱՔԱՋԵՑ

ՅՈՎՆ ԵՐԵՒԻՆ ԲՆԿՄՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՑՆԱՑ

Բաւական տարիներ քահանայութեան միւնոն ֆրանք կը նետէ ծովը։ Այլաբանական խօսք մը չէ այս։ Ի՞նչպէս և ինչ կերպով. պիշերը ու ցորեկ։ Ի՞նչ նպատակաւ. առանց որ և է նպատակի։ Ի՞նչ մտածումով. առանց մտածելու։ Ի՞նչ ընելու համար. ոչինչ։ Ո՞ր գործարանին միջոցով. իր աղիքին միջոցով։ Ո՞րն է իր աղիքը։ Իր կոյուղին։

Քահանայութիւնը մասնաւոր պիտութեան հաշիւներէն արտադրուած համեմատական թիւերուն ամենէն չափաւորն է։

Գիտութիւնը՝ երկար ժամանակ խարխափելէն ետք՝ պիտի այսօր թէ աղբերու ամենէն բեղմնաւորն և ամենէն ազդուն մարգկային աղբն է։ Ի նախատինս մեր փութանք ըսելու թէ չինացիք մեզմէ առաջ պիտին այս ձշմարտութիւնը։ Չինական կայսրներուն և ոչ միւն, ըսողը Նպէրկ է, չերթար քաղաքն առանց հետը բերելու երկու դոյլ որոնց մէջ կը լցնէ ինչ որ մենք աղտեղութիւնք կանուանենք և զոր իր պոջ պոյին* երկու ծայրերը կանցնէ։

Մարդկային աղբին չնորհիւ չինաստանի մէջ երկիրը տակաւին Հայր Աբրահամի ժամանակուան պէս նորակազմ է։ Չինական ցորեկը մէկին հարիւր քսան կուտայ տարին։ Չկայ աղբային հիւթ մ՚որ բեղմնաւորութեան նկատմամբ կարենայ համեմատուիլ մայրաքաղաքի մը թափթփուքներուն հետ։ Մեծ

* Ընդկային եղէգն։

քաղաք մ՚աղբևներու (stercoraire) ամենէն հիւթեղն է։ Քաղաքը գաշտ մ՚աղբևելու (fumer) գործածելը ստուգապէս յայտնի է։ Եթէ մեր ոսկին աղբև է, մեր աղբևն ալ փոխադարձապէս ոսկի է։

Ի՞նչ կընենք այս ոսկիի աղբևը. կաւելենք դէպ անդունդը։

Մեծ ծախս ընելով նաւերու կարաւաններ կը զրկենք հարաւային բևեռը՝ մրրկաբեր ըսուած թռչուններուն և բէնկոլէն ըսուած սպերուն կուռ ժողովելու համար, և ծովը կը նետենք փարթամութեան այն անհաշուելի տարրը զոր ձեռքի տակ պատրաստ ունինք։ Մարդկային և անասնային այն ամեն աղբը՝ զոր աշխարհս կը կորուսէ՝ եթէ՝ փոխանակ ծովը նետուելու՝ հողին վերադառնայ, աշխարհս անելու կը բաւէ։

Գիտեմ թէ ինչ են այն աղբերու կոյտերն որք դուռերու քարերուն քով կը կենան, այն աղմկիչը սայլերն որք գիշերը փողոցներուն մէջ կերերան, այն սոսկալի տակառներն որք Ճամբաները կը տեսնուին, այն ստորերկրային տղմի ապականակիր հոսումները զոր քարայատակը կը պահէ մեզմէ։ Անոնց ամենն ալ ծաղկաւէտ մարզագետին, դալարագեղ խոտ, ծաղիկներուն, ուրց և թաւ զոպայ է։ Շիկերէ և արջառ, և երկոյան միջոցին մեծ կովերու դոհունակ քառաչումն է, խընկաբոյր դալարի է, ոսկեզոյն ցորեն է, սեղանի վրայ հայց և երակներու մէջ արիւն է, առողջութիւն է, ուրախութիւն է, կեանք է։ Այսպէս կը կամի այն խորհրդաւոր արարչագործութիւնն որ երկրիս վրայ կերպարանափոխութիւն և երկնից մէջ այլակերպութիւն է։

Մեծ բովին վերադարձուր այս ամենը, առատութիւնդ անկէ պիտի արտադրի։ Դաշտերուն սնունդը մարգերուն սնունդը կը կազմէ։

Ազատ էք կորսնցնելու այս հարստութիւնը, և այսքանը բաւական չհամարելով նաև գլխ ծիծաղելի սեպելու։ Աւի ձեր տգիտութեան հրաշակերտը պիտի ըլլայ։

Ալիքակազմութիւնը հաշիւ ըրած է թէ միայն Ֆրանսա ա-

մեն տարի հինգ հարիւր միլիոն կը թափէ Աղանաեան ովկիանոսը իր դեաերուն բերանները։ Այս հինգ հարիւր միլիոն ֆրանքով կրնայ վճարուիլ տէրութեան տարեկան ծախուց մէկ քառորդը։ այս կէսը չմոռնալու է։ Սակայն մեր անգամ մը մարդուս յաջողակութիւնը։ անի նախապատիւ կը սեպէ ուղեր թափել այս հինգ հարիւր միլիոնը։ Հոս շեմ առ շեմ, հոն հեղեղապէս մեր կոյուղիներէն ողորմելի կերպով մը դեաերը թափուող և դեաերէն ալ ահագին կերպով մ՝ովկիանոսը թափուող իրերն են նոյն իսկ ժողովուրդին սնունդը։ Մեր կոյանոցներուն մէն մի հեկեկանքը հազար ֆրանքի կը նստի մեղի։ Երկու հետեւութիւն ունի այս։ երկրիս բեղմնաւորութեան բարձումը և չուրին ապականութիւնը։ Ախտէն նօթութիւն կարատելի, գետէն ալ հիւանդութիւն։

Ցայտնի է թէ, օրինակի աղագաւ, Թայմզ գետն այս ժամուս Լօնտրան կը թունաւորէ։

Իսկ Բարիզի մէջ այս վերջին ժամանակներս դէպ՝ի վայր հոսող կոյուղիներու բերաններուն մօտ ապրող մասը հարկ եղաւ վերջին կամուրջին տակը փոխադրել։

Չուրերը ծծող և ետ մղող գոնակներով և հալածական թումբերով* շինուած խողովակային կրկին մեքենայ մը, ճամբաներու պարզ յօրինուած մ՝որ մարդուս թորին պէս պարզ է և որ Անգլիայի բազմաթիւ գիւղերուն մէջ կը գործէ արդէն կը բաւէ գաշտերուն մաքուր չուրը մեր քաղաքները բերելու և քաղաքներուն բեղմնաւոր չուրը դաշտերը վերադարձնելու, և չուրերու այս ամենադիւրին երթեւեկութիւնը կըրնայ մեր քովը պահել դարս նետուած հինգ հարիւր միլիոն ֆրանքը։ Բայց մարդիկ ուրիշ բանի վրայ կը խորհին։ ժամանակ չունին ասանկ բաներու վրայ մտածելու։

Արդի գործողութիւնն աղէկութիւն ընել ուզելով դեշութիւն կընէ։ Դիտաւորութիւնը բարի է, բայց հետեւութիւնը

* Չուրի թումբ որու արտահոսման ծակերը կրնան արագօրէն բացուիլ, ուսկէ հոսող չուրերը կը հալածեն այնքան կառուն կը տանին կամուրջ մը կամ ջրմուղ մը խափանող նիւթերը։ Ե. Թ.

տրտմալի։ Կը կարծուի քաղաքը մաքրել, բայց ժողովուրդը կը վատի (s'étioler)։ Կոյուղի մը թիւրիմացութիւն մ՝է։ Երբ ամենուրեք ջրային ճամբաներն իրենց կրկին գործողութեամբը՝ առածնին ետ տալով պիտի յաջորդեն կոյուղիին, որ աղբատութիւնն տուող պարզ լուացում մ՝է, անատեն այս գործողութիւնն ընկերային նոր անտեսագիտութեան մ՝ակնարկ տեղեկութիւններուն հետ միանալով, երկրիս բերքը պիտի տասնապատկի, և թշուառութեան դժուարալոյծ խնդիրը տարբերէն պիտի դիւրանայ։ Աւելցնենք նաև հայկատակութիւններու բարձումը, և ահա խնդիրը պիտի լուծուի։

Ա՛ս այժմ հասարակային հարստութիւնը գետը կերթայ, և կը վատնուի։ Վատնում բառը ճիշդ բառն է։ Եւրոպան այսպէս սպառելով կը կործանի։

Իսկ Ֆրանսային նկատմամբ արդէն ըսինք թէ որքան է իր թիւը։ Արդ քանի որ Ֆրանսայի ամրողջ բնակիչներուն մէկ քսանուհինգերորդը Բարիզի մէջ է, և Բարիզի աղբն աղբերուն ամենէն պարարտն ըլլալով, քիչ քանթէ շատ ըսած կըլլանք երբ քսանուհինգ միլիոն կը հաշուենք այն ճասը որ տարուէ տարի Ֆրանսայի ամրջած հինգ հարիւր միլիոնէն բաժին կիյնայ իրեն։ Այս քսանուհինգ միլիոնը եթէ ձեռնտուութեան և վայելումի գործածուի, կրնայ Բարիզի շքեղութիւնը կրկնապատկել։ Քաղաքը կոյանոցներու կը վատնէ այս գումարը։ Հեռաւորապէս կրնայ ըսուիլ թէ Բարիզի մէջ զեղումութիւնը, հրաշալի ծոնամարութիւնը, Պօժօնական* յիմարութիւնը, շուայտութիւնը, լիաբուն ոսկիի հոսումը, ճոխութիւնը, շռայլութիւնը, շքեղութիւնը իր կոյուղին է։

Մարդիկ քաղաքական յոռի տնտեսագիտութեան մը կուրութեամբը համակուած՝ ահա այսպէս կը խեղդեն ամենուն բարեկեցութիւնը և կը թողուն որ դէպ՝ի վար երթայ և վիհերու մէջ կորսուի։ Պետք էինք Սէն-Գլուի առուակներն ունենալ հասարակաց հարստութեան համար։

* Պօժօն Լուի ԺԵ-ի ժամանակ երեւելի սեղանաւոր մ՝էր որ իր անբասհարստութեանց մեծ մասը բարեզործութեանց համար վատնեց։ Ե. Թ.

Տնտեսագիտաբար նկատուելով եղելութիւնը կը համառօտի սա խօսքին մէջ. Բարիզ վատնիչ է:

Բարիզ, այն՝ որ քաղաքներու բնօրինակն (modèle) է և կաղապար բարեշէն մայրաքաղաքներու որոնց մէն մի ժողովուրդը կը ջանայ օրինակ մ'ունենալ. այն որ տեսլականին մայրաքաղաքը, նախաշարժումին, մղումին և փորձին վերհ հայրենիքն է, այն որ ազգ-քաղաք, ազգային փեթակն և բնակարանի և կորնթոսի հրաշալի բաղադրութիւնն է, մեր այս նշանակած տեսութեան կէտովը նկատուելով Թերևս Փոքիանի դիւղացիի մ'արհամարհանքը շարժէ:

Նմանէ Բարիզին, և ահա պիտի կործանիս:

Սակայն Բարիզ ինքն ալ՝ մասնաւորապէս այս հինաւուրց և յիմարական վատնումին օրինակն ուրիշէն առած է:

Այս զարմանալի անմտութիւնները նոր չեն. նորաբոյս ապշութիւններ չեն ասոնք: Հիներն արդի ժամանակիս մարդերուն ընթացքն ունէին: «Հռոմի կոյանոցները, կըսէ Լիվիպիկ, Հռոմայեցի դիւղացիին բոլոր բարեկեցութիւնը կլլեցին»: Երբ Հռոմի դաշտերը հռոմէական կոյուղիէն կործանեցան, Հռոմ Իտալիան սպաւեց, և երբ Իտալիան ալ իր կոյանոցը նետեց, նաև Սիցիլիան, յետոյ Սարտինեան և ապա Ափրիկէն ալ հոն թափեց: Հռոմի կոյուղին աշխարհս անդունդները դահավիժեց: Այս կոյանոցը քաղաքին և տիեզերքին կընծայեր իր անդունդը. Urbi et orbi: Յաւիտենական քաղաք, անջափելի կոյուղի:

Ինչպէս ուրիշ շատ բաներու, նոյնպէս և այսպիսի իրերու օրինակը տուողն է Հռոմ:

Բարիզ խելացի քաղաքներուն յաւուրք բոլոր անմտութեամբն այս օրինակին կը հետեւի:

Արդէն բացատրեցինք թէ ինչ գործողութիւն պէտք է այս կոյուղիներուն նկատմամբ. Բարիզ այս գործողութեան պիտոյիցը համար ուրիշ Բարիզ մ'ունի իր ներքև, կոյուղիներու Բարիզ մ'որ իրեն յաւուրք փողոցներ, քառուղիի բերանները, մայտանները, անել ճամբաներ և չընչերակներ ունի, նաև իրեն յաւուրք շրջաբերութիւնը որ տղմային է առանց սակայն մարդկային կերպարան ունենալու:

Վասն զի պէտք չէ շաղաքրքրել բան մը, և ոչ իսկ մեծ ժողովուրդ մը. ուր որ կայ ամէն բան, հոն վսեմութեան քով նաև խայտառակութիւն կայ, և եթէ Բարիզ կը պարուսնակէ Աթէնքը այսինքն լուսաւոր քաղաքը, Տիբրոսը այսինքն զօրաւոր քաղաքը, Սբարթը այսինքն առաքինի քաղաքը, Նինուէը այսինքն հրաշաւոր քաղաքը, կը պարունակէ նաև Լիւթեսը* այսինքն տղմային քաղաքը:

Սակայն իր զօրութեան դրոշմը նոյնպէս հոն է, և Բարիզի սիտանեան աւրինակ յիշատակարաններու մէջ կ'իրացնէ այն տարօրինակ տեսլականը զոր քանի մը մարդ, ինչպէս են Մաքիավէլ, Պազօն և Միրապօ, իրացուցին մարդկութեան մէջ. ըսել կուզենք ահեղաշուք դէուէը:

Բարիզի տարերքիները՝ եթէ կարելի ըլլար տեսնել իր մակերևոյթը՝ ահագին մադրէբօրի** մը տեսքը կը ցուցունէ: Սպունգ մը գրեթէ չունի այնքան ծակեր և փողեր որքան կը պարունակէ վեց մղոն շրջանակ ունեցող այն հողակոյտն որու վրայ կը հանգչի այս հինաւուրց մեծ քաղաքը: Առանց յիշելու դեռատիարները որք զատ մառան մը կը կազմեն, առանց յիշելու կազի խողովակներուն անքակտելի վանդակը, առանց հաշուելու վազուկ ջուրի բաշխման խողովակներու ընդարձակ կազմութիւնը որ հասարակային փոքը աղբիւրներու կը յանդի, կոյուղիները միայն խաւարին և ահագին ցանց մը կազմեն սէն դետին երկու եղերուն տակ. լաբիւրինթոս որու թելն է իր գաւիթափը:

Հոն խոնաւ մառախուղին մէջ կերևայ մուկն որ կարծես թէ Բարիզի երկանց արգիւնքն է:

---

* Բարիզին ակզբնական անունն է: Ծ. Թ.

** Madrépore, ասաղաքոյն կորադիւն: Քարային բազմանիներու բոյներուն մէկ տեսակը որ ասաեր և մակերևոյթին վրան ալ ամէն կողմէ դուրս ցցուած խորշեր ունի քարային անջրպետներով իրարմէ զատուած: Ծ. Թ.

ԳԼՈՒԽ Ը.

ԿՈՑՈՂԻՆ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Եթէ Բարիզ իբր կափարիչ մը վերցուած երևակայենք, կոյուղիները սոսրերկրեայ ցանցը՝ ի վերուստ տեսնողի մը առջև երկու եզերքուն վրայ գետին պատուաստած տեսակ մը ահագին ոստ պիտի ծրարէ: Աջակողմեան եզրին վրայ միջին կոյուղին այս ոստին կռճղը պիտի ըլլայ. երկրորդական խողովակները՝ տեղները և անել ճամբաներն ալ ոստիկները պիտի ըլլան:

Այս պատկերը հակիրճ և կիսովին ճիշդ է, վասն զի տունկերու մէջ խիստ հազուագիւտ է ուղիղ անկիւնն որ այս տեսակ ոստերկրային ճիւղերու մէջ առվորական անկիւնն է:

Այս երկրաչափական ոստրօրինակ յատակագծին աւելի նըմանն պատկերը կրնանք երևակայել՝ նմանցընելով թէ խաւարին յատակի մ'երեսը խառնաշփոթութեան մը պէս խառնուած արևելեան այլանդակ այբբենարան մը կը տեսնենք, և թէ այս այբբենարանին տձև գիրերը առերեսյթ խառնաշփոթութեամբ մը և կարծես ըստ դիպուածի իրարու հետ կրցուած ըլլան մերթ իրենց անկիւններովն և մերթ ծայրերովը:

Սինիւնները և կոյուղիները մեծ դեր մը կը խաղային միջին դարու մէջ Սորբին կայսրութեան ժամանակ և հին արևելեայ մէջ: Ծանտաման անոնցմէ կը ծնէր, բռնամոլներն անոնց մէջ կը մեռնէին: Բազմութիւնները գրեթէ կրօնական երկիւղածութեամբ մը կը նայէին ապահանութեան այս ընդունարանները, որք մահուան հրեշային բաղնիքներն էին: Պէնարէլի միջառներու փոսն ոչ նուազ ահարկու է Բաբելոնի Առիւծներու Փոսէն: Թարուներան դրքերուն բսած՝ նայելով Թեկլաթ-Փալազար Նինիւէի սինիւնային վրայ կերդնուրը Ծան Տը Լէյա Միւնսթէրի կոյուղիէն ծագել կուտար իր շինովի ջուրերը, և Մօքաննա, Խօրասանի քօղակիր մարդա-

բէն՝ որ Քէքշէպի արևելեան նմանատիպն է՝ (ménechme) նոյն Քէքշէպի հոր-կոյանոցէն ծագել կուտար իր շինծու արևը:

Մարդերու պատմութիւնը կոյանոցներու պատմութեան մէջ կանդրադառնայ: Թէմոնիան Հուռմը կը պատմէր: Բարիզի կոյուղին զարհուրելի հին բան մ'եղած է: Գերեզման եղած է, նաև պատսպարան: Ոճիրը, իմացականութիւնը, ընկերային բողոքարկութիւնը, խղճի ազատութիւնը, խորհրդածութիւնը, զողութիւնը, վերջապէս ինչ որ մարդկային օրէնքէ կը հալածուի կամ հալածուեցաւ, այս ծակին մէջ պահուեցաւ. չորեքտասաներորդ դարու մէջ հարկաժողովները կոտորող թաքակիրները* (maillotin), հնգետասաներորդ դարու մէջ վերարկու-գողցողները, վեցտասաներորդ դարու մէջ բողոքականները, եօթնեւտասներորդ դարու մէջ Մօրէնի լուսաւորեալները, տասնուվեցերորդ դարու մէջ Շօֆֆեօք (տաքցուցնող) ըսուած աւազակները հոն ապաւինեցան: Ասկէ հարիւր տարի առաջ գիշերային դաշտերն անկէ ելնելով կը զարնէր. վառնի մէջ ըլլալ գողը հոն կսպրդէր. անտառն իր խռովչն ունէր, Բարիզ ալ իր կոյուղին: Թրիւանտները՝ որ կօլիանան խորամանկ գողերը կը սեպուին՝ կոյուղին կընդունէին իբր Գուր Տէ Միրագլի մէկ ճիւղը, և երեկոյին խաբեբայութեամբ և գաղանութեամբ դրաւուած՝ Մօպէի կոյուղիին տակը կը մտնէին՝ նշանարան մը մնալու պէս: Ամեն օր վիա-Կուսէ (քսակ-պարպող) ըսուած անել փողոցին կամ Գուբ-Կօրժ (վիզ-կարող) դռնհին մէջ աշխատողներուն համար կատարեալ պէս բնական բան մ'էր գիշերային բնակարան ընտրել Շըմէն-Վէրի կամրջիկը (ponceau) կամ ծոյլ Հիւբոյան, ուսկէ կը հետևի յիշատակներու վիսոում մը: Ամեն տեսակ ուրուականներ կը յաճախեն այս մենական երկայ-

* Թաքակիրները (maillotin) Բարիզի ժողովրդային դասէն մարդեր էին որք Շարլը Վ.ի անչափահասութեան ժամանակ Փրանսայի ինամակալ իշխան Տ'Անժու դուքսին դրած նորանոր տուրքերուն հաւաքման դիմադրելու համար 1381ին Ջինուարեան խուժեցին, թաքերով զինուեցան, կոտորեցին հարկաժողովները և ազատեցին բանտարկեալները: Ծ. Թ.

նաձիգ փողերը· ամենուրեք ապականութիւն և դարշահոտութիւն· հոն հոս օդամուտ մ'ուր վիլըն ներսէն և բապլէ դուրսէն կը խօսակցին :

Կոյուղին հին Բարիզի մէջ ամեն սպառումներու և ամեն փորձերու ժամադրութեան տեղին է : Քաղաքական անհետութիւնը նիւթերու բեկորները , ընկերային փիլիսոփայութիւնն ալ մնացորդները կը տեսնէ հոն :

Կոյուղին քաղաքի մը խիղճն է : Ամեն իրերը հոն կերթան և կը դիմագիծին : Այս մթամած տեղը խաւար կայ , բայց ալ դաղտնիք չկայ : Ամեն բան իր ճշմարիտ կերպարանքն ունի , կամ դէթ իր վերջնական կերպարանքը : Աղբնոյն ալ մանուածը յատկութիւն մ'ունի որ է սուտ չհօսիլ : Պարզամտութիւնը հոն ապաւինած է : Պապիլի դիմակը հոն կը գտնուի , բայց այս դիմակին խաւաքարտը , լարերը , ներքին ինչպէս նաև դուրսը կը տեսնուի , և վրան տղմային շերտ մը կայ որ պարկեշտ է : Նոյն դիմակին մօտն է Սպաբէնի շինուվի քիմը : Քաղաքակրթութեան ամեն աղտերը՝ երբ ծառայելի կը դադրին՝ այս ճշմարտութեան փոսը կիյնան ուր կը յանդի ընկերային անքաւ սպրդումը : Այս կեղտերն անոր մէջ կընկղմին , բայց 'ի տես կարտադրին : Այս խառնիխուռնը խոստովանանք մ'է : Հոն արտաքին կեղծ երևոյթը , բուռմը (plâtrage) հնարին բան չէ· աղբն իր շապիկը կը հանէ· մերկութիւնը բացարձակ է· պատրանքն ու կրկներևոյթները խոյս կուտան· ալ իրութիւնը յայտնապէս երևան կելնէ՝ ունենալով այն սոսկալի պատկերը զոր կունենայ ինչ որ կը վերջանայ : Իրաւանութիւն և աներևութիւն : Հոն շիշի մը յատակը դինեմոլութիւնը կը խոստովանի· կողովի մ'անկղը ծառայութիւնը կը պատմէ· հոն խնձորի մը կուրծը՝ որ դրագիտական կարծիքներ ունեցած է՝ վերստին խնձորի կուրծը կըլլայ· Թալեռին կերպարանքը համարձակապէս կը ժանգոտհարի· Կայիափայի թուքը Փալեթաֆի փսխունքին կը հանդիպի· խաղալ սեղանէն իյնող լուիձին կընդհարի այն բևեռին

հետ ուսկէ կախուած է ինքնասպանութեան չուանին ծայրը· կապարագոյն սաղմն մի՝ բարեկենդանի վերջին օրը Օբերայի թատրոնը պարող ոսկեթել կտաւի մը մէջ կը դառնայ· դըլխարկ մը՝ որ մարդ դատեր է՝ կը թաւալի փառութեան մը քովը որ բոզ Մարգրիտին միջազգեստն էր առեր մը· այս իրերն իրարու հետ չէ թէ բարեկամ , այլ մտերիմ են : Կը կեղտոտի ինչ որ կը շլաբուէր : Վերջին վարագոյրը կը քաշուի· կոյուղի մը լերթ մ'է : Ամեն բան կըսէ այն :

Աղբին այս անկեղծութիւնը հաճելի է մեղ և հոգին կը հանդարտէ : Մարդս երբ իր ժամանակն անցուցած է համբերելով այս աշխարհիս մէջ փառաւորութեան այն սուտ ձեւերուն և կերպերուն զոր կառնուն քաղաքական պատճառը , (raison d'état) երդումը , քաղաքական իմաստութիւնը , մարդկային արդարութիւնը , պաշտօնական ուղղամտութիւնները , կացութեան անհաշտութիւնները և անկաշառաբեկ դատաւորութիւնները , սփոփում կը գտնէ կոյուղի մը մտնելով և անոնց վայելող տիղմը տեսնելով :

Կոյուղին նաև կուսուցանէ : Ինչպէս ըսինք քիչ մ'առաջ , պատմութիւնը կոյուղիէն կանցնի : Սէն–Պարթելէմի և ասոր նման կոտորածները հոն շիթ առ շիթ կը մղին սալաքարերուն մէջ : Հասարակային մեծ մարդասպանութիւնները , քաղաքական և կրօնական կոտորածները քաղաքակրթութեան այս դեհնափորէն կանցնին և հոն կը նետեն իրենց դիակները : Մտածողին աչքն անոր մէջ կը տեսնէ ամեն պատմական մարդասպանները որք հոն , սոսկալի կիսատուերին մէջ ծուռը դրած և՝ իբր ղենջակ՝ իրենց պատանքին մէկ մասը աջկնին կապած՝ տրտմապէս իրենց գործը կը սրբեն սպունգով : Հոն է Լուի ԺԱ· Թրխմանի հետ , Ֆրանսուա Առաջին՝ Տիւբրայի հետ , Շարլը Թ· մայրին հետ· Րիշըլիէօ՝ Լուի ԺԳ·ի հետ· նաև Լուվուա , Լըթելլիէ , Էպէր և Մայլեար քարերը քերելով և աշխատելով աներևոյթ ընելու իրենց գործողութեանց հետքը : Կոյուղիներու դմբէթներուն տակ այս ձի-

ւաղնեբուն աւելը կը լսուի : Ընկերային մեծ ազէտներու առիթին դարշահոտութիւնը կը շնչուի հոն : Կարմիրկնկ և հայ յեղանման ցոլումները կը տեսնուին խորշերու մէջ : Հոն կը հոսի սոսկալի ջուր մ՚որու մէջ արիւնաթաթաւ ձեռները լուացուած են :

Ընկերային դիտողը պարտաւոր է մանել այս մթին տեղերը, վասն զի անոր զործանոցին մէկ մասը կը կազմեն այս տեղւանքը : Խմաստասիրութիւնը մաքին մանրադիտակին է : Ամեն բան կուզէ խոյս տալ այս մանրադիտակին առջևէն, բայց ոչ ինչ կը փախչի : Խուսափելն անօգուտ է : Մարդս խուսափելու ժամանակ իր ոտ կողմը կը յուցուներ · խոյատաւ կութեան կողմը : Փիլիսոփայութիւնն իր լաւագոյն նայուածքովը չարութիւնը կը հալածէ և չթողուր որ փախչելով չէութեան անդունդը կորսուի : Աներեւութացող իրերու չնչուիլը, անհետող իրերու փոքրիկը դիտելով ամեն բան կը ճանչնայ այն : Ցնցոտիին համմամա՝ ծիրանին՝ և փուրջին համմամա կինը կը վերաչինէ : Կոյտոցով քաղաքը կը վերականգնէ · տիզմով աւլ բարքերը կը վերակազմէ : Խեցիի բեկորէն դինեփը կամ սափորը կը հետեւցնէ : Մոզաղաթի մը վրայ ըզնոսկի դրոշմ մը տեսնելով կիմանայ թէ ինչ տարբերութիւն ունի ժիւտէնկնկան հրէանոցը կեթեթոյի հրէանոցէն : Կը դանէ մնացած իրին մէջ ինչ որ եղած է, բարին, չարը, սուրը, իրաւը, պալատին արեան արատը, խոռոչին թանաքի բիծը, բոզնոցին (lupanar) ճարպի կաթիլը, կրուած փորձանքը, պատեհաւոր յօժարութիւնները, փոխուած շուայտութիւնները, սովսրութիւնը զոր բնաւորութիւնները կը կազմեն՝ յածնալով, հոգիներու մէջ պատնէշութեան հետքը որու մասին յաջողակ կըլլան իրենց տմարդութեան շնորհիւ, և Հռոմի բեռնակիրներուն կապային վրայ այն արմուկի նշանը զոր պատնիկ կայսրուհի մը, այսինքն Մեսալին թողած է :

ԳԼՈՒԽ Գ·

ՊՐԻՆՋՈ

Մէջին դարու մէջ Բարիզի կոյտղին աւանդական բան մ՚էր : Վերստանորոգ դարու մէջ Անրի Բ· ուզեց չափել զայն, բայց չյաջողեցաւ : Մէրսիէի վկայութեանը համեմատ դեռ հարիւր տարի առաջ կոյտոցին ինքն իրեն ձգուած էր և կըլլար ինչ որ կրնար ըլլալ :

Այս հին Բարիզն ահա այսպէս էր, այսինքն կոխուներու, վարանումներու և խարխափումներու մատնուած : Շատ ժամանակ բաւական ապուշ եղաւ Բարիզ : Նաքէն, 89ին ցուցուց թէ քաղաքներն ինչպէս խելացի կըլլան : Բայց այն միամտութեան հին ժամանակ մայրաքաղաքը քիչ խելք ունէր· չէր դիտեր իր դործերը կատարել ոչ բարոյապէս, ոչ նիւթապէս, մի և նոյն տգիտութիւնն ունէր իր թէ աղբերը և թէ զեղծումները աւելցու մասին : Ամեն բան խոչընդոտ էր, ամեն բան խնդիր կը յարուցանէր : Օրինակի աղաղաւ՝ կոյտղին մէջ ուղեղիծ մը հաստատելը դժուարին էր յոյժ : Մարդիկ ինչպէս չէին կրնար իրարու խօսք հասկնալ քաղքին մէջ, նոյնպէս և չէին կրնար ճամբաներու մէջ իրենց ուր և ուր կողմը գտնուիլը : Վերն էր անիմանալին· վարն էր անլուծելին· լեզուներու խառնակութեան ներքև սառերկիրներու խառնակութիւնը կար· Լարիւրինթոսը Բաբելը կը կրկնէր :

Երբեմն ալ Բարիզի կոյտղին իր պաշտօնէն դուրս դործի կը խառնուէր, այսինքն կը յորդէր, իրր թէ յանկարծ բարկացած ըլլար այս անծանօթ ներքոյս : Կոյտղիի ողղուններ կըլլային· ինչ պժդալի բան : Մերթ ընդ մերթ քաղաքակրթութեան այս սառամքսը դժուարամարսութիւն կուներար, կոյտոցը վեր կուգար դէպ՝ի քաղքին կոկորդը, և Բարիզ իր տղին անախորժ համը կառնուր : Կոյտղին մարդկային խղճի տագնապին ունեցած այս նմանութիւնները կերպիւ իւիք օդ-

տակար էին· ազդարարութիւններ էին անոնք, որոնցմէ սա կայն օգտող չկար բնաւ· քաղաքը կը սրտմտէր իր տղին այնքան յանդգնութիւն ունենալուն համար, և չէր ընդուներ աղեին վերադարձը: Ուրեմն աւելի աղէկ աւէլ աղբդ:

1802ի ողողումն արդի ութսնամեայ բարիզցիներուն յիշատակաց մին է: Տիղմը խաչաձև տարածուեցաւ Տէ Վիլթուա, Տը Մայտանը ուր է Լուի ԺԴ·ին արձանը· Շանզ-Էլիզէի երկու կոյուղիի բերանները Սէնթ-Օնօրէ փողոցը, Սէն-Ֆլորանթէնի կոյուղիէն Սէն-Ֆլորանթէնի փողոցը, Տը Լա Սոնըրի կոյուղիէն Բիբէր-ա-Բօասօն փողոցը, Շըմին-Վէրի կոյուղիէն Բօբէնդուր փողոցը, Տը Լաբ փողոցին կոյուղիէն Բօվէթ փողոցը մտաւ· Շանզ-Էլիզէի փողոցին ուղիի սալաքարէ Ճամբան ծածկից մինչև երսունը հինգ հարիւրամեթրը բարձրանալով, և՝ հարաւային կողմը՝ Սէն գետը հոսող կոյուղիին դուռէն խոտորնակ ուղղութեամբ հաւքուելով Մայուղարին փողոցը, Տը Լ'Էշօաէ փողոցն և Տիւ Մարէ փողոցը մտաւ, ուր հարիւր ինը մեթրոյի չափ յառաջանալով կանգ առաւ Ճիշդ քանի մը քայլ ապդին այն տունէն որու մէջ բնակած էր Ռասին, և այսպէս՝ տասնուեօթերորդ դարու մէջ՝ բանաստեղծը թաղաւորէն աւելի յարգելով: Տիղմը Սէն-Բիէր փողոցին ամէն տեղէ աւելի խորութիւն ունեցաւ՝ ջուղիի բերանի սալաքարերուն վերեւը մինչև երեք ոտք բարձրանալով, իսկ ամէն տեղէ աւելի Սէն-Սապէն փողոցը տասնուեցաւ՝ երկու հարիւր երսունը ութը մեթրօ երկայնութեամբ տարածուելով:

Ներկայ դարուս սկիզբը Բարիզի կոյուղին դաշտի տեղ մ'էր: Տիղմը չկրնար երբեք բարեհամբաւ ըլլալ· բայց հոս չբարհամբաւութիւնը մինչև սարսափ կերթար: Բարիզ անոնք պատրաստ դիտէր թէ իր ներքև սոսկալի սաորերկիր մ'ունի, որու վրայ կը խօսէր իրը Թէպի այն հրեշային և տղմուտ վայրին նկատմամբ որու մէջ տասնուհինգ ոտք երկայնութիւն ունեցող օձասանդրեր կը վխտային և որ կրնար թերևս լողալ

ըան մ'ըլլալ պետեմթին*: Կոյուղի մաքրողներուն մեծ կորչիկները բնաւ չէին համարձակեր անցնիլ այն քանի մը տեղերէն որք ծանօթ էին: Տակաւին խիստ մօտ էր այն ժամանակն ուր տղմակիրներուն սայլերը՝ որոնց վրայէն Սէն-Գուա կը բարեկամանար Տը Գրէնէլի մարքիզին հետ՝ պարզապէս կոյուղիին մէջ կը պարպուէին: Իսկ կոյուղին մաքրելու պաշտօնը կը յանձնուէր տեղատարափներուն որք աւելի կը խափանէին քանթէ կաւէլին տիղմերը: Գէթ Հռոմ բանաստեղծութիւն մը ձգելով իր կոյանոցին ծխմանիա կանուանէր զայն: Իսկ Բարիզ կը թշնամանէր իրը՝ Գարշահոտ ծակ անուանելով զայն: Գիտութիւնը և աւերտպապաշտութիւնը համաձայնապէս կը սոսկային անկէ: Մօէն-Պուբլ** Մուֆֆարի կոյուղիին ապականակիր կամարին ներքև բացուած էր· Մարմուզէներու դիակները Պարիսլերբրի կոյուղիին մէջ նետուեր էին· Փակօն 1685ի անհարդ ջերմն (fievre maligne) ըսուած ահարկու տենդին պատճառ կը համարի Մարեի կոյուղիին մեծ բերանը որ Սէն-Լուի փողոցը պրեթէ Մէսաժէ կալանի ծանուցագրին դիմացը բաց մնաց մինչև 1833: Տը Լա Մօրթելլերի փողոցին կոյուղիին բերանը համբաւաւոր էր այն ժանտախտներով որք անկէ կելնէին· այս բերանն իր երկաթէ սալաքաւոր վանդակովը՝ որ ակռաներու շարքի մը նմանութիւնն ունէր՝ նոյն աղետաւոր փողոցին մէջ մարդուս վրայ դժոխքը փչող վիշապային ահարկու բերանի մը պէս բան մ'էր: Ծողովրդային երևակայութիւնն անսահմանութեան չափեմ ինչ սոսկալի խառնուրդով մը կը համեմէր Բարիզի աղտեղութենանց այս տխուր ընդունարանը: Կոյուղին անյատակ էր: Կոյուղին Պաբաթրոն*** էր: Եւ ոչ իսկ ոսոխականութեան մաքէն կանցնէր խուզարկել այս բորոտ տեղերը: Ո՛վ պիտի համարձակէր այս անծանօթը փորձել, խորաչափը այս մթութեան մէջ նետել,

* Ծոբի գրքին մէջ յիշուած կենդանին որ ձիագետի կամ ռնդեղջիւր կը կարծուի: Ծ. Թ.

** Ճիւաղ, բերբի, ճին:

*** Աթէբեայի անդունդն ուր կը գահավիժէին մահապարտները: Ծ. Թ.

այսպիսի անդունդ մը մտնել դիւա մը դտնելու համար։ Ա-
հարկու էր այս ձեռնարկութիւնը։ Սակայն այս ձեռնարկու-
թեան համարձակող մը դտնուեցաւ. կոյանոյն ալ Գրիմօֆ
Գօլմսկոս մ'ունեցաւ։

1805ին օր մը Նաբոլէոն իր սովորութեանը համաձայն՝ քիչ
մ'ատեն ձիաւելու համար Բարիզ եկած ըլլալով, ներքին դռ-
ծոյ պաշտօնեան տիրոջը պալատն եկաւ առտու անոր հետ խօ-
սելու համար։ Կառավարչական մէջ հանրապետութեան և մեծ
կայսրութեան այն ամեն տարօրինակ զինուորներուն թուերը
դետինը դալով ձայն կը հանէին. Նաբոլէոնի դուռին քով
դիւցազները խոներ էին, այսինքն Իէնի, Էսլոյի, Ատիճէյի
և Նեղոսի մարդերը. Ժուպէր, Տըղէ, Մարսօ, Հօշ և Գլե-
պեր զօրապետներուն ընկերներ. Ֆրէօրիւսի օդապետնդ թըռ-
չուններ, Մայանսի կրընատիէներ, Ժէնի կամրջաձիդներ,
հիւսարներ որոնց եղիպտական բուրդերը նայեր էին, դըն-
դնկէցներ զոր ոստոստել տուած էր Ժիւնոյի թնդանօթը,
զրահաւորներ որք Ջիւտերվէյի ծոցն երկաթ նետած նաւա-
տորմի աւերը էին յարձակումով. ոմանք Պօնապարդին եռեկն
դայեր էին Լօտիի կամրջին վրայէն անցնելով. ոմանք Մի-
բայլին ընկերացեր էին Մանթուայի խրամին մէջ, և ոմանք
ալ Մօնթէպէլլօյի խոր Ճամբուն մէջ Լանը եռևնին ձգելով
առաջ անցած էին։ Անատեռնուան բանակն ամբողջապէս հոն
էր հեռւակ ըօրայ գունդէ կամ խումբէ մը ներկայուելով
և պահպանելով ընաբոլէոն 'ի հանդիսս։ Մանաւանդ թէ
այն շքեղ ժամանակն էր այս ուր մեծ բանակն եռևը Մա-
րէնկոյի յաղթութիւնը, առջևն ալ Աւստերլիցի յաղթութիւնն
ունէր։

— Վեհափառ տէր, ըսաւ ներքին պաշտօնեան Նաբոլէօ-
նին, երեկ ձեր կայսրութեան ամենէն աներկիւղ մարդը
տեսայ։

— Ո՞վ է այդ մարդը, ըսաւ հետաքրութեամբ կայսրը, և
ինչ կընէ։

— Բան մ'ընել կուզէ, վեհափառ տէր։
— Ի՞նչ։
— Բարիզի կոյուղիները քննել։
Այսպիսի մարդ մը կար իրօք, և անունն էր Պրիւնզօ։

ԳԼՈՒԽ Գ։

ԱՆԾԱՆՕԹ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔՆՆՈՒԹԻՒՆՆ եղաւ, քննութիւն որ ահարկու կրնա-
մը, ժանտախտին և անշնչութեան դէմ դիշերային պատե-
րազմ մ'ու միանդամայն անծանօթ իրեր դտնելու ճամբոր-
դութիւն մ'եղաւ։

Այս քննութիւնն ընողներէն կէնդանի մնացող խելացի
բանուոր մ'որ անատեն տակաւին գրեթէ պատանի մ'էր, դեռ
քանի մը տարի առաջ կը պատմէր քննութեան այն հետա-
քրքրական պարագաները զոր Պրիւնզօ վարչական ոճին ան-
արժան համարելով չուզած էր յիշել ոստիկանութեան պաշ-
տօնէին տուած տեղեկագրին մէջ։ Անատեն խիստ պակասա-
ւոր էին օդին ապականութիւնը մաքրելու միջոցները։ Պրիւն-
զօ հազիւ հազ տասրերկրեայ յանցին առաջին յօդերէն ան-
ցած էր և ահա քսան բանուորներուն ուղը մերժեցին աւելի
հեռի երթալ։ Գործողութիւնը խառնաշփոթ էր. քննութիւնը
կը պահանջէր նախ մաքրել կոյուղին. հարկ էր ուրեմն մաք-
րել ու միանդամայն չափել. Ջուրի մուտքերը նշանակել,
վանդակները և ծակերը համրել, Ճիւղերը մանրամասնաբար
դուցուցանել, հոսանքները և անոնց բաժանումի կէտերը նշա-
նակել, զանազան աւազաններուն սահմանները զատ զատ ո-
րոշել, գլխաւոր կոյուղիին վրայ պատուաստեալ պզտի կո-
յուղիներու խորութիւնը քննել, ամեն մէկ փողին մինչև իր
վրան ծածկող դմբեթին բարձրութիւնը չափել, չափելով
միանդամայն ամեն մէկ փողին թէ՛ իր դմբեթի սկզբնակետը և

թէ շաղախակազմ յատակներու (radier)* հարթութեամբն ու նեցած լայնութիւնը· վերջապէս թէ կոյուղիին շաղախակազմ յատակին և թէ փողոցի պետնին իւրաքանչիւր ջրաբերանի ուղղութեամբը հարթուելով ունենալիք շառաւիղները որոշել։ Ժուռարութեամբ կը յառաջանային Պրիւնզօ և իր ընկերները։ Գրեթէ շատ անգամ իջումի սանդուղները մինչև երեք ոտք կընկղմին տղմին մէջ։ Կանթեղները կը հոգեվարէին դարշահոտութեանց մէջ։ Մերթ ընդ մերթ կոյուղի մաքրողներուն մին նուաղելով կը տարուէր։ Տեղ տեղ ալ դառնաններ կային։ Գետինը կքած, սալայատակը փլուած, կոյուղին ալ անընդախոր հորի փոխուած էր· ալ հաստատուն տեղ չէր դտնուեր· մարդ մ'անելևոյթ եղաւ յանկարծ, և մեծ դժուարութեամբ կարելի եղաւ հանել զինքը։ Փուրդրօյի խրատին համեմատ՝ անջրպետ յանջրպետ, բաւական մաքրուած տեղերը ռեահինով թրջուած խծուծներով լի մեծ վանդակներ կը վառուէին։ Պատերը ծածկուած էին ածև սպունգներով որք կարծես թէ ելունդներ էին· քարն անդամ հիւանդ կերևար այս անշնչելի միջավայրը։

Պրիւնզօ իր կոյուղիները վերի կողմէն դէպ 'ի վայր պնակով քննեց։ Երբ հասաւ Կրան–Հիւրէօրի երկու ջրուղիներուն (conduite d'eau) բաժանման կէտը, ցցուած քարի մը վրայ կրցաւ 1550 թուականը կարդալ։ Այս քարը կը նշանակէր այն սահմանը ուր կանգ առած էր Փիլիպէր Տելորմ, որ Հանրի Բ·ին հրամանաւ Թարիզի ստորերկրեայ ճամբաները քննած էր։ Այս քարը վերստաստանելորդ դարէն կոյուղիին դրուած նշանն էր։

Պրիւնզօ ևս տասնուեօթերորդ դարուն ձեռագործը գտաւ Բօնսօյի և Վիէյլ–տիւ–Թամբլը փողոցի կոյուղիներուն մէջ որոնց գմբէթները 1600էն 1650ի միջոցին շինուած են· նաև տասնուեօթերորդ դարու ձեռագործը գտաւ կոյուղիներուն ընդ

* Հաստատութիւն չունեցող գետնի մը վրայ կրով, աւազով և խիճով խառն շաղախով շինուած արուեստական յատակ որու վրայ կոյուղի, կամուրջ և այլ կը շինուին։

դունարան ջրմուղին (canal collecteur) արևմտեան բաժնին մէջ, որու երկու կողմին պատերն և վրայի գմբէթը 1740ին շինուեցան։ Այս երկու գմբէթները, նա մանաւանդ նորագոյնը, այն որ 1740ին շինուած է՝ աւելի ձեղքրտուած և փլիլած էին քանթէ միջին կոյուղիին պատերն որք 1412ին շինուած են, այսինքն այն թուականին ուր Մէնիլ Մօնթանի հոսուն ջուրի (eau vive) վտակը Բարիզի Մեծ կոյուղիի աստիճանին բարձրացաւ· այս յառաջդիմութիւնը գիւղացիի մը թաղաւորին առաջին սենեկապանը ըլլալուն կը նմանի· այդօ–ժանին Լըպէլի կերպարանքն առնելուն նման գան մը։

Հոն հոս, մասնաւորապէս Արդարութեան Պալատնաստունին ներքև կարծուեցաւ նշմարել նոյն իսկ կոյուղիին մէջ բացուած հին գնդանները տեղը։ Սոսկալի ինքնէներ։ Այս գնդաններուն ամենքն ալ՝ որոնց մէկէն երկաթէ անուր մը կախուած էր՝ պատերով գոցուեցան։ Քանի մը տարօրինակ բաներ ալ գտնուեցան, ասոնց միջ էր 1800ին Ռուսական Պարէզէնն աներևութացող օրանկ–ուտանի մը կմախքը։ Հաւանական է թէ այս կապիկին աներևութիւնը յարաբերութիւն ունէր տասնութերորդ դարու վերջին տարին Տէ Պէրնարտէն փողոցին մէջ տեսնուող սատանային հոչակաւոր և անկասկած երևումին հետ։ Խեղճ սատանան հաւսկ յետոյ կոյուղիին մէջ խղդուած էր։

Դէպ Արշ–Մարիուն յանդող կամարակապ և երկայն կոյուղիին տակը քրջաժողովի կողով մը գտնուեցաւ որ կատարելապէս պահուած էր և որ Ճանչցողներուն զարմանքը պրաւեց։ Ամեն ուրեք տղմին մէջ զոր կոյուղի մաքրողներն ալ աներկիւղութեամբ կը խառնէին և քննէին՝ շատ մ'ոսկեղէն և արծաթեղէն զարդեր, ապամանդներ, դրամներ և ուրիշ թանկագին բաներ կային։ Հակայ մ'երթէ գտնելու ըլլար այս կոյանոցը, գարերու հարստութիւնը պիտի ունենար իր մաղին մէջ։ Թամբլը և Սէնթ–Ամոյ փողոցներու երկու ձիւղերուն բաժնուիլ սկսած տեղը բողոքականի պղնձեայ տարօրի-

նակ շքադրամ մը պտնուեցաւ, որու մէկ կողմը խոզ մը կար կարգինալի գլխարկ դրուած, միւս կողմն ալ գայլ մը՝ գլուխը բարին խոյրը դրուած:

Բայց ամենէն աւելի զարմանալի բան մը Մեծ կոյուղիին բերանը պտնուեցաւ: Այս բերանը ժամանակաւ վանդակով մը գոցուած էր որու ծխնիները ծածկեր էին միայն: Այս ծխնիներուն մէկէն տձեւ և կեղտոտ քուրջ մը կախուած էր որ անշուշտ անկէ անցնելու միջոցին կանկ առած էր և որ հոն մնացին կը ծփար և բոլորովին պատռտուելէ կսկսէր: Պրիւնզօ իր կանթեղը մօտեցնելով քննեց այս քուրջը: Խիստ ընտիր տեսակէն բարակ կտաւ մ'էր այն որու անկիւններուն մին՝ որ միւսներէն նուազ մաշուած էր՝ կնքադիտական թագ մը կը նշմարուէր ան ԼԱՎ. ՊԻՍՐ տառերուն վերեւը դրծուած: Թագը մարքիզի թագ մ'էր և այն եօթ տառերը կը նշանակէն Լօպէսքէն: Հասկցուեցաւ վերջապէս թէ այս կտաւը Մարայի պատանքին մէկ պատառն էր: Մարա երիտասարդութեանը ժամանակ սիրային յարաբերութիւն ունեցած էր, այսինքն այն միջոցին ուր Տ'Արթուա կոմսին տունի մարդերուն մին էր իբր ախոռներուն բժիշկը:

Միայն այս անկողնի սաւանը ձեացած էր Մարայինն՝ աղնուական տիկնոջ մը հետ ունեցած իր այն սիրային յարաբերութիւններէն զոր պատմութիւնը կը հաստատէ: Այս սաւանը թերեւս կորսուած և իրեն ձեացած բան մ'էր և կամ թէ յիշատակ մը: Երբ մեռաւ Մարա, իր տանը մէջ այս փոքր ինչ բարակ ձերմակեղէնը պտնուած ըլլալով, իր դիակին անոր մէջ թաղուած էր: Պառաւ կիներ ժողովուրդին ողբալի բարեկամը՝ թաղելու համար՝ այս խանձարուրով պատած էին, խանձարուր որու վրայ հեշտութիւն եղած էր: Պրիւնզօ անդին անցաւ: Այս քուրջն իր կեցած տեղը ձգուեցաւ. ոչ ոք ջնջեց զայն: Արհամարհանք մ'էր այս թէ յարգանք: Մարա երկուքին ալ արժանի էր: Մանաւանդ թէ ձակատագիրն այս քուրջին վրայ բաւական դրոշմուած ըլլալով ոչ ոք

վարանեցաւ դպնալու անոր: Մանաւանդ թէ դերեզմանին քերուն պէտք է թողուլ այն տեղը զոր իրենք կընարեն: Վերջապէս տարօրինակ բան մ'էր այս կտաւի ձեացորդը, որու մէջ մարքիզուհի մը քնացած, իսկ Մարա փռած էր, և որ բանթէօնէն անցած էր կոյուղին նետուելու և մուկերէն կրծուելու համար: Ննջարանի այս քուրջն որու բոլոր ծալքը ժամանակաւ Վաթօ ուղէր թերևս ղուարթութեամբ ուրուագրել, հուսկ յետոյ Տանթէի ակնայեաց նայուածքին արժանի եղած էր:

Բարիզի տարերկրեայ և աղբային ձամբաներու ամբողջ քննութիւնը եօթը տարի, այսինքն 1805էն մինչև 1812 տևեց: Պրիւնզօ կը քայլէր ու միանդամայն կարևոր գործեր կը նշանակէր, կը հսկէր և կը վերջացնէր: 1808ին Բօնաբարթ կոյուղիին շաղախակազմ յատակը կը ցածցուներ, և՝ ամենուրեք նոր գիծեր հաստատելով՝ կոյուղին 1809ին՝ Սէն-Տընի փողոցին տակը մինչև Տէզ-Ինօսանի աղբիւրը, 1810ին Փրուամանթօ փողոցին և Սալպէթրիէրի տակը, 1811ին Նէօվ-Տէ-Բրթի-Թէր, Տիւ Մէզ, Տէ Լ'Էշարբ փողոցներուն և արքայական հրապարակին տակը, 1812ին ալ Տը Լա Բէ փողոցին և Տանթէն սալարկին տակը կը մղէր: Միանդամայն կոյուղիներուն ապահանակիր օդը կը բառնար և անոնց բոլոր ցանցը կը մաքրէր: Երկրորդ տարին Պրիւնզօ հետն առած էր իր փեսան՝ Տարկօ:

Հին ընկերութիւնը ներկայ դարուս սկիզբն ահա այսպէս մաքրեց իր կրկնայարկը և զարդարեց իր կոյուղին: Միշտ մաքրուեցաւ կոյուղին:

Բարիզի հին կոյուղին՝ եթէ անցեալին մէջ դիտուի՝ մանուածապատ, փլիլուն, քարայատակները քակուած, տեղ տեղ ճահիճներէ կարուած, այլանդակ անկիւններուն ան հաւասար, առանց բանաւոր պատճառի ելնող և իջնող, վիթխարաւոր քարայատակներով, կեղեքուն պատերով, գարշահոտ, վայրենական, անագորոյն, մթապատ և զարհուրելի կոյուղե

մ'էր, ուր կային դէպ ամէն կողմ ձգուած ձիւղեր, խոռոչ-
ներու խառնուրդներ, բազմաձղի ճամբաներ, քառուղիի բե-
բաններ, կիսք ճամբաներու՝ ինչպէս է խրամներու կիսքը,
աղիքի նման խողովակներ, անել ճամբաներ, բորակաւոր
դմբէթներ, ապականակիր ջրփոսներ, որքինոտ որմերուն վրայ
գարշահոտ ծորումներ, ձեղուններէ կաթող շիթեր և թանձ-
րամած մթութիւն մը· ոչինչ կրնար այնքան սարսափելի ըլ-
լալ որքան էր այս հին և ապականութիւն ծծող պեռնա-
փորը, որ Բաբելոնի մարսողական գործարանն էր, որ այր,
փոս, փողոցներէ ծակուած վիհ, և խլուրդներու աիտանեան
բնակարան մ'էր ուր միաքը մութին կը կարծէ տեսնել ա-
հագին և կոյր խլուրդի մ'այնինքն անդնդալին աղբերու մէջ
թափառիլը, աղբեր որք ժամանակաւ շքեղութիւն կազմեր էին:

Կը կրկնենք թէ ասի հին ժամանակի կոյուղին էր:

ԳԼՈՒԽ Ե.

ՑԵՒԱԶԻՄՈՒԹԻՒՆ ԵՐԻՒ

Չիմա կոյուղին մաքուր, յուրա, ուղիղ և կոկիկ է: Ինչ որ կը նշանակէ «յարդելի» բառն Անգլիայի մէջ, նոյ-
նին տեսլականը իրական եղած է Բարիզի արդի կոյուղիին
մէջ: Այս տղմային ճամբաները հիմա վայելուչ և թխորակ
(grisâtre), կատարեալ ուղիղ, և՝ թէեւս ներելի ըլլայ
ըսել թէ՝ սեթևեթով զարդարուած կոյանոց մը կը կազմեն:
Ցէրութեան խորհրդական եղած համբարակապետի մը կը
նմանի այն: Գրեթէ լուսաւոր է ներսը: Ցեխը վայելչապէս
կը բնակի հոն: Ի սկզբան թերեւս առանց դիտելու կարծես
թէ այն գեղատիպ նեղ ճամբաներուն մին է որք միապես-
ներու և իշխաններու փախստեան խիստ յարմար և օգտակար
էին ժամանակաւ, այսինքն այն հին ժամանակները «ուր ժո-
ղովուրդը կը սիրէր իր թագաւորները»: Արդի կոյուղին գե-
ղեցիկ կոյուղի մ'է, և յստակ ոճով շինուած· դասական

ուղղագիծ ալէքսանդրեանը որ՝ բանաստեղծութենէ արտաք-
սուելով ճարտարապետութեան մէջ պատսպարուած կերեւայ՝
կարծես թէ այս խաւարին և սպիտականման երկայն դմբէթին
ամէն քարերուն հետ խառնուած է· մէն մի ջրմուղ կամար
մ'է· Բիվոլիի փողոցը կոյանոցին մէջ անդամ դպրոց կը կազ-
մէ: Մանաւանդ որ եթէ երկրաչափական գիծը պէտք է որ
տեղ մ'ըլլայ, հարկաւ այս տեղն է մեծ քաղաքի մ'աղբա-
յին փոսին մէջը: Կոյուղիի մը մէջ ամէն բանէ աւելի ճամ-
բաներու կարճութեան հոգ տանիլ պէտք է: Կոյուղին այսօր
կերպիւ իւիք պաշտօնական տեսք մ'առած է: Ոստիկանու-
թեան տեղեկագիրներն անդամ որու երբեմն առարկան կըլ-
լայ այն՝ ալ յարդանօք կը խօսին իր վրայ: Կոյուղիին մաս-
նաւոր բառերը վարչական լեզուին մէջ վայել և շուք կառ-
նուն հիմա: Ինչ որ աղբուղի կանուանէը առենօք, հիմա
անդք կանուանի· ինչ որ ծակ կանուանէը առենօք, հիմա
պատուհան կանուանի: Վիլլօն (աւազակը) թերեւս չճանչնայ
իր պահեստի հին բնակարանը: Այս գեղանափորներու ցանցը
միշտ ունի իր հինաւուրց կրծող բնակիչները որք մշտնջենա-
պէս կը վխտան· մերթ ընդ մերթ մուկ մը, հինօրեայ պեխով
մուկ մը կոյուղիին պատուհանէն կը համարձակի դուրս հա-
նելու գլուխը և կը քննէ բարիզցիները· բայց այս գեղուհին
անդամ կընտելանայ, վասն զի գոհ է իր սաոբերկրեայ պա-
լատէն: Կոյանոցի աւաջուան պէս անպուճ չէ բնաւ: Անձրևը
հին կոյուղին կաղտոտէր այլ հիմակուան կոյուղին կը լուայ:
Սակայն դարձեալ մի վխտաիր արդի կոյուղիին: Գարշահո-
տութիւնները տակաւին կը բնակին անոր մէջ: Աւելի կիղձա-
ւոր է քանթէ անսպատանելի: Ոստիկանութեան պաշտօնատունը
և քաղաքային մաքրութեան մանաժորին ինչ կուզեն թող
ընեն, մաքրութեան համար որքան միջոցներ ալ գործադրեն,
գարձեալ կոյուղին կասկածելի և անորոշ հոտ մը կարտա-
քուրէ, ինչպէս կեղծաւորը՝ խոստովանանքէն ետք:

Բայց քանի որ կոյուղին աղբերն աւելով քաղաքակրթու-

թեան յարդական ծառայութիւն մը կը մատուցանէ, և քանի որ՝ այս տեսութեամբ նկատուելով՝ կեղծաւորին խիղճը յառաջդիմութիւն մ'է Օժիասի ախոռներուն քով, կը հաւանինք թէ իրօք Բարիզի կոյուղին բարւոքեցաւ։

Այս բարւոքումը յառաջդիմութենէ մ'աւելի է, հիմնական փոփոխում է այն։ Ցեղափոխութիւն մը կայ հին կոյուղիին և արդի կոյուղիին մէջ։ Ո՛վ ըրաւ այս յեղափոխութիւնը։

Այն մարդը զոր ամէն մարդ կը մտնայ և զոր անուանեցինք արգէն այսինքն Պրիւնզօ։

ԳԼՈՒԽ Զ.

ՆՊԱՏԱԿ ՑԱԲԱՂԻՄՈՒԹԻՒՆ

Բարիզի կոյուղիին պեղումը պզտիկ գործ մը չեղաւ։ Վերջին տաս դարերն աշխատեցան պեղելու զայն՝ առանց վերջացնել կարենալու, ինչպէս որ չկրցան լմնցնել նաև Բարիզը։ Իրօք կոյուղին Բարիզի ամէն ընդդիմահարութիւններուն դէմ ամենաբարկի։ Գետնին տակ հազարաւոր եղջիւրներով սեռակ մը խաւարային բազմահաւան մ'է այն որ կը մեծնայ երբ որ քաղաքն ալ վերէն կը մեծնայ։ Երբ որ քաղաքին մէջ փողոց մը կը բացուի, կոյուղին ալ ճիւղ մը կը ձգէ։ Հին միապետութիւնը քսաներեք հազար երեք հարիւր մեթրօ կոյուղիներ շինած էր միայն։ 1806 յունվարի 1ին այսքան էին ահա Բարիզի կոյուղիները։ Այս թուականէն սկսեալ դործն օգտակար և աղդու կերպով մը վերսկսին սկսաւ և շարունակուեցաւ։ Նաբոլէոն, — հետաքրքրական են թիւերը, — չորս հազար ութը հարիւր չորս մեթրօ, Շարլը Ժ. տասը հազար ութը հարիւր երսունը վեց մեթրօ, Լուի-Ֆիլիպը ութսունը ինը հազար քսան, 1848ի հանրապետութիւնը քսաներեք հազար երեք հարիւր ութսունը մէկ, արդի վարչութիւնն ալ եօթանասուն հազար հինդ հարիւր մեթրօ շինեց։ Հիմակ ամենը մէկ երկու հարիւր քսանը վեց հազար

վեց հարիւր տաս մեթրօ, այսինքն վաթսուն մղոն կոյուղի կայ։ ահագին աղիք Բարիզի։ Մեծին Ճիւղերը որ միշտ կը դործեն. անծանօթ և անբաւ շինութիւն։

Ինչպէս կը տեսնուի, Բարիզի ստորերկրեայ լափիւրինթոսն այսօր տասնապատիկ աւելի է քան ինչ որ էր դարուս ընկիզբը։ Դժուարաւ կրնանք երևակայել թէ որքան յարատեւութիւն և ջանք պէտք եղաւ այս կոյանոցն իր արդի յարաբերական կատարելագործութեան աստիճանը բերելու համար։ Հին միապետական վերակացութիւնը և՝ տասնութերորդ դարու վերջին տարուան միջոցին՝ յեղափոխական քաղաքապետութիւնը մեծ աշխատանքով յաջողեր էին ծակել այն հինգ մղոն կոյուղիները որք կային 1806էն առաջ։ Այս գործողութեան արդելք կըլլային ամէն տեսակ խոչընդոտներ որոնցմէ մէկ քանին հողին տեսակին յատուկ, մէկ քանին ալ նոյն իսկ Բարիզի աշխատասէր բնակչաց նախապաշարումներուն յարկից էր։ Բարիզ շինուած է այնպիսի երկրային խաւի մը վրայ որ տարօրինակ կերպով մը կը դիմադրէ բրիչին, բահին, խորաչափին, մարդկային ջոչափուկին։ Զկայ բան մը զոր այնքան դժուարին ըլլայ ծակել և թափանցել որքան է այն երկրաբանական կազմութիւնը որու վրայ դրուած է Բարիզ, պատմական հրաշալի կազմութիւն մը։ Երբ աշխատութիւնը՝ այս կամ այն ձևով՝ այս ցամքած երկիրներու (alluvion) ծածկոյթին մէջը կը մտնէ և կը յառաջանայ, ստորերկրային դիմադրութիւնները կը շատնան։ Այս դիմադրութիւններն են հեղուկ կաւեր, կենդանի ակներ, կարծր ժայռեր, և այն թոյլ ու խորունկ սիկերը զոր յատուկ դիտութիւնը ֆոնտաթ կանուանէ։ Քարհատը մեծ դժուարութեամբ կը յառաջանայ կրային (calcaire) թիթեղներու մէջ ուր իրարու կը յաջորդեն կաւի ամենանուրբ թելերը և թերթաւոր (schisteux) խաւեր որոնց թերթերուն վրայ նախադամեան ովկիանոսներու ժամանակակից ոստրէներու խեցիներ ազուցուած են։

Ներքեւի փողոցի ուղիս մը յանկարծ կը պատռէ սկսուած գմբէթի մը և բանուորները կողոզէ· կամ թէ ձահիճի մը ջուրերն անցք մը կը գտնեն և ջրվէժի մը կատղութեամբ կը խուժեն ապակիի պէս խորտակելով իրը նեցուկ դրուած ամենէն ահագին գերանները։ Դեռ մօտ ժամանակներս Վիլլէթի մէջ երբ հարկ եղաւ Սէն-Մարթէնի ջրմուղին տակէն անցնել ընդունարան կոյուղին՝ առանց ընդհատելու նաւարկութիւնը և առանց ջրմուղը պարպելու ձեղք մը բացուեցաւ ջրմուղին կոնքին մէջ, և ջուրերը յանկարծ ստորերկրեայ աւազանին մէջը յորդեցան· այնքան շատ կը յորդէր ջուրը որ ջրհանները չէին յաջողեր սպառել զայն· հարկ եղաւ որ լուղորդ մ'ընկղմելով փնտռէ ձեղքը որ մեծ աւազանին կրձին մէջն էր և որ բաւական դժուարութեամբ գոցուեցաւ։

Ուրիշ տեղեր ալ, Սէն գետին քովերը և գետէն բաւական հեռի տեղեր, ինչպէս են Պէլվիլ, Կրանտ Բիւ և Բասաժ Լիւնիէր, անդնդային աւազներ կան ուր մարդ կը խրի և կրնայ աչքիդ առջև սուզիլ։ Այս արգելներուն վրայ աւելցուր նաև քանուորին դարշահոտութիւններէ սնչնչանալը, փլուզմներէ թաղուիլը և հողին յանկարծական կքումները։ Մի մտնար նաև թիֆոզը որով բանուորները յամրաբար կը տոգորին։ Այս տեսակ շինութիւններու առաջնորդող մարդ մը, որ էր Տօնօ, տասնուհինգ կանգուն խորութեամբ խրամ փորելով և աշխատելով Քլիշիի ստորերկրեայ կոյուղին բանալէն, նաև Ուրգի գլխաւոր ջրուղիի մը համար քովէն ուրիշ անցք մը բանալէն ետք· պեղումներու՝ որք շատ անգամ դարշահոտ էին՝ և նեցուկներու շնորհիւ, առանց փլուզմներէ վհատելու՝ Պիէվրը՝ Օրլեանի պուլվարէն մինչև Սէն գետը գմբեթաւորելէն ետք· Բարիզը՝ Մօնմարթրի հեղեղային ջուրերէն ազատելու և Տէ Մարթիր քաղաքագլուխին քով տասնութ արտաւարի տարածութեան մը վրայ դարշահոտութեամբ օդը ապականող այս գետային ձահիճը հոսեցնելու համար Գլանշի գուռէն մինչև Օպէրվիլիէի ճամբան կոյուղիները շինելէն ետք,

կոյուղիները զոր չորս ամիսուան մէջ, գիշեր ու ցորեկ աշխատելով և տասնուհինգ մեթրօ խորութեամբ խրամ բանալով շինեց· վերջապէս՝ առանց խրամ բանալու և վեց մեթրօ խորութեամբ գետնին տակէն աշխատելով, — և այս կերպով կոյուղի մը շինուիլը տակաւին տեսնուած բան չէ, — Պարսիւ պէքի փողոցին տակ ստորերկրային կոյուղի մը շինեցէք ետք՝ մնաս։ Նոյնպէս Տիզօ ճարտարապետը՝ Թրաւէրսիէր-Սէնթ-Անթուան փողոցէն մինչև Ուրսին փողոցը քաղքին ամէն կողմերը երեք հազար մեթրի չափ կոյուղիներու գմբեթները շինեցէք, Սանսիէ-Մուֆթար քաղաղիին անձրեւային ողողումները Արպալէթի կոյուղին հոսեցնելէն, հոսանուտ աւազներու մէջ քարի և շաղախի վրայ Սէն-Ժէօրժի կոյուղին շինեցէք, և վերջապէս Նօթրը Տամ Տը Լաղարէթի կոյուղիի ճիւղին շաղախակապ յատակը ցածցնելու համար աշխատութիւններու հսկեցէք ետք մնաս։ Օրաթերթ չհրատարակուիր այս քաջազործութիւններու համար, որք սակայն աւելի օգտակար են քանթէ պատերազմի դաշտին յիմարական սպանութիւնները։

1832ին Բարիզի կոյուղիները տակաւին չէին ինչ որ են այսօր։ Պրիւնզօ շարժումը տուած էր, բայց պէտք էր գօլերան գալ որպէս զի որոշուէր շինուիլ այն ընդարձակ կոյուղիներն որք այս համաճարակ հիւանդութենէ՝ ի վեր շինուեցան։ Զարմանալով կը պարտաւորինք ըսել թէ՝ օրինակի աղագաւ՝ 1821ին Տէ Կուրա փողոցը կրան գտնալ (Մեծ Ջրմուղ) ըսուած միջին կոյուղիին մէկ մասը բաց ձգուած էր և տակաւին կը նեխէր, ինչպէս Վենեսիկի մէջ։ Բարիզի քնակիչները 1823ին միայն իրենց քսակին մէջ գտան երկու հարիւր վաթսունը վեց հազար ուրսուն ֆրանքը և վեց հարիւրորդը որք հարկաւոր էին այս խայտառակութիւնը ծածկելու համար։

Գօմպայի, Գիւնէթի և Սէն-Մանտէի երեք ծծիլ հորերն, իրենց ջրմուղներովը, գործիքներովը, ջրփոսներովը և զտիչ

Ֆիւղերովը 1836ին շինուած են: Բարիզի ազիքը կազմող Ճամբաները 'ի նորուստ շինուելեան և՝ ինչպէս ըսինք արդէն՝ քանուհինդ տարիէն 'ի վեր տասնապատիկ և առաւել ևս բազմացան:

Ասկէ երսուն տարի առաջ, յունիսի 3ին և 6ին ապստամբութեան ժամանակ շատ տեղերու կոյուղին տակաւին հինն կոյուղին էր: Բազմաթիւ փողոցներ՝ որք այսօր կամարաձև շինուած են՝ այն ժամանակ Ճեղքուած սալարկներ էին: Շատ անգամ հաստ սիւնակներով շինուած երկաթէ լայն վանդակներ կը տեսնուէին այն զառիվայրները ուր կը յանդէին փողոցի մը կամ քառուղիի բերանին զառիթափները· այս վանդակներն՝ որոնց երկաթը բազմութեան քայլէն յղկուելով կը փայլէր՝ կառքերու համար վտանգաւոր և լպրծուն էին, և ձիերուն անկման պատճառ կըլլային: Կամուրջներու և սալարկներու պաշտօնական լեզուն փողոցի այս զառիվայրներուն և վանդակներուն Խոջոակէ (Cassis) յայտարար անունը կուտար: 1832ին Էթուալ, Սէն-Լուի, Թամիլը, Վիէյլ-Տիւ-Թամիլը, Նօթրը Տամ Տը Նազարէթ, Ֆօլի-Մէրիկուր, Քէ-օ-Ֆլէօր, Բրեթի-Միւսդ, Նօրմանտի, Բօն-օ-Պիզ և Մարէ փողոցներուն, Սէն-Մարթէն արուարձանին, Նօթրը-Տամ-օ-Վիկթուար փողոցին, Մօնմարթրի արուարձանին, Կրանժ-Պաթելիէր փողոցին, Շանզ-Էլիզէի, Ժապօր և Թուրնօն փողոցներուն մէջ և ուրիշ շատ տեղեր կոթնակ հին կոյանոցը տակաւին լրբութեամբ կը ցուցուներ իր ամհի բերանները: Ասոնք վրանին բաց քարաշէն ահագին վիհեր էին զոր երբեմն մեծ քարեր կը ղրկապատէին յիշատակարանաց յատուկ անանմանութեամբ մը:

1806ին Բարիզի կոյուղիներուն թիւը 1663 մայիսի մէջ ստուգուած թիւին չափ էր գրեթէ, այսինքն հինգ հազար երեք հարիւր քանուհթ գրկաչափ: Պրիւնզօյէն ետք՝ 1832 յունվարի 1ին քառասուն հազար երեք հարիւր մեթրի հասաւ կոյուղիներու քանակութեան թիւը: 1806էն մինչև 1831՝ միջին հաշիւով ամեն տարի եօթը հարիւր յիսուն մեթրօ շինուած էր· անկէ ետք ամեն տարի ութը հազարէն մինչև տասը հազար մեթրօ կոյուղի շինուեցաւ որմերով որք ջրային կրովշաղուած մանր նիւթերով հիւսուեցան և տեսակ մը կարծր շաղախի վրայ հիմնադրուեցան: Ամեն մէկ մեթրօն երկու հարիւր ֆրանքի հաշուելով կը տեսնենք որ արդի Բարիզին վաթսուն մղոն կոյուղիները քառասունութը միլիոն ֆրանքէ արժէքն ունին:

Այն տնտեսապետական յառաջդիմութենէ 'ի զատ զոր նշանակեցինք սկիզբը, հասարակաց առողջութեան ծանր խնդիրներ վերաբերութիւն ունին Բարիզի կոյուղին ըսուած անբաւ խնդիրին հետ:

Բարիզ երկու ծածկոյթի մէջ տեղն է, ջրային ծածկոյթ մը և օդային ծածկոյթ մը: Ջրային ծածկոյթն որ գետնին տակ բաւական խորութեամբ տարածուած է և որ սակայն արդէն շոշափուած է երկու անդամ ծակ բացուելով՝ ժիւրաեան կաւիճի և կրի մէջ տեղը գետեղուած կանաչադոյն և աւազուտ հողի խաւէն կը հայթայթուի· քսանուհինդ մղոն բոլորակի հեռաւորութեամբ ափսէի մը կրնայ նմանիլ այս խաւն ուր կը ծորին շատ մը գետեր և առուներ, կրընկելի հորէն բաժակ մը ջուր խմողը Սէն, Մարն, Իօն, Ուազ, Էզնը, Շեր, Վիէն և Լուար գետերուն ջուրը խմած կըլլայ: Ջուրի ծածկոյթը առողջարար է, վասն զի նախ երկինքէն կուգայ և յետոյ գետնէն: Օդի ծածկոյթը վատառողջ է, վասն զի կոյուղիէն կարտադրի:

Կոյանոցին ամեն գարշահոտութիւնները քաղաքին ծծած օդին հետ կը խառնուին· ասկէ կը հետևի այն յոռի շնչառութիւնը: Գիտութիւնն արդէն հաստատեց թէ աղտոցի մը վերևը ծծուած օդն աւելի մաքուր է քանթէ Բարիզին վերևն առնուած օդը: Պիտի դայ ժամանակ մ'ուր յառաջդիմութիւնն օգնելով, մեքենագործութիւնը կատարելագործուելով, և լոյսը Ճառագայթելով, մարդիկ ջրեղէն ծածկոյթը

օդեղէն ծածկոյթը մաքրելու պիտի դործածեն։ Այսինքն կոյուղին լուալու։ Ընթերցողը պիտի արդէն թէ մենք կոյուղին լուալ ըսելով կը հասկնանք ահագին հեղեղ տալ հողին, և աղբերը երկրին, պարարտութիւնն ալ դաշտերուն վերադարձնել։ Այս պարզ իրողութեամբ թշուառութիւնը պիտի նուազի և առողջութիւնը պիտի աւելնայ բոլոր ընկերային հասարակութեան համար։

Այս միջոցիս Բարիզի հիւանդութիւնները Լուվրի բոլորտիքը չիսուն մղոն կը տարածուին բոլորակի հեռաւորութեամբ, Լուվրը այս դարշաբոյր անիւին իբր միջնավայրը նկատուելով։

Կրնայ ըսուիլ թէ տաս դարէ ՚ի վեր կոյանոցը Բարիզի հիւանդութիւնն է։ Կոյուղին քաղաքին արեան մէջ ախտ մ՚է։ Ծողովրդային բնաղդումը բնաւ սխալած չէ այս մասին։ Կոյապօրծութեան արուեստը ժամանակաւ ժողովուրդին համար այնքան վտանգաւոր և այնքան պժգալի էր որքան է ձիասպանութեան արուեստը որ երկար տաեն իբր սոսկալի արուեստ մը նկատուելով վերջապէս դահիճին ձգուեցաւ։ Մեծկակ վարձք տալ հարկ էր որպէս զի որմաշէն մ՚այս դարշահոտ խրամին մէջ աներևութանալու հաւանէր։ կոյապօրծին տանդուղը կը վարանէր այս խրամին մէջ ընկղմելու։ Կոյաոդին ջնջելը, ջերմցնելը դժնել է, կըսուէր ժողովուրդին մէջ, և այս խօսքը առակ եղած էր։ Եւ ինչպէս ըսինք, ամեն տեսակ սոսկալի աւանդութիւններ ահ ու սարսափով կը ծածկէին ապականութեանց այս հսկայական ընդունարանը։ ահարկու պիտի ըլլա որ՝ ինչպէս մարդերու յեղափոխութեանց, նոյնպէս և երկրագունդին յեղափոխութեանց հետքն ունի և որու մէջ ամեն հեղեղներու նշանները կը գտնուին՝ ջրհեղեղին խեցիէն սկսելով մինչև Մարայի քուրջը։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՏԻՊՄԸ, ԲԱՅՑ ՀՈԳԻՆ

ՁԱՆԸ ՎԱԼԺԱՆ

ԿՈՑՆՈՑՆ ԵՒ ԻՐ ԽՈՐԻՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ժան Վալժան ահա Բարիզի կոյուղիին մէջ կը գտնուէր։ Ծովին հետ Բարիզին ունեցած նմանութիւններուն մին ալ այս է։ Լուղորդը՝ ինչպէս ովկիանոսին՝ նոյնպէս և Բարիզի մէջ կրնայ ընկղմիլ։

Անլուր էր անցումը։ Ժան Վալժան քաղաքին մէջ տեղէն ծակ մը մտնելով քաղաքէն դուրս ելած, և ՚ի քթթել ահան խուի մը վերցուներու և վերստին դոցելու բաւղ ժամանակին մէջ պայծառ լոյսէն դէպ ՚ի կատարեալ մթութիւն, կէս օրէն դէպ ՚ի կէս գիշեր, ժխորէն դէպ ՚ի լռութիւն, որոտումներու մրրիկէն դէպ ՚ի գերեզմանական հանդարտութիւն, և՝ Բօլօնիոյի փողոցին դիպուածն աւելի զարմանալի դիպուածով մ՚ամենէն մօտալուտ վտանգէն դէպ ամենաբացարձակ ապահովութիւն անցած էր։

Այս անցումը յանկարծ նկուղի մը մէջ էյնալ, Բարիզի խորհրդաւոր կոյապին մէջ աներևութանալ էր։ տաբօրինակ վայրկեան մը եղաւ Ժան Վալժանին համար այն վայրկեանը յորում անէթողուց այս փողոցը ուր ամենուրեք մահ կար և մտաւ այս գերեզմանը ուր էր կեանքը։

Ժան Վալժան քանի մը մանրերկրորդ շուարած մնաց, մըտիկ ընելով, ապշելով։ Փրկութեան դարանը յանկարծ բացուած էր իր ներքև։ Երկնային բարութիւնը կարծես թէ դաւաճանութեամբ բռնած էր զան։ Պաշտելի որոգայթ նախախնամութեան։

Միայն թէ վիրաւորը չէր շարժեր բնաւ, և Ժան Վալժան չէր գիտեր թէ այս փոսին մէջ իր հետն առնելով տարածը կենդանի մ'էր թէ մեռեալ մը:

Իր առջի զգայութիւնն եղաւ կուրութիւնը: Ցանկարծ դադրեցաւ տեսնելէ ամէն բան: Կարծեց նաև թէ վայրկեան մը մէջ խուլցած էր: Ա'լ ոչ ինչ կը լսէր: Իր վերեւը քանի մը քայլ անդին սպանութեան կատաղի մրրիկը շղթայազերծ կը մնչէր, բայց՝ ինչպէս որ ըսինք արդէն՝ այս մնչումը կը նուազէր անորոշանայէս, և անդունդի մը մէջ շշուքի պէս կը հասնէր իր ականջին, վասն զի Թահձր գետին մը կար իր և այն մրրիկին մէջ տեղը:

Կզգար թէ հաստատուն էր կոխած տեղը: Ասկէ 'ի զատ բան մը չէր զգար, բայց այսքանը կը բաւէր: Թևին մէկը տարածեց, չետոյ միւսն ալ, և երկու կողմէն պատին դպնալով հասկցաւ թէ նեղ էր կոյուղին: Սպրդելովն ալ հասկցաւ թէ թաց էր սալայատակը: Ոտքին մէկը առաջ քշեց զգուշութեամբ մը՝ վախնալով որ ծակի մը, կոյափոսի կամ վէմ մը մէջ չիյնայ, հետևաբար հասկցաւ նաև թէ սալայատակը կերկնար: Գարշահոտ բուրում մ'իմաց տուաւ իրեն թէ ուր կը գտնուէր:

Քանի մը րոպէէն ետք Ժան Վալժան ալ կույր չէր: Փոքր ինչ լոյս կարձակուէր այն լուսանցոյցէն ուսկէ սպրդած էր, և իր նայուածքը սովրած էր այս ստորերկրեայ նկուղին: Սկսաւ բան մը նշմարել աղօտապէս: Եռանի կողմն պատռիլ մը գոյուած էր կոյանցը (couloir) որու մէջ՝ իբր հողին տակ՝ պահուած էր ինք: Հողին տակ կըսենք, վասն զի ուրիշ որ և է բան չկրնար աւելի աղէկ բացատրել Ժան Վալժանին այս վիճակը: Այս կոյանցն այն տեղ կոյանցներուն մին էր զոր մտնելուը լեզուն ճիւղ կանուանէ: Առջևն ալ ուրիշ պատ մը կար, խաւարաթոյր պատ մը: Ժան Վալժանի կանգնած տեղէն տես կամ տեսանելու քայլ անդին կը վերջանար օդամուխին լոյսը, և հազիւ հազ ժժգոյն սպիտակութիւն մը կը կազմէր կոյուղիին ներսը խոնաւ մակերեսոյթին քանի մը մեթր չափին վրայ:

Այս ժժգոյն սպիտակութեան անդիի կողմն անթափանցելի խաւար կը տիրէր: Սոսկալի կերեւար դէպ 'ի հոն յառաջանալը, և կը կարծուէր թէ այն անթափանցելի խաւարը մըտնելն անդունդի մը մէջ սուզիլ է: Սակայն կարելի էր ընկղմիլ այս միջոցին պատին մէջ, և ապահ էր ընկղմիլ: Պէտք էր նաև շտապել: Մտածեց Ժան Վալժան թէ կրնար նաև զինուորներէն նշմարուիլ այն վանդակախուփը զոր ինք նշմարած էր սալաքարերուն տակը, և թէ այս դիպուածէն կախում ունէր ամէն բան: Զինուորներն ալ կրնային հորը իջնել և խուզարկել: Ներելի չէր և ոչ իսկ րոպէ մը կորուսանել: Ժան Վալժան՝ Մարիուսը գետինը դրած ըլլալով՝ գետնէն առաւ զան, — այս բառն ալ բուն նշանակութեամբը կը գործածենք հոս, — վերսին շալկեց և սկսաւ քայլել՝ համարձակութեամբ մտաւ այն որմաձև խաւարին մէջ:

Իրօք ոչ այնքան փրկուած էին որքան կը կարծէր Ժան Վալժան: Թերևս ուրիշ աեսակ և ոչ նուազ մեծ վտանգներու պիտի ենթարկուէին: Կռիւին փալփլուն փոթորիկէն ետք զարշահոտութեանդ և ծուղակներու խոռոչը: գաոսէն ետք կոյանդյը: Ժան Վալժան դժոխքին մէկ կամարէն միւսը լինած էր:

Ցիսուն քայլ առնելէն ետք հարկ եղաւ կանգ առնուլ, վասն զի դժուարութիւն մ'երեւան եկաւ: Կոյուղիին նեղ անցքը կը չանդէր ուրիշ անցքի մ'և անոր հետ կը միանար խոտորնակի: Հոն երկու ճամբայ կը ներկայանար: Այս երկուքին որը ընտրելու էր: աՀ թէ ձախ կողմը դառնալ պէտք էր: Ինչպէս կարելի էր գտնուած տեղին չորս կողմը ճանչնալ այս խաւարամած լաբիւրինթոսին մէջ: Ինչպէս նշմարել տուինք արդէն, այս լաբիւրինթոսը մէկ թել ունէր միայն, այս լինքն իր դահիլապետը: Դահիլապետին յառաջանալով երթալը դեռ երթալ է:

Ժան Վալժան անմիջապէս հասկցաւ ասի :

Ժան Վալժան ըսաւ իւրովի· Հաւանական է թէ Հալէ կո՛ղուղինն մէջն եմ, եթէ ձախակողմը ընտրէլով զառիվայրէն երթամ, կարելի է թէ քաւորդէ մ՚ետք Բօն–օ–Շանժի և Բօն–Նէօվի մէջ տեղը Սէն դեռին վրայ կղուղիի բերան մը կը հասնիմ, այսինքն Բարիզի ամենէն բազմամարդ տեղը ցո՛րեկով երեւան կելլեմ: Կամ գուցէ բազմաձղի ձամբու մը կղուղինն բաց բերանը կը հասնիմ: Եւ ահա անցորդները պիտի շուարին՝ երկու արիւնաթաթաւ մարդերու դեռնին տակէն դուրս ելլելը տեսնելով: Քաղաքապահները պիտի գան, մօտակայ պահնորդարանը պիտի զինուի : Ելնելէս առաջ պիտի բռնուիմ: Աւելի աղէկ էր լաբիւրինթոսին մէջ սուզիլ, այս ահաւոր վտահիլ, և ելք մը գտնելու դժուարութիւնը նախախնամութեան թողուլ:

Ժան Վալժան եռ դարձաւ զառիվայրէն և աջ կողմի ճամբան մտաւ :

Նեղ անցքին անկիւնէն դառնալէն եռք օդամուխին հեռաւոր նշոյլը բոլորովին անհետացեր եղաւ· խաւարին վարագոյրը վերստին քաշուեցաւ իր առջև ու դարձեալ կուրցաւ Ժան Վալժան :

Բայց և այնպէս յառաջ գնաց , և կրցածին չափ շտապելով: Մարիուսի երկու թևերը Ժան Վալժանին վզին բոլորտիքը և ոտներն ալ եռևէն կախուած էին : Մէկ ձեռքովը վիրաւորեալ թևերը կը բռնէր , միւսովն ալ պատը կը շօշափեր : Մարիուսին այտն անոր այտին կը դպնար և արիւնաթաթաւ ըլլալուն համար կը փակչէր : Ժան Վալժան կզգար թէ իր վրայ Էքմախաւոն առուակ մը կը հոսէր և զգեստներուն տակը կանցնէր : Այս առուակը Մարիուսէն կուգար :

Սակայն Ժան Վալժան խոնաւ տաքութիւն մը զգալով ա՛կանջին քով որու կը հպէր վիրաւորին բերանը՝ հասկցաւ թէ կը շնչէ անի , և թէ հեռաւորաբար կենդանի է : Հիմակ առջևնէն նուազ նեղ էր կղուղինն անցքն ըսկսէ կը յառաջանար

Ժան Վալժան : Բաւական դժուարութեամբ կը քայլէր այս նեղ ճամբուն վրայ : Առջի օրուան անձրևին ջուրերը տակաւին հոսած չէին և պզտի հեղեղ մը կը կազմէին շաղախակալմ յատակին մէջ տեղը , ուստի ջուրին մէջէն չքայլելու համար ստիպուած էր պատին փակչելով երթալու : Այսպէս՚ի խաւարի կը յառաջանար : Կը նմանէր այն դիշերային էակներու որք անհետացիին մէջ կը խարխափեն և ստորերկրային մթութեան երակներուն մէջ կը կորսուին :

Բայց հեռաւոր լուսամուտներէն դէպ այս անթափանցելի մշուշը սակաւ ինչ աղօտ նշոյլ մը գալով , կամ թէ իր աչերն մթութեան սովորելով՝ Ժան Վալժան կամաց կամաց և անորոշապէս սկսաւ տեսնել , և գարձեալ աղօտապէս գիտեց մերթ պատը զոր կը շօշափէր , և մերթ դմբէթը որու տակէն կանցնէր : Ինքը խաւարին մէջ կը տարածի և վերջապէս լոյս կը գտնէ ձիշդ հոգիին պէս որ անբաղդութեան մէջ տառապանքով վերջապէս Աստուած կը գտնէ :

Ուղղելը գիւրին բան չէր :

Կղուղիներուն ծրագիրը կրնայ ըսուիլ թէ իր վրայի փողոցներուն ծրագրին կրկնութիւնն է : Անտեռնուան Բարիզի մէջ երկու հազար երկու հարիւր փողոց կար : Երևակայենք հիմակ այս փողոցներուն տակի այն խաւարամած ստորերու անտառը որ կանուանի կղուղի : Այն ժամանակի կղուղիները՝ եթէ մէկ մէկու ծայրը կապուէին՝ տասնումէկ մղոնի երկայնութիւն մ՚ունենայած կըլլային : Արդէն ըսինք թէ արդի կղուղիներուն ցանցը՝ վերջին երսուն տարուան մտանուր ժրութեան շնորհիւ՝ վաթսուն մղոնէն պակաս չէ :

Ժան Վալժան նախ սխալեցաւ : կարծեց թէ Սէն–Տրնի փողոցին տակն էր· երանի՛ թէ հոն ըլլար : Սէն–Տրնի փողոցին տակ հին կղուղի մը կայ որ Լուի Ժ·Ի իշխանութեան ժամանակ շինուած է և որ կերթայ ուղղակի Մեծ կղուղի ըսուած ընդհանրան կղուղին : Ուղղակի կըսենք , վասն զի աջ կողմը՝ հին Գոբ Տէ Միրոզլի վերը՝ միայն մէկ անկիւն ու-

նի, նաև մէկ ձիւղ, այսինքն Սէն-Մարթէն կոյուղին որու չորս թևերը խաչաձև կը կարեն։

Սակայն Բրթիթ-Թրիւանտըրի փողոցին կոյափողը՝ որու մուտքը Կորնթոսի կապելլոնին քովն էր՝ երբեք հաղորդակցութիւն չունեցաւ Սէն-Տընի փողոցին գետնափորին հետ. Բրթիթ-Թրիւանտըրի կոյափողը Մօնմարթրի կոյուղիին կը յանգի և ահա ժան Վալժան այս կոյուղիին մէջն էր հիմա։

Կորսուելու առիթները շատ էին Մօնմարթրի կոյուղիին մէջ, որ հին ցանցին ամենէն լաբիւրինթոսական կոյուղիներուն մին է։ Բարեբաղդաբար ժան Վալժան իր եռանը ձգած էր Տէ Հալի կոյուղին որուն երկրաչափական յատակագիծը խել մը պերանաւոր և իրեարախառն կայմերու պատկերն ունի. բայց առջևը շատ մը տաղտուկ հանդիպումներ և ուրիշ խել մը փողոցի անկիւններ ունէր, — վասն զի փողոցներ ունին այս կոյուղիները, — որք իբր հարցման պարզրներ մղմութեան մէջ կերևային. նախ՝ իր ձախ կողմն էր Բլաթրիէրի ընդարձակ կոյուղին, որ՝ իբր տեսակ մը շինական պատկերներու խառնուրդ՝ իր T և Z տառերուն նման ճիւղերուն քառսը Օթել-Տէ-Բօսթի և Հալ-օ-Պլեի դմբեթաւոր շէնքին տակէն խառնաշփոթ կերպով մը կը մղէ մինչև Սէն պետն ուր կը վերջանայ Y գրին ձևով. երկրորդ՝ իր աջակողմն էր Տիւ Փատրան գուհին կոյուղին իր երեք ակռաններուն որք անել ճամբաներ են. երրորդ՝ ձախակողմն էր նաև կոյուղին որու պրեթէ ներս մտնելու տեղը տեսակ մ'եռաժանի նման ուրիշ աւելի պզտի և խառնաշփոթ կոյուղիներ կային և որ օձապտոյտ շրջաններով կերթար կը յանգէր ամեն կողմէն բեկորներ և ճիւղեր արձակող Լուվրի մեծ կոյափողը։ Վերջապէս ձախ կողմն էր Տէ-Թէօնէօր փողոցին անել կոյուղին. ատոնցմէ 'ի զատ մանր մունր խորշեր ալ կային հոն հոս. ժան Վալժան այս ամեն բաները ճանչնալով և խառնաշփոթ կոյուղիներէն անցնելէն ետք կրնար հասնիլ մինչև կոյուղին ուսկէ միայն կարելի էր բուսական հեռի և հեռաւոր ապահով ելք մը գտնել։

Եթէ ժան Վալժան դադրեր մ'ունեցած ըլլար այս ամեն կոյուղիներուն նկատմամբ՝ մի միայն պատը շօշափելով շուտ մը պիտի կրնար նշմարել թէ Սէն-Տընի սառերկրեայ ճամբուն մէջը չէր։ Հին ժամանակի կոյուղիներուն պատերը շաղախակազմ յատակի և կրանիթէ ու կրախառն շաղախէ ընթացիկ հիմերու (assises courantes) վրայ կը շինուէին քանդակելի քարերով. այն ժամանակի ճարտարապետութիւնը նաև կոյուղիին մէջ ամրարատուան և արքայական էր, և այս կերպով շինուած պատերուն մէն մի դրկաչափը ութը հարիւր ֆրանք ծախս կը պահանջէր. արդ ժան Վալժան եթէ կոյուղիին պատը շօշափէր՝ փոխանակ քանդակելի քարեր զգալու պիտի զգար մեր ժամանակի ժժնութիւնը, տեսեսագիտական միջոցը, կարծր շաղախէ խառի վրայ կրախառն կաւով շաղուելով կազմուած երկանաքարը որու մեթրային երկու հարիւր ֆրանք ծախս կերթայ միայն, քաղաքաւորներու շինութեանց յատուկ պատ մը որ տանը նկարագրով շինուած կըսուի. բայց ժան Վալժան ամենևին տեղեկութիւն չունէր այս մասին։

Կը յառաջանար առանց պիտանալու ուր երթալը, անձկութեամբ այլ հանգարտութեամբ քայլելով, բան մը չտեսնելով, բան մը չգիտնալով և դիպուածին մէջ ընկղմելով այն ինքն նախախնամութեան ապաւինելով։

Կը պարտաւորինք ըսել սակայն թէ ժան Վալժան տարօրինակ մը կը համակուէր աստիճանաբար։ Ձինք շրջապատող մթութիւնը կսկսէր իր միտքը մտնել։ ժան Վալժան հանգստութեան մէջ կը քայլէր։ Կոյանոցին այս ջրմուղն ահարկու է. ամենաբարի իրարու կը խառնուին իր ամեն ճիղերը. սովորական բան մ'է այս խառնարային Բարիզին մէջ նետուած ըլլալը։ ժան Վալժան ստիպուած էր պտնելու և գրեթէ հնարելու իր ճամբան՝ առանց տեսնելու զայն։ Այս անդիպուածին մէջ կրնար յետինն ըլլալ իր ամեն մէկ քայլը։ Ի՞նչպէս պիտի ելնէր անկէ. ելք մը պիտի գտնէր. յարմար ժամանակին պիտի գտնէր. քարաշէն ծակեր ունեցող այս ըս-

տորերիրեայ ահագին սպասնդը պիտի թողնուր որ ժան վալ-
ժան իր մէջը մտնէ և ձամբայ մը բռնալով անցնի։ Մթու-
թեան մէջ անակնկալ հանգոյց մը պիտի հանդիպէր. պիտի
հասնէր այնպիսի տեղ մ'ուսկէ պրծիլն և անցնիլն անհնա-
րին է։ Մարիուս՝ արեան հոսումէն և ինքն անօթութենէ
պիտի մեռնէին արդեօք. վերջապէս երիւրքն ալ հոն պիտի
կորսուէին և այս խաւարամած անդունդին մէկ անկիւնը մնա-
լով երիւս կմախք պիտի կազմէին արդեօք։ Ժան վալժան
ասոնց և ոչ միւն պիտէր։ Իւրովի կը հարցուներ այս ամենը
և չէր կրնար ինքն իրեն պատասխանել։ Խարիզի աղիքն ան-
դունդ մ'է։ Ցոզնան մարգարէին պէս դաղանին փորին մէջն
էր։

Ցանկարծ զարմանք մ'եկաւ վրան։ Եղաւ անակնկալ բոպէ
մ'ուր՝ առանց դադրած ըլլալու դէպ առաջ քայլելէ՝ նշմարեց
թէ ալ վեր չէր ելներ. ուղիին ջուրը՝ փոխանակ առջևի կող-
մէն գալու՝ և իր ոտներուն ծայրը թրջելու՝ ետևէն կուգար
և իր ներբաններէը կը թրջէր։ Կոյուղին հիմա դէպ 'ի վայր
կը տանէր։ Ինչու համար. Ժան վալժան միթէ յանկարծ սէն
դետը պիտի հասնէր։ Մեծ էր այս վտանգը, բայց նահան-
ջելու վտանգն աւելի մեծ էր։ Ինչ և է, Ժան վալժան չը
դադրեցաւ յառաջանալէ։

Սակայն այս կոյուղին՝ ուսկէ կը յառաջանար Ժան վալ-
ժան՝ դէպ 'ի սէն չէր յանդեր։

Խարիզի գետինը սէնի աջակողմեան եզերին վրայ էշի կռնա-
կի մը պէս երկակողմանի զառիվայր մը կը կազմէ, որու մէկ
կողմին ջուրերը գետը, միւս կողմին ջուրերն ալ մեծ կոյու-
ղին կը թափին. այս երիւս զառիվայրերուն կատարը՝ ուր ջու-
րերուն բաժանումը կորոշուի՝ խիստ այլանդակ գիծ մը կը
կազմէ։ Կատարին ամենէն բարձր տեղը, ուր կը բաշխուին
հոսող ջուրերը, սէնթ-Ավոյ կոյուղիին մէջ՝ Միշէլ-Գօնթ
փողոցին անդիի կողմն է, Լուվրի կոյուղիին մէջ՝ պուլվարնե-
րուն քովն է, Մօնթարթրը կոյուղիին մէջն ալ Հալի մօտ

է։ Ժան վալժան ահա կատարին այս ամենէն բարձր տեղը
հասած էր, և դէպ 'ի միջին կոյուղին կուզէր. ձամբանե-
րուն լաւն էր այս, բայց ան ամենևին չէր գիտեր թէ լաւ է
բռնած ձամբան։

Երբոր պզտի կոյուղիի մը կը հանդիպէր, անոր անկիւննե-
րը կը շօշափէր, և՝ եթէ գիտեր թէ ձամբան աւելի նեղ է
քանթէ այն ուսկէ կը յառաջանար ինք՝ չէր մտներ և իր ձամ-
բան կը շարունակէր, իրաւամբ մտածելով թէ աւելի նեղ
ձամբաները հարկաւ անել են և թէ գինք իր նպատակէն այս-
ինքն ելքէն պիտի հեռացնեն։ Ասպէս զգուշացաւ այն քա-
ռասաւիկ որոյ պէտէն զոր մթութեան մէջ լսեր էին ի-
րեն պահ մ'առաջ մեր համրած չորս լաբիւրինթոսները։

Եղաւ վայրկեան մ'ուր Ժան Վալժան հասկցաւ թէ ապըս-
տամբութենէ ահաբեկ Խարիզին տակէն կելլէր որու վերևը
շրջաբերութիւնը հետաջինչ եղած էր ապստամբութեան պատ-
ճառաւ, և թէ հիմա կենդանի և կանոնաւոր Խարիզին տակը
կը մտնէր։ Ցանկարծ գլուխին վերի կողմէն հեռաւոր այլ
անընդհատ աղմուկ մը լսեց որ շանթային աղմուկի մը կը
նմանէր, և որ սահելով անցնող կառքերուն ձայնն էր։

Գէթ ինքն իրեն ըրած հաշիւին համեմատ գրեթէ կէս ժամ
'ի վեր կը քայլէր, և տակաւին մտքէն չէր անցներ հան-
գստանալ փոքր ինչ. փոխած էր միայն այն ձեռքը որով կը
բռնէր Մարիուսը։ Մթութիւնը հետ գՀետ սաստկացած էր,
բայց այս սաստկութիւնն աւելի սիրտ կուտար անոր։

Ցանկարծ իր շուքը տեսաւ առջևը։ Այս շուքը կը
նկարուէր գրեթէ անորոշ և աղօտ կարմրութեան մը վրայ որ
շաղախակոմ յատակը աղօտապէս կը շառագունէր ոտիցը
ներքև, նաև գրեթէ՝ գլխուն վերևը, և որ անոր աջ ու
ձախ կողմը կոյտիղին մատղղական պատերուն վրայ կըս-
պրդէր։ Ժան վալժան շուարելով եռևը դարձաւ։

Իր եռևը, Ճամբուն այն մասին վրայ ուսկէ նոր անցած
էր, և հեռաւորութեամբ մը՝ զոր անբաւ կարծեց՝ տեսակ

մը սոսկալի աստղ կը փողփողէր Թանձր մթութիւնը դծաւորելով և որ կարծես թէ իրեն կը նայէր :

Ոստիկանութեան մեծ աստղն էր այն որ կոյուղիին մէջ կը ծագէր :

Ա՛յս աստղին եռանդն աղօտապէս կը շարժէին ութ կամ տաս ահաթոյր , ուղիղ , անորոշ և սոսկալի կերպարաններ :

ԳԼՈՒԽ Ը.

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Յունիս 6ին օրը հրաման տրուած էր կոյուղիները խուզարկել : Ա՛խցուեցաւ որ յաղթահարներն անոնց մէջ չապաւինին , և ոստիկանութեան պաշտօնեան՝ ծիսկէ՝ պարտաւորեցաւ վարի Բարիզը խուզարկել , մինչդեռ Պիւժօ զօրապետն ալ վերի Բարիզը կաւլէր . կրկին և յարակից պարծողութիւն , որ կրկին ռազմավարութիւն պահանջէց հատարակային զօրութենէն , այսինքն բանակէն որ այս զօրութեան վերին ներկայիչն է , և ոստիկանութենէ որ անոր վարի ներկայիչն է : Կոյաղարձներու և ոստիկաններու երեք խումբ Բարիզի ստորերկրեայ ճամբաները խուզարկելէն , միւն՝ ղեհին աջ կողմը , միւսը՝ ձախ կողմը , երրորդն ալ՝ միջնաքաղաքը :

Ոստիկանները զարապինաներով , մահակներով , սուրերով և գաշոյնները զինուած էին :

Հիմա ժան Վալժանին վրայ ուղղուած լոյսն աջ կողմի խումբին կանթեղն էր :

Ա՛յս խումբն արդէն խուզարկած էր Տիւ Գաստրան փողոցին տակի կորաձև ճամբան և երեք անել փողերը : Մինչդեռ ոստիկանները այս անել փողերուն ներսը կը ժուռածէին իրենց ճրագը , ժան Վալժան քայլելու ժամանակ հանդիպած էր կորաձև ճամբու մուտքին և՝ դիտելով թէ այն աւելի նեղ է քանթէ դլխաւոր ճամբան՝ առանց հոն մտնելու անդամ և յառաջացած էր : Ոստիկանութեան մարդերը Գաստրանի ստորերկրեայ ճամբէն վերջին դուրս եկած ժամանակ կարծեր էին զէպ՝ ի միջին կոյուղի ուղղող ոտքի ձայն մը լսել : Իրօք անոնց լսածը ժան Վալժանի քայլերն էին : Խումբին պարագլուխ տանտապետը՝ վեր բրած էր կանթեղը , և իր մարդերը սկսած էին դիմել զէպ այն կողմի մշուշն ուսկէ եկած էր ձայնը :

Ժան Վալժանին համար անմկնելի վայրկեան մ՛եղաւ այս :

Բարեբաղդաբար՝ եթէ ինք յայտնապէս կը տեսնէր կանթեղը , կանթեղը լաւ մը չէր տեսներ զինքը : կանթեղը լոյս էր , իսկ ինք մթութիւն : Ժան Վալժան շատ հեռի և տեղւոյն սեւութեանը հետ խառնուած էր : Պատին քովը մղուելով կանկ առաւ :

Սակայն չէր դիտեր թէ ինչ էին իր եռանը շարժող այն լրերը : Տքնութիւնը , անօթութիւնը , յուզմունքը ցնորատես մ՛ըներ էին նաև զինքը : Փողփողում մ՛և այս փողփողումին բոլորտիքն ալ Ճիւաղները կը տեսնէր : Ի՞նչ էր այս : Ժան Վալժան չէր հասկնար :

Ժան Վալժան կանկ առած ըլլալով , ձայները դադրած էր : Ոստիկանութեան մարդերը մաիկ կընէին , բայց բան մը չէին լսեր , կը նայէին և բան մը չէին տեսներ : Խորհրդակցութիւն մ՛ըրին :

Ա՛յն ժամանակ Մօնմարթրի կոյուղիին այս կողմը տեսակ մը քաւուղիի ըերան կար որ Ժաւաւոնեան յատակացեալ էր և որ ալ ջնջուեցաւ այն ներքին լճակին պատճառաւ զոր անձրեւային ջուրերու հեղեղը՝ մեծ փոթորիկներու ժամանակ կոյուղիներէն յորդելով՝ կը կազմէր : Ոստիկանութեան մարդիկը կրցան խմբուիլ այս քաւուղիին բերանը :

Ժան Վալժան այս Ճիւաղներուն խումբ մը կազմիլը տեսաւ : Ա՛յս ահռելին շուներուն գլուխներն իրարու մօտեցան և փսփսացին :

Պահպանութեան շուներն այսպէս խորհրդակցելով հեռացույին թէ սխալեր էին . թէ ոչ ձայն և ոչ ալ մարդ կար

կոյուղիին մէջ. թէ աւելորդ բան էր յառաջանալ դէպ 'ի միջին կոյուղին և այսպէս ժամանակ անցուցնել վայրապար. թէ պէտք էր ժամ յառաջ դէպ 'ի սէն–մէրի երթալ, և թէ վերջապէս այն թաղին մէջ միայն պիտի կրնան գործ մը տեսնել և խուվաթարի (bousingot) մը հետքը գտնել:

Ժամանակ առ ժամանակ կուսակցութիւնները նոր ձև կուտան իրենց հին թշնամանաց. 1832ին պոնապարտը մանաւանդ պաշտօն կը վարէր սա երկու բառերուն մէջ տեղը, այսինքն ֆաբուշէն (ծայրայեղ յեղափոխական) և փխմանիկ (ռամկավար), որոնց առաջինը մաշուած և երկրորդն այն ժամանակ դրեթէ անգործածելի էր, թէև անկից ետք պատուական գործ տեսաւ այն:

Տասնապետը հրաման տուաւ ձախ կողմին խոտորելու դէպ 'ի սէնի գառիվայրը: Եթէ երկու խումբի բաժնուելու և երկու կողմն ալ երթալու դաղափարն ունեցած ըլլային, ժան վալժան կը բռնէր: Այս ձերբակալութիւնն ահա այս դաղափարին կախում ունէր: Թերևս ոստիկանութեան պաշտօնեան կրնայ մը և բազմաթիւ ապստամբներու հանդիպումի հաւանականութիւնը նախատեսելով հրաման տուած էր իր մարդերուն ամիսով ձեալու: Ոստիկաններու խումբը սկսաւ քայլել եւեթ թողլով ժան վալժանը: Ժան վալժան այս ամեն շարժումներէն ոչ այլ ինչ նշմարեց բայց եթէ կանթեղին խաւարումը որ յանկարծ ուրիշ կոյուղի մը մտաւ:

Տասնապետը՝ ոստիկանութեան խիղճը հանդարտելու համար՝ մեկնելէն առաջ իր դարապետնան դէպ 'ի ժան վալժանին կողմը արձակեց այն տեղէն ուսկէ կը հեռանային: Աբձակման թնդիւնն այս պետնափորին մէջ արձագանգէ արձագանգ կ'լսուեցաւ իբր այս տիտանեան աղիքին մէջ կոկորդ ըմպանք կ'լսուեցաւ իբր այս տիտանեան աղիքին մէջ կոկորդ ընող փուք մը: Բուռի կտոր մը ժան վալժանէն քանի մը քայլ անդին ուղեհին մէջ իյնալով և ջուրին ալիները շարժելով իմաց տուաւ անոր թէ պետին իր գլուխն վերևը դմբեթին գարկած էր:

Ձախէն և յամրաշարժ քայլեր ժամանակ մը հնչեցին կոյուղիին պետնին վրայ՝ հեռաւորութեան յառաջդիմական յաւելումն հետ զհետէ տկարանալով. սեաթոյր կերպարանները խումբը սուղեցաւ, նշոյլ մը տատանեցաւ և ծփաց՝ դմբեթին վրայ կարմրանման համար մը կազմելով որ հետ զհետէ նուազելով աներևոյթ եղաւ. վերստին տիրեց խորին լռութիւնը. խաւարն անթերի եղաւ առաջուան պէս. կուրութիւնն և խուլութիւնը նորէն տիրեցին խաւարին մէջ, և ժան վալժան՝ տակաւին չհամարձակելով շարժել՝ երկար ժամանակ պատին կռթնած կեցաւ՝ սաստիկ ուշադրութիւն ընելով, բիբը տարածելով, և ուրուականներու խումբին անհետումը դիտելով:

ԳԼՈՒԽ Գ.

ԳԱՂՏՆԱԳԻՒՆ ՀԱԼԱԾՈՒՈՂ ՄԱՐԴ ՄԸ

Արդարասիրացիս կը պարտաւորինք խոստովանիլ սակայն թէ այն ժամանակի ոստիկանութիւնը՝ նաև հասարակային ծանրակշիռ պատահարներու միջոցին՝ անխուով կերպով մը կը կատարէր ձամբաներու և հսկողութեան մասին իր ուղեցած պարտաւորութիւնը: Ոստիկանութիւնը չարադործները սանձարձակ ձգելու պատրուակ չէր սեպեր ապստամբութիւն մը, ոչ ալ կառավարութեան վտանգի ենթարկուած ըլլալը պատճառ կը բռնէր ընկերութեան անդորրութեանը չհսկելու համար: Սովորական հսկողութիւնն արտաքոյ կարգի հսկողութեան հետ կը կատարուէր անշփոթ: Ոստիկանութեան մարդ մը, սկսած քաղաքական անհաշուելի պատահարի մը միջոցին, յեղափոխութեան մը հնարաւորութեան ձնշումը կրնալովը հանդերձ, զոր մը կը հալածէ պաղտնապէս՝ անոր եւեթէն ընկնելով՝ առանց իր ուշադրութիւնը ապստամբութեան և պատնէշին տալու:

Ցաւնիս ճիշ կէսօրէն ետք սէնի քով, աջակողմեան սեաք

եղբին (berge) վրայ, Տէր-Ինվալիտի կամուրջէն քիչ մ'ան-
դին ահա ձիւղ այսպիսի դէպք մը տեղի կունենար:

Հիմա Սէն դետին այն կողմը սեպհզբը չկայ: Վայրերուն
տեսքը փոխուած է:

Այս սեպհզբին վրայ այսինչ հեռաւորութեամբ իրարմէ
բաժնուած երկու մարդ կերևար թէ ղերար կը դիտէին փո-
խադարձ զգուշութեամբ: Առջևէն գացողը կը ջանար հեռա-
նալ, եւէն եկողն ալ կը ջանար մօտիլ:

Կարծես թէ սանտարինճի խաղ մը կը խաղացուէր 'ի հե-
ռուստ և ըսելեայն: Ոչ մին և ոչ միւսը կերևար թէ կշտա-
պէին և երկուքն ալ յամրաբար կը քայլէին, իրր թէ իւ-
րաքանչիւր ոք զգուշանար չափազանց արագութենէ մը, վախ-
նալով որ գուցէ իր խաղակիցն ալ կսկսի ան և նոյն արա-
գութեամբ քայլել:

Կրնայ ըսուիլ թերևս թէ ախորժակ մ'որսի մ'եւէն կեր-
թար, առանց յայտնել ուզելու մասնաւորապէս եւէն եր-
թալը: Որսը սմսեղուկ ըլլալով զգուշութեամբ կը քայլէր:

Հալածուող կուզը և հալածող շունն ինչ կերպով որ կը
դիտեն զերար, ան և նոյն կերպով կը դիտէին նաև այս եր-
կու մարդերը: Առջևէն գացող և խոյս տալ ուզողին կուրծ-
քին վերևը փոքրագիր և կերպարանն անշուք էր. իսկ զան
ձերբակալելու ջանացողը բարձրահասակ, զժնէադէմ և յան-
գուգն անձ մ'էր. խիստ էր այս մարդուն հանդիպիլը:

Առաջինը զգալով թէ աւելի տկար է ինք, կզգուշանար
երկրորդէն, բայց խիստ բարկալի կերպով մը կզգուշանար.
ով որ դիտէր զան, անոր աչերուն մէջ փախուստի ախորալի
թշնամութիւնը սկսի տեսնէր, նաև այն ամէն սպառնալիքը
զոր կը պարունակէ երկիւղը:

Սեպհզբն ամայի էր. անցորդ մը, և ոչ իսկ նաւավար,
կամ քեռնաթափ կար հոն հոս երկաթ նետած մավուռնանե-
րուն մէջ:

Այս երկու մարդերը դիւրաւ տեսնելու համար պէտք էր

նայիլ հանդիպակաց ափնուղիէն, և զանոնք այսպէս հետեւիլ
ընող մը պիտի դիտէր որ առջևէն գացողը բղխուած զգեստ-
ներու և կապայի մը ներքև սրսփուքով և խռովութեամբ զը-
բաւուած, վէս և կորաքամակ անձ մ'էր, մինչդեռ եւէն
գացողը գասական և պաշտօնական անձի մը կերպարանն և
իշխանութեան թիկնոց մ'ուներ մինչև կզակը կոճկուած:

Ընթերցողը թերևս ճանչնար այս երկու մարդերը եթէ ա-
ւելի մօտէն տեսնէր զանոնք:

Ի՞նչ էր վերջինին նպատակը:

Թերևս իր նպատակն էր առջինին աւելի տաքուկ զգեստ-
ներ հագցունելու յաջողիլ:

Երբ Պետութեան ծախսովը հագուած մարդ մը կիսամերկ
մարդ մը կը հալածէ, նպատակն է նաև անոր Տէրութեան
ծախսովը զգեստ հագցունել: Բոլոր տարբերութիւնը գոյնին
վրայ է լոկ: Կապտագոյն զգեստ հագնիլը փառաւորութիւն
մ'է. կարմրագոյն հագնիլն անախորժ է:

Վարն ալ ծիրանի մը կայ:

Հաւանական է թէ առջևէն գացողն ահա այս տեսակ ահա-
ձուութենէ և ծիրանիէ մը կը փափաքէր խոյս տալ:

Միւսը կը թողուր որ առջևէն երթայ ան, և տակաւին չէր
գոներ. վասն զի կը յուսար թէ մարդը վերջապէս ժամա-
դրութեան նշանաւոր տեղ մը պիտի հասնի և լաւ ձերբա-
կալութեան յատուկ խումբի մը քովը պիտի գտնուի: Այս
փափուկ գործողութիւնը կանոնաւոր գաղտնապէս հալածել:

Պարագայ մ'այս կարծիքն աւելի կը հաստատէ. ըսել կու-
զինք թէ կոճկուած մարդը պարագ երկանիւի մ'ափնուղիէն
անցնիլը տեսեղբէն տեսնելով նշան ըրաւ կառավարին. կա-
ռավարը հասկնալով ակնարկութիւնը, և անշուշտ ճանչնա-
լով ակնարկող անձին ինչ տեսակ մարդ ըլլալը՝ ետ դար-
ձաւ, և ափնուղիին վերէն սկսաւ երկու մարդերուն եւէն
երթալ կամաց կամաց: Առջևէն գացող կասկածելի և կիսա-
մերկ անձը չնշմարեց այս իրողութիւնը:

Երկանիւը Շանզ–Էլիզէի ծառերուն քովէրէն կը դլորէր։ Դետեղերին պարսպին վերէն կառավարին դլուխէն մինչև մէջքը կը տեսնուէր, նաև ձեռքը բռնած մարակը։

Ոստիկանութեան իր դործակալներուն տուած դաղտնի հրահանգներուն մին յետագայ յօդուածը կը պարունակէ. «Ոստիկանութեան դործակալն ՚ի պահանջել հարկի անպատրաստ չդտնուելու համար կը պարտաւորի միշտ հասարակային կառք մ՚ունենալ իր հրամանին ներքև»։

Այս երկու մարդերը՝ իւրաքանչիւր ոք անստդտանելի ռազմադիտութեամբ մը շարժելով կը մօտէին ափնուղիին դարուվերներուն մէկին որ մինչև սեպեղբը կիջնէր. Բասիէն եկող կառավարներն այն ժամանակ կրնային այս զառիվայրը իջնելով դետը դալ և ջուր խմդնել իրենց ձիերուն։ Եաքէն այս դարուվերն անհետ եղաւ համաչափութեան համար. ձիերը ծարաւէն կը ճայթին, բայց նայուածքը դոհ է։

Սուդապէս կը կարծուէր թէ կապա հադած մարդն այս դարուվերին վրայէն պիտի անցնէր Շանզ–Էլիզէի մէջ փախչել կարենալու համար. Շանզ–Էլիզէն ծառաղարդ վայր մ՚է իրօք, բայց նաև ոստիկանութեան մարդերը հոն կը վխտան, հետևաբար եաևէն եկողը դիւրութեամբ զինու զօրութիւն պիտի դտնէր։

Ափնուղիին այս կողմը խիստ քիչ հետի է այն տունէն զոր Պրաղ դեղագործը Մօրէէն Բարիզ բերաւ 1824ին, և որ Փրանսուա Ա.ին տունը կանուանի։ Այս տունին մօտ պահնորդարան մը կայ։

Եաևէն դացող և դիտողը մեծապէս զարմացաւ տեսնելով որ առջևէն դացող և նեղն ինկող մարդը փոխանակ դէպ ՚ի Ջրարբին դարուվերն ուղղելու ափնուղիին քովի սեպեղբին վրայ իր ձամբան շարունակելով յառաջացաւ։

Ցայտնապէս կը տեսնուէր թէ այս մարդուն կացութիւնը տադնապելի կըլլար։

Ի՞նչ պիտի ընէր հիմա, վասն զի ալ դետը նետուելէն ՚ի զատ փախուստի միջոց չկար։

Ա՛լ կարելի չէր վերստին ափնուղիին վրան ելնել. ալ ոչ դարուվեր, ոչ ալ սանդուղ կար։ Բոլորովին մօտեցեր էին այն տեղն որ Սէն դետին ծոցովը կը սահմանուի դէպ Իէնայի կամուրջը և ուր սեպեղբը հետ գհետէ նեղնալով վերջապէս նուրբ լեզու մը կը ձևանայ և ջուրին տակ կանհետի։ Մարդն եթէ հոն հասնէր, ինքզինքն անհրաժեշտաբար պաշարուած պիտի դտնէր, վասն զի ալ կողմն էր ուղղաձիդ պատը, ձախ և հանդիպակայ կողմն էր դետը, եաևն ալ իշխանութիւնը։

Սոդդ է թէ փորուած հողերու վեյ կամ եօթն ոտքի չափ բարձր և չդիտեմ ինչ քանդումէ արտադրուած կոյտ մ՚այս սեպեղբին վերջի մասը ծածկելով անտես կընէր նայուածքի։ Բայց այս մարդը կը յուսար օդտապես պահուիլ այս կոյտին եաևը՝ ուր դիւրին էր հասնիլ կոյտին քովէն դառնալով։ Տղայական պիտի սեպուէր այս փրկութեան միջոցն որու վրայ հարկաւ և ոչ իսկ կը մտածէր ան։ Դողերուն անմղութիւնը մինչև այս աստիճան չհասնիր։

Հողի կոյտը ջուրին եզրին քով տեսակ մը բլրակ կը կազմէր, որ հրուանդանի ձևով մինչև ափնուղիին պատը կերկննար։

Առջևի մարդն այս բլրակը հասնելով և միւս կողմն անցնելով, դադրեցաւ միւսին տեսնուելէ։

Եաևինը չտեսնելով նաև չէր տեսնուեր. պատեհ առիթ սեպելով իր այս անտեսութիւնը թողուց իր կեղծ ընթացքը և խիստ արագութեամբ քայլեց։ Քանի մը րոպէի մէջ բլրակը հասնելով միւս կողմն անցաւ, և հոն շուարած մնաց, վասն զի հոն չէր այն մարդը զոր կը հալածէր։

Կապա հադած մարդը բոլորովին աներևոյթ եղած էր։

Սեպեղբը հողակոյտէն անդին հազիւ հազ երսուն քայլի չափ երկննալով կընկղմէր ջուրին տակ, որ ափնուղիին պատը կը թրջէր։

Փախստականը չէր կրնար ոչ դետը նետուիլ, ոչ ալ ափնուղիին վրան ելնելով անհետիլ առանց տեսնուելու իր եաևէն դացողին։ Ի՞նչ եղած էր ուրեմն։

Ան մարդը՝ որ կոճկուած թիկնոց հագեր էր՝ մինչեւ ծնօտին եղերին ծայրը քայլեց, և հոն կեցաւ պահ մը խորհելով, ձեռները կարկամելով և խուզարկու նայուածքով։ Ցանկարծ ձեռքը ձակատին զարկաւ ցամաքին վերջացած և ջուրին սկսած տեղը երկաթէ լայն, ցած և կամարաչէն վանդակ մը տեսնելով որ հաստ կղպակ մը և երեք ձուլածոյ ծխնի ուներ։ Այս վանդակն ափնօղիին վերը իբր տեսակ մը դուռ կը բացուէր թէ դետին և թէ սեպեղբին վրայ։ Տակէն սեւորակ ուղիմ մը կանցնէր։ Ուղիը դետը կը թափէր։

Վանդակին ծանր և ժանգահար սիւնակներուն անդիի կողմը տեսակ մը չմբէթաւոր և մթին փող մը կը տեսնուէր։

Մարդը կուրծքին վրայ դնելով թեւերը՝ վանդակին նայեցաւ յանդիմանական կերպարանով մը։

Նայելը բաւական չտեսնելով նաեւ հրեց, և ցնցեց վանդակը որ սակայն հաստատութեամբ դիմադրեց։ Հաւանական է թէ քիչ մ՚առաջ բացուած էր այն թէեւ ձայն մը լսուած չէր։ զարմանալի էր այսպիսի ժանդահար դուռի մ՚անձայն բացուելը։ բայց ստոյգ է թէ բացուած և նորէն գոցուած էր։ Ուշէն կը հասկցուէր թէ այս վանդակը բացող մարդը չէ թէ նախապատ այլ բանալի մ՚ունէր։

Վանդակը դղրդելու աշխատող մարդն անմիջապէս հասկցաւ թէ իրօք բանալի մ՚ունի եղեր դուռը բացողը, և զայրոյթով մը գոչեց։

— Ծա՛ռ զարմանալի բան։ կառավարութեան բանալինեբուն մին է եղեր։

Յետոյ՝ անմիջապէս հանդարտելով՝ մտքին մէջ խմբուող բիւր գաղափարները բացատրեց սա դրեթէ հեգնապէս շեշտուած միավանկները արտաբերելով։

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ։

Այս վայրերը ըսելէն ետք, չդիտեմ ինչ յուսալով, թեթեւ մարդուն դուրս ելնելը կամ ուրիշներուն մտնելը տեսնելու յոյսով և որպէս սպասող շունի մը համբերատար կաղաղութեամբը հողակոյտին եռևը տեղաւորեցաւ գաղտնապէս դիտելու համար։

Երկանիւն ալ՝ որ այս մարդուն ամեն ընթացքին համամատ կը շարժէր՝ անոր վերեւը դետեղուին պարսպին քով կանգ առաւ։ կառավարը դուշակելով թէ շատ սպասել հարկ պիտի ըլլայ, իր ձիերուն քիթը բերանը վարը դրուած թմբայ վարսակի տոպրակը խօթեց որ ձարակին։ բարիզցիք շատ աղէկ կը ճանչնան այս տոպրակը, վասն զի, — ներուի մեզ այս շեղումը, — կառավարութիւններն երբեմն անոնց վզէն կը կախեն զայն։

Իրենց կամուրջին տակաւադիւտ անցորդները՝ հեռանալէ առաջ՝ եռևնին կը դառնային պահ մը նայելու համար վայրին այս երկու անշարժ պարագաները, այսինքն սեպեղբին վրայի մարդը և ափնօղիին վրայի երկանիւը։

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆ ԱԼ ԻՐ ԽՈՁԸ ԿԸ ԿՐԿ

ԺԱՆ Վալժան վերստին քայլել սկսելով ալ կանգ առած չէր։

Քայլելը հետ զհետէ կը դժուարանար։ կոյտերի դմբէթները հարթութիւնը կը ղանդաղանի։ միջին բարձրութիւնը՝ մարդու հասակին չափուած ըլլալով դրեթէ հինգ ոտք և վեց բթամատ է։ Ժան Վալժան Մարիուսը դմբէթին չզարնելու համար կռտիալուէը ծռաւելու։ շարունակ պէտք էր ցածնալ, յետոյ բարձրանալ և անընդհատ պատը շօշափել։

Քարերը թաց ըլլալով ծան Վալժան աղէկ չէր կրնար ձեռքովն անոնց կռթնիլ, դետինն ալ կպչուն ըլլալով, ոտները հաստատ չէին կրնար կոխել։ Լուսանցոյցներուն ընդհատականն ցօղումները խիստ հեռաւոր անջրպետներով կերեւային, և այնքան ժամդոյն էին որ արեւին պայծառ լոյսը լուսնկայի կը նմանէր։ միւս տեղերը միպապատ, գարշահոտ, անթա-

փանց և խաւարամած էին բոլորովին։ Ժան Վալժան նօթի և ծարաւի էր, մանաւանդ ծարաւի· և կոյուղին ալ՝ ծովին պէս՝ այնպիսի ջրալի տեղ մ՚է ուր մարդս չկրնար ջուր խմել։ Սակայն կսկսէր սփարանալ իր ոյժն որ՝ ինչպէս դիտենք՝ ա հակին էր և զոր տարիքն ոչ այնքան նուազած էր մինչև այս տեղ իր կեանքը զոհաբերութեամբ և ժուժկալութեամբ ան ցուցած ըլլալուն համար։ Ա՛լ կը յոգնէր, և ոյժը նուաղելով բեռին ծանրութիւնը կաւելցուներ։ Մարիուս՝ թերևս մ ուած՝ անշարժ մարմիններու պէս կը ծանրանար իր վրայ։ Ժան Վալժան մանաւանդ կերպով մը բռնած էր զան որպէս զի Մարիուսին կուրծքը նեղութիւն չկրէ և որպէս զի շնչառութիւնը միշտ կարելի եղածին չափ դիւրութեամբ անցնի։

Ժան Վալժան իր սրունքին մէջէն մուկերուն արագօրէն սպրդիլը կզգար։ Ասոնց մին այնքան խրտչեցաւ որ խածաւ ղինքը։ Ժամանակ առ ժամանակ կոյուղիին բերաններուն վանդակի ծակերէն զովաշունչ օդի հոսանք մը գալով կենդանութիւն կուտար Ժան Վալժանին։

Կէսօրէն հաք դրեթէ ժամը չորս էր երբ միջին կոյուղին հասաւ։

Նաքի զարմանք ուաւ իրեն կոյուղիին այս յանկարծական լայնումը։ Ցանկարծ ինքզինքը դաւ այնպիսի ձամբու մը մէջ որու պատերուն չէին հասներ իր երկնցած ձեռները, և այնպիսի գմբէթի մը ներքև որու չէր հպեր իր ղլուխը։ Երբք Մեծ կոյուղին ուրիշ ոտք լայնութիւն և հօր ոտք բարձրութիւն ունի։

Մօնֆարթրի կոյուղիին և Մեծ կոյուղիին միացած տեղը քառուղիի բերան մը կը կազմեն ուրիշ երկու աւորերկրեայ փողեր, մին Բրօվանս փողոցինը, միւսը Ասթրուաբ փողոցինը։ Նուաղ կորովամիտ մը կրնար վարանիլ այս չորս ձամբաներուն առջև։ Ժան Վալժան ամենէն լայնը մտաւ, այսինքն միջին կոյուղին։ Բայց հոս վերստին կը հարցունէր ինքնիրեն թէ պէտք էր իջնել կամ ելնել։ Մտածեց թէ ստիպողական

էր իր կացութիւնը և թէ ամեն վտանգի յանձնառու ըլլալ հիմա հարկ էր պետը ելնել։ Այսինքն իջնել, ուստի ձախ կողմը մտաւ։

Աղեկ որ մտաւ։ Վասն զի կը սխալի ով որ կը կարծէ թէ միջին կոյուղին երկու ելք ունի, մին դէպ՚ի Պէրսի, միւսը դէպ՚ի Բասի, և թէ դեպին աջակողմեան Բարիզին մէջքն է այն։ Պէտք է յիշել թէ Մեծ կոյուղին որ Մենիլմոնթանի հին առուակն է, դէպ՚ի վեր առնող կողմէն կը յանդի Մենիլմոնթան բլուրին սաորոտը, այսինքն անել տեղ մ՚ուսկէ կը քաղիէը ժամանակաւ։ Ուղղակի հաղորդակցութիւն չունի այն ճիւղին հետ որ Բօբէնդուրի թաղէն սկսելով Բարիզի ջուրերը կը հաւաքէ և Լուվիէյի հին կղզիին վերևը Ամբուլի կոյուղիէն Սէն գետը կը թափէ։ Կեդրոնական կոյուղին ամբողջացնող այս ճիւղը՝ ճիւղ Մենիլմոնթան փողոցին տակը՝ անկէ բաժնուած է հիմնորմով (massif) մ՚ուր կոյուղիին ջուրերը երկու մասի բաժնուելով կը հոսին, մին դէպ՚ի վեր և միւսը դէպ՚ի վար ուղղելով։ Եթէ աջ կողմը մտնելով դէպ՚ի վեր յառաջացած ըլլար, հաղարումէկ դժուարութիւններ քաշելէ և սաստիկ յոգնելէ հաք պատի մ՚առջև պիտի ելնէր, կիսամեռ և խաւարին մէջ թաղուած։ Հետևաբար պիտի կորսուէր։

Այս պարագային մէջ փրկութեան մէկ միջոց ունենար թերևս, այսինքն փոքր ինչ ետ գալ, Գիլ-Տիւ-Գալվէրի կոյաֆողը մտնել՝ Պուշրայի քառուղիին սաորերկրեայ չորս կոյուղիներու առջև չվարանելու թէութեամբ, Սէն-Լուի փողը, ապա աջ և ձախ կողմէն Սէն-Ժիլի կոյուղին մտնել, ետքն ալ աջ կողմը դառնալով և Սէն-Սեպաստիէնի կոյուղիէն զգուշանալով Ամբուլի կոյուղին հասնիլ և անկէ ալ Զինարանին քովը դետը յանդող ծայրը հասնիլ, բաւական է որ չմոլորեր Պաստիլլի տակի կոյուղիներուն մէջ որք տեսակ մը Լ կը կազմեն։

Բայց այս կերպով Սէն դետը հասնելու համար Ժան Վալ-

ժան կը պարտաւորէր կոյուղիին ահագին մոթէքօզին ամէն Ճիղերն և անցքերը մի առ մի դիտնալ։ Արդ կը պարտաւորինք կրկնել թէ ամենաին տեղեկութիւն մը չունէր այս ահարկու Ճամբաներուն նկատմամբ ուր կը քայլէր, և եթէ հարցուէր իրեն թէ ո՛ւր կը դտնուի, ՚ի խաւարի, պատասխանէր թերևս։

Իր բնազդումը լաւ առաջնորդ մ՚եղաւ իրեն։ Իջնելով իրօք հնարին է փրկուիլ։

Իր աջ կողմը Թաղուց երկու կոյուղիները որք Ճիրանի ձեւով կը Ճղաւորին Լաֆիթ և Սէն-Ժէօրժ փողոցներուն ներքև, նաև երկայն կոյափողը զոր երկուքի կը բաժնէ Տ՚Անթէն սալարկը։

Երբ հասաւ կից կոյուղիէ մը քիչ մ՚անդին որ անշուշտ Մաարլէնի Ճիւղն էր, կանգ առաւ, վասն զի շատ յոգնած էր։ Թաւական լայն լուսանցոյցէ մ՚որ թերևս Տ՚Անժու փողոցին վանդակն էր՝ գրեթէ պայծառ լոյս մը կուգար։ Ժան Վալժան Մարիուսը կոյուղիին բազմաին վրայ դրաւ խիստ զգուշութեամբ և մեղմիկ՝ իր վերաւոր եղբայրը խնամող եղբայրի մը պէս։ Լուսանցոյցին սպիտակ նշոյլը երեսն հանեց Մարիուսի արիւնաթաթաւ դէմքը որ կարծես թէ պերեզմանի մը մէջ կերևար։ Աչերը դոց, մազերը կարմիր ներկի մէջ չորցած վրձիններու պէս՝ քուներուն կպչած, ձեռները կախուած և մեռած, անդամներն ալ յուրտ էին և շուրթերուն խորշերը թանձրացած արիւն կար։ Վշնոցին հանդոյցին մէջ թանձր արիւն հաւքուած էր։ Շապիկը վէրքին ծակերը կը մնէր, թիկնոցին աստիճն վիրաւոր մարմինին կտրուած և բաց տեղերը կը շիէր։ Ժան Վալժան մատերուն ծայրերովը Մարիուսին զգեստները մեկուսելով ձեռքը կուրծքին վրայ դրաւ։ սիրտը տակաւին կը բաղխէր։ Ժան Վալժան իր շապիկը խըզտելով վէրքը որչափ որ կրցաւ՝ աղեկ մը կապեց և արիւնը հոսելէ դադրեցուց։ Եաքն այս աղօտ լոյսին մէջ Մարիուսի վրայ կՃկուելով որ միշտ նուաղած և գրեթէ անշունչ էր՝ անմիկնելի ատելութեամբ մ՚անոր նայեցաւ։

Մարիուսի գգեստները մեկուսելով, անոր գրպաններուն մէջ երկու բան գտած էր։ այսինքն պատառ մը հաց զոր առջի օրէն ՚ի վեր մոռցած էր հոն և Մարիուսի թղթակալը։ Ժան Վալժան հացը կերաւ և թղթակալը բացաւ։ Առջի երեսին վրայ յետագայ չորս տողերը գտաւ զոր՝ ինչպէս կը ցիշէ ընթերցողը՝ Մարիուս գրած էր։

«Անուն՝ Մարիուս Բօնմէրսի է։ Դիակս տարուի Մեծ-Հօրս՝ Պ. Ժիլնօրմանի տունը, Մարէի թաղին մէջ Գիլլ-Տիւ-Գալվէր փողոցը, թիւ 6»։

Ժան Վալժան լուսանցոյցէն եկող լոյսին շնորհիւ այս տողերը կարդաց, պահ մը խորհուրդի մտմտուքի գնաց՝ կիսաձայն կրկնելով։ Պ. Ժիլնօրման, Գիլլ-Տիւ-Գալվէր փողոց, թիւ 6։ Թղթակալը նորէն Մարիուսին գրպանը դրաւ։ Հացն ուտելով այժ առած էր, ուստի դարձեալ շարկեց Մարիուսը, անոր գլուխը հոգ ասիրութեամբ իր ուսին վրայ տեղաւորեց և սկսաւ իջնել կոյուղիէն։

Մեծ կոյուղին որ Մենիլմոնթանի ձորուղիին (thalweg) հաւասար ուղղուած է՝ գրեթէ երկու մղոն երկայնութիւն ունի, որու մեծագոյն մասը սալաքարով յատակուած է։

Ժան Վալժան չունէր Բարիզի փողոցներուն անունին ոչ ջահը որով Ժան Վալժանի սաոբերկրեայ ուղևորութիւնը կը լուսաւորինք ընթերցողին համար։ Ամենաին չէր դիտեր ան քաղաքին ո՛ր տեղերէն անցնիլը, ոչ ալ ինչ Ճամբայ առած ըլլալը։ Միայն թէ մերթ ընդ մերթ լուսային լՃակներու կը հանդիպէր և անոնց հետ զՀետէ աՃող ժամդունութիւնը դիտելով կիմանար թէ արևը կը քաշուէր քաթայաոակէն և թէ շատ չանցած պիտի սկսէր խոնարհիլ մարը մտնելու համար։ Գլուխն վերևը սահելով անցնող կառքերուն ձայնն ալ փոխանակ՝ առաջուան պէս՝ շարունակ լսուելու, ընդհատած և վերջապէս գրեթէ դադրած էր, ուսկէ հետևցուց Ժան Վալժան թէ ալ կեգրոնական Բարիզի տակը չէ և թէ արտաքին պուլվարներու կամ յետին ափնուղիներու մերձակայ մնակաե

տեղ մը կը մնար· ուր որ նուաղ տուն և փողոց կայ, կոյուղին նուաղ լուսանցայց ունի: Մթութիւնը կը թանձրանար Ժան Վալժանին բոլորտիքը: Բայց և այնպէս շարունակեց իր Ճամբան՝ մութին մէջ խարխափելով:

Այս մթութիւնը յանկարծ սոսկալի մթութիւն մ'եղաւ:

ԳԼՈՒԽ Ե·

ԻՆՉՊԷՍ ԿԻՆԸ ՆՈՑՆՊԷՍ ԵՒ ԱԻԱԶԸ ՆԵՐՔՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՒՆԻ ՈՐ ՆԵՆԴՈՒԹԻՒՆ Է

Ջգաց Ժան Վալժան թէ ջուրը կը մտնէր և թէ իր ոտներուն տակ աւ չէ թէ քարայատակ այլ սիրտ կար:

Պրըթանեի կամ Սկովտիայի ծովեզերքները կան այնպիսի աւազադաշտեր (grève) ուր երբեմն մարդ մը, Ճամբորդ մը կամ ձկնորս մը ծովին ջուրերուն նուաղութեան ժամանակ ծովափէն հեռի եզերին վրայ քալելով յանկարծ կը նշմարէ թէ քանի մը րոպէէն՝ի վեր դժուարութիւն մը կը կրէ քալելու: Ծովեզերն անոր ոտներուն ներքև ձիւթի պէս է: Ներքանը կը կպչի· չէ թէ աւազ այլ կաւ է գետինը: Բոլորովին չոր է ծովեզերը, բայց քալելու ժամանակ ամեն անգամ որ ոտքը կը վերնայ, իր ձգած դրոշմը ջուրով կը լեցուի: Բայց աչքը ամենևին փոփոխութիւն մը չնշմարած է· անբաւ ծովեզերը միահարթ և հանդարտ է· աւազն ամենուրեք մի և նոյն տեսքն ունի· չկայ նշան մ'որով կարելի ըլլայ զանազանել հաստատուն գետինը անհաստատ գետնէն· ծովային մուներուն ղուարթ երամին անցորդին ոտներուն վրայ կը շրջունակէ իր խառնիխուռն ոստումները: Մարդն իր Ճամբան կը շարունակէ, դէպ առլև կերթայ, դէպ՝ի ցամաքը կուզղի, կը Ջանայ ծովափին մօտենալու: Անխռով է· և ինչէ պիտի խռովի: Միայն թէ քանի որ կը քալէ, ոտներուն ծանրութիւնն աւելնալուն նման քան մը կզգայ: Յանկարծ կը սուզի: Երկու կամ երեք բթամատի չափ կը սուզի: Անտարակոյս

լաւ չէ ընտրած Ճամբան, ուստի կանգ կառնու ուր գտնուիլը հասկնալու համար: Ցանկարծ ոտներուն կը նայի, այլ ոտներն աներեւոյթ եղած են՝ աւազին տակը մնալով: Ոտները դուրս կը հանէ աւազէն, կուզէ ետ երթալ, ետին կը դառնայ, և աւելի խորունկ կերպով կը սուզի: Մարդուն մինչև կոճը կ'ընէ աւազն ուսկէ ոտները դուրս քաշելով ձախ կողմը կը նետուի, և վերստին կընկղմի մինչև սրունքին կէսը· աջ կողմը կը նետուի, և ծակերուն մինչև յետին կողմը կը սուզի: Անառեն անասելի սարսափով մը կը դիտէ թէ շարժուն ծովեզերի մէջ բռնուած է և թէ իր տակն է այն ահարկու միջավայրն ուր ոչ մարդս կրնայ քալել և ոչ ալ ձուկը լողալ: Վրայէն կը նետէ իր բեռը, եթէ բեռ մ'ունի· վտանգի ենթարկուած նաւի մը պէս կը թեթևնայ, բայց շատ ուշ, վասն զի աւազն ալ ծունկերէն վեր է:

Կը ձգնէ, դլեարկը կամ թաշկինակը կը շարժէ, և ալ հետ զհետէ կը դրաւուի աւազէն· եթէ ամայի է ծովեզերը, եթէ ցամաքը շատ հեռի է, եթէ չարաշահաւ է աւազախուեքը, եթէ շրջակաները դիւցազն մը չկայ, ալ փրկութիւն չկայ իրեն, ալ աւազախրումի (enlisement) դատապարտուած է: Դատապարտուած է այն զարհուրելի, երկարատև, անվրիպելի և անողոքելի թաղումին զոր անհնարին է ուշացնել կամ շատպէտցնել· որ ժամերով կը տևէ առանց վերջանալու· որ աղատ, քաջողջ և կանգուն մարդը կը բռնէ և ոտներէն կը քաշէ· որմէ քիչ մ'աւելի վար կը մղուի ամեն անգամ որ Ջանք մը կընէ, ամեն անգամ որ աղաղակ մը կը հանէ· որ կարծես թէ անոր դիմադրութիւնը կը պատժէ կրկնապատիկ Ճնշումով մը· որմէ մարդս յամրաբար մղուելով վերստին հողը կը մտնէ կատարելապէս ժամանակ ունենալով սակայն հոգիզոնին, ծառերուն, դալարագեղ դաշտերուն, դաշտավայրի դիւղերուն մէխին, ծովին վրայի նաւերուն աւազատներուն, թևաբախող և երդող թռչուններուն, արևին, և դէպ երկինք նայելու: Աւազախրումը դերեզման մ'է որ մակերե-

թացութիւն կը լլայ և որ գետնին տակէն դէպ 'ի կենդանի էակ մը կը բարձրանայ : Մէն մի վայրկեան անողոքելի դիպ պատիկ մ'է : Թշուառը կաշխատի նստելու , պառկելու , սողալու , բայց ամեն ըրած շարժումները կը թաղեն ղինք· կը կանգնի այլ աւելի կընկղմի· կղայ թէ կը խորասուզի· կոնայ , ձաղերսէ , ամպերուն կը դոչէ , թևերը կը պրկէ , կը յուսահատի :

Հիմակ ալ մինչև փորն աւազին մէջն է· պահ մ'ևս , և ահա մինչև կուրծքը կընկղմի , և ալ կիսարձան մ'է· ձեռները վեր կընէ , սաստիկ կը հեծէ , ըղուեղներն աւազին վրայ կը պրկի , կուզէ այս մնխիրին կոթնիլ , արմուկներովը կը յենու՝ այս կակուղ պատեհանէն դուրս ելնելու համար և մղձպին կը հեծկլտայ , բայց աւազը վեր կելնէ : Աւազը կը հասնի մինչև ուսերը , աւազը կը հասնի մինչև վիզը , և ալ թըշուառին դէմքը կերևայ միայն : Բերանը կը դոչէ , և աւազէն լեցուելով ալ կը լռէ : Աչերը կը նային տակաւին , բայց աւազէն զոցուելով անոնք ալ կը խաւարին : Ապա ձակատը կը նուազի· աւազին վերևը քիչ մը մազ կը սարսռի· ձեռք մը կերևի՝ աւազադաշտին մակերևոյթը ծակելով՝ կը յուզի , կը շարժի և կանհետանայ : Աղետալի՛ ընդհանուր մարդու :

Երբեմն ձիաւորը ձիովը միատեղ կաւազախրի (s'enliser) : Երբեմն սայլորդը սայլովն հանդերձ կաւազախրի· ամեն բան կընկղմի աւազուտ ծովեզերին ներքև : Ծովէն դուրս նաւաբեկութիւն մ'է այս : Երկրիս տակին ընկղմելով խղդուիլ է : Երկիրն ովկիանոսէն առատօրէն ծովակ կըլլայ , և իբր դաշտավայր ներկայանալէն ետք իբր կոհակ կը բացուի : Անդունդն ունի ասանկ մատնութիւններ :

Այս սգալի վտանգը՝ որ միշտ հնարին է այս կամ այն աւազուտ ծովեզրը՝ նաև Բարիզի կոյուղիին մէջ հնարին էր ասկէ երսուն տարի առաջ :

1833ին սկսող կարևոր շինութիւններէն առաջ Բարիզի ստորերկրեայ ճամբաները յանկարծական կքումներու կենթարկէին ;

կային ինչ ինչ ստորակայ , նա մանաւանդ դիւրափշիր (friable) երկիրներ ուր ջուրը կը մղէր· գետինը , թէ քարայատակ ունենար՝ ինչպէս ունէին հին կոյուղիներու գետինները , թէ կարծր շաղախով և քարապինդ կրով շինուած ընդարձակ կամարներ ինչպէս են նոր կոյուղիներու անցքերը , ալ չենթարկուելով կը կքէր : Այս տեսակ տախտակամածի մը վրայ կքում մը ձեղք մ'է· Ձղքուիլը փլուիլ է : Կոյուղիի փողին գետինն այսինչ երկայնութեամբը կը փլուէր : Այս ձեղքը որ տղմային վէմի մը բերանն է , իր յատուկ բառովը իրաք (fontis) կանուանէր :

Ի՞նչ է խրուտը· Ծովեզերեայ շարժուն աւազն է որու մարդ յանկարծ կը հանդիպի երկրիս տակ· Սէն–Միշել լերան աւազադաշտն է կոյուղիի մը մէջ : Հողն երբ կը թրջուի կարծես թէ հալած է· իր ամեն շամանդաղները 'ի կախ կը կենան միջավայր մը· ալ ցամաք չէ այն , ոչ ալ ջուր : Խոռոչութիւն որ երբեմն ամենասաստիկ է : Ոչինչ այնքան զարհուրելի է որքան այսպիսի հանդիպում մը : Եթէ աւելի ջրային քանթէ ցամաքային է գետինը , մարդս կընկղմի այսինքն շատ մը կը մնայ· եթէ աւելի ցամաքային քանթէ ջրային է գետինը , մարդս կաւազախրի , այսինքն յամրաբար կը մնայ :

Կերևակայեմ թէ ինչ է այսպիսի մահ մը : Եթէ զարհուրելի բան մ'է ծովեզերեայ աւազադաշտի մը վրայ խրելով թաղուիլը , ինչ է կոյանոցի մը մէջ :

Ծովեզրի մը վրայ բայ օդ , անթերի լոյս , կատարեալ ցորեկ , պայծառ հորիզոն , հանրածաւալ աղմուկներ , աղատ և կենսաբեր ամպեր , հեռուէն նշմարուող խրճիթներ , բազմադիմի յոյսեր , հաւանական անցորդներ , մինչև յետին րոպէն օգնութեան յոյսեր կան· իսկ կոյանոցին մէջ այս ամեն իրերու տեղ ինչ կայ· խուլութիւնը , կուրութիւնը , սևաթոյր գմբէթ մը , արդէն բոլորովին գոց գերեզմանի մը յատակը , խուփի մը ներքև և տղմին մէջ մեռնիլ , աղբէն յամրաբար խղդուիլ , քարէ տուփ մ'ուր անշնչութիւնը տղմին մէջ իր

Ճիրաններըը կը բռնայ և մարդս կոկորդէն կը բռնէ· դարշահոտութիւն որ հռնչուտի հետ կը խառնուի· տիղմը փոխանակ աւազի· ծծմբատ ջրածինը՝ փոխանակ մրրիկին· ովկիանոսին տեղ աղևը, ուր մարդ ակռաները կը կրճէ, կը պալարի, կը յուզի, կը հոգեվարէ մինչդեռ ահագին քաղաք մը կայ որ ամենևին տեղեկութիւն չունի անոր այս սարսափելի վիճակին ներառմամբ և որ թշուառին դլխուն վերևն է։

Ո՛րքան անմեկնելի է այսպէս մեռնելու սարսափը։ Մահն երբեմն սոսկալի արժանապատուութեամբ մը կը փոխարինէ իր անգթութիւնը։ Հրատին վրայ, նաւաբեկութեան մէջ մարդս կրնայ վսեմ ըլլալ· կրնայ վեհ դիրք մ՚առնուլ բոցին, ինչպէս նաև փրփուրին մէջ, ուր խորասուղելով կայլակերպի։ Բայց կայանոցին մէջ ոչ։ Հոն մահն աղտեղի է։ Դատաստանիչն մ՚է մեռնիլը։ Գձուձ են յատին և ծխին տեսիլները։ Տիղմը խայտառակութեան հետ համանիշ է։ Տիղմը նուաստ է, տգեղ է, խայտառակ է։ Գլարանսի պէս Մալվուազիի տակառի մը մէջ մեռնիլը հոգ չէ· բայց Տ՚Էսպուպջոյի պէս կայապրծի մը փոսին մէջ մեռնիլը սոսկալի է։ Հոն մարդս կը հոգեվարէ ուրիշ տղմուտին մէջ կը քայլէ։ Խաւարն այնքան շատ է որ կրնայ դժոխքն ըլլալ այն։ տիղմը նոյնպէս այնքան շատ է որ կրնայ դարշաբոյր աղբանոց մ՚ըլլալ, և մեռնողը չդիտեր թէ ճիւաղ մը պիտի դառնայ թէ արջնապրտ մը։

Գերեզմանն աղետալի է ամենուրեք· իսկ հոս տձև է։

Խրուտներուս խորութիւնը կը զանազանէր, նաև իրենց երկայնութիւնը և խուռթիւնը՝ սարերկրին տեսակին աւելի կամ նուազ գէշութեան համեմատ։ Երբեմն խրուտ մ՚երկար կամ չորս, երբեմն ութ կամ տաս ոտք խորութիւն ունէր, երբեմն ալ յատակը չէր գտնուեր։ Տիղմը հոս գրեթէ հաստատ էր, հոն գրեթէ հօսանուտ։ Լիւնիէրի խրուտին մէջ մարդ մ՚օրուան մը մէջ կրնար աներևութանալ, մինչդեռ ֆէլիքսի տղմափոսը հինգ վայրկեանի մէջ կրնար լափել զան։

Տիղմն իր խտութեան առաւելութեան կամ նուազութեան համեմատ աւելի կամ նուազ կը դիմադրէր։ Տղայ մը կաղատէ ուր որ մարդ մը կը կորսուի։ Փրկութեան առաջին պայմանն է վրայէն նետել ամեն տեսակ բեռ։ Ամեն կոյապրծ երբ դեանին իր ներքև կը քիլը կզգար, նախ և առաջ իր գործիքի տոպրակը, կամ կողովը կամ տաշտը կը նետէր։

Խրուտները զանազան պատճառներ ունէին· հողին դիւրափշրութիւնը, մարդուս գործութենէ դուրս խորունկ տեղի մը փլումը, ամառուան սաստիկ տեղատարափները, ձմեռուան անընդհատ թօները, երկարատև, փոքր և նրբաթել անձրևները։ Երբեմն մօտակայ տուները կրթխառն կամ աւազուտ դետնին վրայ ծանրանալով դետնափոր ճամբաներուն դմբէթները կը հալածէր և ծռել կուտար, կամ թէ այս ճամբաներուն քարուկիր գետինը կը պայթէր և կը ձգտուէր այս ահագին ծանրութեան ներքև։ Բանթէոնի գմստումը (tassement) դար մ՚առաջ այս կերպով Սէն-Ժընեվիէվ լեռին գետնափորներուն մէկ մասը ջնջեց։

Երբ կոյուղի մը տուներուն ծանրութենէն ճնշուելով կը կքէր, կային պարագաներ ուր այս կքումէն հետևող խանգարումը վերը փողոցն ալ երևան կելնէր քարայատակներուն մէջ տեղերէն սղոցային ակռաներու ձևով ճեղք մը կազմելով· այս ճեղքը պատուած դմբէթին բոլոր երկայնութեամբը օձապտոյտ դիծ մը կը կազմէր և կը շատնար, և անատեն աիտը տեսանելի ըլլալով կրնար անմիջապէս զգուշացնել։ Սակայն երբեմն ալ ներքին աւերումին հետքը դուրսէն չէր երևար որ և է փեռեկումով մը։ Եթէ այսպիսի փեռեկումի մը չդիտցուի խանգարումը, վայ կոյապրծներուն։ Ասոնք առանց զգուշութեան կքուն կոյուղին մտնելով կրնային մահ պատճառել հոն։ Հին արձանագրութիւնները կը յիշեն քանի մը կոյապրծներ որք այս կերպով թաղուած են խրուտներու մէջ։ Այս արձանագրութեան մէջ բազմաթիւ անուններ կը յիշուին, որոնց մին է Պլէզ Բուրբէն անուն կոյապրծը որ Գա-

բեմ-Բրընան փողոցին կայուղին ներքև խրուտի մը մէջ սուզեցաւ։ Այս Պլէզ Բուլթրէնի եղբայրն էր Նիկոլա Բուլթրէն որ Շարնիէր Տէզ-Ինօսան ըսուած դերեզմանատունին վերջին փոսափեղն էր 1785 թուականին ուր մեռաւ այս դերեզմանատունը։

Այսպէս խրողներուն մին է նաև Տ'Էսգուալլօ անուն անտիաքան և սիրուն կիսակոմսը, Լէրիտայի պաշարման քաջերուն մին, որք այս պաշարումին մէջ մեռաքսեայ գուլպաներ հագած և նուագարան ընդ առաջ յարձակեցան Մէրիտայի վրայ։ Տ'Էսգուալլօ՝ պիշերը մ'իր հօրեղբօրորդիին այսինքն Տը Սուրտի դքսուհիին տունը դտնուած ժամանակ մատնուելով դուքսէն ապատեղու համար Պօթրէյլիի կայուղին ապաւինեցաւ և հոն ձահիճի մը մէջ խղդուեցաւ։ Տիկին Տը Սուրտի՝ անոր այսպէս մեռնիլը լսելով՝ իր աղի սրուակը ուզեց և այնքան հոտոտեց որ մռայլ լալը։ Ասանկ պարագայի մէջ չկայ սէր մը որ կարենայ դիմանալ, վասն զի կայանոցին հոտը կը մարէ զայն։ Հերօ չուզեր լուալ Լէանարի դիակը։ Թիղլէ հոտ չառնելու համար քիթը կը բռնէ Իփրամի առջև և կըսէ. Բո՛ւհ։

ԳԼՈՒԽ Զ.

ԽՐՈՒՏԸ

Ժան Վալժան տղմային խրուտի մ'առջև կը գտնուէր։

Այս տեսակ փլուզները անատեն ստէպ կը պատահէին Շանղ-Էլիզէի ստորերկրին տակ որ իր անդիի ծայր լուծուելեան (fluidité) պատճառաւ քարուկիրճ շինուելեանց դժուարաւ կը յարմարէր և ոչ այնքան կը պահպանէր ստորերկրեայ շէնքերը։ Շանղ-Էլիզէի ստորերկիրը Սէն-Ժէօրժ թաղին աւազներէն իսկ աւելի լոյծ է որոնց կարելի եղաւ յաղթել պինդ շաղախով և քարացող կիրով. աւելի լոյծ է նաև Տէ Մարթիր թաղին կաղճն ապականուած կաւուտ խաւերէն, թէև այս կաւուտ խաւերն այնքան լոյծ էին որ Տէ Մարթիրի

կայուղին քովէն ձուլածոյ խողովակի մը միջոցով միայն կարելի եղաւ ջամբայ մը բանալ։ 1836ին Սէնթ-Օնօրէ աւրուարձանին տակ վերստին շինուելու համար երբ քանդուեցաւ այն քարաշէն հին կայուղին ուր հիմա մտած կը տեսնենք Ժան Վալժանը, շարժուն աւազը՝ որ Շանղ-Էլիզէի ստորերկիրն է մինչև Սէն՝ այնքան արգիլեց շինութիւնն որ կայուղին հազիւ հազ վեց ամիսուան մէջ կրցաւ շինուիլ և մեծ դանդատներու տեղի տուաւ ափնաբնակներու (riverain), մանաւանդ ապարանք և կառք ունեցող ափնաբնակներու. գործերն ոչ միայն դժուարին այլ նաև վտանգաւոր եղան։ Ստոյգ է թէ չորսուկէս ամիս անձրև եկաւ և Սէնն դեռ անդամ չորցեցաւ։

Ժան Վալժանին հանդիպած խրուտին պատճառն էր առջի օրուան տեղատարափը։ Ստորակայ աւազին վրայ աղէկ մը չկոթնած քարայատակը կքելով անձրևի ջուրերուն անցքը խցած էր։ Այս ջուրերը մղուելով կքուսին տեղն տուած էին։ Քարուկիրը դետինը պատուելով տղմին մէջ կքած էր։ Ո՛րքան երկայնութեամբ։ Անկարելի է ըսել։ Հոն մթութիւնն ամեն տեղէ աւելի թանձրամած էր։ Գիշերային խոռոչի մը մէջ տղմի ծակ մ'էր այն։

Ժան Վալժան զգաց թէ քարայատակը խոյս կուտար իր տակէն։ Մտաւ տղմախորը, որու երեսը ջուր, տակն ալ սիկ էր։ Պէտք էր անպատճառ անցնիլ։ Եթե երթալը կարելի չէր։ Մարիուս մահուան դուռը հասած, և Ժան Վալժան սասսիկ յոգնած էր։ Մանաւանդ թէ ուր կերթար։ Ժան Վալժան յառաջ քայլեց։ Ցառաջացաւ, վասն զի տղմախորն ալ առաջին քայլերուն նուազ խորութիւն երևցաւ։ Բայց քանի որ կը յառաջանար, ոտները կընկղմէին։ Շուտ մը մինչև կէս ծունկին եկաւ սիկը, իսկ ջուրը ծունկերէն մեր եղաւ։ Ժան Վալժան կը քայլէր՝ երկու թևերովը կրցածին չափ Մարիուսը ջուրին վերևը բարձրացնելով։ Ցետը հիմա մինչև ծունկերը կը հասնէր, իսկ ջուրը մինչև մէջքը։ Արդէն չէր կրնար ալ եա

պառնալ։ Հետ դէմեմ կընկղմէր։ Այս սիկը՝ մարդու մը ծանրութեանը դիմանալու չափ խառնիճուն ունենալով անշուշտ չէր կրնար երկու մարդու ծանրութեան դիմադրել։ Մարիուս և Ժան Վալժան զատ զատ թերևս յաջողէին դուրս ելնել անկից։ Ժան Վալժան անընդհատ յառաջացաւ բռնելով այս հոգեվարը որ թերևս գիակ մ'էր։

Ջուրը Ժան Վալժանին մինչև անուիները կը հասնէր։ Խորասուզիլ կզգար ան։ Հաղիւ հազ կրնար շարժիլ տղմուտ վիճին մէջ ուր կը գտնուէր։ Տղմին խառնիճուկը նեղուկ ու միանգամայն խոչընդոտ էր։ Մարիուսը վեր կը բռնէր միշտ և՝ անդիի ծայր այժ վտանգելով կը յառաջանար բայց նաև կընկղմէր։ Ա՛լ գլուխը միայն ջուրէն դուրս էր, նաև երկու թևերն որք Մարիուսը վեր կը բռնէին։ Ջրհեղեղին հին պատկերներուն մէջ մայր մը կայ որ այսպէս բռնած է իր զաւակը։

Քիչ մ'ևս ընկղմելով գլուխն ետևը ծռեց ջուրէն ազատելու և շնչել կարենալու համար։ Ով որ զան այս խաւարին մէջ տեսած ըլլար, մթութեան վրայ ծփող գիմակ մը տեսնել պիտի կարծէր։ Ժան Վալժան իր վերևն անորոշապէս Մարիուսին կախուած գլուխը և ժպտուն երեսը կը նշմարէր։ Յուսահատական ջանք մ'ընելով ոտքը դէպ առաջ նետեց, որ չգիտեմ ինչ հաստատուն բանի մը, նեղուկի մը հանդիպեցաւ։ Ժամանակն էր հանդիսլելու։

Տեսակ մը կատղութեամբ կանդնեցաւ, գալարուեցաւ և արմատացաւ այս չենարանին վրայ։ Կարծեց ղալ թէ դէպ 'ի կեանք ելնող սանդուղի մ'առաջին աստիճանն էր այն։

Տղին յետին վայրկենին մէջ երևան ելած այս նեղուկը քարուկիր գետնին միւս գառիվայրին սկիզբն էր որ առանց խորտակուելու կքած և տախտակի մը պէս ջուրին տակ ծռուած էր անկուսր։ Աղէկ շինուած քարայատակները դմբեթ կը կազմեն և ունին այսպիսի ամրութիւններ։ Այս քարուկիր գետնին բեկորը՝ որ մասամբ իւիք ջուրին տակ ընկղմած այլ

հաստատուն էր՝ Ջիշդ աստիճանական գառիվայր մ'էր, և այս գառիվայրին վրայ ելնողը կրնար ազատիլ։ Ժան Վալժան վեր ելաւ այս գառիվայրէն և տղմախորին (fondrière) միւս կողմը հասաւ։

Ջուրէն ելնելով քարի մը գարիաւ ոտքը և ծունկի վրայ ինկաւ։ Մտածեց թէ պէտք էր այսպիսի ծնրադրութիւն մը, ուստի ժամանակ մը կեցաւ այս դիրքով՝ հոգիին խորերէն չգիտեմ ինչ խօսք մ'ուղղելով Աստուծոյ։

Աղօթքէն ետք ոտքի վրայ կայնեցաւ սարսռելով, սառնահար, ապականակիր, ծռուելով այն հոգեվարին տակը զոր կը քարշէր, մարմնովին տղմաթաթաւ, իսկ հոգեվին տարօրինակ պայծառութեամբ մ'ողողուած։

ԳԼՈՒԽ Ե։

ԾՈՑՐԸ

Դարձեալ սկսաւ քայլել։

Սակայն եթէ իր կեանքը տուած չէր տղմախորին, կերևար թէ ոյժը հոն ձգած էր։ Այս յետին ջանադրութիւնը բոլորովին յոգնեցուցած էր զան։ Հիմակ այնքան յոգնաբեկ էր որ ամեն անգամ երեք կամ չորս քայլ առնելէն ետք կըսահիպուէր շունչ առնելու և պատին կը կռթնէր։ Անգամ մը պարտաւորեցաւ կռյուղին բազմաին վրայ նստիլ Մարիուսին դիրքը փոխելու համար, և կարծեց թէ հոն պիտի մնար։ Թէև ուժեղութիւնը մնած, բայց արիութիւնը տակաւին կենդանի ըլլալով՝ Ժան Վալժան նորէն կայնեցաւ։

Ցուսահատաբար, գրեթէ արագօրէն հարիւր քայլի չափ ևս առաւ՝ առանց վեր ընելու գլուխը, գրեթէ առանց շունչ առնելու, և յանկարծ պատին զարկաւ։ Կռյուղին մէկ անկիւնը հասած էր, և՝ այս անկիւնը հասնելով կորագլուխ՝ պատին հանդիպած էր։ Վեր երաւ աչերը, և դետնափոր

Ճամբուն ծայրը, հեռուէն, խիստ հեռուէն լոյս մը նշմարեց որ վարը, իր առջևը կերևար։ Այս անդամ տեսածը չէ թէ սոսկալի այլ բարի և սպիտակ լոյսն էր։ Արևն էր։

Ծան Վալժան կոյուղիին ելքը կը տեսնէր։

Ծան Վալժան այս ելքը տեսնելով զգաց ինչ որ դեհենապարտ հոգի մը կրնար զգալ յանկարծ դեհենին ելքը նշմարելով։ Այս հոգին հարիւր իր այրած թևերովն դէպ՝ի լուսափղփղող դուռը պիտի թռէր մղեղնաբար։ Ծան Վալժան ալ յողնութիւն չզգաց, ալ Մարիուսին ծանրութիւնը չզգաց, ծունկերն առաջուան պէս պողպատեայ ծունկեր եղան. ուրախ վազեց քանթէ քայլեց դէպ այն ելքը։ Քանի որ կը մօտեր Ծան Վալժան, ելքն աւելի որոշապէս կը ծրագրուէր. համրջաձև կամար մ՚էր այն որ կոյուղիին դմբեթէն աւելի ցած և ձամբայէն աւելի նեղ էր. կոյուղիին դմբեթն երթալով կը ցածնար, ձամբան նոյնպէս հետ գհետէ կը նեղնար։ Ստորերկրային ճամբուն ծայրը ձագարի մը ներսին ձևին պէս նեղնալով կամիոփուէր. յոռի ամիոփում որ բանտերու դրնաներու նմանութիւնն է. որ բանտի մը մէջ բանաւոր պատճառն ունի այլ կոյուղիի մը չունի. կոյուղիներուն այս պակասութիւնը եռքէն ուղղուեցաւ։

Ծան Վալժան հասաւ ելքին քովը։

Հոն կանգ առաւ։

Իրօք այն էր ելքը, բայց կարելի չէր ելնելը։

Կամարը հաստատուն վանդակով մը գոցուած էր, և վանդակը՝ որ յայտնապէս կերևար թէ խիստ քիչ անգամ կը դառնար իր ժանգահար ծխնիներուն վրայ՝ իր քարե շրջանակին կցուած էր հաստ կղպակով մ՚որ ժանգին կարմրութեամբը կարծես թէ ահագին աղիւս մ՚էր։ Բանալին ծակը կը տեսնուէր, նաև կղպակին ամրապինդ լեզուն որ իր երկաթէ ադդալին մէջ մխուած էր բոլորովին։ Ցայտնապէս կերևար թէ կղպակը գոցողը բանալին երկու անգամ դարձնելով գոցած էր։ Ասի բերդերու յատուկ այն կղպակներուն մին էր զոր

հին Բարիզը լիուլի և յօժարակամ կը հայթայթէր։

Վանդակին անդիի կողմն էր բայ օգը, դետը, արևը, աշխարհ, այլ անցնելու բաւղ սեպհղերը, հեռաւոր ափնուղինները, Բարիզ այսինքն այն վիհն ուր խիստ դիւրին է պահսուիլը, լայնածաւալ հորիզոնը, ազատութիւնը։ Այլ կողմին դէպ՝ի վար Իէնայի կամուրջը, ձախ կողմին ալ դէպ՝ի վեր Էնվալիտի կամուրջը կը նշմարուէր. դիշերուան սպասելու և ապա փախչելու յարմար կրնար դալ տեղը։ Բարիզի ամենէն մենական կողմերուն մին, այսինքն կրօ-Գայլուի հանդիպակաց սեպհղն էր այս։ Ճանճերը վանդակին ծակերէն կելնէին և կը մտնէին։

Երեկոյեան ժամն ութուկէս էր դրեթէ։ Օրը կը տարաժամեր։

Ծան Վալժան Մարիուսը պատին քովը քարուկիր գետնին չոր կողմը դնելով վանդակին մօտեցաւ և երկու ձեռներովը սիւնակները բռնելով սաստկապէս ցնդեց այլ չկրցաւ դղրդել։ Վանդակը չթնռաց։ Ծան Վալժան նաև մի առ մի բռնեց սիւնակները՝ յուսալով թէ կրնայ անոնց նուազ դիմացկունը քաշել հանել և իբր լծակ դործածել դուռը վերցնելու կամ կղպակը խորտակելու համար։ Սիւնակներուն և ոչ մին շարժեցաւ։ Վագրի մ՚ակռաներէն աւելի ամրապես ազուցուած էին անոնք։ Առանց լծակի կարելի չէ յենուլ ծանր մարմին մը վերցնելու համար։ Անյաղթելի էր խոչընդոտը։ Դուռը բանալու միջոց մը չկար ամենևին։

Ուրեմն պէտք էր հոն վախճանիլ։ Ինչ ընէր. ինչ ըլլար. նա երթալու, արդէն բրած ահարկու ուղևորութիւնը վերըսկսին սկսելու ոյժը չունէր։ Մանաւանդ թէ ինչպէս պիտի անցնէր այն տղմախորէն ուսկէ հրաշքով կարելի եղած էր ազատիլ։ Եւ տղմախորէն եռքն ալ միթէ պիտի չհանդիպէր այն ոստիկաններու խումբին որու ձեռքէն հարիւր երկու անդամ չպիտի ազատէր։ Եւ ուր պիտի երթար. ո՞ր կողմը պիտի ուղղուէր. եթէ կոյուղիին դարուվարէն երթար նպատակին չպիտի հասնէր։ Ուրիշ ելք մը գտնելու ըլլար անգամ,

հարկաւ այն ալ վանդակով կամ խիցով մը խափանուած պի-
տի ըլլար : Կայուղիին բոլոր դուռերը հարկաւ այսպէս պա-
ուած էին : Դիպուածը տեղէն խախտած էր այն վանդակն
ուսկէ Ժան Վալժան մտած էր , բայց անշուշտ միւս ամեն
վանդակները փակուած էին : Ըսել է թէ ազատելու համար
փախած և բանտ մը մտած էր :

Ա՛լ յոյս չկար : Փրկութեան համար Ժան Վալժանին բո-
լոր ըրածներն անօգուտ էին : Աստուած կը մերժէր :

Երկուքն ալ մահուան տխուր և անբաւ ստոյգնէն բռնուած
էին , և Ժան Վալժան անոր թեւերուն վրայ զարհուրելի
սարդին ՚ի խաւարի սարսուռով վազելը կզգար :

Դռնակը վանդակին տուաւ , և քարայատակին վրայ ինկաւ
աւելի տապալելով քանթէ նստելով Մարիուսին քով որ միշտ
շարժում չունէր և իր գլուխը երկու ծունկերուն մէջ տեղը
խոնարհեցաւ : Ելք չկար : Անձկութեան յատկին կաթիլն էր այս:

Որո՞ւ վրայ կը խորհէր այս ծայրայեղ վհատութեան մէջ:
Ո՛չ իր , ոչ ալ Մարիուսին , այլ Գոզլէթին վրայ :

ԳԼՈՒԽ Ը՝

ԳԱՏՈՒԱԾ ԹԻԿՆՈՑԻՆ ՄԱՍԸ

Մ՚ԻՆՉԴԵՒ այս յուսահատական վհատութեամբ համակ-
ուած կը կենար , ձեռք մը դրուեցաւ իր ուսին վրայ և կա-
մացի խօսող ձայն մ՚ըսաւ իրեն՝

— Կխսուինք :

Այս գերեզմանին մէջ ուրիշ ով կրնար գտնուիլ : Ձկայ
բան մ՚որ յուսահատութեան չափ նմանի երազին : Ժան Վալ-
ժան կարծեց թէ կերազէ : Քայլի ձայն առած չէր ամենևին:
Մ՚թթէ կարելի բան էր : Վեր ըրաւ աչերը :

Իրօք մարդ մը կար իր առջևը :

Այս մարդը կապայ մը հագած էր՝ ոտները բոպիկ էին՝
ճռճռակները ձախ ձեռքը բռնած էր՝ անշուշտ գիտմամբ հա-

նած էր մուճակները որպէս զի կարենայ մինչև Ժան Վալ-
ժանին քովը հասնիլ անձայն :

Ժան Վալժան և ոչ իսկ վայրկեան մը վարանեցաւ : Որ-
քան ալ անակնկալ ըլլար հանդիպումը , մարդը ծանօթ էր
իրեն : Այս մարդը Թենարտիէն էր :

Ժան Վալժան թէև կարծես ընդոստ արթնցած մարդու մը
կը նմանէր այն պահուն , բայց սովրած ըլլալով զգուշու-
թեան և անակնկալ դէպքերու՝ որոնց առաջքն շուտով առ-
նուլ պէտք է՝ անմիջապէս և կատարելապէս ուշադրեցաւ :
Մանաւանդ թէ իր դիրքը չէր կրնար աւելի յոռի ըլլալ : Ա-
զէտքը կունենայ աստիճան մ՚որ անկարող է աւելի յոռի ըլ-
լալու : և Թենարտիէ չէր կրնար սևուելիւն մը վերագրել այս
դիշերային խաւարին :

Պահ մը սպասեցին :

Թենարտիէ աջ ձեռքը մինչև ճակատին վերևը վերցուն-
լով լուսադրել մ՚ըրաւ , յետոյ աչերը թարթելով ունքերը
մօտեցուց , և քերանն ալ թեթևակի ճմլեց : կորովամիտ մար-
դու մը մարդ մը ճանչնալու համար ըրած ուշադրութեան նկա-
րագիրը կը կազմեն ձեռքի և դէմքի այս շարժումները : Բայց
Թենարտիէ չկրցաւ ճանչնալ Ժան Վալժանը : Ինչպէս ըսինք
պահ մ՚առաջ , Ժան Վալժան կռնակը լոյսին դարձուցած ,
մանաւանդ թէ բոլորովին տղմուտ , արիւնաթաթաւ և դէմքն
ալ խանգարուած ըլլալով ցորեկը կէսօրի ժամանակ անգամ
անճանաչելի էր : Բայց ինքը տեսաւ չտեսաւ և ահա իսկոյն
ճանչցաւ Թենարտիէն որու երեսը կը լուսաւորուէր վանդակին
լոյսէն : այս լոյսը ստոյգ է թէ ստորերկրայինն էր , ժոգոյն
էր , բայց ժոգունութեանը մէջ ճիշդ էր : Պայմաններու այս
անհաւասարութիւնը կը բաւէր ստուգապէս Ժան Վալժանին
առաւելութիւն մը տալու այն դաշտին մենամարտութեան մէջ
որ պիտի սկսէր երկու կայութեանց և երկու մարդերուն մէջ:
Իրարու հանդիպած էին՝ Ժան Վալժանը աքօղած , իսկ Թե-
նարտիէ գիմակը հանած :

Ժան Վալժան անմիջապէս նշմարեց Թենարտիէին չհանչուիլը։ Այս կիսատուերին մէջ պահ մ'իրարու նայեցան իրը թէ ուղէին մէկ մէկու չափն առնուլ։

Նախ Թենարտիէն խզեց լռութիւնը։

— Ի՞նչպէս պիտի կրնաս դուրս ելլել։

Ժան Վալժան չպատասխանեց։

Թենարտիէ շարունակեց։

— Անկարելի է խորտակել դուռը։ Այլ սակայն պէտք է որ դուրս ելլես։

— Իրաւ է, ըսաւ Ժան Վալժան։

— Կիսուինք ուրեմն։

— Ի՞նչ ըսել կուզես։

— Մարդը դուն մեղցուցիր, լա՛ւ։ Ես ալ վանդակին բանալին ունիմ։

Թենարտիէ մատովը Մարիուսը կը ցուցուներ։ Ապա շարաչարեց։

— Չեմ ճանչնար քեզի, բայց կուզեմ օգնել։ Անշուշտ բարեկամ մ'ես։

Ժան Վալժան սկսաւ հասկնալ։ Թենարտիէ մարդասպան մը կը կարծէր ինքը։

Թենարտիէ կրկնեց։

— Մոխիկ ըրէ, բարեկամ։ Այս մարդը մեղցունելէ առաջ հարկաւ նայած ես թէ ինչ ունի գրպանը։ Սէսն իմս է։ տա՛ւր։ ես ալ դուռը կը բանամ։

Եւ բոլորովին ծակծկուած պլուզային տակէն ահագին բանալի մը հանելով կիսովին, շարայարեց։

— Կուզէս տեսնել ազատութեան բանալին ինչպէս շինուած ըլլալը։ Ահաւասիկ։

Ժան Վալժան այնքան «ապուշ դարձաւ», — ծեր Գօրնեյլիոն է այս խօսքը, — որ տարակուսելի երեւցաւ իրեն ինչ որ կը տեսնէր։ Ցեղած էր նախախնամութիւնը որ սոսկալի կերեւար, և բարի հրեշտակը որ Թենարտիէի կերպարանով դեռնին տակէն կելնէր։

Թենարտիէ ձեռքն իր կապային տակը պահուած լայն դրամպանը տանելով չուան մը քաշեց և Ժան Վալժանին երկընցունելով, ըսաւ։

— Ա՛ռ, ահա քեզի չուան մ'ալ կուտամ սակարկութենէ դուրս։

— Ի՞նչ ընեմ այդ չուանը։

— Քարի մ'ալ հարկաւորութիւն ունիս, բայց դուրսը կրնաս քար գտնել։ Հոն հողաքարի կոյտ մը կայ։

— Ի՞նչ ընեմ քարը։

— Աւանակ, քանի որ դեռ պիտի նետես դիակը, չուանի և քարի մը հարկաւորութիւն ունիս, թէ ոչ ջուրին երեսը կը ծիլի դիակը։

Ժան Վալժան առաւ չուանը։ Չկայ մարդ մ'որ չունենայ այսպիսի մեքենայական առումներ։

Թենարտիէ յանկարծ գաղափար մ'ունեցողի մը պէս մատերը կրձել սուաւ։

— Բայց աղէկ միտքս եկաւ։ բարեկա՛մ, ինչպէս կրցար ազատիլ կոյաղիին այն տղմախորէն։ Ես չհամարձակեցայ այդ վտանգին ենթարկիլ։ Բա՛ւ, դէշ կը հոտիս։

Պահ մը լռելէն ետք շարունակեց։

— Քեզի ըրած հարցումներուս պատասխան չես տար, ի՞նչ բաւունք ունիս։ Փուրսիշ գատաւորին առջև չմտանուելու վարպետութիւնը սորվիլ է այդ։ Մտանաւանդ թէ ոմ՛ր օր ամենևին չխօսիր, շատ բարձր խօսելու վտանգին չենթարկիր։ Հոգ չէ։ Թէև չեմ տեսներ դէմքդ, թէև չեմ գիտեր ազնուդ, բայց կը սխալիս եթէ կարծես թէ չեմ գիտեր ո՛վ ըլլալդ և ի՛նչ ուզելդ։ Յայտնի է։ Սա պարոնը չախչախեցիր փոքր ինչ, հիմա կուզես տեղ մը պահել զան։ Հարիւր տարի է քեզ դեռ այսինքն ամեն տխմարութեանց երեւելի պատահարը։ Կուզեմ դժուարութենէ ազատել զքեզ։ Հաճելի է ինձ լաւ տղայի մ'օգնելը։

Թենարտիէ Ժան Վալժանի լռութիւնը իրաւացի սեպելով

հանդերձ յայտնապէս կաշխատէր խօսեցնել զան։ Ժան Վալժան ուսը հրեց անոր կիսագէմքը տեսնել կարենալու համար, և աղաղակեց՝ սակայն առանց ելնելու այն միջավայրէն ուր կը պահէր իր ձայնը։

— Աղէկ միտքս եկաւ տղմախորը· կատարեալ աւանակ մ'ես եղեր։ Ինչո՞ւ հոն չնետեցիր մարդը։

Ժան Վալժան պատասխան չտուաւ։

Թենարտիէ զգօն մարդու մ'արտաքին կորովամտութիւնը ամրողջող շարժումմ մ'ընելով, այսինքն մինչև խուչակը վեր ընելով իր վզնոցը որ քուրջ մ'էր, կրկնեց·

— Բայց թերևս խոհեմութիւն մ'ըրիր չնետելով։ Եթէ հոն նետած ըլլայիր, բանւորները վաղը փոսը գոցելու ժամանակ հարկաւ դիակը հոն մոռցուած պիտի դտնէին, և թել առ թել, շիլ առ շիլ խուզարկելով և հետքը դտնելով պիտի կրնային մինչև քեզ հասնիլ։ Մարդ մ'անցեր է կոյուղիէն· ոմ. ուսկէ՞ դուրս ելաւ· ո՞ր տեսնուեցաւ ելնելը։ Ոստիկանութիւնը շատ խելացի է։ Կոյուղին դրուժան մ'է և կը մատնէ մարդս։ Այսպիսի դիւտ մը հաղուագիւտ է, հետևաբար ուշադրութիւնը կը հրաւիրէ· քիչերը կոյուղին կը գործածեն իրենց գործերուն համար, մինչդեռ գետն ամեն մարդու կը վերաբերի։ Գետը բուն փոս է։ Ամիսէ մ'ետք Սէն-Գլուի առուակներու մէջ վերստին կորսցուի թաղած մարդդ։ Վայ, աս ինչ բան ունի հոս։ Զարմանք· դի մ'է եղեր։ Ոչ մեծ ցուց այս մարդը· Խարիզ։ Հետևաբար արդարութիւնն և ոչ իսկ խուզարկութիւն կրնէ։ Աղէկ ըրիր։

Թենարտիէի շահախնդրութեան փոխարէն Ժան Վալժան բոլորովին կը լռէր։ Աւազակը վերստին ցնցելով անոր ուսը՝ ըսաւ·

— Հիմա սակարկութիւնը լմնցնենք։ Խաժնենք։ Բանալիս ցուցուցի քեզի, դուն ալ ստակդ ցուցուր ինձ։

Թենարտիէ դժնէադէմ, վայրենի, կասկածելի, փոքր ինչ սպառնական, այլ սակայն բարեկամական կերպարանք ուներ։

Տարօրինակ բան մը կար սակայն· Թենարտիէի ընթացքն ու շարժուձևերը բնական չէին· բոլորովին հանդարտ մարդու մը չէր նմաներ ան· Թէև դաղտնապէս և զգուշութեամբ վարուող մարդու մը կերպարանքը չուներ, սակայն մերթ ընդ մերթ մատը բերնին վրայ դնելով կը մրմնար· Կամայ խօսէ։ Դժուարին էր դուշակել պատճառը։ Ժան Վալժանէն և իրմէ զատ ոչ ոք կար հոն։ Ժան Վալժան կարծեց թէ դուցէ կոյուղիին մէկ խորշը, մօտակայ խորշ մը պահուած ուրիշ աւազակներ կան, և թէ Թենարտիէ դիտաւորութիւն չունի անոնց ալ մաս հանելու։

Թենարտիէ կրկնեց·

— Վերջ ընենք։ Մարդն ո՛րքան ուներ գրպաններուն մէջ։

Ժան Վալժան իր գրպանը խուզարկեց։

Ինչպէս կը յիշէ ընթերցողը, Ժան Վալժան սովորութիւն ըրած էր միշտ ստակ ունենալ հետը։ Հնարքով ու միջոցներով տխուր կեանք մը վարելու դատապարտուած ըլլալուն համար օրէնք մ'ըրած էր իրեն անարծաթ չդտնուիլը։ Սակայն այս անդամ յանպատրաստի բռնուած էր։ Առջի օրն իրիկուն իր ազգային պահակի համազգեստը հագնելու ժամանակ՝ ստակալի մոահոդութիւններով դրաւուած ըլլալով մոռցած էր հետն առնուլ թղթակալը։ Ծիլէին գրպանին մէջ քանի մը դրամ կար միայն։ Տղմաթաթաւ գրպանին ներսը դուրս ըրաւ և քարուկիր յատակին բազմաւին վրայ լուիճի մը, երկու հինգ ֆրանքնոց և հինգ կամ վեց մեծ սու դրաւ։

Թենարտիէ ստորին շրթունքը վեր ըրաւ վզի պրկումով մ'որ առանց նշանակութեան չէր։

— Մեծ բանի մը համար չմեղցուցեր ես մարդը, ըսաւ։

Եւ սկսաւ Ժան Վալժանին և Մարիուսին գրպանները շօշափել բոլորովին մտերմաբար։ Ժան Վալժան ամեն բանէ աւելի կոնակը լոյսին տալու մոահոդութեամբը դրաւուած ըլլալով ձայն չէր հաներ։ Թենարտիէ Մարիուսին գրեթէ շօշափելու ժամանակ ձեռնածուի յատուկ արագաշարժութեամբ

Ե՞ առանց նշմարուելու ծան Վալժանէն՝ միջոց մը գտաւ վիճաւորին ղեկտչէն կտոր մը բրդունելու զոր իր կապային տակը պահեց, թերևս մտածելով թէ այս դիպակի կտորին շնորհիւ հեռքէն պիտի կրնայ ճանչնալ թէ սպանողը և թէ սպանուածը: Սակայն այն երսուն ֆրանքէն աւելի բան մը չէ գտաւ: — Սորդ է, ըսաւ Թենարտիէ, մէկ մէկու վրայ հաշտւելով ասկէ աւելի չունիք:

Եւ՝ մոռնալով իր կնո՞ջ խօսքը՝ ամենը առաւ:

Պահ մը վարանեցաւ առնելու մեծ սուները: Մտածելէն ետք զանոնք ալ առաւ՝ մրմնջալով.

— Հոգ չէ, մարդերը ոչինչ բանի մը համար մեղադրանել կ՚ուզեն:

Ապա բանալին դարձեալ կապային տակէն հանելով, ըսաւ.

— Հիմա, բարեկամ, պէտք է որ դուրս ելնես: Տօնավաճառի պէս է հոս: Ելնելու համար պէտք է վճարել: Դուն վճարեցիր, դուրս ելիր:

Եւ սկսաւ խնդալ:

Թենարտիէ՝ այս բանալիով անծանօթի մ՚օդնելով և այն վանդակէն իր տեղն ուրիշ մը դուրս հանելով արդեօք մարգասպան մ՚ազատելու անկեղծ և անշահախնդիր դիտաւորութիւնն ունէր: Կը տարակուսինք:

Թենարտիէ օդնեց ծան Վալժանին Մարիուսը շալկելու համար, ապա բոպիկ ոտներուն ծայրովը քալելով դէպ՚ի վանդակին ուղղեցաւ, նշան ընելով ծան Վալժանին որ իր եռանդայ: դուրս նայեցաւ, մատը բերնին վրայ դրաւ և քանի մը րոպէ կարծես՚ի կախ մնաց: լաւ մը դիտելէն ետք բանալին կղպակին ծակը դրաւ: Սահեցաւ կղպակին լեզուն և դուռը դարձաւ, առանց ճռնչելու և առանց կրձտելու, և բոլորովին հանդարտիկ: Ցայտնի էր թէ այս վանդակն և իր ծխնիները զգուշութեամբ իւղուած ըլլալով շատ անգամ կը բացուէին, թէև չէր կարծուեր թէ այնքան սահուն բացուին: Աղետալի բան մ՚էր վանդակին այսպիսի հանդարտութեամբ բացուիլը,

հանդարտութիւն որու մէջ մարդս դիշերային մարդերու դաղտնի երթեւեկութիւնները, լուին ելմուտները և ոճիրին դայլային քայլերը կզդար: Անշուշտ կոյուղին աւազակներու դաղտնի խումբի մը հետ միացակից էր: Այս լուակայ վանդակն աւազակութեան թագստոց մ՚էր:

Թենարտիէ վանդակը կիսովին և մարդ մը միայն սղմելու չափ բանալով թող տուաւ որ անցնի ծան Վալժան, վերըստին դոցեց վանդակը, բանալին երկու անգամ դարձուց կղպակին մէջ և դարձեալ կոյուղիին մթութեան անդունդը սուղեցաւ շունչէ մ՚աւելի ձայն չհանելով: Կարծես թէ վագրին թաւշէնման թաթերովը կը քալէր: Պահ մ՚ետք այս ժիժալի նախախնամութիւնն անհետացաւ եղած էր:

ծան Վալժան դուրսն էր հիմա:

ԳԼՈՒԽ Ը.

ՄԱՐԻՈՒՍ ՄԵՌԱԾ ԿԸ ԹՈՒԻ ՄԻԿՈՒ ՄԸ ՈՐ ԿԸ ՃԱՆԶՆԱՑ ՄԵԹԵԼՆԵՐԸ

ծան Վալժան թող տուաւ Մարիուսը որ սեպղրին վրայ սպրդի կռնակէն:

Վերջապէս դուրսն էին ալ:

ծան Վալժանի եռանդին էին դարշահոտութիւնները, մթութիւնը, սոսկումը: Հիմակ ալ առողջաւէտ, մաքուր, կենդանի, ուրախալի և ազատօրէն շնչելի օդէն կողղողուեր: Իր բոլորտիքն ամենուրեք լուութիւն կը տիրէր, բայց կապտափայլ երկնից վրայէն իջնելով մարը մանող արեւին սիրուն լուութիւնը: Ա՛լ վերջալոյս եղած էր· դիշերը, այսինքն անձկութենէ մ՚ազատելու համար մթին վերարկուի մը հարկաւորութիւն ունեցողներուն մեծ փրկիչը, բարեկամը կուգար: Երկինքն ամէն կողմէ իբր աշտղին հանդարտութիւն մը կընծայէր: Գետին ջուրը մինչև ծան Վալժանին ոտները կու-

զար համբոյրի մը ձայնով։ Ջանդ–Էլիզէի կնձնիներու մէջ իրարու դիշեր բարի ըսող բոյներուն օդային տրամախօսութիւնները կը լսուէին։ Քանի մ'աստղեր որք զէնիթին տըժդոյն կապոյտը կը ծակծկէին աղօտապէս և որք մտախոհութեան միայն տեսանելի էին՝ աննշմարելի փողփողումներ կը կազմէին երկնից անբաւութեան վրայ։ Երեկոյեան ժամանակը Ժան Վալժանին դէմքուն վերևը կը սփռէր անսահմանութեան ամեն քաղցրութիւնները։

Երեկոյեան այն դեղեցուն և ընծիր ժամանակին էր որ ոչ այո կըսէ, ոչ ալ ոչ։ Արդէն բաւական մութ ըլլալով կարելի էր հոն աներևոյթ ըլլալ քիչ մ'անդին գտնուողի մը, նաև դեռ բաւական լոյս ըլլալով կարելի էր ճանչուիլ 'ի մօտաւտ։

Բնութեան այս վեհ և դղուելի հանդարտութիւնը քանի մը մանրերկրորդ անդիմագրապէս նուաճեց Ժան Վալժանը. կան վայրկեաններ ուր մարդս այսպէս կը մոռնայ իր ներկայ վիճակը. վիշտն ալ չուզեր չարչարել թշուառը. ամեն բան կը խաւարի մտածումին մէջ. խաղաղութիւնն իբր դիշեր մը կը ծածկէ մտախոհը, և հոգին կաստեղաւորի (s'étoiler) ձագայթող վերջալոյսին և լուսաւորուող երկնից պէս։ Ժան Վալժան չկրնալով զսպուիլ՝ հոգեպիշ նայեցաւ իր վերևը տարածուող այս հանրատարած պայծառ մթութիւնը։ Կը խորհէր և յաւերժաւոր երկնից այս վեհաշուք լռութեան մէջ հիացումով և աղօթքով կը լուացուէր դիտովին։ Ապա ուժդնակի, կարծես պարտաւորութիւն մ'ունենալը վերստին ըզդալով՝ դէպ 'ի Մարիուս ծռուեցաւ և ձեռնովը չուր առնելով գեաէն Մարիուսին երեսին վրայ սրսկեց մեղմիկ։ Մարիուսի արտևանունքը չթացուեցաւ. բայց իր կիսաբաց բերանը կը շնչէր։

Ժան Վալժան կը պատրաստուէր վերստին գետը խօթելու ձեռքը երբ չդիտեմ ինչ նեղութիւն մը զգաց յանկարծ, նեղութիւն զոր մարդս կզգայ երբ իր եռևը մեկը կունենայ առանց տեսնելու։

Արդէն նշանակած ենք այս տպաւորութիւնը որ ծանօթ է ամենուն։

Ժան Վալժան եռևը դարձաւ։

Իրօք ինչպէս քիչ մ'առաջ կոյուղիին մէջ, հիմակ ալ դուբօր մարդ մը կար իր եռևը։

Ժան Վալժանին եռևը՝ որ Մարիուսի վրայ կէկուած էր՝ քանի մը քայլ հետև ոտքի վրայ կայնած, երկայն թիկնոց մը հագած և ձեռները կուրծքին վրայ առած բարձրահաս մարդ մը կար՝ աջ ձեռքը մահակով մ'որու կապարեայ գլուխը կը տեսնուէր։

Մութին շնորհիւ տեսակ մ'ուրուականի կրնար տեսնել անոր պարզ մարդ մ'երեկոյեան մութին պատճառաւ, և խորհելու սովրած մարդ մ'ալ մահակին պատճառաւ թերևս վախնար անոնց։

Ժան Վալժան ճանչցաւ ծավէրը։

Ընթերցողը դուշակեց անշուշտ թէ Թենարտիէին եռևէն ինկողը ծավէրն էր։ Ծավէր պատնէշէն անակնկալ կերպով մ'ելնելէն ետք ոստիկանութեան պաշտօնատունն երթալով և կարճատև ունկնդրութիւն մը խնդրելով եղելութիւնը պաշտօնէին յայտնած էր անձամբ, և եռքն անմիջապէս սկսած էր պաշտօն կատարել։ Իր վրայ գտնուած տեղեկագրէն ինչպէս իմացանք արդէն, ծավէրին այս պաշտօնին պարտականութեանց մին էր Ջանդ–Էլիզէի քովերը հսկողութիւն ընել գետին աջակողմեան սեպհերին վրայ որ ժամանակէ մ'ի վեր ոստիկանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէր։ Հոն Թենարտիէն նշմարելով եռևէն գացած էր։ Ընթերցողը դիտէ արդէն այս հսկողութեան վախճանը։

Ցայտնի է նաև թէ Թենարտիէին Ժան Վալժանին համար այն վանդակը բանալը շնորհք մը չէր այլ սատանութիւն մը։ Թենարտիէ կզգար թէ ծավէր դուրսը կսպասէ միշտ. դիտուող մարդն այնպիսի հոտառութիւն մ'ունի ուսկէ չվտաբուիր. պէտք էր ոսկր մը նետել այն հետախոյզ պառակտին բերա-

նը : Մարդասպան մը , ինչ ընտիր օրս : Իր ազատութեանը համար անհրաժեշտ էր իր կողմէն այսպիսի զոհողութիւն մը ընել : Թենարտիէ իր տեղը Ժան Վալժանը դուրս հանելով որս մը կուտար ոստիկանութեան , իր հետքը խուզելէ կը դադրեցնէր Ժավէրը , աւելի մեծ դէպքի մը ընծրհիւ կը մոռցուէր , Ժավէրին սպասումը կը վարձատրէր , վարձատրութիւն որ միշտ ողջալի է ոստիկանութեան լրտեսի մը համար , երսուն ֆրանք կը վաստկէր , և իրերու վիճակին այս փոփոխութեան շնորհիւը կը յուսար փախչիլ :

Ժան Վալժան ժպտէ մ'ուրիշ ժպտ անցած էր :

Խիստ էր հետ գտնուիլ այս մարդերուն հանդիպիլը , թենարտիէին Ժավէրին ձեռքն խնալը :

Ժավէր չճանչցաւ Ժան Վալժանը որ՝ ինչպէս ըսինք արդէն՝ այլ չէր նմաներ ինքն իրեն : Ոստիկանն առանց վար առնելու թևերը և անշարժութեամբ մը մահակը լաւ մը բռնելով՝ կարճ ու հանդարտ ձայնով մ'ըսաւ .

— Ո՞վ էք :

— Ե՛ս :

— Բայց ո՞վ էք :

— Ժան Վալժան :

Ժավէր ակռաներովը բռնեց մահակը , ծունկերը կրկնեց , մարմինը կռկեց , երկու հաստաբազուկ ձեռները Ժան Վալժանին ուսերուն վրայ դրաւ՝ որք երկու մամուլի մէջ բռնուելու պէս ճնշուեցան , քննեց զան և ճանչցաւ : Երկուքին երեսները գրեթէ կը դպնային իրարու : Սոսկալի էր Ժավէրին նայուածքը :

Ժան Վալժան՝ լուսանկի մը ճիրանին հաւանող առիւծի մը պէս՝ անշարժ մնաց Ժավէրին պնդապէս ճնշող ձեռներուն տակ :

— Ոստիկան Ժավէր , ահա կը բռնես զիս , լաւ : Սակայն այս առաւօտէն՝ ի վեր ձեր բանտարը կը համարեմ զիս : Եթէ ձեր ձեռքէն փախչելու դիտաւորութիւն ունենայի , ուր բնա-

կիլը չէի յայտներ ձեզ : Միայն թէ ընորհ մ'ըրէք ինձ :

Ժավէր կարծես թէ լսելով Ժան Վալժանին կը նայէր ակնապիտ : Կծկուած կզակը դէպ՝ ի քիթը կը մղէր իր շուրթերը , նշան վայրենական մտախոհութեան : Վերջապէս թողուց Ժան Վալժանը , ուղղակի կայնեցաւ , մահակը ձեռքն առաւ ամրապես , և երազի մէջ խօսելու պէս սա հարցումը ըրաւ աւելի շուրջով քանթէ արտասանութեամբ :

— Ի՞նչ կընէք հոդ , և ո՛վ է այդ մարդը :

Ժավէր պատնէշէն ազատելէն՝ ի վեր չէր դուզեր Ժան Վալժանը :

Ժան Վալժան պատասխանեց , և իր ձայնին հնչումը կարծես թէ ուշաբերեց ոստիկանը :

— Ես ալ ճիշդ անոր նկատմամբ կուզէի խօսիլ : Ի՛նչ կուզէք ըրէք զիս , բայց նախ օգնեցէք ինձ իր տունը տանելու զան : Այս է միայն խնդրածս :

Երբ որ մարդ կարծեր թէ Ժավէր կարող է զիջում մ'ընելու , ասի սովորութիւն ունէր իր դէմքն ամիոփելու : Ժավէրի դէմքն ահա այսպիսի ամիոփում մ'ունեցաւ Ժան Վալժանի խնդիրին վրայ : Սակայն չմերժեց խնդիրը :

Վերստին կճկուեցաւ Ժավէր , դրպանէն թաշկինակ մը հանելով չորսին թրջեց և Մարիուսի արիւնաթաթաւ ճակատը սրբեց :

— Այս մարդը պատնէշն էր , ըսաւ կէս ձայնով և ինքն իրեն խօսելու պէս : Աս է այն որ Մարիուս կանուանէր :

Ժավէր՝ իր առաջին կարգի լրտես՝ նաև մեռնիլը պիտակուած՝ ամեն բան դիտած , ամեն բան մանիկ ըրած , ամեն ինչ լսած , նաև հոգեվարութեան մէջ լրտեսած և՝ դերեզմանին սահմանը առաջին աստիճանին վրայ կոթնելով՝ տեղեկութիւններ առած էր :

Մարիուսին ձեռքը բռնեց երակին զարկը փնտռելով :

— Վիրաւոր մ'է , ըսաւ Ժան Վալժան :

— Մեռեալ մ'է , ըսաւ Ժավէր :

Ժան Վալժան պատասխանեց·

— Ծակաւին չմեռած է։

— Ուրեմն պատնէշէն հոս բերիք ասի, հարցուց Ժավէր։

Կերևայ թէ ստոյիկ մտահոգութեամբ մը դրաւուած էր Ժավէր, վասն զի ոչ հարցուց անոր թէ ինչպէս այսպիսի վտանգաւոր կերպով մ'անցած և ազատած էր կոյուղիին մէջէն, և ոչ նշմարեց իր հարցումէն ետք Ժան Վալժանին լուռթիւնը։

Ժան Վալժանն ալ կերևար թէ մէկ խորհուրդ ունէր միայն։ Ուստի կրկնեց·

— Մարէի թաղը Ֆիլ–Տիւ–Գալվէր փողոցը կը բնակի իր հաւին տունը որ··· Չդիտեմ ինչ է հաւին անունը։

Ժան Վալժան Մարիուսի թիկնոցին գրպանէն թղթակալը հանելով բացաւ այն երեսն որու վրայ Մարիուս մատիտով քանի մը տող գրած էր, և Ժավէրին երկնցուց։

Օդին մէջ տակաւին բաւական ծփուն պայծառութիւն մը ըլլալով կարելի էր գիր մը կարդալ։ Մանաւանդ թէ Ժավէրին աչքը գիշերային թռչնոց կատուի աչքի յատուկ լուսակրութիւնն ունէր։

Կրցաւ կարդալ Մարիուսին գրած տողերը և մրմնաց·— Ֆիլնօրման, Ֆիլ–Տիւ–Գալվէր փողոցը, թիւ 6։

Ապա գոչեց·— կատապան։

Ընթերցողը կը յիշէ հարկաւ այն կատքը որ կսպասէր Ժավէրին հրամանին։

Ժավէրը քովը պահեց Մարիուսին թղթակալը։

Պահ մ'ետք կատքը չբարբին դարուվերէն իջնելով սեպելբին վրան եկաւ, Մարիուս ներսի բազմաւին վրայ դրուեցաւ, և Ժավէրը Ժան Վալժանին հետ առջևի բազմաւին վրայ նստաւ։

Երկանիւը՝ դռնակը դոցուելէն ետք՝ արագօրէն հեռացաւ ափնուղիներէն անցնելով և դէպ 'ի Պասթիլի կողմն ուղղելով։

Ափնուղիներէն անելևոյթ ըլլալով փողոցները մտան։ Կառապանը՝ իր նստարանն իբր շքանկար նստած՝ ազազուն ձիերը կը մտրակէր։ Կառքին մէջ խորին լռութիւն կը տիրէր։ Մարիուս՝ անշարժ, մարմինովը կառքին ներսի կողմին կռթնած, գլուխը կուրծքին վրայ ինկած, թևերը կախուած և ոտներն անշարժ ըլլալով կարծես թէ դադրի մը կսպասէր։ Ժան Վալժան մհամար, իսկ Ժավէրը քարաշէն կերևար։ Եւ այս խաւարամած կառքին մէջ որու ներսը լամպարներուն առջևէն անցած ժամանակ իբր ընդհատական փայլակէ մը սևապէս կը ժժգունէր՝ դիպուածն երեք եղերերդային անշարժութիւնները, այսինքն դիակը, Ճիւաղը և արձանը կը միացնէր և սխրապէս կը դիմադիմէր։

ԳԼՈՒԽ Ա.

ԻՐ ԿԵԱՆՔԸ ՎՏԱՆՈՂ ՏՂՈՑԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ամեն անդամ որ կառքը կերերար քարայատակին վրայ, Մարիուսի մազերէն արեան կաթիլ մը կկոնար։

Խղճմտանքի դիշեր էր երբ երկանիւը Ֆիլ–Տիւ–Գալվէրի փողոցը 6 թիւ տունը հասաւ։

Նախ Ժավէրը դուրս ելաւ կառքէն, անդամ մը վեր նայելով տեսաւ որ իրօք վեց էր տունին թիւը· դուռին վրայ ծեծուած երկաթէ դռնահար մը կար որ հին ձևին համեմատ իբր զարդ մկղմկ նախատող նոխազ մ'և այծեմարդ մ'ուներ· Ժավէրը այս դռնահարը վեր ընելով անդամ մը զարկաւ սաստկապէս։ Երբ դռնաթևը (battant) կէս մը բացուեցաւ, Ժավէրը հրեց զայն։ Դռնապանը ձրագ 'ի ձեռին, հազիւ հազ արթնցած երևցաւ կիսովին և յօրանջելով։

Անն մարդ քնացած էր տունին մէջ։ Մարէի թաղին բնակիչները կանուխ կը պառկին, մանաւանդ խռովութեան ժամանակ։ Այս հին և բարեվիճ թաղը յեղափոխութենէ խրտչելով քունին կապաւինի այն մանկանց պէս որք Գարաքան-

Ջալոզին գալը լսելով շուտ մը վերմակին տակը կը պահեր իրենց դլուխը։

Յակայն Թան Վալժան և կառապանն երկանիւէն դուրս կը քաշէին Մարիուսը, Թան Վալժան անուէներէն, կառապանն ալ ծունդերէն բռնելով զան։

Թան Վալժան այս կերպով Մարիուսը տանելու ժամանակ՝ ձեռքն անոր գլեստներուն տակէն անցուներով որք լայնապէս պատռտուած էին՝ Մարիուսի կուրծքը գննեց և դիտեց որ տակաւին կը բաղխէր սիրտը։ Մանաւանդ թէ հիմակ ոչ այնքան տկարութեամբ կը բաղխէր, իբր թէ կառքին շարժումն վերստին փոքր ինչ կենդանութիւն առած ըլլար ան։

Թավէր հարցուց դռնապանին այն կերպով մ՚որ կը վայելէ կառավարութեան խուվարարի մը դռնապանին առջև։

— Թիլնօրման անուն մարդ մը կայ հոս։

— Հոս կը բնակի։ Ի՞նչ կուզէք։

— Իր տղան բերուեցաւ։

— Իր տղան, ըսաւ դռնապանն ապշութեամբ։

— Մեռաւ։

Թան Վալժան որ տղմաթաթաւ ցնցոտիներով Թավէրին նուէն կուդար և որուն պժդումով մը կը նայէր դռնապանը, գլուխովը նշան ըրաւ թէ մեռած չէ։

Բայց դռնապանը չհասկցաւ կարծենք ոչ Թավէրին խօսքը, և ոչ Թան Վալժանին նշանը։

Թավէր շարունակեց։

— Պատնէշը դնաց, և հիմակ ահա տես։

— Պատնէշը, դոչեց դռնապանը։

— Մեռաւ։ Գնա, արձնցուր Հայրը։

Դռնապանը չէր շարժեր։

— Գնա՛, ըսի, չլսեցի՞ր, դոչեց Թավէր։

Եւ շարայարեց։

— Վաղը Թաղում պիտի ըլլայ հոս։

Հասարակաց Ճամբուն սովորական դէպքերը Թավէրի հա-

մար Ճշդիւ դասակարգուած էին, դասակարգութիւն որ շրջանցէ Հայեցութեան և Հսկողութեան սկզբնաւորութիւնն է, և ամեն մէկ իրողութիւն իրեն յատուկ խորշն ունէր։ Հասարական իրողութիւնները կերպիւ իւրք գլորցներու մէջն էին ուսկէ՝ ի պահանջել հարկի կընդհին զանազան քանակութիւններով։ ազմուկ, խռովութիւն, բարեկենդան և թաղում կարփողոցը։

Դռնապանը Պասքը միայն արձնցուց։ Պասքն ալ Նիկոլէթը արձնցուց։ Նիկոլէթն ալ օրիորդ Թիլնօրմանը արձնցուց։ Թողուտուն որ քնանայ մեծ-Հայրը, մտածելով որ հարկաւ ան ալ շուտ մը պիտի իմանայ իրողութիւնը։

Մարիուս առաջին դասիկոնը տարուելով Պ. Թիլնօրմանին նախասենեկին մէջ հին բազմոցի մը վրայ դրուեցաւ, սակայն տան միւս մասերուն մարդկանց և ոչ մին նշմարեց Մարիուսին վերտարուիլը։ ԵՒ մինչդեռ Պասք բժիշկ մը փնտռելու կերթար և Նիկոլէթ Ճերմակեղինաց պահարանները կը բանար, Թան Վալժան զգաց որ Թավէր ձեռքովը իր ուսին կը դպչնար։ Հասկցաւ թէ ինչ ըսել կուզէր և վար իջաւ Թավէրին հետ որ իր եռւէն կը քայլէր։

Դռնապանն ահաբեկ քնէութեամբ մը դիտեց անոնց մեկնիլը ինչպէս դիտած էր գալը։

Թան Վալժան և Թավէր երկանիւը մտան, կառապանն ալ իր նստարանին վրան եկաւ։

— Ոստիկան Թավէր, ըսաւ Թան Վալժան, բան մ՚ևս չնորհեցէք ինձ։

— Ի՞նչ, հարցուց Թավէր խստիւ։

— Թոյլ տուէք որ պահ մը տունս մտնեմ։ Ապա ինչ որ կուզէք ըրէք զիս։

Թավէր քանի մը վայրկեան անմռունչ սպասեց, իզակը իր թիկնոցին մէջը մոգունելով։ Յետոյ առաջակողմանի պատուհանը վար առնելով,

— Կառապան, ըսաւ, Օմ-Արմէ փողոցը, թիւ 7։

ԳԼՈՒԽ ԾԱ.

ՓԼՈՐԻՄ Ի ԲԱՅՑԵՐՉԱՆԻՆ

Ճամբան ամենևին խօսք մը չըսին իրարու։

Ի՞նչ կուզէր Ժան Վալժան։ Լռութիւնել ինչ որ սկսած էր. իմաց տալ Գօզլէնին, ըսել անոր թէ ուր է Մարիուս, թերևս ուրիշ կարևոր տեղեկութիւն մ'ալ տալ, և՝ եթէ կարենար՝ քանի մը յետին կարգադրութիւններ ընել։ Իսկ ինքը, իսկ իր անձին վերաբերեալ ամեն բան ալ լռեցած էր. բըռնուած էր Ժավէրէն և չէր դիմադրեր այս ըմբռնումին. իր տեղն եթէ ուրիշ մ'ըլլար, այսպիսի կացութեան մը մէջ թերևս անորոշապէս միտքը բերէր թէնարտիէէն առած չուանը և իր մանչը այս կամ այն պղտանին երկաթէ սիւնակին բըռնել. բայց Միրիէլ եպիսկոպոսէն՝ ի վեր Ժան Վալժան բուռն երկիւղածութեամբ լի սաստիկ վարանում մը կզգար ամեն տեսակ, նաև իր անձին նկատմամբ ոճրագործութեան առջև։

Ժան Վալժանի համար անհնարին բան մ'էր ինքնասպանութիւնը, այսինքն անձնասպանին նկատմամբ այն խորհրդաւոր ընդդատութիւնն ուսկէ այսինչ համեմատութեամբ կըբռնայ հոգիին մահն արտադրիլ։

Երկանիւն Օմ-Արմէ փողոցը մանելուն պէս կեցաւ, վասն զի այս փողոցը շատ նեղ ըլլալով կառքերը չէն կրնար անցնիլ։ Ժավէրը և Ժան Վալժան վար իջան։

Դատապանը խնամարհաբար հասկցուց «ոստիկանութեան պատասխանատուին» թէ սպանուած մարդուն արիւնը և մարդասպանին սիւմը բոլորովին արատած էին իր կառքին Իւթրեչէ թաւիշը։ Դատապանին հասկցուցածն այս էր ահա։ Ըսաւ նաև թէ այս գէնին փոխարէն իրեն հատուցում մ'ընել պէտք էր։ Ապա պրպտեցէն տետրիկը (livret) հանելով ազատեց ոստիկանութեան պարտն տեսուչը որ բարեհաճի վրան երկու խօսք գրելու իբր վկայութիւն։

Ժավէրը ետ հրեց տետրիկը զոր Դատապանը կերկնցուներ իրեն, և ըսաւ.

— Ո՞րքան կուզես՝ սպասելուդ և մինչև հոս գալուդ վարձքովը միասին։

— Ձեր հրամանին սպասելէս՝ ի վեր եօթը ժամ և մէկ քառորդ անցաւ, պատասխանեց Դատապանը, և թաւիշս ալ բոլորովին նոր էր։ Ուրիշ ֆրանք, պարոն տեսուչ։

Ժավէրը չըրս նաբոլէոն հանեց գրպանէն և ձամբեց Դատապանը։

Ժան Վալժան կարծեց թէ Ժավէրի դիտաւորութիւնն էր զինքը հետ տանիլ Պլանշ-Մանթօյի կամ Տէզ-Արշիւի պահնորդարանաց մին որք շատ մօտ էին։

Փողոցին դէպ՝ ի ներսը յառաջացան։ Ըստ սովորութեան ամայի էր փողոցը։ Ժավէր Ժան Վալժանին ետևէն կերթար։ Երբ հասան թիւ 7 տունը, Ժան Վալժան դուռը զարնելով քանալ տուաւ։

— Լաւ, ըսաւ Ժավէրը։ Մտէք։

Յետոյ.

— Հոս կսպասեմ ձեզի, շարայարեց տարօրինակ տպաւորութեամբ մը և այսպէս խօսելով կարծես թէ չանադրութիւն մը կընէր։

Ժան Վալժան Ժավէրին նայեցաւ։ Ժավէր զրեթէ սովորութիւն չունէր այսպիսի կերպով մը վարուելու։ Բայց եթէ հիմա Ժավէր հպարտաբար վստահութիւն մ'ունէր իր որսին նկատմամբ, վստահութիւն որով կատուն իր ճիրանին երկայնութեանը չափ ազատութիւն կուտայ մուկին, Ժան Վալժան անձնատուր ըլլալ և ամեն բան վերջ ընել որոշած ըլլալով չէր կրնար մեծապէս զարմանալ Ժավէրին այս ընթացքին նկատմամբ։ Հրեց դուռը, ներս մտաւ, ևս եմ, գոչեց դռնապանին որ պառկած և անկողնէն քաշած էր դուռին չուանը, և վեր ելաւ սանդուղքէն։

Աջջի դստիկոնը հասնելով կանգ առաւ։ Ամեն ցաւագին

պողոտաները կայարաններ ունին : Սանդուղին վերի կողմին կիլեօթինեան պատուհանը բաց էր : Ինչպէս շատ մը հին տուներու նաև այս տունին սանդուղը պատուհան մ'ունէր և փողոցին վրայ կը նայէր : Փողոցին լամպարը՝ որ ճիշդ տունին դէմ էր՝ փոքր ինչ կը լուսաւորէր սանդուղին աստիճաններըը· կապն ծախուց նկատմամբ խնայողութիւն մ'էր այս :

Ժան Վալժան կամ շունչ առնելու համար և կամ մեքենայաբար պատուհանէն դուրս ըրաւ գլուխը և փողոցը նայեցաւ , որ կարճ էր և զոր ծայրէ 'ի ծայր կը լուսաւորէր կանթեղը : Ժան Վալժան անհնարին շուարումով մը զարմացաւ տեսնելով որ ոչ ոք կար փողոցը :

Ժավէր մեկնած էր :

ԳԼՈՒԽ ՃԵ·

ՀՈՒԻԼ

Պասգ և դռնապանը սրահը փոխադրեր էին Մարիուսը որ տակաւին անշարժ երկնցած էր այն նստարանին վրայ ուր դրեր էին զինքը : Վաղելով եկաւ բժիշկը զոր ծառան կանչած էր : Մօրաքոյր Ժիլնօրմանն ելած էր :

Մօրաքոյր Ժիլնօրմանն ահաբեկ և ձեռնամած կերեւևկեր· Աստուած իմ Աստուած , ինչ փորձանք է այս , կրսեր միայն անկարող ըլլալով ուրիշ բան մ'ըսելու : Երբեմնակի կը շարայարէր· Հիմակ ամէն բան արիւն պիտի ըլլայ : Երբ անցաւ սկզբնական սարսափը , իր միտքը կրցաւ փոքր ինչ խմաստաւերական նշոյլ մ'ընդունիլ կացութեան նկատմամբ , հետաւաբար օրիորդ Ժիլնօրմանն դուշեց· Անշուշտ այսպէս պիտի ըլլար վերջը : Սակայն չհամարձակեցաւ ըսելու· Լաւ էն աղջկան ըէ սանդ պիտի ըլլայ խօսքը , զոր սակայն այս տեսակ առիթներու մէջ սովորութիւն է ըսել :

Բժիշկին հրամանաւ փոկէ անկողին մը պատրաստուած էր նստարանին քով : Բժիշկը ղննեց Մարիուսը , և երբ նշմարեց

թէ երակը տակաւին կը զարնէ , թէ վիրաւորը կուրծքին վրայ ամենևին խորունկ վերք մը չունի և թէ շուրթերուն խորշին արիւնը ռունդերէն կուգար , Մարիուսը կռնակի վրայ պառկեցուց անկողնին մէջ առանց բարձի , գլուխը մարմնոյն շարունակութեամբը , մանաւանդ թէ քիչ մ'աւելի ցած , և կէս մէջքէն վերը մերկ թողլով որպէս զի ընչաւութիւնը դիւրացնէ : Օրիորդ Ժիլնօրման Մարիուսի մերկանալը տեսնելով քաշուեցաւ , և սկսաւ իր համրիչովն աղօթել :

Մարիուսին իրանը ներքին վերք մ'ընդունած չէր բնաւ· դնատակ մ'որու այժը կարուած էր թղթակալէն շղթելով Մարիուսի կողերուն վրայէն անցած և սոսկալի կերպով մը հերձած էր զանոնք , սակայն խորունկ չէր այս հերձումը , հետեւաբար անվտանգ : Ստորերկրեայ երկաթաւոր քայլը բոլորովին քայքայած էր արդէն անոր խորտակուած անրակը ուր վտանգաւոր աւերումներ կային : Թևերը սուրի բազմաթիւ վերք ընդունած էր : Դէմքին վրայ ամենևին վերք չկար· սակայն գլուխը կարծես թէ յօշուած էր· Ինչ պիտի ըլլային գլուխին այս վերքերը· մազոտ կաշիէն անդին պիտի չանցնէին , թէ պիտի ճարակուէին մինչև գանկը : Ան այժմ կարելի չէր բան մ'ըսել այս մասին : Վտանգալի նշան մ'էր սակայն այն վերքերէն նուազում մը հետևիլը , և մարգս ստիպուած չէր այս տեսակ նուազումներէ : Ասկէ 'ի զատ արեան հոսումն այժ ձգած չէր վիրաւորին վրայ : Պատնէշը Մարիուսին մէջքէն մինչև վարը պաշտպանած էր :

Պասք և Նիպօլէթ ճերմակեղէններ կը խղտէին և կապ կը պատրաստէին : Նիպօլէթ կը կարեր կապերը , Պասք ալ կը ծալլէր : Պատրոյգը պակսելով , բժիշկն առժամանակեայ կերպով վերքերուն արիւնը դադրեցուցած էր բամբակէ նկանները :

Անկողնին քով երեք մոմ կը վառէր սեղանի մը վրայ ուր կը տարածուէր վիրաբուժական սպասները : Բժիշկը պաղ քով Մարիուսին երեսը և մազերը լուայ : Մինչև բերանը ք

գոյլ մը ջուր վայրկենի մը մէջ կարմրեցաւ։ Դռնապանը ձրագ ՚ի ձեռին կը լուսաւորէր։

Բժիշկը կերեւար թէ տրտմագէս կը մտածէր. ժամանակ առ ժամանակ գլուխովը բացասական նշան մը կընէր իբր թէ ներքնապէս ինքնիրեն ուղղուած հարցումի մը պատասխան տար։ Հիւանդին համար աղէկ նշան չէ բժիշկին ինքն իրեն հետ ունեցած այս խորհրդաւոր մենախօսութիւնները։

Երբ բժիշկը Մարիուսին երեսը կը սրբէր և մատերովը մեղմակի կը շօշափէր անոր արտեւանունքը որք միշտ դոց էին, սրահին ներսի կողմէն դուռ մը բացուեցաւ և երկայնաձիգ ժպտոյն դէմք մ՚երեւցաւ։

Երեւցողը Հաւն էր։

Ասլատամբութիւնն երկու օրէն ՚ի վեր Պ. Ժիլնորմանին սաստիկ յուզմունք, զայրոյթ և մտատանջութիւն տուած էր։ Նախորդ գիշերը չկրցած էր քնանալ, և օրն ՚ի բուն ջերմ ունեցած էր։ Գիշերը տան ամէն կողմը պարզունակով լեր մը գոյել տալէն ետք՝ շատ կանուխ պառկած և՝ յոգնութեան պատճառաւ՝ խորունկ քուն մը քնացած էր։

Ծերերուն քունը թեթեւ է. Ժիլնորմանին սենեակը սրահին կից էր. հետեւաբար ձայներէն արթնցած էր թէև զգուշութիւն եղած էր որ չարթնուայ։ Իր սենեկին դուռին ձեղքէն լոյս մը տեսնելով զարմացած, անկողնէն դուրս ելած և խարխափելով եկած էր։

Պ. Ժիլնորման սեմին վրայ կեցած, մէկ ձեռքովը կիսաբաց դուռն կղպակին գունտը բռնած, գլուխը քիչ մը դէպ առջեւ ծռած էր շարժելով, և մարմինը ուղիղ և պատանքի մը պէս անծալ և սպիտակ պարեգօտի մը մէջ սեղմուած՝ կը նայէր զարմացմամբ. դերեզմանի մը մէջը նայող ուրուականի մը կերպարանքն ունէր ան։

Նշմարելց անկողինը և վրայի այն արիւնաթաթաւ երիտասարդը որուն սպիտակութիւնը մահի սպիտակութեան կը նմանէր, որու աչերը դոց, բերանը բաց, շուրթերը դունատ

մինչեւ մէջքը մերկ, ամէն կողմն արիւնաներկ վէրքերով յօշոտուած էր, և որ անշարժ և սաստկապէս լուսաւորած կերեւար։

Հաւը համակուեցաւ այն ամէն սարսուռով զոր կրնան ունենալ ոսկրուտ անդամներ. աչերը՝ որոնց սպիտակուցը դեղին էր խոր ծերութեան պատճառաւ՝ տեսակ մը պղտոր ապակիի նման վարագոյրով մը ծածկուեցան, վայրկենի մը մէջ իր գէմքը կմախքի գլուխի մը հողագոյն անկիւններուն ձեւերն ընդունեցաւ, թեւերը կախուելով ինկան իբր թէ անոնց զսպանակը կարուած ըլլար յանկարծ, և իր շուարումը հասկցուեցաւ բոլորովին դողդոջուն և խորշոմուտ ձեռներուն մատերը մկկուսելովը. ծունկերը ծռուելով անկիւն մը կազմեցին դէպ առջեւ, որով իր պարեգօտը բացուելով սկսան խեղճ արուներն երեւալ որոնց վրայ ձերմակ մազեր տնկուած էին։

Ժիլնորման ահա այս դիրքով կենալով մրմռաց.

— Մարիուսն է։

— Պարո՛ն, ըսաւ Պասք, հիմա բերին պարոնը։ Պատնէշը գացած էր, և...։

— Մեռա՛ւ, դոչեց ծերը սոսկալի ձայնով մը։ Ա՛հ, աւազակը։

Անատեղն այս հարիւրամեայ ծերն երիտասարդի մը պէս կանգնեցաւ տեսակ մը դերեզմանական այլակերպութեամբ։

— Պարո՛ն, ըսաւ, դո՞ւք էք բժիշկը։ Նախ և առաջ բան մ՚ըսէք ինձ։ Մեռած է, այնպէս չէ՞։

Բժիշկը սաստիկ անձկութեամբ համակուած մնալով պատասխան չտուաւ։

Պ. Ժիլնորման զարհուրելի քրքիջով մը ձեռները գալարեց։

— Մեռա՛ւ, մեռա՛ւ։ Պատնէշը մեռնելո՛ւ պնաց ինծի դէմ ունեցած ատելութեան պատճառաւ։ Ինծի դէմ է իր այս ըրածը։ Ա՛հ, արիւնարբո՛ւղ դու, այդպէս պիտի վերադառնայիր դիրկս։ Վա՛յ ինձ, եղո՛ւկ դժբաղդիս. ա՛լ մեռած է։

Պատուհանի մը քովը պնաց, երկու փեղկերը բացաւ բոլորովին՝ իբր թէ խղդուէր, և մութին ոտքի վրայ կայնած բակաւ փողոցը խօսիլ դիշերին հետ։

— Ծակծկուած, սրէ անցած, մորթուած, ջարդուած, գզբտուած, կտոր կտոր եղած է։ Ի՞նչ կըսէք սա Շուտառականին։ Շատ աղէկ պիտէր թէ կսպասէի իրեն· թէ իր սենեակը կարգադրել տուած, և մանկութեանը ժամանակին պատկերն ալ անկողնիս մտաբին տակը դրած էի։ Քալ ղիտէր թէ կրնար ուզած ժամանակը վերադառնալ, թէ տարիներէ 'ի վեր կը կանչէի զինքը և թէ զիշերները կրակարանիս քովը ձեռներս ծունկերուս վրայ դնելով խելքս միտքս իրեն կուտայի։ Շատ աղէկ պիտէիր այսպէս ըլլալը· պիտէիր թէ վերադառնալով և ես եմ ըսելով տունին տէրը պիտի ըլլայիր։ Թէ քեզի պիտի հնազանդէի և թէ ինչ որ ուզէիր պիտի կրնայիր ընել քու ծերուկ և միամիտ հայդ։ Այո՛, դիտէիր այս ամենը, բայց, ոչ, արքայական մ'է ան, չպիտի երթամ, ըսիր։ Եւ պատնէշը կուտելու դայիր, և չարաճարտուքեամբ մեռաբ՝ Տը Պէրի դուքսին նկատմամբ քեզի ըսած ֆօսքիս վրէժը լուծելու համար։ Խայտառակութիւն մ'է այդպիսի վրիժառութիւն մը։ Պահակեցէք ուրեմն, պարոն, և հանդստապէս քնացէք։ Մեռա՛ւ։ Ահա տեսէք արթննալս։

Բժիշկը որ կնկսէր երկուքին նկատմամբ ալ վախ ղգալ, պահ մը հեռացաւ Մարիուսին քովէն և Պ· Ժիլնօրմանին մօտենալով թևը բռնեց։ Հասը եռանդ զարձաւ, նայեցաւ այնպիսի աչերով որք մեծցած և արիւնարբոյր կը թուէին, և հանդարտօրէն ըսաւ բժիշկին։

— Շնորհակալ եմ, պարոն։ Հանդիստ եմ, մարդ մ'եմ ես· Լուի Ժ·Զ·ի մահը տեսած եմ. կրնամ տանիլ պատահարները։ Բան մը կայ որ սոսկալի է, այսինքն խորհիլ թէ այս ամէն չարեաց պատճառ ձեր լրագիրներն են։ Իմաստակի կտորներ, խօսողներ, փաստաբաններ, առեղծաբաններ, բեմեր, վիճաբանութիւններ, յաւաչդիմութիւններ, լուսաւորութիւն, մարդկային իրաւունք, տպագրութեան ազատութիւն պիտի ունենաք, և ահա այսպէս տունը պիտի բերուին ձեր զաւակները։ Ա՛հ, Մարիուս, գարշելի բան մ'է այդ

ըրածդ։ Սպանուիլ, լման առաջ մեռնիլ, պատնէշը երթալ, վայ քեզի, աւազակդու։ Պարոն բժիշկ, կարծեմ այս Թաղը կը բնակիք, այնպէս չէ՞։ Ո՛հ, շատ աղէկ կը ճանչնամ ձեզի։ Պատուհանէս կը տեսնեմ կառքիդ անցնիլը։ Գիտնաք որ կը սխալիք եթէ կարծէք թէ բարկացած եմ։ Մարդ մեռնելի մը դէմ չբարկանար· յիմարութիւն է այդպիսի բարկութիւնը։ Սակայն իմ ձեռքս մեծցած զաւակ մ'է ան։ Արդէն ծերացած էի ես երբ ան դեռ աղէկ մ'էր։ Թիւիլըրիի պարտէզը կը խաղար իր պզտիկ բահովը և աթոռովը, ես՝ ոտիկանութեան մարդերուն կշտամբանքի առիթ չտալու համար գաւազանովս հետ զհետէ կը դոցէի այն ամէն ծակերը զոր հողին վրայ կը բանար իր բահովը։ Օր մը կործանի՛ Լուի Ժ·Ը գոչեց և ձեղ դնաց։ Ծանցանքն իմս չէր։ Վարդապետն և խարտեաշ պատանի մ'էր բոլորովին։ Մայրը մեռած է։ Ամէն պզտի տղայ խարտեաշ է, միթէ նշմարած էք։ Ինչ է պատճառը։ Ասի Լուաբի աւազակներուն մէկին տղան է, սակայն զաւակներն անպարտ են իրենց հարցը ոճիրներէն։ Սա չափ բարձր էր ան, տակաւին միտքս է։ Ձեր կրնար պիրը արտասանելու յաջողիլ։ Այնքան անոյշ և անորոշ կերպով կը խօսէր որ լսողը թռչուն մը կը կարծէր զան։ Այնքան զեղանի էր որ անդամ մը, դեռ կը յիշեմ, Հերքիւլ Ֆարնէզի արձանին առջև շատ մ'անձինք ղրջան կալմայկին առնոր վրայ հիանալու և սքանչանալու համար։ Գլուխը պատկերներու մէջ քաղուած գլուխ մը կը նմանէր։ Կը յանդիմանեի զինքը պօռալով, գաւազանովս կը վախցնէի, բայց շատ աղէկ գիտէր որ խնդալու համար կըսեի այս բառերը։ Առտուերբ սենեակս կը մտնէր, կը սրտրայի, բայց լռէն կը թուէր թէ արև մ'է սենեակս մտնողը։ Մարդ չկրնար դիմանալ այս մանկիկներուն։ Անոնք մարդս կը գրաւեն, կը բռնեն և ալ չեն թողուր։ Ճշմարիտը խօսելով այս մանկան համար զղացած սէրս բնաւ զղացած չեմ ուրիշի մը համար։ Հիմակ ինչ կըսէք ձեր Լաֆայէթներուն, Պէնժամէն Գօնսթանտներուն և

Թիրզիւիր Տը Փօրսէլներուն նկատմամբ որք մեղսագին զան։ Ասանկ բան մը չկրնար անպատիժ անցնիլ։

Պ· Թիլնօրմանն Մարիուսին մօտեցաւ որ դեռ կապարագոյն էր և անշարժ, և որու քով վերադարձած էր բժիշկը, և սկսաւ ձեռները գալարել յուսահատաբար։ Ծերունին սպիտակ շուրթերը կարծես թէ մեքենայաբար կը շարժէին, և հոնչումէ մ՚ելնող շունչերու պէս դրեթէ անորոշելի խօսքեր կարտաբերին որք հազիւ հազ լսելի էին։ — Ա՜հ, անսիրտ պատանի, ա՜հ, յեղափոխական, ա՜հ, չարագործ դու, ա՜հ, մարդասպան սրիկայ։ — Ցանգիմանութիւններ զոր հոգեվար մը կէս ձայնով դիակի մը կուղղէր։

Ներքին բաղխումները կը պարտաւորին միշտ ձամբայ մը գտնել դուրս ելնելու համար, և ահա իրօք կամայ կամայ խօսքերն սկսան շղթայաբար յառաջանալ, սակայն հաւը կարծես թէ ալ այժ չունէր արտասանելու զանոնք· այնքան խրլին և նուաղուն էր ձայնը որ կարծես թէ անդունդի մը միւս եղրէն կուգար։

— Բայց հոգս չէ, ես ալ շատ չանցած պիտի մեռնիմ։ Երբ կը մտածեմ թէ Բարիզի մէջ չկայ կարող կապող կնիկ մ՚որ երջանիկ չըլլայ այս թշուառականին երանութիւնը հաղորդելով։ Սրիկայ մ՚որ փոխանակ զուարճանալու և կեանքի բարիքը վայելելու կուտէ դնայ և աւանակի մը պէս թնդանօթին ճարակ եղաւ։ Ինչո՞ւ, և որո՞ւ համար։ Հանրապետութեան համար։ Հանրապետութեան այսինքն ապուշներու յաւուրական աւանակութեան մը համար։ Խեղճ մայրեր, եթէ կուզէք, ասկէ ետև ալ աղուոր մանչեր բերէք։ Ա՛լ ահա մեռած է։ Մեծ դուռին տակ մկին տեղ երկու թաղում պիտի ըլլայ։ Մ՚թթէ Լամարդ զօրապետին աչքին ունքին ղարնուած կիր որ դայիր մեռար։ Ի՞նչ ըրած էր քեզ այդ Լամարդ զօրապետը։ Այդ շաղակրատին, հուր ու սուր տեղացնողին որ տեղին զմայլեցար։ Մեռելի մը համար մեռնի՛ր, ա՛ւր լսուած է ասանկ բան մը։ Ցիրաւի խենթալը բան մը չէ։ Քսան տարե-

կան հասակի մէջ ասանկ ապուր մ՚ուտել եղած բան է արդեօք։ Մեռնի՛լ առանց գլուխը դարձունելու և նայելու թէ բան մը չթողուր իր ետևը։ Հիմակ ահա խեղճ ծերուկները ստիպուած են միս մինակ մեռնելու։ Գնա՛, սատկէ անկիւն մը, բո՛ւռ։ Բայց ինչո՛ւ ցաւիմ, շատ աղէկ ըրիր, ես ալ կը յուսայի թէ ասանկ պիտի ըլլայ, դուն մեռնելովդ ինձ ալ յանկարծ պիտի մեռցունես։ Խիստ ծեր եմ, հարիւր տարեկան եմ, հարիւր հազար տարեկան եմ, շատ ժամանակէ՛ի վեր իրաւունք ունիմ մեռնելու։ Հիմակ ալ գործս լմնցաւ։ Ամեն բան կատարեցաւ, ինչէ երանութիւն։ Ինչո՞ւ հարկ կայ ամօնեաց հաշիւ տալու անոր· ինչ կարևորութիւն ունին այդ ամեն դէպքերը։ Պարապ տեղը կաշխատիս, անմիտ դու բժիշկ։ Գնա՛ բանդ, մեռած է, կատարեալապէս մեռած է ան։ Ես կը ճանչնամ մահը, ես որ նոյնպէս մեռած եմ։ Ատի կիսկատար թողուցած չէ գործը, անհոգ եղիր։ Այո՛, արդի ժամանակս խայտառակութիւն խայտառակութեանց ամենայն ինչ խայտառակ է, և ահա այս է իմ կարծիքս ձեր վրայ, ձեր դաստիարակներուն, դրութիւններուն, վարժապետներուն, պատգամներուն, ազգութիւններուն, շաներես և իմաստակ դպրեվանքներուն, անարծաթ փիլիսոփաներուն և այն ամեն յեղաշրջումներուն նկատմամբ որք վաթսուն տարիէ՛ի վեր Թիւիլըրիի պալատին դրսերուն երամները կը վախցունեն։ Եւ քանի որ դուն ալ այսպէս դայիր մեռար առանց գթալու ինձ, և ոչ իսկ պիտի ցաւիմ մահուանդ վրայ, կը լսե՞ս, մարդասպանդ դու։

Նոյն պահուն Մարիուս կամայ կամայ արտևանունքը բացաւ, և իր նայուածքը զոր թմբրային զարմացումը տակաւին կը վարագուրէր՝ Պ· Թիլնօրմանին ուղղուած մնայ։

— Մարիո՛ւս, դոչէց ծերունին, Մարիո՛ւս, իմ Մարիուս, օրդեակիս, ամենասիրելի զաւակս։ Աչերդ կը բանաս, ինձ կը նայիս, կենդանի ես ուրեմն, շնորհակալութիւն։

Եւ նուաղելով ինկաւ։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ԹԱՎՉԻՐ ԿԸ ՉԱՐՏՈՒՂԻ

ՓԼՈՒԽ ԱՔԱՉԵՑ

ԹՎՉԻՐԻՆ ՉԱՐՏՈՒՂԻԼԸ

ԹԱՎՉԻՐ Օմ-Արմ փողոցէն հեռացած էր յամրաքար քայլելով։

Գլուխը վար ընկելով և ձեռները եռևը տանելով կը քայլէր· կէնացը մէջ առաջին անգամն էր գլուխը ծռելը և ձեռները կռնակը տանիլը։

Մինչև այն օրը Թավչիր նաբոլէոնին երկու դիրքին մին առած էր միայն, այսինքն այն որ է թևերը կուրծքին վրայ առնուլ, և որ որոշում կարտայայտէ· իսկ միւսը, այն որ է ձեռները եռև տանիլ և որ վարանում կարտայայտէ, բոլորովին անծանօթ էր իրեն։ Հիմա փոփոխութիւն մ'եղած էր։ Իր յամրաշարժ և տխուր անձն անձկութեամբ դրաւուած էր գլխովին։

Լուին փողոցները սուզեցաւ։

Սակայն տեղ մը կերթար։

Կարճ ու կտրուկ ձամբէ մը Սէն հասաւ, Տէզ-Օրմի ափնուղին եկաւ, ափնուղիին երկայնութեամբը չուեց, անցաւ Կրէվը, և՝ Շաթըլէի մայտանին պահնորդարանէն քիչ մը հեռի Նօթր-Տամ կամուրջին անկիւնը կանգ առաւ։ Սէն գետը հոն մէկ կողմէն Նօթր-Տամ կամուրջին և Բօնթ-օ-Շանժ կամուրջին մէջ տեղը, միւս կողմէն ալ Տը Լա Մէ ծիսրբի ափնուղիին և Օ-Փլէօր ափնուղիին մէջ տեղը տեսակ մը քառակուսի լիճ կը կազմէ ուսկէ սրընթաց հոսանք մը կանցնի։

Գետին նաւորդները կը վախնան անոր այս կողմէն։ Ամենավտանգաւոր բան մ'է այս յորձանքն որ այն ժամանակ նեղնալով կը հոսէր և կը զրդռուէր կամուրջին աղօրիքին վրա սուած ցիցերէն· աղօրիքն այսօր քանդուած է։ Երկու կամուրջներն որք խիստ մօտ են իրարու՝ վտանգը կաւելցունեն· ջուրը զարհուրելի կերպով մը կշտապէ անոնց կամարներուն ներքև, ուր սոսկալի և լայն ծալեր կը բանայ, կը ժողվի և կը դիզուի· կոհակը կամուրջներուն գերաններուն դէմ կը ջանադրէ կարծես հոսանուտ ահագին չուաններով զանոնք խախտելու և հանելու համար· որոնք որ այս յորձանքը կիյնան, չեն երևար· լաւագոյն լուղորդները կը խղդուին հոն։

Թավչիր իր երկու արմուկները գետին պարսպին վրայ կռթնցունելով, կզակը ձեռներովը բռնելով, սկսաւ խորհիլ մինչդեռ եղունգները մաքենայաբար կը գալարէին իր թանձրախիտ կիսամօրուսներուն մէջ։

Թավչիրին ներսը նորանշան բան մը, յեղափոխութիւն մը, մեծ աղէտ մը տեղի ունեցած էր· և ինքզինքը քննելու պատճառներ ունէր։

Թավչիր սոսկալի կերպով մը կը տառապէր։

Քանի մ'օրէն 'ի վեր Թավչիր դադրած էր պարզ մարդ մը ըլլալէ։ Թավչիր պղտորուած էր· կուրութեանը մէջ այս մանաւանդ ուղեղը կորուսած էր իր թափանցկութիւնը· ամպ մը կար այս բիւրեղին մէջ։ Թավչիր խղճին մէջ պարտաւորութեան երկուորիլը (dédoubler) կզգար, և չէր կրնար ինքզինքը խաբել։

Երբ այնքան յանկարծապէս Թան Վալժանին հանդիպած էր Սէն գետին սեպեզրին վրայ, կարծած էր իր օրսը վերըմբռնող դայլ մը, նաև իր տէրը վերստին պտնող շուն մը ըլլալ։

Իր առջև երկու ճամբայ կը տեսնէր, երկուքն ալ հաւասարապէս ուղիղ· բայց երկու էին տեսած ճամբանները, և այս պատճառաւ կը տարտափէր, վասն զի ինքն աշխարհիս վրայ

ապրիլ սկսելէն ՚ի վեր միայն մէկ ուղիղ դիծ ձանչցած էր։ Սկծալի անձկութիւն մ՚ալ կար որ էր այն երկու ձամբաներուն ներհակ ըլլալը։

Այս ուղիղ դիծերուն մին միւսը կը հերքէր։

Ո՞րն էր ճշմարիտը։

Անմեկնելի էր իր կացութիւնը։

Կեանքը չարագործի մը պարտաւորիլ, այս պարտքը ընդունիլ և վճարել, կամայ ակամայ բոլորովին հաւասար ըլլալ վաղեմի դատապարտի մը հետ, և անկէ տեսած աղէկութեան մը փոխարէն աղէկութիւն մ՚ընել. հաւանիլ անորմէ փրկուելու, և հիմա փոխադարձապէս ազատել զան, անձնական պատճառներու զոհել պարտքը, այսինքն ընդհանուր պարտաւորութիւնը, և այս պատճառներուն մէջն ալ նոյնպէս ընդհանուր և թերևս վերագոյն բան մը զգալ, մարդկային ընկերութիւնը մատնել՝ իր խղճին հաւատարիմ մնալու համար, ասոնք այնպիսի այլանդակութիւններ էին որք իր միտքէն անդամ չէին անցներ և որք սակայն հիմա իրանալով և իր վրայ դիզուելով կը տապալէին զինքը։

Բան մ՚իր զարմանքը գրաւած էր, այսինքն Ժան Վալժանին իրեն ազատում շնորհելը, և բան մ՚ևս անհնարին զարմանք պատճառած էր, այսինքն իր՝ Ժավէրին՝ Ժան Վալժանին ազատում շնորհելը։

Ո՞ւր կը դանուէր։ Ժավէր ինքզինքը կը փնտռէր առանց դտնել կարենալու։

Ի՞նչ ընէր հիմա։ Ժան Վալժանը մատնելը դէշ էր. Ժան Վալժանը ազատ թողուլն ալ դէշ էր։ Եթէ մատնէր՝ իշխանութեան մարդը թիարանի մարդէն աւելի կը նուաստանար. եթէ ազատ թողուր՝ թիապարտ եղեռնագործ մ՚օրէնքէն աւելի կը բարձրանար և ոտքին տակ կառնուր զայն։ Երկու պարագային մէջ անպատուութիւն կար Ժավէրին համար։ Երկու որոշումներուն մէն ալ ընէր, պիտի ինար։ Ճակատագիրն անհնարինին վրայ ինչ ինչ ուղղաձիգ ծայրեր ունի, որոնցմէ անդին կեանքն անդունդ մ՚է միայն։ Ժավէր այս ծայրերուն մին հասած էր։

Ժավէրի անձկութիւններուն մին էր խորհելու բռնադատուիլը։ Այս ամեն հակասական յուզմանց բռնութիւնն իսկ կատիպէր զինքը խորհելու. խորհելմէ որ իրեն համար անսովոր և տարօրէն վշտաւէտ բան մ՚էր։

Խորհրդածութեան մէջ այսինչ քանակութեամբ ներքին ապստամբութիւն մը կայ միշտ, և Ժավէր կը զայրանար այսպիսի ապստամբութիւն մը զգալուն համար։

Ժավէր իր պարտականութեանց անձուկ շրջանէն դուրս՝ որ և է առարկայի նկատմամբ խորհիլը ամեն տեսակ պարագաներու մէջ անկարելւոր բան մը և յոդնութիւն մը կը համարէր։ Բայց այն օրուան իրողութեանց վրայ խորհիլը չարչարանք մ՚էր իրեն։ Սակայն այսպիսի ցնցումներէ ետք կամայ ակամայ հարկ էր նայիլ իր խիղճն և իր ինչ և ուր ըլլալը հասկնալ իւրովի։

Սարսուռ կուտար իրեն Ժան Վալժանին նկատմամբ ունեցած ընթացքը։ Ինքն ոստիկանութեան ամեն կանոններուն, ընկերային և դատաստանական բոլոր կարգադրութեան, և օրինապրին հակառակ վարուելով յարմար դատած էր ազատում մը շնորհել. իր հաշուին յարմարած էր այս շնորհումը. իր անձնական դործերը հասարակային դործերուն տեղը դրած էր. միթէ անասելի չէր այս։ Ամեն անդամ որ կը մտաբերէր իր այս ըրած անլուր դործը, յոտից ցղլուխ կը դողար։ Ի՞նչ որոշում ընէր։ Մէկ միջոց ունէր միայն, այսինքն շտապաւ Օմ-Արմ փողոցը դառնալ և բանտարկել տալ Ժան Վալժանը։

Ցայտնի կերևար թէ կը պարտաւորէր այսպէս վարուիլ։ Բայց չէր կրնար։

Բան մը կար որ այս կողմէն իր ձամբան կարդիլէր։

Բան մը։ Ի՞նչ։ Միթէ դատարաններէն, դործադրելի դատավճիռներէն, ոստիկանութենէն և իշխանութենէ ՚ի զատ

քան մը կայ աշխարհիս մէջ։ Ժավէրը տակնուվրայ եղած էր։

Թիատրոն մը նուէրական, եղեռնագործ մ՚արդարութենէ անըմբռնելի ըլլայ, և նոյն իսկ ինք՝ Ժավէրն ըլլայ այս նուիրականութեան և անըմբռնելութեան պատճառ. միթէ կարելի է այսպիսի բան մը։

Քանի որ Ժավէր պատիժ տալու և Ժան Վալժան պատիժ կրելու համար ստեղծուած էին, քանի որ երկուքն ալ օրէնքին իրերն էին, հիմակ երկուքին ալ այսպէս օրէնքն ոտքի տակ առնելը միթէ ահարկու բան մը չէր։

Ի՛նչ. միթէ կարելի էր որ այսպիսի ահագին բաներ տեղի ունենային և ոչ ոք պատժուէր։ Միթէ ներելի էր որ Ժան Վալժան ընկերային բոլոր կարգաւորութենէն աւելի զօրաւոր ըլլար, և ինք՝ Ժավէր՝ շարունակէր կառավարութեան հայցն ուտել։

Իր մտախոհութիւնը տակաւ առ տակաւ սոսկալի կը դառնար։

Ժավէր այս մտախոհութեանը մէջ թերևս կրնար քանի մը յանդիմանութիւն տալ ինքն իրեն նաև Տէ–Ֆիյլ–Տիւ–Գալվէր փողոցը տարուող ապստամբին նկատմամբ. բայց ասոր վրայ չէր մտածեր։ Փոքրագոյն յանցանքը մեծագոյնին մէջ կը կորսուէր։ Մանաւանդ թէ այն ապստամբը յայտնապէս մեռած էր, և մեռել մը օրինաւորապէս կը դադրի արդարութեան կողմէն հալածուելէ։

Ժան Վալժանն էր միայն Ժավէրին մտքին բեռը։

Ժան Վալժան կը շուարէր զինքը։ Ան ամեն ձշմարտութեան սկզբունքները, որք իր բոլոր կեանքին յենարաններն եղած էին, կը փլչէին այս մարդուն առջև։ Ժան Վալժանին այն վեհանձնութիւնը որով վարուած էր Ժավէրին հետ աստիճապէս կը ձնշէր այս մարդը։ Ուրիշ իրողութիւններ ալ կային զոր Ժավէր կը յիշէր, զոր ժամանակաւ ստութիւն և յիմարութիւն կը սեպէր և որք հիմա իբր իրութիւններ կը ներկայուէին իր մտքին։ Ժան Վալժանին եռանը Պ. Մաժըէնը կերևար, և այս երկու կերպարաններն իրարու վրայ

կը դրուէին և կը լլային մի անձ որ պատկառելի էր։ Ժավէր կզգար թէ սոսկալի բան մը թափ կանցնէր իր հոգիէն, այս-ինքն վաղեմի եղեռնագործի մը վրայ աքանչանալ կզգար։ Թիատրոէ մը պատկառիլ, միթէ կարելի բան էր այս։ Ժավէր կը սարսռէր այս զգացումէն, և չէր կրնար ազատիլ անկէ։ Որքան ալ դիմադրէր, ստիպուած էր իր սրտին խորերէն խոստովանելու այս թշուառականին վեհութիւնը։ Պժգալի բան մ՚էր այս։

Ժավէր բռնադատուած էր խոստովանելու թէ հրեշ մը կը տեսնէ, այսինքն բարեդործ չարագործ մը, կարեկից, հեզահամբոյր, ձեռնտու, դիտօտ եղեռնագործ մ՚որ չարութեան փոխարէն բարութիւն կընէր, առելութեան փոխարէն կը նեբէր, դիտութիւնը վրիժառութենէ վեր կը դասէր, աւելի լաւ կը սեպէր կորնչիլ քանթէ իր թշնամին ջնջել, կազատէր իրեն զարնողը, առաքինութեան վերեւը ծունր կը կրկնէր, և աւելի հրեշտակին քանթէ մարդուս կը մօտէր։

Ասի չէր կրնար տևել այսպէս։

Սուդիւ կը պարտաւորինք յատկապէս ըսել թէ Ժավէր առանց դիմադրութեան անձնատուր եղած չէր այս հրեշին, անուանարկ հրեշտակին, պժգալի դիւցազնին որմէ դրեթէ գայրացած ու միանգամայն շուարած էր։ Երբ այն կատաղին մէջ Ժան Վալժանին հետն էր դէմ առ դէմ, օրինաւորութեան վազքն իր սրտին մէջ բազմիցս մտնչած էր։ Բազմիցս դրդուած էր Ժան Վալժանին վրայ յարձակելու, զան բռնելու և լափելու այսինքն ձերբակալելու։ Եւ իրօք ասկից աւելի պարզ ինչ կրնար ըլլալ։ Այս կամ այն պահնորդարանին առջևէն անցնելու ժամանակ, — Ահա թիարանէն խոյս տուող վաղեմի դատապարտ մը, դոչել, զինուորները կանչել և այս մարդը ձերն է դոչելէն ետք մեկնիլ և աներևութանալ, հոն թողուլ այն գերհենապարտը, մոռնալ և ալ բանի մը չխառնուիլ, ասկե դիւրին ինչ կար։ Այս մարդն օրէնքին բանտարն էր մշանջենապէս. օրէնքն ինչ կուզէ թող ընէ զան։

Ասկից աւելի օրինաւոր բան մը կրնար ըլլալ։ Ժավէր այս ամենը ըսած էր ինքն իրեն· ուզած էր մտիկ չընել, դործել, մարդը բռնել տալ, բայց ինչպէս հիմա նոյնպէս և անատեն չկրցած էր, և ամեն անգամ որ իր ձեռքը ջղաձգային շարժումով մը դէպ 'ի Ժան Վալժանին օձիքը ելած էր, իբր ահագին բեռի մը ներքև ձնշուելով վար ինկած էր, և իր մտքին խորէն ձայն մը, տարօրինակ ձայն մը լսած էր որ կը դոչէր· — Լաւ, շատ լաւ։ Մատնէ ազատիչդ։ Ապա բռնել տուր Պիզատոսին կոնքը և լուա Ճիրանները։

Ցետոյ ինքն իր վրայ խորհելով կը տեսնէր որ ինք նուաստ մ'էր Ժան Վալժանին քով որ վեհանձն մ'էր։

Թիապարա եղեռնագործ մ'իր բարերարն էր։

Բայց ինչո՞ւ ուրեմն ներած էր այն մարդուն որ ազատ թողու զինքը։ Այս պատնէշին մէջ իրաւունք ունէր սպանելու։ Կը պարտաւորէր դործածել իր այս իրաւունքը։ Աւելի աղէկ էր միւս ապստամբները օդնութեան կանչել Ժան Վալժանին դէմ և բռնի հրացանի բռնուիլ։

Իր ամենաստոկ վիշտն էր տուգութեան աներեւութութիւնը։ Կզդար թէ արմատաքի խլուած է ինք։ Օրինադիրն ալ իր ձեռքը բեկոր մ'էր միայն։ Այնպիսի խղճահարութիւններ կզդար որոնց տեսակն անծանօթ էր իրեն։ Հոգիին մէջ զգայական յայտնութիւն մը կըլլար բոլորովին տարբեր օրինաւոր տուգութենէն որ մինչև անատեն իր միակ չափն էր։ Իր հին զգաստութեան մէջ ձնալն ալ չէր բաւեր։ Անակընկալ իրողութիւններու ամբողջ կարգաւորութիւն մ'երեւան ելնելով կը նուաճէր զինքը· ամբողջ նոր աշխարհ մը կերեւար իր հոգիին· այս իրողութիւններն էին ազնիւութեան ընդունակութիւնը և փոխարինութիւնը, անձնուիրութիւնը, ողորմութիւնը, ներողամտութիւնը, անաչառութեան դէմ դործուած դժութեան բռնաբարութիւնները, արդարութեան առջև ինչ ինչ անձերու նախապատուութիւնը, վերջնական դատապարտութեան (condamnation) բարձումը, պեհենապարտութեան (damnation) բարձումը, օրէնքին աչքին մէջ արտօսրի մը հնարաւորութիւնը, և չդիտեմ ինչ ատատուածային արդարութիւն մ'որ մարդկային արդարութեան ներհակ կը դործէ։ Ժավէր բարոյական անծանօթ արեդակի մ'ի խաւարի ծագիլը կը նշմարէր, և այս արևէն կը սարսափէր ու կը շլանար։ Ու մ'էր որ կը բռնադատուէր արծուային նայուածքի ենթարկիլ։

Ժավէր խրոխի կըսէր· ուրեմն իրաւ է եղեր թէ բացառութիւններ կան, թէ իշխանութիւնը կրնայ շուարիլ, թէ կանոնը կրնայ շփոթիլ իրողութեան մ'առջև, թէ ամեն բան չը պարունակուիր օրինագրքին տրամադրութեանց մէջ, թէ երբեմն հարկ կըլլայ հնազանդիլ որու որ նախատեսուած չէ, թէ վաղեմի եղեռնագործի մ'առաքինութիւնը կրնայ պաշտպնաւորի մ'առաքինութեան առջև որոգայթ լարել, թէ հրէշայինը կրնայ երկնային ըլլալ, թէ ձակատագիրն ունի եղեր այսպիսի դարանակալութիւններ, և յանկատաբար կը մտածէր թէ ինքն իսկ ազատ ձեռքով չէր խարուելէ։

Ստիպուած էր խոստովանելու թէ բարութիւնը կայ աշխարհիս մէջ։ Ան եղեռնագործը բարեգործ մ'եղած էր։ Եւ ինքն անգամ, — ինչ անլուր բան, — ահա բարեգործութիւն մ'ըրած էր։ Ուրեմն ինքը՝ Ժավէր՝ կը վատթարանար։

Վատ մը կըլլար։ Ինքն իրմէ կը պժդար։

Ժավէրին տեսլականն էր չէ թէ մարդասէր ըլլալ, մեծ ըլլալ, վեհ ըլլալ, այլ անսպառանելի ըլլալ։ Արդ պահ մը առաջ ախալ մ'ըրած էր։

Ինչպէս այս վիճակին հասած էր· ինչպէս անցած էր այս ամենը։ Եւ ոչ իսկ ինքն իրեն կրնար մեկնել։ Գլուխը երկու ձեռներուն մէջը կառնուր, բայց որքան ալ առնուր, որքան ալ խորհէր, չէր կրնար մեկնութիւն մը տալ։

Անշուշտ իր դիտաւորութիւնն էր միշտ Ժան Վալժանը օրէնքին յանձնել որու կալանաւորն էր Ժան Վալժան և որու դերին ալ ինքն էր։ Ժավէր Ժան Վալժանը իշխանութեանը ներքև ունեցած միջոցին և ոչ իսկ վայրկեան մ'ըսած էր մտա-

պէս թէ դիտաւորութիւն ունի ազատ ձգելու զան։ Ձեռքը կերպիւ իւիք առանց իր գիտութեանը բացուած և ժան Վալժանը թող տուած էր։

Ամեն տեսակ կնճռալի նոր բաներ կը բացուէին կիսովին իր առջև։ Հարցումներ կընէր իւրովի, պատասխաններ կուտար ինքն իրեն, և իր պատասխաններէն ահաբեկիլ կզդար։

Կը հարցունէր իրովի. Այս վաղէմի եղեռնագործը, այս յուսաբեկն որու եսևէն ինկայ և մինչև անդամ հալածեցի գինքը, որ զնս ոտիցը ներքև ունեցաւ և որ կրնար վրէժը լուծել, և որ իր սխակալութեան ու միանդամայն ապահովութեանը համար կը պարտաւորէր լուծել իր վրէժը, իմ կեանքս պարզևելով, ինձ թողութիւն շնորհելով ինչ ըրաւ։ Իր պարտքը։ Ոչ։ Պարտքէն աւելի բան մ'ըրաւ։ Եւ ես ալ հոխորտաբաստիկ անոր թողութիւն շնորհելով ինչ ըրի։ Պարտքս։ Ոչ։ Պարտքէս աւելի բան մը։ Ուրեմն պարտքէ աւելի բան մը կայ եղեր։ Հոս ժավէրը կը խռովէր. իր մտքին կշիռը կը քայքայուէր. կշիռին նժարներուն մին անդունդը կիյնար, միւսն ալ դէպ երկինք կերթար, և ժավէրը թէ վերի նժարէն և թէ վարի նժարէն հաւասարապէս կը սարսափէր։ Անի թէև չէր ամենևին ինչ որ վօլթերական կանուանի, կամ փիլիսոփայ, կամ անհաւատ, թէև ընդհակառակն բնազդումով կը յարգէր դրական եկեղեցին, սակայն ընկերային ամբողջութեան մէկ վեհ մասը կը ճանչնար զայն. ընկերական կարգաւորութիւնն էր իր վարդապետութիւնը և այն կը բաւէր իրեն. մարդի և պաշտօնաւորի հասակն ունենալէն 'ի վեր ոստիկանութեան մէջ կը դներ դրեթէ իր բոլոր կրօնքը, վասն զի, — և հոս առանց ամենափոքր հեգնութեան և իրենց ստուգապոյն նշանակութեամբը կը գործածենք բառերը, — վասն զի՝ ինչպես ըսած ենք արդէն՝ քահանայ մ'ըլլալու պէս լրտես էր ինք։ Ժավէրը հրամանակալ մ'ունէր որ է ոստիկանութեան պաշտօնեայ պ. Ժիսկե. մինչև այն օրը դրեթէ միտքը բերած չէր այն միւս հրամանակալը որ է Ամուռաժ։

Ժավէրը յանկարծ կզգար այս նոր հրամանատարին ներկայութիւնը, և կը նեղուէր անորմէ։

Բոլորովին շուարած էր այս անակնկալ ներկայութենէ. չէր գիտեր թէ ինչ ընէ այն նոր հրամանակալը, թէև ինք շատ աղէկ գիտէր թէ ստորակարգեալը պարտաւոր է միշտ խոնարհելու, թէ իրեն համար ներելի չէ բնաւ չհնազանդիլ, պահարակիլ կամ վիճաբանիլ, և թէ իրեն զարմանքը գրաւող հրամանակալի մ'առջև ստորակարգեալ մ'իր հրաժարականը տալէ 'ի զատ միջոց մը չունի։

Բայց ինչպէս կարելի էր իր հրաժարականը տալ Ամուռաժոյ։

Ինչ և իցէ, կար իրողութիւն մ'որ շարունակ գինքը կը պաշարէր և բոլորովին կը նուաճէր, և այս իրողութիւնն էր սարսափելի կանոնազանցութիւն մ'ըրած ըլլալը, աքսորէն փախող դատապարտեալ վերապարտ մը չտեսնել ձևացնելը, թիապարտ մ'ազատ թողուլը, օրէնքին վերաբերող մարդ մը օրէնքէն գողնալը։ Ժավէրը գործած էր այս ոճիրը։ Ա՛լ ինք գինքը չէր հասկնար։ Ինքն իրմէ վստահ չէր։ Լաւ չէր ըմբռներ և ոչ իսկ իր այս վարմունքին պատճառները, պատճառներ որոնցմէ կախաբեկեր միայն։ Մինչև այն րոպէն ապրած էր այն կոյր հաւատքով ուսկէ խաւարային լաւատեսութիւնը կարտադրի։ Այս հաւատքը կը թողուր գինքը, այս լաւատեսութիւնը կը հեռանար իրմէն։ Կը ցրուէին այն ամեն իրերն որոնց հաւատացած էր։ Անողոքաբար կը պաշարուէր այնպիսի ճշմարտութիւններէ որոնցմէ չէր ախորժեր։ Պէտք էր ուրիշ մարդ ըլլալ այսուհետև։ Ցանկարծ վիրահատութեամբ մ'աչքը բացուող խղճի մը տարօրինակ ցաւերովը կը տառապէր։ Կը տեսնէր ինչ որ իրեն աւելի էր տեսնել։ Կզգար թէ գատարկ է, անօգուտ է, իր անցեալ կեանքէն քայքայուելով զատուած, ինկած և լուծուած է։ Իշխանութիւնը մեռած էր իր սրտին մէջ։ Ա՛լ իր էութիւնը շարունակելու պատճառ չունէր։

Ցուզուբ՛լ, ինչ սոսկալի կացութիւն ժավէրի համար։

պրանիթեն ըլլալ և տարակուսիլ. օրէնքի կաղապարին մէջ ձուլուած պատուհասի միակաուր արձանն ըլլալ, և յանկարծ նշմարել թէ իր արոյրէ սիրտին ներքև այլանդակ և անհնա- զանդ բան կայ որ գրեթէ սրտի մը կը նմանի. աղէկութեան փոխարէն աղէկութիւն ընելու աստիճանը հասնիլ՝ մինչև այն օր այս աղէկութիւնը դէշութիւն համարելէն առաք, պահա- պան շունն ըլլալ և լռել, սառն ըլլալ և հալիլ, աքծանն ըլլալ և ձեռք մը դառնալ, յանկարծ մտաերու բացուիլը գլա՛լ, աղատութիւն շնորհե՛լ, միթէ այսպիսի ահարկու բան մը կրնայ ըլլալ: Ծավէրը ռումբ մ'էր, այլ այս ռումբը իր Ճամբան մոռցած էր և կը նահանջէր:

Ծավէրը կսեխսուէր խոստովանելու թէ անվրիպելութիւնն անվրիպելի չէ. թէ վարդապետութեան մէջ կրնայ սխալ ըլ- լալ. թէ օրինադիրքը խօսելովն ամէն բան ըսուած չըլլար. թէ ընկերութիւնն անթերի չէ. թէ իշխանութիւնն երբեմնա- կի կը դողդոջէ. թէ անփոփոխը կրնայ մերթ ընդ մերթ շա- ռաչել. թէ մարդ են դատաւորները. թէ կրնան սխալիլ դա- տարանները, վերջապէս Ծավէրը երկնային դմբեթին կապտա- դոյն անբաւ ապակիին վրայ դիղում մը կը տեսնէր ահարեկ:

Ծավէրի ներքսը տեղի ունեցող իրերն էին ուղղադիծ խղճի մը խոտորիլը, հոգիի մը զարտուղիը, ուղիղ Ճամբու մը վրայէն անդիմադրապէս սահող և Աստուծոյ հանդիպելով խորտակուող ուղղամիտութեան մը Ճնշուիլը: Կզդար Ծավէրը թէ ընկերային բարեկարգութեան մեքենային հրատուն (chauf- feur), իշխանութեան մեքենադործը՝ որ ուղղակիս Ճամբան շարունակող երկաթէ կոյր ձիին վրան հեծած է՝ կրնայ դե- տինը տապալիլ լուսեղէն հարուած մ'ընդունելով. թէ ան- խախտը, ուղիղը, Ճիշդը, երկրաչափականը, կրաւորը, ան- թերին կրնայ մեղմիլ, և թէ շղեկաւորին համար Դամասկոսի Ճամբայ մը կայ եղեր. ստուգիւ տարօրինակ կերեւային Ծա- վէրին այս ամէն անհնարին իրերը:

Աստուծոյ միշտ մարդուս ներսն ըլլալը և՝ ինք Ճշմարիտ

խիղճն ըլլալով սուտ խղճին ներհակիլը, կայծին չմարելու պատուէրը ընդունիլը, Ճառապայթին արեւը յիշելու հրաման առնուլը, հոգիին հրաւիրուիլը որ միայն Ճշմարիտ բացար- ձակին ընդունի երբ ասի կը բաղդատուի կեղծ բացարձակին հետ, մարդկութեան անկորնչելի ըլլալը, մարդկային սրտի անկորուստ մնալը շքեղ երեւոյթ մ'է, մեր ներքին աքանչե- լիքներուն թերեւս ամենէն դեղեցիկն է, սակայն ծավէրը կխ- մանար, ծավէրը կը հասկնար այս երեւոյթը: Անշուշտ ոչ: Բայց կզդար թէ իր դանկն այս անխմանալի Ճշմարտութեան ներքեւ Ճնշուելով կիսովին կը բացուի:

Այս աքանչելիքէն աւելի կը չարչարուէր քանթէ կայլա- կերպէր, աքանչելիք զոր կը կրէր անհնարին ցասումով: Այս ամէն իրերու մէջ ոչ այլ ինչ կը տեսնէր բայց միայն էու- թեան անբաւ դժուարութիւն մը: Այնպէս կը թուէր իրեն թէ այսուհետև մշտնջենապէս դժուարին շնչառութիւն մը պիտի ունենար:

Վատն զի անձանօթը կար իր գլուխին վերեւը. ծավէրը սո- վորած չէր այս բանին:

Մինչև հիմա իր վերեւը տեսած ամէն իրերը մաքուր, պարզ և վճիտ մակերեւոյթ մը կազմեր էին իր նայուածքին համար. այս մակերեւոյթին վրայ ամէն բան ծանօթ և յայտնի էր. ամէն ինչ որոշուած, համակարգուած, շղթայուած, սահման- արկուած, պոյտուած, արդիլուած, Ճիշդ և անսխալ էր. հոն ոչ անկում և ոչ պահավիժում կար: Ծավէրը մինչև յարդ վարը միայն տեսած էր անձանօթը: Անկանոնը, անակնկալը, քաոսին անկարգօրէն բացուիլը, վէմ մը մէջ սպրդելու հնա- րաւորութիւնը ստորին դասուներու, ապստամբներու, չա- րերու, թշուառականներու յատուկ իրողութիւններ կը թուէին իրեն: Հիմա ծավէրը յետս ընդ կոյս կը տապալէր և յանկար- ծապէս կը խրտչէր անլուր տեսիլ մը, այսինքն վերն ան- դունդ մը նշմարելով:

Ի՛նչ. ուրեմն մարդս հիմն՝ է վեր կը քանդուի, բացար-

ձակապէս կը շաւարի եղեր։ Ի՞նչ բանի վստահիլ պէտք է ուրեմն. միթէ կրնայ եղեր փլիլ այն որ իր համոզումը կը կազմէր։

Կարելի՞ բան է որ վէհանձն թշուառական մը դատ ըլլայ ընկերութեան զրահին թերութիւնը. հնարի՞ն է որ օրէնքի գործադիրներ մը յանկարծ ստիպուի երկու ոճրագործութեան մին ընտրելու, այսինքն մարդ մ՚ազատ ձգելու ոճրագործութեան և զայն բռնելու ոճրագործութեան. ըսել է թէ պաշտօնաւորի մը պետութենէն ընդունած պատուէրին մէջ ամէն բան ստոյգ չէ. ուրեմն պարտաւորութեան մէջ ալ անելանելի ձամբաներ կը գտնուին։ Իրաւ են եղեր այս ամէն բաները. կարելի՞ բան է հաւատալ թէ դատապարտութեանց ներքև ձնշուած հին աւազակ մը կարող է կանգնիլ և վերջապէս իրաւունք ունենալ. կան ուրեմն պարագաներ ուր օրէնքը ներքուն խնդրելով ամբաստանի՝ կընկրկի այլակերպութիւն առած ոճրագործութեան առջև։

Այո՛, այս ամենը իրաւ էր, և ծավէր կը տեսնէր, կը շօշափէր զայն, և ոչ միայն չէր կրնար ուրանալ, այլ նաև ինքն ալ գործքով կը հաստատէր։ Իրողութիւններ էին ասոնք։ Իրական եղելութեանց այսքան ձևութիւն մ՚առնելը պժգալի էր։

Եթէ իրողութիւնները իրենց պարտքը կատարէին, մի միայն օրէնքին ապացոյցները պիտի ըլլային. Աստուած է իրողութիւնները ղրկողը։ Ըսել է թէ անիշխանութիւնը հիմա երկինքէն պիտի իջնէր։

Այսպէս ուրեմն, — և ծավէրի զգացած վշտին աճումն և սարսափին հեռաւոր տեսքէն կրած պատրանքը կը ջնջէր ինչ որ կրնար ամփոփել և սրբագրել իր տպաւորութիւնը, և այսուհետև իր առջև պարզ և սոսկալի ծրագրի մը մէջ կը հաստատուէին թէ՛ ընկերութիւնը, թէ՛ մարդկային սիրտը և թէ տիեզերքը, — այսպէս ուրեմն արդարութեան անօրինած պատիժը, վէճուած դատը, օրէնսդրութեան ունեցած ոյժը,

անկախ ատեաններու վէճուները, դատաւորները, կառավարութիւնը, արդելումը և զսպումը, պաշտօնական իմաստութիւնը, օրինական անվրիպելութիւնը, իշխանութեան սկզբունքը, ամէն վարդապետութիւնները որոնց վրայ կը յենու քաղաքական և քաղաքային ապահովութիւնը, վեհապետութիւնը, արդարութիւնը, օրինագիրքէն արտաբղխող տրամաբանութիւնը, ընկերային բացարձակը, հասարակային ճշմարտութիւնը, վերջապէս ամէն բան աւերակ, դէզ և քաոս մը կը կազմէին. այսպէս ուրեմն ինքը՝ ծավէր՝ անգամ, բարեկարգութեան լրտեսը, օստիկանութեան ծառայող անկաշառակերութիւնը, ընկերութեան նախախնամութիւն–ընկերը յաղթուած և տապալած էր, և այս ամէն աւերակներուն վրայ մարդ մը կանգուն կը կենար՝ գլուխը կանաչ գդակ և ձամբատը փառապսակ մ՚ունենալով. ծավէր ահա այսպիսի կործանումի մը կը նշմարէր. ծավէր ահա այսպիսի ահարկու տեսիլ մ՚ունէր հոգիին մէջ։

Անտանելի էր այս վիճակը։

Ասկէ աւելի բուռն կացութիւն մը չէր կրնար ըլլալ, կացութիւն ուսկէ ազատելու երկու կերպ կար. մին էր համարձակապէս երթալ ծան Վալժանը բռնել և զնդանին յանձնել թիարանին մարդը։ Միւսը···։

Ծավէր հեռացաւ դետեղրին պարիսպէն, և այս անգամ գլուխը կանգուն բռնելով ուղղեցաւ հաստատ քայլերով դէպ այն պահնորդարանը զոր կը ցուցուներ Շաթըլէի հրապարակին անկիւններէն մէկին կանթեղը։

Պահնորդարանը հասնելով ապակիին եռևէն քաղաքապահ մը նշմարեց և ներս մտաւ։ Ոստիկանութեան մարդերը պահնորդարանի մը դուռը հրելու ձևովը միայն կը ճանչնան զիրար։ Ծավէր իր անունը տուաւ, վկայականը քաղաքապահին ցուցուց և նստաւ պահնորդարանին սեղանին քով որու վրայ ճրագ մը կը վառէր։ Սոյն սեղանին վրայ կար նաև գրիչ մը, կապարեայ կաղամար և թուղթ պատահական արձանագրու-

թեանց և դիշերուան պահնորդներու տրուելիք հրահանգներուն համար :

Հիմնադրութիւն մ'է այս սեղանը որու յարդեայ աթոռը միշտ անպակաս է· ոտիկանութեան ամեն պահնորդարաններու մէջ կայ այս սեղանը , ամենքն ալ իրը անփոփոխ զարդ փայտի տաշիղով լի տուսախէ ափսէ մը և նամակի կարմիր նշխարներով լի խաւաքարտէ տուփ մ'ունին , և պաշտօնական ոճին 'ի ցոյց դրուած սարքին դործիներն են : Պետութեան դրականութիւնն անկից կսկսի :

Ծավէը գրիչը և թերթ մը թուղթ առնելով սկսաւ դրել : Ահա կը նշանակենք իր դրածը·

ՓԱՆԻ ՄԸ ՏՈՂ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՅՕԳՈՒՏ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

Նախ· կը խնդրեմ Պարոն պաշտօնեայէն որ նայի :

Երկրորդ· Հարցաքննութեան առենէն եկող բանտարկեալներն իրենց մուճակները կը հանեն և բակատն սալաքարին վրայ կը կենան երբ իրենց վրան դլուխը կը խուզարկուի : Շատերը բանտը վերադառնալով կը հազան , ուսկէ հիւանդարանի ծախս կը հետևի :

Երրորդ· Գաղտնապէս հալածելը լաւ է տեղ տեղ դործակներու կայանով , բայց կարևոր պարագաներու մէջ պէտք է որ առնուազն երկու դործակալ գաղտնապէս հալածողին տեսնուելէ չդադրին որպէս զի որ և է պատճառաւ եթէ դործակալ մ'իր ծառայութիւնը կատարելու մասին ակարանայ , միւսը հսկէ և յաջորդէ :

Չորրորդ· Չհասկցուիր թէ ինչ պատճառաւ Մատլօնէթի բանտին մասնաւոր կանոնադրութիւնը կարդիլէ բանտարը աթոռ մ'ուղեղալու՝ նաև ստակը վճարելով :

Հինդերորդ· Մատլօնէթի կապելային վանդակապատ երկու սիւնակ ունի միայն , հետևաբար կապելապետուհին

թող կուտայ որ բանտարկեալներն իր ձեռքը բռնեն :

Վեցերորդ· Հաչող ըսուած բանտարներըը որք միւս բանտարներըը խօսարանը կը կանչեն , բանտարէն երկու սուվարձք կառնուն անոր անունը որոշապէս դրելու համար: Գողութիւն մ'է այս :

Եօթերորդ· Կատադործներուն դործարանին մէջ բանտարին տասը սուն չվճարուիր եթէ կտաւին մէկ թերն աղեկ հիւսուած չըլլայ· ձեռնարկուին կողմէն զեղծում մ'է այս , վասն զի կտաւն ոչ նուաղ լաւ է :

Ութերորդ· Անախորժ բան մ'է փօրսի (բանտին) այցելուներուն՝ Սէնթ-Մարի-Լ'Էժիբսիէն երթալու համար տղայոց դաւիթէն անցնելու պարտաւորիլը :

Իններորդ· Սոյգ է թէ ղինւորները պաշտօնատունին դաւիթն ամեն օր տեղեկութիւն կը պահանջ այն հարցուփորձներու նկատմամբ զոր դատաւորներն ամբաստանելոյ կընեն : Զինւոր մը որ միշտ պէտք է նուիրական ըլլայ , երբ հարցաքննութեան սենեկին մէջ լսածը կը կրկնէ ծանր անկարգութիւն մ'երած կըլլայ :

Տասներորդ· Տիկին Հանրի պարկեշտ կին մ'է· իր կապեան խիստ մաքուր է· բայց պահեստի կափուլին դռնակը կնիկի մը ձեռքը թողուլն աղէկ չէ : Մեծ մայրաքաղաքի մը Գօնսիէրժըրիին անարժան է այս բանը » :

Ծավէը իր ամենէն հանդարտ և ամենէն ուղիղ գիրովը դրեց այս տողերը՝ և ոչ իսկ կէտ մը մոռնալով , և թուղթին վրայ հատատատապէս դրչին ձայնը հանել տալով : Վերջին տողին տակը ստորագրեց·

ԺԱՎԷՐ

Առաջին կրկին գործակալ

«Շաթըլէի հրապարակին պահնորդարանը.
7 յունիս, 1832, կէս գիշեր երեքի դէմ ձամ անցած։

Ծավէր թաց մէլանը չորցուց թուղթին վրայ, զոր նամակի մը պէս ծալլելով կնքեց և վրան գրեց. Ծանօթագրութիւն վարչութեան համար։ Սեղանին վրայ թողուց այս գիրը և դուրս ելաւ պահնորդարանէն։ Ապակեայ և վանդակաշէն դուռը վերստին զոցուեցաւ ետևէն։

Շաթըլէի հրապարակէն անկիւնադծաբար* (diagonalement) անցնելով վերստին ափնուղին հասաւ, և ինքնաշարժ մեքենայի մը ճշդութեամբ եկաւ ճիշդ այն տեղն ուսկէ քառորդ մ'առաջ հեռացած էր. նորէն կռնեցաւ հոն. և պարսպին մի և նոյն սալաքարին վրայ մի և նոյն դիրքն առաւ։ Կարծես թէ տեղէն շարժած չէր։

Մթութիւնն անթերի էր։ Այն դերեզմանական վայրկեանն էր որ կէս գիշերէն եռաք կուգայ։ Ամպային ձեղուն մ'աստղերը կը ծածկէր։ Երկինք աղետալի խաւար մ'էր։ Մինչնա քաղաքին տուները լոյս մ'անգամ չկար ալ. ոչ ոք կանցնէր. փողոցներուն և ափնուղիներուն նշմարուած ամէն կողմերն ամայի էին. Հօթը-Տամ եկեղեցին և Արդարութեան Պալատին աշտարակներն իբր գիշերուան ուրուականներ կերեւային։ Կանթեղ մ'ափնուղիին եզրին ծնօտը կը կարմրէր։ Կամուրջ ներուն շքանկարները մառախուղին մէջ հետ գհետէ կաւրուէին։ Անձրեւները գետը յորդեցուցած էին։

Ինչպէս կը յիշէ ընթերցողը, ծավէրի կեցած տեղը Սէնի սրընթաց հոսանքին ճիշդ վերևն է և ուղղակէս կը նայի յորձանքներու այն ահարկու ոլորածոյին վրայ որ իբր անվերջանալի պտուտակ մը կը քակուի և դարձեալ կը խառնուի անընդհատ։

Ծավէր գլուխը ծռեցուց նայեցաւ։ Ամէն բան խաւարին էր։ Ոչ ինչ կը նշմարուէր։ Փրփուրի ձայն մը կը լսուէր, բայց գետը չէր տեսնուեր. Մերթ ընդ մերթ այս ահարկու անդունդին մէջ նշոյլ մ'երեւալով անորոշապէս և օձապտոյտ կը սահէր, վասն զի ջուրն ամենէն խաւարամած գիշերները չը դիտեմ ուսկից այս լոյսն առնելու և օձի փոխելու զօրութիւնն ունի։ Նշոյլը կաներեւութանար և ամէն բան անտեսանելի կըլլար։ Անթաւութիւնը հոն բացուած կերբեր։ Հոն մարդուս ներքեւն էր չէ թէ ջուր այլ վիհ մը։ Ափնուղիին դեղբոէվ, աղօտ, շղոեխառն և երբեմնակի իսկոյն պահուող պատն անսահմանութեան դարուվերն ըլլալու ապաւորութիւնը կընէր մարդուս։

Բան մը չէր տեսնուեր, բայց ջուրին թշնամական ցրտութիւնը և թրջուած քարերուն տհամ հոտը կզգայուէր։ Վայրենական շունչ մը կը վերանար այս անդունդէն։ Գետին յորդումն որ աւելի կը դուշակուէր քանթէ կը նշմարուէր, ալիքին աղետալի փսփսուքը, կամուրջին կամարներուն սոսկալի ահադնութիւնը, այն տխուր վհին մէջ խնամելու դաղափարը, վերջապէս խաւարը տարսափելի էր։

Ծավէր քանի մը րոպէ անշարժ կեցաւ՝ այս խաւարին դուռը նայելով. կը դիտէր անտեսանելին այնպիսի ակնայեւ նայուածքով որ ուշադրութեան կը նմանէր։ Գետին ջուրը կը ձայնէր։ Ցանկարծ դլխարկը հանեց ծավէր և ափնուղիին եզրին վրայ դրաւ։ Պահ մ'եւեթ գետին պարսպին վրայ բարձրահասակ և սւեղծայր կերպարան մ'երեցաւ՝ զոր ուշ ձնագող անցորդ մ'ուրուականի մը կարծէր թերեւս, ծռուեցաւ դէպ'ի գետը, յետոյ կանգ առաւ և ուղղակի խաւարամած անդունդն ինկաւ. ալեաց խորին տատանում տեղի ունեցաւ, և խաւարը միայն հասկցաւ ջուրին ներքեւ աներեւութացող այս մարդկային կերպարանին ղաձգային յուզմանց դաղտնիքը։

ՎԵՐՋ ԻՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

* Ուղղագիծ պատկերի մ'անկիւնէն դեպ 'ի հանդիպակաց անկիւնը։
Ծ. Թ.

ՎՐԻՊԱԿ

76ՐԴ ԵՐԵՍԻ ԼԱՏԻՆԵՐԷՆԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՁԻՇԴՆ Է.

ԿԱՏԱՐԻ ՄԷՋ ՓԱԹԹՈՒԱԾ ՄԱՆԿԻԿ ՄԸ ԳՏԱՆ։

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՋՈՐՍ ՊԱՏԻ ՄԷՋ ՊԱՏԵՐԱԶՄՆ

ԵՐԵՍ

ԳԼՈՒԽ Ա· Սէնթ—Անթուան արուարձանին Գարիպալտիոը և Ցիւ Թամիլը արուարձանին Սկիլլան 5
» Բ· Անդունդ մը մէջ գանուողներն ինչ ընեն եթէ չխօսին 16
» Գ· Լուսաւորութիւն և մեծադնութիւն 22
» Դ· Հինգ աւելի, մէկ պակաս 24
» Ե· Թէ ինչ հորիզոն կը տեսնուի պատնէշին վերէն 33
» Զ· Մարիուս դաժան, ժավեր լակոնական 39
» Է· Կացութիւնը կը ծանրանայ 41
» Ը· Ապստամբները կը դիտեն թէ Թենդանօթաձիդներուն ըրածը կատակ չէ 47
» Թ· Ուր կը դործածուի դաղտագողի որսալու և ճշդապէս հրացան արձակելու այն հին տաղանդն որ 1796ի դատապարտութեան վրայ տղդեց 52
» Ժ· Ընդալոյս 54
» ԺԱ· Արձակուող հրացան մը որ ճիշդ նշան կառնու և որ ոչ ղոք կը մեռցունէ 59
» ԺԲ· Անկարդութիւնը բարեկարդութեան կուսակից 61
» ԺԳ· Նշոյլները որը կանցնին 66
» ԺԴ· Ուր պիտի կարդանք Անժօլրասի տարիւհիին անունը 68
» ԺԵ· Կաղսօշ դուբս կ'ընէ 71
» ԺԶ· Ինչպես երդոպրը հայր կըլլայ 75
» ԺԷ· Մեռած հայր մ'իր որդւոյն մեռնելուն կպասէ 87
» ԺԸ· Որս կըլլայ անդղը 90
» ԺԹ· Ժան Վալժան վրէժը կը լուծէ 93
» Ի· Մեռեալներն իրաւունք ունին և կենդանիները չունին 99
» ԻԱ· Դիւցազները 112
» ԻԲ· Յան առ ան 118
» ԻԳ· Օբեսթ անօթի և Բիլատ արբշիռ 123
» ԻԴ· Կալանաւոր 128

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԼԵՎԻԱԹԱՆԻՆ ԱՂԻՒԸ

ԳԼՈՒԽ Ա· Ծոմը երկրին բեղմնաւորութիւնը կը բառնայ 133

ԳԼՈՒԽ Բ· Կոյուղիին հին պատմութիւնը 138
» Գ· Պրեզղօ 143
» Դ· Անձանօթ պարագաներ 147
» Ե· Ճառագիմութիւն արդի 152
» Զ· Ապագայ յառագիմութիւն 154

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՏԻՂՄԸ, ԲՍՑՑ ՀՈԳԻՆ

ԳԼՈՒԽ Ա· Կոյանոցն և իր խաբէութիւնները 161
» Բ· Բացատրութիւն 170
» Գ· Գաղտնապէս հալածուող մարդ մը 173
» Դ· Ան ալ իր խաչը կը կրէ 179
» Ե· Ինչպէս կինը նոյնպէս և աւազը նրբութիւն մ'ունի որ նեն- դութիւն է 184
» Զ· Խրուաը 190
» Է· Ծայրը 193
» Ը· Պատռուած թիկնոցին մասը 196
» Թ· Մարիուս մեռած կը թուի մեկու մը որ կը ճանչնայ մեռ- եալները 203
» Ժ· Իր կեանքը վտանգող աղային վերջադրքը 209
» ԺԱ· Դպրոցի 'ի բացատրմանն 212
» ԺԲ· Հաւը 214

ԳԻՐՔ ՀԻՐԳՈՐԴ

ԺԱՎԷՐ ԿԸ ՉԱՐՏՈՒՂԻ

ԳԼՈՒԽ Ա· Ժավէրին զաբտուղիը 223

ՀՀ Ազգային գրադարան
NL0310155

ՀՀ Ազգային գրադարան
NL0310154

